ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՖԻԼԻՊԻ

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԳ.00.02. «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ Գ.Պ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 15

1.1. Թանգարանի կրթամշակութային գործունեության ձևավորման պատմական նախադրյալները 15

1.2. Թանգարանային մանկավարժության գործառնությունն ըստ հարացույցների 29

1.3. Թանգարանային մանկավարժությունը որպես գիտական դիսցիպլին..... 36

1.4. Թանգարանների դասակարգումը և տիպաբանությունն՝ ըստ կրթական գործունեության 45

ԳԼՈՒԽ 2. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ 55

2.1. Թանգարանային կրթական ծրագրերի նախագծում և մոդելավորում 55

2.2. Արդի թանգարանը որպես կրթամշակութային համալիր 70

2.3. Թանգարանային էքսկուրսավարի գործունեության մանկավարժական բնույթը..... 82

2.4. Տարիքային տարբեր խմբերի հետ կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները 94

ԳԼՈՒԽ 3. ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 107

3.1. Թանգարանային մարքեթինգը որպես արդյունավետ գործունեության նախապայման 107

3.2. Միջազգային համագործակցությունը թանգարանային կրթական ծրագրերի իրականացման գործընթացում 115

3.3. ՀՊՄՀ-ի պատմության թանգարանը որպես կրթամեթոդական կենտրոն և լրացուցիչ կրթական տարածք 132

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 145

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 148

ՀԱՎԵԼՎԱԾ 166

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի քաղաքականությունն իրականացվում է ելնելով արդի փուլում միջազգային կրթական գործընթացներից: Համաշխարհային գործընթացների ազդեցությունների, բարեփոխումների շարունակականությունը վերածվելով ազդեցիկ գործոնի, նոր մոտեցումներ է պահանջում նաև ՀՀ-ում գործող թանգարաններից՝ որպես սոցիալ-մշակութային գործունեության համակարգի հանրային կառույցի՝ նորովի արժևորելով թանգարանի կրթամշակութային գործառույթը:

Պատմամշակութային հարցերի վերաբերյալ բնակչության ակտիվացող հետաքրքրությունն այսօր կարելի է բացատրել տեղեկացվածության աճով, զբոսաշրջության զարգացմամբ և մշակութային հիմնարկների նկատմամբ նոր, ավելի բարձր պահանջներով,որը չի համապատասխանում թանգարանային գործընթացների և հնարավորությունների իրական պատկերին:

Թանգարան-այցելու փոխհարաբերությունը պահանջում է կրթություն մշակութային տարածքում, որի շնորհիվ շրջանառվում է «կրթամշակութային գործունեություն» եզրույթը: Այս խնդրի տեսական և մեթոդական հենքը թանգարանային մանկավարժությունն է, որի հիմնական գործառություններից է հանրության բոլոր շերտերի համար իրականացվող այլընտրանքային հարատև կրթության կազմակերպումը, ինչը մեր հանրապետությունում շատ հեռու է բավարար համարվելուց:

Այս առումով առանձնահատուկ ուշադրության են արժանի Լ.Ա.Բարսեղյանի [3], Ա.Գ. Բոյկոյի [50], Ֆ. Վերպլանկեի [56], Մ.Ս. Կագանի [78], Ի.Ա.Կոլեսնիկովայի [84], Օ.Լ. Նեկրասովա-Կարատեևայի [111], Բ.Ա. Ստոլյարովի [131], Մ.Յու. Յուխնևիչի [144], և այլոց աշխատությունները:

Խորհրդային Միության կազմում գտնվող Խորհրդային Հայաստանում իրականացվում էին թանգարանային գործին նվիրված միութենական կառավարության ընդունած որոշումները, որոնք նպատակաուղղված էին թանգարանները վերածելու

յուրօրինակ գաղափարական զենքի, որով հնարավոր կլիներ ձևավորել մարդկանց աշխարհայացքը: Խորհրդային Միության փլուզումից հետո, վերադասից ստացած հրահանգները պարտադիր կատարելու անհրաժեշտության բացակայությունը, որոշ թանգարաններում հանգեցրեց կրթական ծրագրերի հանդեպ անտարբերության: Արդյունքում ստեղծվեց բարձիթողի իրավիճակ՝ թանգարանների մեծ մասը թերանում էր իրականացնել իր կարևորագույն առաքելություններից մեկը՝ այցելուներին կրթել ու դաստիարակել անցյալի դրական փորձի հիման վրա, որը մեծ բացթողում էր կրթադաստիարակչական գործընթացում, ինչն էլ հասարակության կողմից անտարբերություն առաջացրեց թանգարանների հանդեպ: Միևնույն ժամանակ, ինչպես տնտեսության, այնպես էլ սոցիալ-մշակութային ոլորտում ծառացած հիմնական խնդիրը ֆինանսական միջոցների անբավարարությունն էր:

Հետխորհրդային շրջանում Հայաստանի թանգարանների կրթական գործունեությունն ուսումնասիրելու ընթացքում պարզեցինք, որ կրթական ծրագրերի բացակայությունը բացատրվում է ոչ այնքան ֆինանսական հնարավորությունների, որքան՝ նոր պայմաններում աշխատելու համար գիտելիքի և փորձի պակասով: Իրադրության վերլուծությունն ու մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է նաև թանգարանային մասնագետների վերապատրաստում կազմակերպել:

Քանի որ կրթական գործունեությունը ժամանակակից թանգարանային մշակույթում առաջնային դերակատարում է ստանում, անհրաժեշտ է մշակել թանգարանի՝ որպես սոցիալ-մշակութային ինստիտուտի, նոր հայեցակարգ: Այն պետք է հիմնվի թանգարանի կրթական գործառույթի սոցիալական հենքի վրա:

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգի ներկայիս բարեփոխումները միտված են ինտեգրվելու միջազգային կրթական դաշտին, ապահովելու համար ուսուցման որակն ու բարձրացնելու արդյունավետությունը, որտեղ իր ուրույն տեղն ու դերն ունի նաև թանգարանը՝ ի սկզբանե հնարավորություն ունենալով վերացնելու դասագործընթացի տարածքային և ժամանակային

սահմանափակումները: Ցավոք, պետք է արձանագրենք, որ այդ հնարավորությունները նույնպես ըստ ամենայնի չեն իրացվում:

Սոցիալ-մանկավարժական այն խնդիրները, որոնք ծառացել են ժամանակակից դպրոցի առջև, նոր պահանջներ են առաջադրում մանկավարժական գիտությանը՝ դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման, ինչպես նաև կրթության բովանդակության, կառուցվածքի, ուսուցման սկզբունքների, մեթոդների և ձևերի բարեփոխումներ:

Թեև տեղեկատվական հոսքերի ծավալի և հանրակրթության համակարգի դասագործընթացի ժամանակային և տարածքային հնարավորությունների միջև բազմաթիվ հակասություններ կան, դրանց լուծման ուղիներից մեկը թանգարանային մանկավարժության գործուն մեթոդներն ու միջոցներն են, որոնք էլ անձի ուսուցմանը ապահովում են բազմաբովանդակ, արդյունավետ ծավալ և իրականացման բազմաշերտ ու մատչելի ուղի:

Թանգարանն, իր բնական միջավայրի կրթամշակութային ներուժն օգտագործելով, կարող է նպաստել անձի ընդհանրացնող, վերացարկող և ազատ մտածողության, ինքնուրույն դատողություններ, եզրահանգումներ անելու և ստեղծագործական կարողությունների զարգացումը խթանող խնդիրների լուծմանը:

Այս առումով հետազոտության առանցքում են թանգարանային տարածքներում կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը և թանգարանային գործի մասնագետ-մանկավարժների պատրաստումը [42, 49, 53, 61, 127]:

Հիմք ընդունելով, որ անձը ձևավորվում և զարգանում է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության արդյունքում, հիմնախնդիր է դառնում անձի հանդեպ նպատակամետ դաստիարակչական ներգործության արդյունավետության բարձրացումը: Ուստի, պետք է հաշվի առնել զարգացման շարժիչ ուժերը, տարիքային և անհատական առանձնահատկությունները, սոցիալ-մշակութային միջավայրի դրական և բացասական ազդեցությունները՝ որպես առաջատար արժեքներ հենվելով արժեբանական բնութագրերի վրա [46, 128]:

Սոցիալ-մշակութային գործունեության համակարգում, մասնավորապես՝ թանգարանում, մանկավարժության գիտակիրառական հիմունքների մշակումն ու արդի պայմաններում այն կիրառելու անհրաժեշտությունը, նոր մոտեցումներ ենք ցուցաբերել հանրության տարբեր շերտերի՝ հատկապես դպրոցականների, ուսանողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, սոցիալական այլ թիրախային խմբերի համար տարբեր աշխատաձևերի կազմակերպմանը և նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը կրթական ծրագրեր իրականացնելիս, ինչը նախկինում բավարար հիմքերի վրա չէր դրվում:

Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման համար, անհրաժեշտ է անձի մոտ թանգարանային մշակույթ ձևավորել, որը երկարատև, շարունակական գործընթաց է, ինչը կարևորվում է հատկապես մտավոր աշխատանքի նախապատրաստման գործընթացում: Թանգարանային կրթական ծրագրերի հնարավորությունները՝ դրական ներգործության առումով, ապահովում են ինքնագիտակցության, ինքնակառավարման կարողությունների, ներանձնային և միջանձնային հարաբերությունների ձևավորումը [46, 55, 100, 121]:

Այսօր գիտամանկավարժական կարևոր հիմնախնդիր է բազմատարբերակ մոդելների մշակման միջոցով թանգարանային մանկավարժության համակարգի բարեփոխումը: Նշված հիմնախնդրի վերլուծությունը ցույց տվեց, որ թանգարանային կրթական ծրագրերի ապահովման մակարդակը պայմանավորված է նաև այդ ոլորտի համակարգային հետազոտությունների բացակայությամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է թանգարանային կրթական ծրագրերի արդի պահանջներին համապատասխանեցման հնարավորությունների կատարելագործմամբ, ինչը հնարավոր է միայն զարգացման օրինաչափությունների վերլուծությունների, գիտատեսական և գործնական հետազոտությունների հիմնավորմամբ:

Այսօր անհրաժեշտություն է դարձել թանգարանային մանկավարժության գործընթացի հաջորդականության վերաբերյալ ամբողջական հայեցակարգի մշակման, բովանդակային ուղենշման, տարբեր մակարդակներով տվյալ հիմնախնդրի

ընթացակարգային առանձնահատկությունների բացահայտումը՝ համակարգի անընդհատության ապահովման նպատակով:

Հիմնախնդրի արդիականությունը, նրա կրթամշակութային նշանակությունը, տեսական մշակվածության անբավարարությունը և գործնական պահանջը որոշարկեցին մեր թեմայի ընտրությունը. «Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հիմնախնդիրը» (Հայաստանի թանգարանների օրինակով):

Հետազոտության նպատակն է մշակել մեր ժամանակներին համահունչ թանգարանային մանկավարժության գիտակիրառական հիմունքներ և դրանք գործնականում կիրառել Հայաստանի Հանրապետության թանգարաններում:

Հետազոտության օբյեկտը թանգարանների կրթամշակութային գործունեությունն է:

Հետազոտության առարկան թանգարանային մանկավարժության զարգացմանը միտված տարբեր հայեցակարգերի և մշակված մոդելների ներդրման գործընթացն է:

Հետազոտության հիմքում ընկած է հետևյալ վարկածը. թանգարանային մանկավարժության համակարգում կրթական ծրագրերի իրականացումը, զարգացումն ու արդյունավետությունն ապահովված կլինի, եթե.

- գործընթացը դիտարկվի հասարակության սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային միջավայրի համատեքստում՝ կարևորելով անձի ազգային առանձնահատկություններն ու մշակութային ժառանգությունը, միջմշակութային կապերն ու տարածաշրջանային ազդեցությունների առանձնահատկությունները:
- Զարգացվեն և համակարգվեն թանգարանային միջավայրում ընթացող կրթադաստիարակչական գործունեության հիմունքները:
- Նախագծված-պլանավորած կրթադաստիարակչական գործունեության մոդելի կառուցվածքային բաղադրիչները կատարեն վարչակառավարման, տեղեկատվական, կազմակերպչական և վերլուծական գործառույթներ:
- Համակարգի կառավարումը կառուցվի գիտատեսական և կիրառական հիմքերի վրա, որոնք ապահովում են գործընթացի բոլոր բաղադրիչների համալիր զարգացումն ու միասնականությունը:

- Ապահովվեն ուսումնադաստիարակչական լրացուցիչ պայմաններ՝ ստեղծագործական-կրթական միջավայր, գործուն և կենսունակ դարձնելով թանգարանային մանկավարժության գործունեությունը:

Հետազոտության նպատակի և գիտական վարկածի համաձայն առաջադրված խնդիրներն են.

1. Իրականացնել թանգարանի կրթադաստիարակչական համակարգի կատարելագործման և զարգացման արդի միտումների գիտատեսական վերլուծություն:
2. Բացահայտել և հիմնավորել, արդի պայմաններում թանգարանային մանկավարժության հայեցակարգային մոտեցումների կիրառելիության աստիճանը Հայաստանի Հանրապետությունում:
3. Որոշել աշխատանքային առանձին ուղղությունների և մոդելների կիրառման հնարավորությունները և արդյունավետությունը թանգարանային մանկավարժության կրթադաստիարակչական գործընթացում:
4. Բացահայտել կրթադաստիարակչական գործընթացի գեղագիտական-ստեղծագործական, բարոյագիտական, ռազմահայրենասիրական, քաղաքացիական, ազգային ինքնագիտակցության համալիր մոտեցման առանձնահատկությունները:
5. Ելնելով անցումային շրջանի պահանջներից և հնարավորություններից, վեր հանել և մշակել թանգարանային կրթական ծրագրերի իրականացման կառուցվածքային սկզբունքները, կառավարման առանձնահատկություններն ու պայմանները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- երևույթների համընդհանուր կապի և փոխպայմանավորվածության փիլիսոփայական մեկնաբանությունը, տեսության և պրակտիկայի փոխադարձ կապը, անձի զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, զարգացման համակարգվածության և հաջորդականության սկզբունքները,
- աճող սերնդի սոցիալականացման գործընթացում կրթության առաջատար դերի մասին սոցիալ-մանկավարժական գաղափարները, հանրության բոլոր շերտերի համար իրականացվող այլընտրանքային հարատև կրթության կազմակերպումը

(Լ.Ա. Բարսեղյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Հ.Վ. Պիկիչյան, Ա.Շ.Սիմոնյան, Ա.Գ. Բոյկո, Մ.Ս. Կագան, Ի.Ա. Կոլեսնիկովա, Օ.Լ. Նեկրասովա-Կարատեևա, Բ.Ա. Ստոլյառով, Մ. Յու. Յուխնևիչ, Ֆ. Վերպլանկե),

- հասարակության օբյեկտիվ զարգացման փիլիսոփայական դրույթները, մանկավարժների, հոգեբանների, սոցիալ-մշակութային ոլորտի մասնագետների տեսական եզրահանգումները, հայ և արտասահմանյան հեղինակների հայեցակարգային դրույթներն ու իրականացված ուսումնական ծրագրերը Լ.Գ.Վանեսյան, Մ.Գ. Գևորգյան, Գ.Պ. Հովակիմյան, Ա.Վ. Բակուշինսկի, Ն.Ֆ.Ֆյոդորով, Ա.Մ. Ռազգոն, Ն.Յու. Ժվիտիաշվիլի, Լ.Մ. Շլյախտինա, Մ.Յու.Յուխնևիչ, Տ.Յու. Յուրենևա, Ն.Ա. Յակովլևա):

Հետազոտությունը կատարված է համակարգային և հայեցակարգային մոտեցումների տրամաբանության, ընդհանուր դրույթների, մոդելավորման հիման վրա: Հետազոտության մեթոդաբանությունը ներառել է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման օբյեկտիվ միտումների փիլիսոփայական դրույթները:

Հետազոտության առավել կարևոր մեթոդաբանական հիմքերից մեկը, թանգարանային միջավայրում կրթական ծրագրերի իրականացման հիմնախնդիրն է՝ որպես անձի արժեհամակարգի ձևավորման բաղկացուցչի գաղափարախոսություն:

Հետազոտության մեթոդները: Նշված խնդիրների լուծման և առաջադիր վարկածի հիմնական դրույթների ստուգման համար օգտագործվել է հետազոտության պատմահամեմատական, ընդհանուր գիտական և մանկավարժական հետևյալ մեթոդների ամբողջությունը՝

- հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, հոգեբանական գրականության և հետազոտությունների, արխիվային փաստաթղթերի, գրական աղբյուրների ուսումնասիրում, ընդհանրացում և վերլուծություն,
- համեմատում և համադրում,
- համակարգային վերլուծություն,
- կառուցվածքային և գործառույթային վերլուծություն,
- մանկավարժական դիտումներ:

Հետազոտության արդյունքների գնահատման համար կիրառվել են փորձաքննական գնահատման, հարցաթերթիկների, զրույցի, գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության մեթոդները:

Ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովված են սոցիալ-մշակութային ոլորտի՝ մասնավորապես թանգարանային մանկավարժության արդի նվաճումների և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, փորձարարական աշխատանքների համակարգված և տևական բնույթով, հետազոտական խնդիրների իրականացմանն ուղղված շարունակականությամբ և մանկավարժական ուսումնասիրմամբ, վերլուծությունների համադրմամբ, եզրահանգումներով, ատենախոսի աշխատանքային ներդրումներով:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Մշակվել են տեսական դրույթներ և ընդհանրացումներ թանգարանային կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմունքների և կառուցվածքային սկզբունքների վերաբերյալ: Վերլուծվել է թանգարանային մանկավարժության արտերկրում ձևավորված գործունեության միջոցների ու մեթոդների ազդեցությունը ՀՀ թանգարանների կրթամշակութային գործունեության վրա:

2. Սոցիալ-մշակութային գործունեության համակարգում տեղի ունեցող փոփոխությունների, զարգացման միտումների վերլուծության հիման վրա ներկայացված են թանգարանային կրթական ծրագրերին ներկայացվող արդի պահանջները:

3. Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ թանգարանային մանկավարժության ոլորտում մշակվել են թանգարանային կրթական ծրագրերի նախագծման ու կառուցման գիտատեսական հիմունքները, որտեղ որոշարկված են կառուցվածքը, կառավարման գործընթացի գործառույթները, յուրաքանչյուր փուլի խնդիրներն ու մեթոդները, արդյունքների գնահատման սկզբունքները:

4. Բացահայտվել է թանգարանային մանկավարժության բնութագիրը՝ որպես ամբողջական երևույթ, կրթամշակութային գործընթացների ժամանակակից միտումների համաձայն:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Տեսականորեն հիմնավորվել և փորձարարական աշխատանքներով հաստատվել են թանգարանային մանկավարժության՝ որպես համակարգի կառավարման գիտատեսական և մեթոդաբանական հիմունքները:

2. Փորձարարական աշխատանքներով հաստատվել է թանգարանային մանկավարժության համակարգային կառավարման անհրաժեշտությունը, մշակվել են այդ գործընթացի տեխնոլոգիական ապահովման հիմունքները, որոնք արտացոլված են ատենախոսի հեղինակային ծրագրերում, մենագրություններում, թանգարանային մանկավարժությանը նվիրված աշխատություններում:

3. Թանգարանային մանկավարժության տեսանկյունից բացահայտվել և հիմնավորվել են տարիքային բոլոր խմբերի համար կրթական ծրագրերի մատչելիությունը և մասսայականացման նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքն ունի գիտամանկավարժական նշանակություն թանգարանային միջավայրում կրթամշակութային գործունեություն կազմակերպելու համար: Ստեղծվել են (համահեղինակությամբ) ուսումնական ձեռնարկներ՝ «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ«, «Կրթությունը թանգարանում», «Էքսկուրսավարության հիմունքներ», մշակվել են մասնագիտական բարձրագույն կրթության ուսումնական ծրագրեր:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել դասագրքերի և մենագրությունների ստեղծման, ինչպես նաև թանգարանային մանկավարժության կրթամշակութային գործունեության իրականացման գործընթացում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Թանգարանի կրթադաստիարակչական համակարգի էական բնութագիրը:

2. Թանգարանի կրթադաստիարակչական համակարգի բարեփոխումները, որոնք միտված են կառուցվածքային փոփոխությունների և բովանդակային նորացման:

3. Թանգարանային մանկավարժության համակարգի կառավարումը, որը ներառում է ՀՀ կառավարության, «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի», «Թանգարանների միջազգային կոմիտեի», ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեի, Եվրոպական միության, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv-international), «Ազգային զարգացման գիտակրթական կենտրոնի», «Թանգարանային կրթության կենտրոնի» փոխգործակցությունը, որը ենթադրում է թանգարանային կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում ազգաբնակչության, մասնավորապես աճող սերնդի համակողմանի զարգացման նպատակով:

4. Թանգարանային կրթական ծրագրեր, որոնք ապահովում են իրականացվող կրթական և սոցիալ-մշակութային բարեփոխումներ, թանգարանային ոլորտի կադրերի պատրաստում ու վերապատրաստում:

5. Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման գործընթացում հոգեբանամանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը զուգակցվում է թանգարանային միջավայրի ազդեցությամբ:

Հետազոտության իրականացման փուլերը: Տեսական և գործնական հետազոտությունները կատարվել են 2005-2015թթ. երեք փուլերով.

- առաջին՝ նախապատրաստական փուլը (2005-2008թթ.) ներառել է թանգարանային համակարգի կառավարման, գիտակրթական ծրագրերի և հետազոտության հիմնախնդիրների՝ թանգարանագիտության, փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-մշակութային գործունեության վերաբերյալ գրականության տեսական վերլուծությունը, անցկացվել են փորձարարական աշխատանքներ, մշտադիտարկում, մշակվել են հիմնախնդրի լուծման ընդհանուր մոտեցումներ, որոնք թույլ են տվել դիտարկել

թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները, հիմնավորել հետազոտության թեման և վարկածը:

- Երկրորդ փուլը (2009-2012թթ.) ընդգրկել է թանգարանային մանկավարժության գործընթացում գործառնության հիմնական ուղղությունները: Նախագծվել, մշակվել և տեսականորեն համակարգվել են թանգարանային կրթական ծրագրերի իրականացման հետազոտական-փորձարարական աշխատանքները, որից հետո իրականացվել են փորձարարական աշխատանքներ՝ առաջադիր աշխատանքային վարկածը ստուգելու համար:
- Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2013-2015թթ.) կատարվել է հետազոտության փորձարարական նյութի համակարգում, վերլուծում և ընդհանրացում, հետազոտական տեսական մեթոդաբանական հիմքի ճշգրտում, ստացված արդյունքների վերլուծություն և գնահատում, մշակված դրույթների ներդրման արդյունքներով առաջարկությունների ներկայացում, եզրակացությունների և ատենախոսական հետազոտությունների ձևակերպում:

Հետազոտության արդյունքների, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորվածությունն ու հավաստիությունն ապահովված է աշխատանքի մեթոդաբանությամբ, իրականացված գործընթացի արդյունքներով, հետազոտության ընթացքում կիրառվող մեթոդների, վարկածի, նպատակի, առաջադրված խնդիրների հիմնավորվածությամբ, հետազոտության տրամաբանական կառուցվածքով, մանկավարժական գիտափորձի տևական բնույթով, վերլուծության արդյունքներով, ատենախոսության հիմնական դրույթների՝ շարունակական կրթության նկատմամբ պետության, հասարակության պահանջների և անձի պահանջմունքների համապատասխանությամբ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում, Կուլտուրայի ֆակուլտետի Գրադարանագիտության, մատենագիտության և թանգարանագիտության, Մանկավարժության տեսության ու

պատմության ամբիոններում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են ուսումնական ծրագրերում, հոդվածներում, երկու ուսումնական ձեռնարկներում:

Հետազոտության ներդրումը: Փորձարարական աշխատանքների և հետազոտության արդյունքների ներդրման համար բազա են հանդիսացել Հայաստանի Հանրապետության մի շարք թանգարաններ՝ հենակետ ընդունելով Հայաստանի Ազգային Պատկերասրահը, Ե.Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը, Երևանի Հ.Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի մանկական ստեղծագործության թանգարանը, Ավ.Իսահակյանի տուն-թանգարանը, Ա.Խաչատրյանի տուն-թանգարանը, ԳԱԹ-ի մասնաճյուղ Դ.Դեմիրճյանի տուն-թանգարանը, ԵՊՀ պատմության թանգարանը, Երևան քաղաքի պատմության թանգարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, «Կալենց» թանգարանը, Հայաստանի բնության պետական թանգարանը, Հ.Թումանյանի թանգարանը, Մ. Սարյանի տուն-թանգարանը, Ս.Փարաջանովի թանգարանը, Գյումրու Հ.Շիրազի հուշատուն-թանգարանը, Ասլամազյան քույրերի թանգարանը, Մ.Մկրտչյանի և Ս.Մերկուրովի տուն-թանգարանները, Վանաձորի կերպարվեստի թանգարանը, պատկերասրահը, Ս.Զորյանի տուն - թանգարանը, Աշտարակի Պ.Պռոշյանի տուն - թանգարանը, Հ.Թումանյանի տուն-թանգարանը Դսեղում, Արցախի պատմագիտական թանգարանը, ինչպես նաև ՀՊՄՀ-ի պատմության թանգարանը և կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժինը:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 165 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1.
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1.1. Թանգարանի կրթամշակութային գործունեության ձևավորման պատմական նախադրյալները

Կրթության հումանիզացման և ազատականացման գործընթացները, որոնք այսօր գլոբալ բնույթ են կրում, ամբողջ աշխարհում առանձնահատուկ հետաքրքրություն են առաջացրել թանգարանային մանկավարժության, ինչպես նաև ժամանակակից թանգարանի գիտական և պրակտիկ գործունեության հանդեպ: Օգտագործելով արվեստի գործերը՝ թանգարանը, որպես ուսուցման հիմնական միջոց, կարող է զարգացնել անձի պատմական գիտակցությունը, միջանձնային հաղորդակցությունը, տեսողական մտածողությունն ու ստեղծագործական ունակությունները [127, էջ 5]:

«Թանգարան» հասկացությունը մշակութային գործառության մեջ է մտել մոտ 2,5 հազար տարի առաջ, թեև մեր օրերում դրա իմաստն արմատապես փոխվել է: Հին հույները «մուսեյոն» ասելով հասկանում էին մուսաների տաճար, ժամանակի հետ այդպես էին անվանում այն վայրը, ուր հավաքվում էին գրականության, արվեստի և գիտության հետ շփվելու, հաղորդակցվելու, իսկ միջնադարում այդ հասկացությունը, ինչպես նաև դրա հետ կապված մշակութային ենթատեքստը՝ դուրս եկավ կիրառումից:

Վերածննդի դարաշրջանը մուսեյոններին երկրորդ կյանք շնորհեց, սակայն դրա հետ մեկտեղ նոր իմաստ հաղորդեց և թանգարան եզրույթով սկսեցին բնորոշել անտիկ արվեստի հավաքածուները, իսկ ավելի ուշ՝ բնության հազվագյուտ և զարմանալի առարկաները:

16-րդ դարի երկրորդ կեսից թանգարան էին կոչում ոչ միայն հավաքածուները, այլև այն շենքերը, որտեղ դրանք պահվում և ցուցադրվում էին:

Վերածննդի դարաշրջանին բնորոշ շրջապատող աշխարհի հանդեպ հետաքրքրությունն իր արտացոլումը գտավ նաև 17-րդ դարում, երբ ստեղծվում էին

հազվագյուտ իրերի հավաքածուներ: Հենց այդ ժամանակ մանկավարժ-հումանիստ, համաշխարհային մշակույթի մեծ երախտավոր Յան Ամոս Կոմենսկին, որը «… վաղուց դարձել է առաջադեմ մարդկության ուշադրության և հիացմունքի առարկան» [24, էջ 5], «Orbis Sensulium Hictus» (1658) աշխատությունում այդպիսի հավաքածուները կարևորեց մանկավարժական առումով: «Մեծ դիդակտիկայի» XX գլխի II բաժնում՝ «Ինչպես ուսուցման առարկաները մոտեցնել պատանիներին» նշում է. «… իմացությունների սկիզբը միշտ անհրաժեշտաբար բխում է զգացողություններից: Ուստի հարկավոր է ուսուցումը սկսել ոչ թե իրերի մասին բանավոր մեկնաբանությունից, այլ իրերն իրապես դիտելուց: Եվ միայն բուն առարկայի հետ ծանոթանալուց հետո թող դրա մասին խոսվի, գործը բազմակողմանի պարզաբանելու համար» [20, էջ 224-225]: Ընդունելով իմացության երեք սկզբնաղբյուրները՝ զգայություն, բանականություն և հավատ, Յ.Ա. Կոմենսկին աշխարհճանաչողության և ուսուցման ընթացքում առաջնային նշանակություն է տվել զգայական ընկալումներին և զննողականությանը, իսկ «թանգարան» եզրույթն օգտագործել է որպես գիտնականի կաբինետ, որի ողջ պարունակությունը նախատեսված է իմացության գործընթացն իրականացնելու համար [նույն տեղում]:

Հետագայում այդպիսի Կաբինետները կոչվեցին Կունստկամերաներ, որոնցից ամենահայտնիներն էին Պրահայի, Մյունխենի, Դրեզդենի և 1718թ. Պետրոս I հրամանագրով հիմնված Սանկտ-Պետերբուրգի Կունստկամերաները:

19-րդ դարում շատ թանգարաններ ավանդական աշխատաձևերի հետ մեկտեղ մեծ ուշադրություն սկսեցին դարձնել կրթական խնդիրների լուծմանը: XX-XXI դդ. թանգարանների առաջնային նպատակներից էր նաև կրթության զարգացման խթանումը և հասարակական կյանքում նրանցից յուրաքանչյուրն առանձնահատուկ գործառույթներ, դեր ու նշանակություն էր ձեռք բերում:

Թանգարանները ոչ միայն ներկայացնում են իրենց զարգացման պատմությունը, այլև կարևոր տեղ են զբաղեցնում կրթության և սոցիալ-մշակութային համակարգերում:

Մասնագիտացված թանգարաններում հատուկ կրթական ծրագրեր սկսեցին իրականացնել դեռևս 19-րդ դարի կեսերից:

Եվրոպական երկրներում հասարակության յուրաքանչյուր անդամի համար, թանգարան այցելելը կենսական կարևորություն էր համարվում՝ անկախ սոցիալական դիրքից: 1888թ. ինչպես նշում է Ռ. Ուիլյամսը, անգլիական պառլամենտի հանձնարարությամբ Թ. Գրինվուդը, ինչպես նշում է Ռ. Ուիլյամսը, զեկույց է պատրաստում, որում ասվում է. «Թանգարանը և անվճար գրադարանը նույնքան անհրաժեշտ են քաղաքացիների հոգևոր առողջության համար, որքան համապատասխան սանիտարական միջոցառումները, ջրմուղն ու փողոցային լուսավորությունը նրանց ֆիզիկական առողջության և հարմարավետության համար» [133, էջ 57]:

Այս առումով շատ ուսանելի էր Անգլիայի Հարավ-Կենսինգտոնյան թանգարանի աշխատանքը դպրոցականների հետ, քանի որ այն ի սկզբանե ստեղծվել էր բնակչության բոլոր շերտերի գեղարվեստական կրթության մակարդակի բարձրացման և արվեստաբանական գիտելիքների զարգացման նպատակով:

«Թանգարանները որպես կրթական և դաստիարակչական հիմնարկություններ” թեմայով 1903թ. անցկացվող գիտաժողովում Ա. Լիխտվարկը հայտարարում է. «համալսարաններին և ակադեմիաներին 19-րդ դարն ավելացրեց նոր բարձրագույն կրթադաստիարակչական հաստատություն՝ թանգարանը», որն ըստ նրա, ժողովրդավարական գիտակցության արդյունք է [98, էջ 46]: Գիտաժողովի որոշմամբ 1905 թվականից սկսվեց հրատարակվել «Մուզեումկունդե» թանգարանագիտական հանդեսը, որտեղ տպագրվում էին Գերմանիայում կրթական խնդիրներին նվիրված հոդվածներ:

Անգլիայի թանգարանային գործունեությունը մեծ ազդեցություն է թողել ԱՄՆ-ի թանգարանների ձևավորման վրա: 19-րդ դարում ԱՄՆ-ը կրթական կախվածության մեջ էր Եվրոպայից: 1876թ. Ֆլորիդայում ցուցադրվում է Ամերիկայի դեկորատիվ կիրառական արվեստը, որից ծնունդ առավ «Հանուն արվեստի և արհեստի վերածնության» շարժումը: Շարժման կողմնակիցները տեխնիկական առաջընթացի կողմնորոշում ունեին: Նույն թվականին Դետրոյթի արվեստի թանգարանի հիման վրա բացվեց արդյունաբերության առաջին դպրոցը: Այս նորամուծությունը կրթական

ծրագրերի հիմք հանդիսացավ Նյու Յորքի, Բոստոնի, Չիկագոյի համար: Այս քաղաքներում սկսեցին կազմակերպվել գեղարվեստական ցուցահանդեսներ՝ «Հանուն գեղեցիկ քաղաքի», «Հանուն տան բարելավման» խորագրերով:

Ամերիկյան թանգարանների աշխատանքի փորձը թույլ տվեց ձևակերպել կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Թանգարանը երեխաների համար պետք է ստեղծի կրթության, իսկ մեծերի համար՝ առողջ հանգստի և գիտելիքների կուտակման պայմաններ: Այն պետք է լինի պահոց, որտեղից գիտելիքներ կկարողանան քաղել ուսանողները» [153, էջ 43]:

Ռուսաստանի թանգարանային կրթական գործընթացի վրա մեծ ազդեցություն ուներ գերմանական թանգարանային մանկավարժությունը, ի դեմս Կ. Ֆոլի և Ա.Լիխտվարկի:

Թանգարանային մանկավարժության գիտակրթական գործունեությունը լուրջ առաջընթաց արձանագրեց համալսարաններում թանգարանների ստեղծմամբ:

Համալսարանական թանգարանների պատմությունը սկսվում է դեռևս 17-րդ դարից: 17-18-րդ դարերում Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում ուսումնական գործընթացը բարելավելու, կրթական ծրագրերը դիդակտիկ դարձնելու, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով, ամբիոններին կից ստեղծվում են հատուկ կաբինետներ:

Ուսումնական գործընթացում թանգարանային հավաքածուների օգտագործման առաջին օրինակը 1683 թվականին Օքսֆորդի համալսարանում բացված համալսարանական թանգարանն է, որը հիմք դրեց թանգարանի նոր գործառույթի ձևավորմանը՝ թանգարանը որպես գիտակրթական ինստիտուտ:

Ռուսաստանում կաբինետ թանգարաններն առաջացել են ավելի ուշ: 1755 թվականին Մոսկվայի համալսարանում բացվում է առաջին բնապատմական կաբինետը, որտեղ ներկայացվում են տարբեր երկրաբանական նյութեր: 1758 թվականին, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում, իշխան Ի.Խ. Շուվալովի նվիրաբերած արևմտաեվրոպական գեղանկարչական հավաքածուի հիման վրա

ստեղծվում է կաբինետ, որտեղ երիտասարդ նկարիչները սովորելու նպատակով կրկնօրինակում էին մեծ վարպետների գլուխգործոցները:

19-րդ դարում գիտության բուռն զարգացումն ու ոլորտների առանձնացումը նպաստեցին համալսարաններում գործող կաբինետների հավաքածուների հարստացմանը: Բնականաբար, խնդրո առարկա դարձավ նաև հավաքածուների պահպանման, ուսումնասիրության և հանրության ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու հարցը: 1830-1850ական թվականներին ռուսական կայսրության տարածքում գործող համալսարանների կաբինետների հիման վրա ձևավորվեցին բազմոլորտ թանգարաններ՝ բնագիտական (կենդանաբանական, բուսաբանական, երկրաբանական) և հումանիտար (դրամագիտական, հնագիտական, պատմական, գեղարվեստական): Դրանցից խոշորագույններն էին Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի երկրաբանական թանգարանը, Տոմսկի համալսարանի հնագիտական թանգարանը և Պերմի համալսարանի թանգարանը: Հավաքածուների բազմազանությամբ ու եզակիությամբ հատկապես աչքի էին ընկնում Մոսկվայի համալսարանի հանքաբանական և կենդանաբանական, Դորպատի համալսարանի գյուղատնտեսության, Սանկտ-Պետերբուրգի, Խարկովի, Կազանի համալսարանի թանգարանները [126, էջ 74]:

Ռուսաստանում թանգարանային մանկավարժության վրա իր ուրույն ազդեցությունն է ունեցել հայտնի փիլիսոփա Ն.Ֆ. Ֆյոդորովը, ով թանգարանը համարում էր մարդկային գործունեության նպատակների և իմաստի վրա ակտիվորեն ազդող բարոյադաստիարակչական հաստատություն [135, էջ 89]: Ըստ Ն.Ֆ. Ֆյոդորովի, թանգարանը պետք է իր պարունակությամբ միշտ բաց լինի հասարակության բոլոր շերտերի համար, անկախ նրանց կրթական և սոցիալական մակարդակից:

Ռուսական թանգարանների մանկավարժական գործունեությունն առավել իմաստավորվեց «Էքսկուրսիոն բանբեր» հանդեսի հրատարակումով, որի 1916թ. հատուկ համարն ամբողջովին նվիրված էր դպրոցականների հետ թանգարանների աշխատանքներին:

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո թանգարանային և կրթական ռեֆորմներ իրականացվեցին, որոնց մեջ հատուկ տեղ էր զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը: Թանգարանային ռեֆորմի համաձայն նոր շունչ էր տրվում լուսավորական աշխատանքներին [114, էջ 175-178]:

Ռուսաստանում, թանգարանային մանկավարժների վաստակը շատ մեծ է, մեր կարծիքով, ամենագնահատելին այդ գործունեության շարունակականությունն է:

Ռուսական իրականության համար առավել բնորոշ էր մանկավարժական թանգարանների հիմնումը, որոնք կազմակերպվում էին ժողովրդական կրթության մարմինների նախաձեռնությամբ: Ռուսաստանում մինչև 1917թ. դրանց թիվը հասնում էր հազարի [143, էջ 32]: Ոչ միայն Ռուսաստանում, այլև ողջ Եվրոպայում 1864թ.-ին Սանկտ-Պետերբուրգում հիմնվեց զինվորական ուսումնական հաստատությունների մանկավարժական առաջին թանգարանը: Ինչպես նշում է նրա տնօրեններից Զ. Մակշեևը. «Մանկավարժական թանգարանները չպետք է ունենան կունտսկամերաների բնույթ, համալրման գործում նրանց առջև դրված է մեկ այլ խնդիր՝ հետևել կրթության և դաստիարակության բնագավառում տեսական և գործնական զարգացմանը, հնարավորինս կենտրոնացնեն ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ զննողական պարագաներ, համակարգեն այդ նյութերը, հնարավորություն ստեղծելով ժամանակակից մանկավարժին առանց ժամանակի և աշխատանքի մեծ կորուստի ծանոթանալ իր մասնագիտության տեխնիկական միջոցներին (սարքերին, քարտեզներին, մոդելներին, նկարներին և այլն)» [91, էջ 14]: Կարևորելով Պետերբուրգի բնակչության գեղագիտական դաստիարակության խնդիրը, թանգարանը կազմակերպում է ժողովրդական երգչախումբ և հանրությանը հասանելի երաժշտական դասընթացներ: Այստեղ գործում էր նաև Ռուսաստանում առաջին հոգեբանական լաբորատորիան: Թանգարանն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում դպրոցական զննողական առարկաներ պատրաստելու գործին, զբաղվում էր հրատարակչական գործունեությամբ, կազմակերպում էր մայրենի և օտար լեզուների, աշխարհագրության, բնագիտության և նկարչության ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Կարևոր է նշել, այս թանգարանի մասնակցությունը Ռուսաստանում և արտասահմանում անցկացված ուսումնական պարագաների ցուցահանդեսներին: Դրանց աշխարհագրությունը ձգվում էր Պետերբուրգից մինչև Փարիզ, Բրյուսելից մինչև Ֆիլադելֆիա և Չիկագո: Առանձնահատուկ նշանակություն ունեցավ այդ ցուցադրությունների հաջողությունը 1885թ. Փարիզում անցկացված համաշխարհային ցուցահանդեսի ժամանակ, որից հետո նմանատիպ թանգարաններ բացվեցին Ֆրանսիայում և Բելգիայում: 19-րդ դարի վերջին եվրոպական երկրներում, որոնցից առաջնային էին Գերմանիան և Անգլիան, գործում էին նմանատիպ մոտ 70 թանգարաններ:

Հայաստանում XX դարի սկզբներին Մանկավարժական թանգարան ստեղծելու գաղափարով տոգորված էին հայ առաջավոր մտավորականներից շատերը: Այդ ուղղությամբ սկսեցին գործնական քայլեր ձեռնարկվել, երբ 1910թ. մեծահարուստ Վարվառա Քանանյանը 30 հազար ռուբլի գումար նվիրաբերեց Մայր Աթոռին՝ Գևորգյան ճեմարանին կից մանկավարժական թանգարան հիմնելու համար: Հարցը Գերագույն հոգևոր խորհրդում և Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդի նիստում քննարկվելուց հետո որոշվում է՝ ճեմարանի արևելյան կողմում հատուկ շենք կառուցել մանկավարժական թանգարանի համար: 1911թ. «Արարատ» հանդեսում այդ խնդրին նվիրված հատուկ հոդվածով հանդես է գալիս ճանաչված մանկավարժ Գ. Էդիլյանը: Նա իրավացիորեն գտնում էր, որ մանկավարժական թանգարանի ստեղծումը մեծապես կնպաստի ճեմարանի ուսանողության մտահորիզոնի ընդլայնմանը, նրանց գործնական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, կօգնի լավ մասնագետների պատրաստմանը: «Ուսանողը, - գրում է Գ. Էդիլյանը, - այդտեղ յարմարութիւն կունենայ անձամբ տեսնելու, փորձելու, ծանոթանալու այն իրերի հետ, որոնց մասին խոսում է ուսուցիչը դասախոսությունների ընթացքում, իսկ սա մանկավարժութեան գործնականի հետ ծանոթանալու ամենաէական պայմաններից մեկն է» [14, էջ 147-154]: Մանկավարժական թանգարանի ցուցանմուշները պետք է ծառայեցվեին ոչ միայն Գևորգյան ճեմարանի, այլև դպրոցականների ուսումնառության նպատակներին: Այդ նպատակով որոշ

թանգարանային հավաքածուներ նախատեսված էր ուղարկել դպրոցներ, ինչպես նաև թանգարանում կազմակերպել մանկավարժական կուրսեր գյուղական ուսուցչության համար [99, էջ 45-47]: Էջմիածնի Գևորգյան ճեմարանին առընթեր Մանկավարժական թանգարանի հանդիսավոր բացումը կայացավ 1911թ. սեպտեմբերի 24-ին և արդյունավետորեն գործեց մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Այնպես որ, խորհրդային իշխանությունների կողմից 1921թ. դեկտեմբերի 18-ին «Հայաստանի Կենտրոնական մանկավարժական թանգարանի» հիմնումը, նույն իշխանությունների կողմից փակված Էջմիածնի Մանկավարժական թանգարանի ավանդույթների շարունակությունն էր՝ նոր գաղափարական հիմքերով:

1920-ական թվականների կեսերին մեծ զարգացում ստացած մանկավարժական թանգարանները 1930-ականների վերջերին ամբողջովին լուծարվեցին [38, էջ 35-36]:

Հետազոտողները փաստում են նաև մանկական թանգարանների նկատմամբ հասարակական հետաքրքրության երկու բուռն ալիք, որոնցից յուրաքանչյուրը պայմանավորված է կրթական համակարգում ճգնաժամային երևույթների առկայությամբ, կրթության ոլորտում ավանդական ձևերի և մեթոդների նորացման ուղիների փնտրտուքով:

Առաջին ալիքը կապված է 20-րդ դարասկզբի հետ, երբ առաջ եկան առաջին մանկական թանգարանները, իսկ 2-րդ ալիքը՝ 1960-ական թվականների, որը անվանվում է «մանկական թանգարանների վերածննդի շրջան»: Ըստ այդմ, մանկական թանգարանների համարյա հարյուրամյա պատմությունը կարելի է բաժանել 3 շրջափուլերի.

I շրջափուլ (1899-1925թթ.): Մանկական առաջին թանգարանների ստեղծման շրջան. Բրուկլինի մանկական թանգարան (1899), Վաշինգտոնի Ամիթսոնյան թանգարանի մանկական սրահ (1901), Բոստոնի մանկական թանգարան (1913), Դետրոյթի մանկական թանգարան (1917), Ինդիանապոլիսի մանկական թանգարան (1925): Մանկական թանգարանների այս շրջանի համար, հարկ ենք համարում հիշել Բրուկլինի մանկական թանգարանի հիմնադիր Աննա Բիլլինգ Գալլուպի

գործունեությունը, որը դարձավ մանուկների համար ինքնուրույն թանգարանի անհրաժեշտության ակտիվ լուսաբանողը:

II շրջափուլ (1925-1960թթ.): Այս տարիները կարելի է բնութագրել որպես երեխաների հետ թանգարանային աշխատանքի փորձի կուտակման և ձևերի կատարելագործման շրջան: Հարկ է նշել առաջին լուրջ մենագրությունների ի հայտ գալը, որտեղ վերլուծվում են մանկական թանգարանների գործունեությունը և երեխաների հետ թանգարանային աշխատանքի դրվածքը:

III շրջափուլ – 1960 թվական: Սկսվում է մանկական թանգարանների վերածնունդը ԱՄՆ-ում, որին բնորոշ է տասնյակ մանկական նոր թանգարանների ստեղծումը, ինչպես նաև երեխաների համար թանգարանային տարածության կազմակերպման հայեցակարգի վերանայումը: Այս առումով հիշատակման արժանի են Բոստոնի մանկական թանգարանի տնօրեն Մ. Սպոկի և Սան-Ֆրանցիսկոյի «Էքսպլորատորիումի» հիմնադիր Ֆ. Օպենհեյմերի անունները:

Մասնագետները կարծում են, պատահական չէ այն հանգամանքը, որ մանկական առաջին թանգարանները ձևավորվեցին՝ ծնվեցին 20-րդ դարում, այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի կրթական ավանդական համակարգը ճգնաժամ ապրեց: Փաստորեն ավանդական կրթական համակարգի նորացման գաղափարների հանրահռչակումը և հոգեբանամանկավարժական տեսությունների ձեռքբերումները դարձան կարևորագույն խթան Ամերիկայում մանկական թանգարանների և երեխաների համար մասնագիտացված թանգարանային ծրագրերի ստեղծման համար:

Առաջին մանկական թանգարանը բացվեց Բրուկլինում 1899թ.: Թանգարանի ստեղծման նախաձեռնողն էր բնագիտության ուսուցչուհի Աննա Բիլլինգ Գալլուպը, որին Ամերիկայում անվանում են «մանկական թանգարանի հայեցակարգի հիմնադիր»: Ինչպես նշում է Ն.Գ. Մակարովան. Ա. Գալլուպի կարծիքով, թանգարանը պետք է դառնա մի վայր, որտեղ երեխաները ոչ միայն կտեսնեն տարբեր ցուցանմուշներ, այլև իրենց կզգան բազմաթիվ հետաքրքիր արկածների և գործողությունների ազատ մասնակիցներ: Ընդ որում, երեխաներն իրենք կարող են ձեռք բերել գիտելիքներ՝ անհատական պահանջների և հետաքրքրությունների հիման վրա [95, էջ 24]:

Ա. Գալլուպի գաղափարները ընդունվեցին Բրուկլինի Արվեստի և գիտության ինստիտուտի կողմից և Մանկական թանգարանին հանձնվեց ինստիտուտին պատկանող Վիկտորինյան դարաշրջանի 2 շինություն, առանձնացվեց գիտական հավաքածուի մի մասը՝ ցուցադրություն կազմակերպելու համար:

Բրուկլինի մանկական թանգարանը, դառնալով երեխաների հետ աշխատանքի կազմակեպման և ցուցադրման նոր սկզբունքների կիրառման առաջնեկը, կարճ ժամանակում մեծ ճանաչում և հռչակ ստացավ ողջ երկրում: Թանգարանի գոյության առաջին տաս տարիների ընթացքում տարեկան այցելուների թիվը գերազանցում էր իննսունչորս հազարը:

Բրուկլինի մանկական թանգարանի գործունեության վերաբերյալ նկարահանվեց ֆիլմ՝ «Երեխան հետազոտում է իր աշխարհը» խորագրով (1938թ.), որը ևս նպաստեց մանկական թանգարանների գաղափարի հանրայնացմանը և ուսուցանող նյութ հանդիսացավ ուսուցիչների համար՝ հեռավար կրթության խնդիրների լուծման գործում: Այս ժամանակից ի վեր սկսվում է թանգարանի նոր տիպի պատմությունը, որտեղ և հավաքածուները, և՛ ցուցադրման հնարքները, և՛ լսարանի հետ աշխատելու մեթոդներն ու ձևերը միտված են երեխաների հետաքրքրությունների և պահանջների բավարարմանը: Մանկական սենյակում ցուցադրության կազմակերպման համար հաշվի էին առնվել երեխաների ընկալման հնարավորությունները և հետաքրքրությունները: Հիմնականում ցուցանմուշները տեղադրված էին այնքան ցածր, որպեսզի երեխաները առանց որևէ դժվարության կարողանան մանրամասնորեն տեսնել դրանք, իսկ լատիներենով գրված ավանդական բացատրագրերը փոխարինվեցին երեխաներին հասու բացատրական տեքստերով: Ցուցադրությունում մեծ տեղ էր հատկացվել «կենդանի ցուցանմուշներին», ակվարիում՝ կենդանի ձկներով, երգող թռչուններ և զանազան կենդանիներ: «Գիտելիքները ծնվում են զարմանքից և բացահայտումից» կարգախոսը, որը գրված էր Սմիթսոնյան ինստիտուտի մանկական սենյակի մուտքի մոտ, հետագայում դարձավ «Բացահայտման սենյակի» հայեցակարգի հիմքը [43, էջ 48]:

Բրուկլինի օրինակով 1913թ. հիմնադրվեց Բոստոնի մանկական թանգարանը: Թանգարանի ստեղծման նախաձեռնողներն էին մի խումբ համալսարանական դասախոսներ և դպրոցի ուսուցիչներ («Science Teacher's Service»), որոնք դեռևս 1908թ. ակտիվորեն պրոպագանդում էին կրթության առարկայական մեթոդը՝ օգտագործելով Բոստոնի պատմության թանգարանի հավաքածուների մի մասը դպրոցական պարապմունքների համար: Թռչունների, ծովային խխունջների, հանքաքարերի հավաքածուները մանկական թանգարանի ցուցահանդեսի համար հիմնաքար դարձան, որոնց համար Բոստոն քաղաքի այգիների դեպարտամենտը, քաղաքային հիասքանչ այգում հատկացրեց 19-րդ դարի կալվածատիրական մեծ տուն: 1915թ. թանգարանում ամբողջ մի հարկ ցուցադրություն բացվեց՝ նվիրված ազգաբանության խնդիրներին: Նույն թվականին դպրոցական խմբերի համար կազմակերպվեց 225 թանգարանային դասախոսություններ, իսկ այցելուների թիվը որոշ օրերին գերազանցեց երկու հազարը: Այս թանգարանն առաջինն էր, որտեղ կազմակերպվեցին հատուկ ծրագրեր կույր և խուլ երեխաների համար: Բոստոնի Մանկական թանգարանի աշխատակիցները մեծ կարևորություն էին տալիս թանգարան-դպրոց կապին և թանգարանի հավաքածուները տրամադրում էին դպրոցներին՝ դասի ընթացքում օգտագործելու համար:

1917թ. մանկական թանգարան բացվեց Դետրոյթում: Վերջինս Ամերիկայում առաջին թանգարանն էր, որը ձևավորվեց որպես պետական դպրոցական համակարգի մաս:

Մանկական թանգարանների ստեղծումը՝ որպես այլընտրանքային կրթության կենտրոնների, հնարավորություն տվեց հոգեբանամանկավարժական նոր մտահղացումների և մեթոդների գործնական կիրառման համար: Ըստ այդմ՝ թանգարանային ցուցադրության սկզբունքների փոփոխությունները հանգեցրեց թանգարանային ցուցադրության՝ որպես այցելուին ուղղված տեսողական-տարածական տեքստի տեսություն: Մշակվեցին ցուցադրության կառուցման նոր սկզբունքներ, որոնք ապահովում են սովորողի կամ թանգարանային տեղեկատվություն այլ սպառողի մուտքը ցուցադրություն՝ որպես որոշակի կրթական

տարածք: Թանգարանային մանկավարժի խնդիրն, այս դեպքում դառնում է ուսումնական գործընթացի կառավարումը [138, էջ 7]:

Ռուսաստանում երեխաների համար ստեղծված առաջին հաստատությունը մանկական ակումբն էր, որի հիմնադիրն էր «Սետլեմենտ» խմբակը: Այն հիմնադրվել էր 1905թ. մի խումբ մանկավարժների կողմից՝ Ա.Ս. Շացկու, Լ.Կ. Շլեգերի և Ա.Ու. Զելենկոյի գլխավորությամբ, որոնց նպատակն էր անապահով ընտանիքների երեխաների հետ մշակութալուսավորական աշխատանքի իրականացումը: Ակումբը, որը հիմնադիր խմբակի կողմից անվանվեց «Սետլեմենտ», գտնվում էր Մոսկվայում: Երեկոյան այստեղ հավաքվում էին քաղաքի տարբեր թաղամասերից երեխաներ, զանազան խմբակներում պարապմունքների համար: Երեխաներն առաջին իսկ օրվանից այդ սրահը անվանեցին «թանգարան» և սկսեցին զբաղվել «ցուցանմուշների» ձեռքբերմամբ:

Նոր հիմնված մանկական ստեղծագործության այս յուրատեսակ թանգարանը դադարեցրեց իր գոյությունը, թեև ապացուցեց, որ երեխաների հետ ազատ աշխատանքը լավ արդյունքներ է տալիս ոչ միայն Հյուսիսային Ամերիկայում, այլև Ռուսաստանում:

Ռուսական առաջին մանկական թանգարանը ձեռք բերեց մանկական ստեղծագործության թանգարանի բնույթ, դառնալով անհատական և խմբակային ստեղծագործության բացահայտման կարևոր միջոց և խթան: Թանգարանի այս մոդելը կարող ենք անվանել թանգարան-արվեստանոց:

Հետհեղափոխական ժամանակաշրջանն արդիականացրեց մանկական թանգարանի գաղափարը, այն նշանավորվեց դպրոցական համակարգում լայնամասշտաբ բարենորոգումների անցկացմամբ՝ ընդ որում, հենք ունենալով կրթության ամերիկյան մոդելը:

Ռուս հետազոտող, ճարտարապետ և մանկավարժ Ա.Ու. Զելենկոն (1871-1953), ապրելով Ամերիկայում 1903-1904թթ., ծանոթացավ ամերիկյան կրթական համակարգի հետ: Վերադառնալով ԱՄՆ-ից, նա հանրությանը ներկայացրեց «Հյուսիսային Ամերիկայի մանկական թանգարանները» գիրքը, որտեղ ոչ միայն պատմեց Ամերիկայի

և Եվրոպայի մանկական թանգարանների մասին, այլև առաջարկեց սեփական հայեցակարգը [95, էջ 25]: 1926-1929 թվականներին դառնալով «Արտադպրոցական աշխատանքների ինստիտուտի» անդամ, հնարավորություն ստացավ գործնականում իրականացնել որոշ մտահղացումներ: Նա գրում է. «Ժամանակակից թանգարանը հանդիսանում է կենդանի, գործուն հասարակական ինստիտուտ, այլ ոչ թե արվեստի կամ գիտության գերեզմանոց, այն աշխատում է ոչ միայն մեծահասակների, այլև երեխաների հետ և հանդիսանում է 20-րդ դարի զավակը: Նրանից հետո գալիս է մարդկության մշակույթի ևս մեկ ստեղծագործություն՝ ինքնուրույն մանկական թանգարանը, որը կսպասարկի «փոքրիկ ժողովրդի» կարիքները նույնքան լայնածավալ, ինչպես դա անում են մեծահասակների համար ժամանակակից թանգարանները» [144, էջ 16]: Ընկերների հետ նա կազմակերպում է մանկական ցուցահանդեսների շարք և փորձում թանգարան ներմուծել երեխաների հետ աշխատանքի ամերիկյան մեթոդը: Պետք է նշել, որ Ա.Ու. Զելենկոյի հիրավի նորարական թանգարանային մանկավարժական գործունեությունը ըստ արժանվույն չգնահատվեց ժամանակի մանկավարժների կողմից: 1930-ական թվականներին Ա.Ու. Զելենկոն դադարում է զբաղվել մանկական թանգարանների խնդիրներով:

Ա.Ու. Զելենկոն «Մանկական թանգարան-ամրոց» նախագծի հեղինակն էր, որի հայեցակարգը նախատիպը չուներ: Հենվելով այն փաստի վրա, որ երեխաները աշխարհը ճանաչում են զգայարանների միջոցով, նա գտնում էր, որ մանկական թանգարանը պետք է երեխաներին հասանելի լինի զգայական ընկալման մեթոդով: Պետք է այնպես կազմակերպել ցուցադրությունը, որ երեխաների մոտ անհագ ցանկություն առաջանա տեսնելու, լսելու, դիպչելու, փորձելու, ինչպես նաև բացահայտելու և իր ձեռքերով ինչ-որ բան ստեղծելու: Եվ պատահական չէ, որ այս մանկավարժական հաստատության նախագծում ենթադրվում էր ներառել «համեղ իրեր», «ծիծաղելի իրեր», «դիպչիր և գուշակիր», «լույս և խավար», «հետաքրքիր հոտեր», «հիասքանչ մարդիկ» և այլ բաժիններ: Ա.Ու. Զելենկոն անհրաժեշտ էր համարում տարբեր դարաշրջանների զգեստների միջոցով թանգարանում ստեղծել «անցյալի մեջ ընկղմվելու» միջավայր: Այստեղ պետք է իրենց տեղը գտնեին թատրոնը,

հանգստի տարածքները, սրճարանը և գրադարանը: Անգամ նման կարճ շարադրանքից կարելի է դատել նախագծի կարևորության մասին: Սակայն, չնայած դրան, նախագիծը, որը ժամանակից առաջ էր ընկել, չիրականացվեց:

Մոսկվայում 1920թ. բացվեց Խաղալիքի թանգարանը: Այս թանգարանի հեղինակն էր Ն.Դ. Բարտրամը՝ նկարիչ-խաղալիքագործ (1873-1931), որն իր ամբողջ կյանքը նվիրեց խաղալիքների պատրաստմանը և դրանց հետազոտմանը: Թանգարանի ցուցադրությունը, որը բաղկացած էր չորս սրահներից, բացահայտում էր խաղալիքի և խաղի շրջափուլերը երեխայի կյանքում: Խաղը և նրա հաջորդ աստիճանը՝ թատերականացումը, դարձան թանգարանի անբաժանելի մասը: Երեխաներին թույլ էր տրվում խաղալ: Խաղերի համար նախատեսվեց հատուկ արվեստանոց, որտեղ երեխաները կարող էին տրվել սիրված զբաղմունքին, իսկ մեծերը հետևում էին երեխաներին:

1929թ. Մոսկվայում մանկավարժ և թանգարանային գործիչ Յու.Պ. Մեկսինի ջանքերով հիմնադրվեց «Մանկական գրքի» թանգարանը: Վերջինիս նպատակն էր 8-16 տարեկան երեխաներին ծանոթացնել գրքի ստեղծման պատմությանը, բովանդակությանը և ձևավորմանը: Ստեղծվելով մանկական գրքի ցուցահանդեսի հիման վրա՝ թանգարանը իրենից ներկայացնում էր բազմագործառնական տարածք, որը ընդգրկում էր ցուցադրություն, խաղային գոտի, գրադարան, թատրոն և արվեստանոց: Ցուցադրությունը այնպես էր կազմակերպված, որ երեխաներին հնարավորություն էր տրվում մասնակցելու նրա առանձին մասերի կազմակերպմանը: Թանգարանին կից գործում էր նաև ստվերների թատրոնը: Այսպիսով, «Մանկական գրքի» թանգարանը և՛ դինամիկ ցուցադրություն էր, և՛ խաղային տարածք, և՛ հաղորդակցվելու վայր: Թանգարանը մեծ ճանաչում էր վայելում ոչ միայն Մոսկվայում, այլև նրա սահմաններից դուրս: Ռիգայում, Բեռլինում, Համբուրգում, Պրահայում, Վիեննայում անցկացված ցուցահանդեսները հնարավորություն էին տալիս պատկերացում կազմելու թանգարանային մանկավարժության խնդիրների լուծման ռուսաստանյան մասնագետների տեսակետներին:

Վերոհիշյալ բոլոր թանգարանները կրում էին իրենց հիմնադիրների գաղափարները [93]: Սակայն դրանով հանդերձ ունեին շատ ընդհանրություններ, հաշվի էին առնվում մանկական հոգեբանության առանձնահատկությունները և հենվելով զգայական ընկալման ու երեխայի ակտիվության վրա, փորձում էին ապահովել աշխարհի ճանաչումը խաղի միջոցով: Թանգարանի այս մոդելը կարող ենք անվանել խաղ-թանգարան:

1.2. Թանգարանային մանկավարժության գործառնությունն ըստ հարացույցների

Թանգարանը դիտարկելով որպես կրթության ճգնաժամը հաղթահարելու լավագույն միջոց՝ Եվրոպայի դպրոցներում բարեփոխումներ էին իրականացվում՝ որպես նոր մանկավարժական գաղափար, առաջարկելով «չոր» դասավանդման փոխարեն անցնել առարկայական և զննողական միջոցների օգնությամբ կրթության կազմակերպմանը:

«Առանց հասկանալու թանգարան երևույթը, թանգարանի սոցիալական և մշակութային գործառույթները, տեսությունը նման է շինարարության շուրջ կառուցվող ժամանակավոր ցանկապատի: Այս ամենը փոխկապակցված են և առանց մեկմեկու անհնար է պատկերացնել թանգարանային մանկավարժությունը: Նույն կերպ, այսօրվա թանգարանային գործը չի կարող գոյություն ունենալ, առանց մանկավարժության, հոգեբանության, մշակութաբանության, սոցիոլոգիայի, փիլիսոփայության և այլն» [139, էջ 87]:

Ելնելով այցելուների հետ կատարվող աշխատանքից և թանգարանի հասարակական նշանակությունից, թանգարանի կրթադաստիարակչական գործունեության զարգացման ամբողջ ընթացքում, կատարվում է կրթական հարացույցերի փոփոխություն [114, էջ 349]:

Ըստ հասարակական-քաղաքական պահանջի, թանգարանը՝ որպես սոցիալ-մշակութային համակարգի բաղկացուցիչ, որոշակի ժամանակաշրջաններում

իրականացրել և իրականացնում է գործունեության տարբեր հարացույցեր, որոնցից են.

1. Լուսավորական հարացույցը զարգացավ 1870-1890-ական թվականներին և տևեց մինչև 20-րդ դարի երրորդ տասնամյակի կեսերը: Այդ ժամանակից սկսած և հետագայում նույնպես դիտվում է միտում. «ըստ թանգարանի կրթական հայեցակարգի, այցելուների հետ աշխատանքի ամենազգալի փոփոխությունները ձեռք ձեռքի են գնում դպրոցական կրթության բարեփոխումների հետ» [144, էջ 21]:

Անգլիացի ճարտարապետ Գ. Զեմփերը 1851թ. Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսի ժամանակ առաջարկեց՝ թանգարանների բազայի հիման վրա վարպետների պատրաստման մեթոդը: Զարգացնելով Գ. Զեմփերի «գործնական գեղագիտության» ուսմունքը, մի խումբ ճարտարապետներ և արվեստաբաններ հիմնեցին Արվեստի և Արդյունաբերության Ավստրիական թանգարանը, որին կից բացվեց Կիրառական արվեստի դպրոցը:

1890-ական թվականներից Դետրոյթի արվեստի թանգարանը սկսեց լայն կրթական գործունեություն ծավալել կիրառական արվեստի, հնագիտության, գրականության ուղղությամբ: Թանգարանը հիմնում էր տարբեր բնույթի ընկերություններ և ասոցիացիաներ, օրինակ՝ «Նկարիչ կանանց ընկերություն», «Գրադարանների աշխատակիցների ասոցիացիա», որոնք ուղղակի վկայում են, որ թանգարանը վեր էր ածվել մանկավարժական և կրթական օջախի:

1870թ. Նյու Յորքում հիմնված խոշորագույն թանգարաններից մեկի՝ «Մետրոպոլիտենի» նպատակը դարձավ գեղեցիկ արվեստների ուսումնասիրումն ու տարածումը և դրանց կիրառումը առօրյա կյանքում: Այս թանգարանը կրում էր անգլիական և գերմանական թանգարանների ազդեցությունը: Այսօր այն ամերիկյան օրինակելի թանգարան է և՛ իր հավաքածուների քանակով, և՛ այցելուների հետ աշխատելու ձևերի զանազանությամբ (էքսկուրսիաներ, համերգներ, դասախոսություններ, կինոֆիլմեր, ուղեցույցներ և այլն):

Ամերիկյան թանգարանները շատ արդյունավետ համագործակցում էին կրթօջախների հետ, որն էլ հնարավորություն տվեց ստեղծելու կրթության տեսության և պրակտիկայի հիմունքների հաստատված համակարգ:

1923թ. Խարկովում հրատարակվեց Ֆ.Ի. Շմիտի «Արվեստը որպես կրթության առարկա» աշխատությունը, որտեղ արծարծվում էին երեխաների գեղագիտական դաստիարակության նպատակներն ու խնդիրները [140, էջ 18]:

Թանգարանային կրթական հարցերին մեծ նշանակություն է տվել նաև Ա.Վ. Բակուշինսկին: Լինելով ականավոր մանկավարժ, արվեստաբան և քննադատ, Ա.Վ. Բակուշինսկին մշակել է գեղարվեստական թանգարաններում էքսկուրսիոն աշխատանքի միջոցով գեղարվեստական դաստիարակության տեսությունը [45, էջ 11]: Թանգարանային մանկավարժի առջև Ա.Վ. Բակուշինսկին դնում էր երեք պարտադիր պայման՝

- կարողանալ ինքնուրույն վերապրել արվեստի ստեղծագործությունը
- իմանալ արվեստի գործի պատմաարվեստագիտական համատեքստը
- ունենալ հոգեբանական մոտեցում խմբի նկատմամբ:

2. Քաղաքականացված հարացույցի հաստատումը վերաբերվում է 1920-50-ական թվականներին, երբ թանգարանը սկսվում է դիտարկվել որպես «քաղաքական լուսավորության հաղորդակից», «քաղաքական և լուսավորական աշխատանքի հզոր զենք» և նախկինում մշակված կրթական ծրագրերն արդեն ծառայում էին նոր նպատակների [57, էջ 25]: Այցելուների հետ կատարվող աշխատանքը կոչվեց քաղլուսավորական-մասսայական: Խորհրդային միությունում լուսավորական ծրագրեր իրականացնող կուլտուր-լուսավորական հիմնարկությունից թանգարանը վերածվում է քաղաքացիներին պրոլետարական պետության քաղաքականության ոգով դաստիարակելու պետական քաղաքական կենտրոնի: Նոր երևույթ էր նաև հակակրոնական թանգարանների և պատմական բնույթի թանգարաններում հակակրոնական բաժինների ստեղծումը [114, էջ 344]:

Համապատասխանաբար խիստ աճում է պատմահեղափոխական թեմաներին նվիրված մասը, կրթական գործունեությունը ամբողջովին նվիրվում է գաղափարական

և հակակրոնական պրոպագանդային: Թանգարանային կրթական ծրագրերի կազմակերպման վրա իրենց ազդեցություն են թողնում ժամանակի մարքս-լենինյան գաղափարախոսությունը:

1941-1945 թվականների Հայրենական պատերազմից հետո գաղափարախոսական պարտադրանքը շարունակվեց: Խորհրդային Միության կազմում գտնվող Խորհրդային Հայաստանն էլ էր իրականացնում թանգարանային գործին նվիրված միութենական կառավարության ընդունած որոշումները, որոնք հիմնականում նպատակաուղղված էին թանգարանները վերածելու յուրօրինակ գաղափարական կենտրոնի, քաղաքական գործիքի, որով հնարավոր կլիներ ձևավորել հանրության աշխարհայացքը:

Չնայած, որ այդ ժամանակահատվածն արժանի է որոշակի քննադատական մոտեցման, սակայն պետք է նշենք, որ հենց այդ ընթացքում այցելուների հետ աշխատանքը հարստացավ բազմաթիվ նոր աշխատաձևերով:

3. Տեղեկատվական հարացույցը ձևավորվեց 1960-1980-ական թվականների կեսերին: Այդ տարիներին փորձ էր արվում թանգարանին վերադարձնել գիտական հաստատության կարգավիճակ: Թանգարանը դիտվում էր որպես գիտական բնույթի գիտելիքներ տարածելու միջոց և աշխատանքը այցելուների հետ կոչվում էր գիտալուսավորական, ինչը նշանակում է, որ թանգարանի կրթադաստիարակչական գործունեությունը իրականացվում էր գիտական հետազոտությունների սկզբնաղբյուրի հիման վրա: Թանգարանը տարածում էր գիտելիքներ, որոնց հիմքում թանգարանային առարկան էր, իսկ այցելուն դիտարկվում էր իբրև տեղեկատվության սպառող:

Հայաստանում թանգարանը մնում էր գաղափարական հաստատություն, որի գործունեությունը կախված էր կուսակցական ապարատի որոշումներից: Ընդհուպ մինչև 1980-ականների վերջը թանգարանի գիտալուսավորական աշխատանքը պիտի իրականացվեր «լենինյան պրոպագանդայի կոմունիստական սկզբունքներին» համապատասխան: Թեև թանգարանի կրթադաստիարակչական գործունեության բուն նպատակը պաշտոնական գաղափարախոսության արմատավորումն ու այլախոհության դեմ պայքարն էր, «վերակառուցման» հետ մեկտեղ «պրոպագանդա», «քաղլուս» եզրույթները փոխարինվեցին «գիտական պրոպագանդա», «մասսայական

լուսավորական գործունեություն», «գաղափարական դաստիարակություն», եզրույթներով: Խորհրդային տարիներին, առաջին անգամ, թանգարանը, կարևորելով սկզբնաղբյուրում պարունակվող գիտելիքների տարածումը, իրականացնում է զանազան կրթական աշխատաձևեր՝ պատմությանն ու մշակույթին մերձենալու նպատակով [3, էջ 7]:

Հայաստանում 1978-1990-ական թվականներին, այցելուների համար նախատեսված կրթական բազմաշերտ ծրագրերի կազմակերպման յուրատիպ դպրոցի էր վերածվել Հայաստանի Ազգագրության Պետական թանգարանը, որը հայտնի էր այցելուների տարիքային ու սոցիալական տարբեր շերտերի համար իրականացվող բազմաբնույթ և բովանդակալից կրթական աշխատանքով, ինչի շնորհիվ էլ մտնում էր խորհրդային լավագույն թանգարանների հնգյակի մեջ: Այն դարձել էր Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիրի մարզ) շրջանի մշակութային կենտրոն: Տարբեր դպրոցներում, տեխնիկումներում, հիմնարկներում, զորամասերում և գյուղերում թանգարանը կազմակերպում էր «Կուլտուրայի ժողովրդական համալսարանի» դասընթացներ, ակումբներ, կինոլեկտորիումներ, խմբակներ և այլն: Օրինակ՝ «Երկրամասը, որտեղ ծառայում եմ» ակումբի միջոցով, սահմանապահ զորամասի ծառայողների համար, կազմակերպվում էին դասախոսություններ Հայաստանի պատմության, մշակույթի, քաղաքականության կարևոր իրադարձությունների մասին, համերգներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ անվանի մարդկաց հետ: Հատուկ մշակված ծրագրեր էին իրականացվում դպրոցականների («Պատանի հայագետ» խմբակը, թեմատիկ էքսկուրսիաներ), կոլտնտեսականների և ծառայողների («Ժողովրդական համալսարանի» տարբեր ֆակուլտետներ, «Աշխարհի քաղաքական քարտեզի առջև» լեկտորիումը) համար մշակված ծրագրեր, համերգ-դասախոսություններ և այլ բազմաբնույթ կրթական ծրագրեր:

Նշված կրթամշակութային գործընթացներին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև ատենախոսը:

Հարկ է նշել, որ այդ ժամանակ թանգարանների և հուշարձանների հանդեպ ուշադրության նման դրսևորումը բնորոշ էր ոչ միայն Հայաստանին, ինչը վկայում է, որ

մշակութային կյանքը պետք չէ բացատրել բացառապես քաղաքականությամբ [114, էջ 352]:

Թանգարանային կրթական գործունեության այս փուլում մեծ էր գիտության և մշակույթի հարցերով զբաղվող միջազգային խորհրդի (ՅՈՒՆԵՍԿՕ) ուշադրությունը: Թանգարանների միջազգային խորհրդին (ԻԿՕՄ) կից ստեղծվեց երեխաների հետ թանգարանային կրթական աշխատանքի հարցերով զբաղվող հատուկ խումբ:

4. Հաղորդակցական հարացույցը թանգարաններում ձևավորվում է 1980-ական թվականների վերջերից: Այն առաջին անգամ ձևակերպվեց կանադացի գիտնական Դունկան Կամերոնի կողմից: Ըստ նրա, թանգարանային հաղորդակցությունը այցելուի և թանգարանային ցուցանմուշների միջև շփման գործընթաց է: Այս շփման հիմքում, մի կողմից ցուցանմուշների օգնությամբ ոչ խոսքային տարածական «արտահայտություն» ստեղծելու հնարավորությունն է, մյուս կողմից՝ «իրերի լեզուն» հասկանալու այցելուների ունակությունը [141, էջ 330]:

Այս մոտեցումը թույլ տվեց ստեղծել թանգարանի և լսարանի փոխազդեցության վերաբերյալ մի շարք հնարավորություններ: Ձևավորվում է հետադարձ կապ այցելուի և թանգարանի միջև: Գործնական աշխատանքում թանգարանային աշխատակցի մենախոսությունը հետզհետե վերածվում է այցելուի հետ երկխոսության: Լսարանի հետ աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել այցելուների ընկալման հնարավորություններն ու առանձնահատկությունները, ինչն էլ առաջացնում է թանգարանում մարդկանց տարբեր տարիքային խմբերի ընկալման առանձնահատկություններին տիրապետող մասնագետի՝ թանգարանային մանկավարժի կարիք [70, էջ 181-186]:

Թանգարանային հաղորդակցության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կենտրոնական տեղը հատկացվում է այցելուին, իսկ աշխատակցին հատկացվում է միջնորդի, հաղորդողի, թարգմանիչի կամ մեկնաբանողի դեր [49, էջ 418]:

Հայաստանում այս հարացույցը ավելի ուշ գործեց, նորություն մտցնելով թանգարանի ու այցելուների փոխհարաբերությունների մեջ: Մեզ մոտ թանգարանի

աշխատակիցը հանդես է գալիս որպես հիմնական դեմք, զբաղեցնում է գերակշռող, հեղինակային դիրք հաղորդակցության համակարգում, մինչդեռ այցելուին, ինչպես և անցյալում, հատկացվում է ունկնդրի պասիվ դերակատարություն [33, 26-32]:

Թանգարանը, ի տարբերություն դպրոցի, գրքի և քաղաքակրթական այլ նվաճումների, մարդուն տալիս է անձամբ վերապրելու հնարավորություն, ոչ միայն գիտելիքներ, այլև անձնական վերաբերմունք պատմության հանդեպ:

1960-1970-ական թվականներին Եվրոպայում ձևավորված «թանգարանային պայթյունը» մեծ ազդեցություն թողեց թանգարանների գործունեության զարգացման ընթացքի վրա, սակայն Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակում թանգարաններին այլ դեր էր վերապահված: 1989 թվականին Հոկտեմբերյանի և Բաղրամյանի շրջան էին տեղափոխվել անապաստան հայեր Ադրբեջանի շրջաններից և երկրաշարժի գոտուց, Հայաստանի ազգագրության պետական թանգարանը կազմակերպեց կրթադաստիարակչական ծրագրեր արհավիրքից փրկված, սակայն ծանր հոգեբանական վիճակում գտնվող երեխաների համար (հավելված 1):

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում՝ 1988թ. Սպիտակի աղետաբեր երկրաշարժից հետո, Արցախյան պատերազմի, շրջափակման, էներգետիկ և տնտեսական ճգնաժամերի տարիներին (1991-1995թթ.) թանգարանները հայտնվեցին բարդ կացության մեջ, քանզի դժվար էր իրականացնել կրթական ծրագրեր նվազագույն ֆինանսավորման և ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական բարդ պայմաններում: Թանգարանների գերխնդիրը հավաքածուներն ու շենքերը պահպանելն էր: Թանգարանային մնացյալ գործառույթները մղվել էին երկրորդ պլան:

Խորհրդային միության փլուզման հետ մեկտեղ՝ վերադասի հրահանգները պարտադիր կատարելու անհրաժեշտության բացակայությունը որոշ թանգարաններում հանգեցրեց կրթական ծրագրերի իսպառ բացակայության: Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ թանգարանների մեծ մասը թերանում էր իրականացնել կարևորագույն առաքելություններից մեկը՝ այցելուներին կրթելն ու դաստիարակելը անցյալի դրական

փորձի հիման վրա: Թեպետ դրանց կարևորությունը հստակ գիտակցվում էր և որոշակի փորձ էր արվում նաև այդ ուղղությամբ:

1.3. Թանգարանային մանկավարժությունը որպես գիտական դիսցիպլին

XXI դարը խոստանում է լինել թանգարանային գործի բարգավաճման ժամանակաշրջան: Այսօր դժվար է պատկերացնել հանրային կրթամշակութային սպասարկման համակարգն առանց թանգարանի, ուստի և առանց իրավասու, բանիմաց մասնագետների, ովքեր լավատեղյակ են թանգարանային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկություններին:

Դեռևս 1970-ական թվականներին Մոսկվայում տեղի ունեցած «Գեղարվեստի թանգարանների դերը դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում» գիտական սեմինարի մասնակիցները քննարկեցին թանգարանային մանկավարժության հիմնախնդիրը, որը պետք է ապահովեր թանգարանային հավաքածուների նկատմամբ գիտական մոտեցում՝ հոգեբանամանկավարժական ազդեցությամբ այն օգտագործելու հնարավորությունները [121, էջ 580]:

Ռուսաստանում թանգարանների կրթական գործունեության զարգացումը հանգեցրեց նոր գիտական դիսցիպլինի՝ թանգարանային մանկավարժության առաջացմանը՝ որպես այդ գործունեության գիտական հիմք: Թանգարանային մանկավարժության ոլորտում հայտնի մասնագետ Մ. Յուխնևիչը նշում է. «թանգարանային մանկավարժության խնդիրների քննարկման համատեքստում կրթություն հասկցությունը մեկնաբանվում է լայնորեն՝ որպես մարդու զարգացում, նրա անհատական գծերի, հոգեկան հատկությունների, աշխարհի հանդեպ արժևորող հարաբերությունների կրթություն» [144 , էջ 47]:

Թանգարանային մանկավարժությունը գիտական դիսցիպլին է, որը կարճ ժամանակի ընթացքում դարձավ ուսուցման առարկա ողջ աշխարհում, այն գտնվում է թանգարանային գործի, մանկավարժության և հոգեբանության տիրույթում, որտեղ թանգարանը դիտարկվում է որպես կրթական համակարգի բաղկացուցիչ [114,էջ 354]:

Հայաստանում, թանգարանային մանկավարժությունը գերմանական և ռուսական թանգարանային ավանդույթների շարունակողն է, որտեղ նույնպես այն սահմանվում է որպես գիտական դիսցիպլին: Թանգարանային մանկավարժությունը՝ որպես թանգարանի գիտագործնական ոլորտ, սերտորեն կապված է մանկավարժության, թանգարանագիտության, հոգեբանության և սոցիոլոգիայի հետ: Թանգարանի լայնածավալ նյութերի հիման վրա, թանգարանային կրթական ծրագրերի շրջանակներում, ապահովվում է այցելուների ուսուցման և կրթության հարցերը, դրանց տեսական իմաստավորումը, ինչպես նաև այնպիսի մասնագետների պատրաստումը, ովքեր թանգարանային միջավայրի և ուսումնական հաստատության պայմաններում կարող են լուծել մանկավարժական խնդիրներ:

Թանգարանային մանկավարժությունը հասել է տեսական և գործնական այնպիսի մակարդակի, որը թույլ է տալիս այն ընդգրկել մանկավարժական գիտության ոլորտում: Պատահական չէ, որ թանգարանային մանկավարժությունը հանդես գալով որպես մանկավարժական գիտության բնագավառ, ինտեգրվել է տարբեր ուղղություններից յուրաքանչյուրի մեջ [128, էջ 104]:

Թանգարանային մանկավարժությունը՝ որպես գիտության բնագավառ, ունի կատեգորիաների և հասկացությունների իր համակարգը, որոնք արտացոլում են թանգարանի կրթական գործունեության հիմնական բովանդակությունը և գտնվում են մանկավարժական գիտության հասկացությունների շրջանակում, զարգացնելով արդեն ծանոթ սահմանումները և ստեղծելով նորերը, դրանով իսկ ընդգծելով թանգարանային մակավարժության առանձնահատկությունները [159, 160, 163]:

Ինչպես նշում է Մ.Յու. Յուխնևիչը, թանգարանային մանկավարժությունը պետք չէ հանգեցնել միայն թանգարանի և դպրոցի համագործակցության, այդ հասկացությունը կարիք ունի ավելի ընդարձակ մեկնաբանման, նրա շրջանակներն ընդգրկում են «… թանգարանի և նրա լսարանի, թանգարանի և հասարակության փոխազդեցության տարբեր ոլորտները: Այդ փոխազդեցության խնդիրները լուծելիս անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն թանգարանագիտության, այլև

մանկավարժության, հոգեբանության, սոցիոլոգիայի հնարավորությունները» [145, էջ 29]:

Սոցիալ-մշակութային գործունեության համակարգում, այս կատեգորիաների և հասկացությունների տրամաբանական շարքն անհրաժեշտ է՝ որպես թանգարանային կրթական գործընթացների ուսումնասիրման գործիք: Այն օգնում է նաև պարզելու թանգարանային մանկավարժության տեղն այլ գիտությունների շարքում՝ հիմնվելով թանգարանագիտության, մանկավարժության և հոգեբանության, ինչպես նաև մշակութաբանության, պատմության և այլ գիտությունների վրա:

Մոտ տաս տարի անց «Թանգարանը և դպրոցը» գիտաժողովի ժամանակ Ա.Մ. Ռազգոնը նշում է. «... այնպիսի գիտական դիսցիպլինի ստեղծումը, ինչպիսին թանգարանային մանկավարժությունն է, գտնվում է գիտությունների մի ամբողջ համալիրի կենտրոնում, հանդիսանում է ոչ թե հեռանկար, այլ առօրյա գործնական խնդիր» [117, էջ 42], որտեղ թանգարանային մանկավարժության համար կարևորվում են՝

- թանգարանային մանկավարժական ազդեցության բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը,
- ազդեցության առանձնահատկությունները բնակչության տարբեր կատեգորիաների հետ աշխատելիս,
- թանգարանի տեղը սոցիալ-մշակութային հիմնարկների համակարգում:

Ուստի անհրաժեշտ է.

- ուսումնասիրել մանկավարժական ղեկավարման մակարդակի բարձրացման հնարավորությունները,
- որոշել թանգարանային լսարանի տարբեր սոցիալական և տարիքային խմբերի վրա թանգարանի մանկավարժական ազդեցության յուրահատկությունները՝ պայմանավորված այցելուների հանդեպ տարբերակված մոտեցման անհրաժեշտությամբ,
- ընդհանրացնել տարբեր թանգարանների կրթադաստիարակչական գործունեության փորձը և մշակել գիտամեթոդական հանձնարարականներ,

- բացահայտել թանգարանի և այլ ուսումնական հաստատությունների համատեղ աշխատանքի առավել արդյունավետ ձևերն ու մեթոդները,
- մանկավարժական գործընթացում ակտիվացնել և ձևավորել անձի ստեղծագործական ունակությունները:

Թանգարանային մանկավարժական գործընթացը կարելի է ներկայացնել 3 փոխկապակցված օղակների տեսքով՝ թանգարանային մանկավարժ - թանգարանային առարկա - թանգարանային այցելու.

Գծապատկեր 1.



Թանգարանային մանկավարժն իրականացնում է կրթական գործընթաց, կազմակերպում այցելուի և թանգարանային առարկայի անմիջական շփումը կրթական ծրագրի շրջանակներում:

Թանգարանային մանկավարժի աշխատանքի յուրահատկությունը կայանում է ոչ միայն ցուցադրությունը (կրթական միջավայրը) անձնապես մեկնաբանելու կարողության մեջ՝ կազմակերպելով միջանձնային երկխոսություն թանգարանային առարկայի և այցելուի միջև, այլև երկխոսությանը ճիշտ ուղղություն տալը, դոմինանտները բացահայտելը, ինչը տեղ է գտնում անհատի հոգևոր տարածության մեջ: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ այդ տարածքի ստեղծումը կախված է ուսումնական գործընթացի մասնակիցների կրթական և ընդհանուր զարգացվածության մակարդակից [127, էջ 14]:

Իրականացնելով կրթական գործընթացը, թանգարանային մանկավարժն այցելուներին ընկալում է որպես սեփական զարգացման սուբյեկտ և օգնում նրանց

տեղեկատվական հոսքից ոչ միայն առանձնացնել անհրաժեշտ տեղեկությունները, այլև ապահովում է դրանց յուրացումը, վերլուծությունն ու կիրառումը, դրանով իսկ հնարավոր դարձնում թանգարանային նմուշից, առարկայից տպավորվելու, ընկալելու և մեկնաբանելու համար [154, 155, 156, 161]: Այցելուն և թանգարանային մանկավարժը հանդիսանում են մանկավարժական գործընթացի սուբյեկտ: Այցելուն մանկավարժի միջնորդավորված գործունեության միջոցով թանգարանային նմուշի հետ շփվելով, ձևավորում է տեսողական մտածողություն, գեղարվեստական ընկալում և ստեղծագործական մոտեցումներ: Թանգարանային բազմաբնույթ առարկան, որպես մանկավարժական գործընթացի առանցք, կարող է դիտվել և՛ որպես օբյեկտ, և՛ այդ գործընթացի յուրօրինակ սուբյեկտ:

Վերը նշված 3 օղակների գործունեությունն իրականացվում է թանգարանային միջավայրում, որն ունի կրթական արժեք և վերածվում է սոցիալ-մշակութային միջավայրի բաղկացուցչի: Փաստենք, այն ուսուցման և դաստիարակության նույնչափ ակտիվ միջավայր է, ինչպես և դպրոցական միջավայրը, բացի դրանից՝ օժտված է նաև գեղագիտական, գեղարվեստական, ստեղծագործական բովանդակությամբ՝ անձի վրա ազդելու հզոր հոգևոր ներուժով:

Թանգարանային միջավայրն ընդգրկում է.

- թանգարանի հարակից տարածքը, որը գրավում է այցելուի ուշադրությունը,
- բուն թանգարանի շենքը, որը տրամադրում է արվեստի գործերն ընկալելուն,
- թանգարանի ցուցադրությունը՝ որպես թանգարանային առարկաների մատուցման վայր:

Ուստի կրթական տարածության, կամ կրթական միջավայրի յուրահատկությունը կայանում է որոշակի կրթական նպատակի հասնելու կամ կոնկրետ կրթական խնդիր լուծելու համար տեղեկատվական հոսքերը ուղորդելու և կազմակերպելու հնարավորության մեջ [84, էջ 9]:

Մենք քաջ գիտակցում ենք, որ այսօր «կրթություն» հասկացությունը ներառում է և՛ ուսուցումը, և՛ դաստիարակությունը, որ կրթությունը չպետք է ընկալվի որպես

գիտելիքների փոխանցում և ձեռքբերում: Դաստիարակությունը նույնպես ենթադրում է որոշակի տեղեկատվության փոխանցում և ընկալում:

«Կրթական գործընթացի բարդության և ամբողջականության մասին գաղափարը, ոչ միայն վաղ մանկության հասակում, այլև ողջ կյանքում անձի կողմից աշխարհն ամբողջական ընկալելու, կարողությունները պահպանելու կարևորության գիտակցումը՝ կրթության համակարգում թանգարանին առանձնահատուկ տեղ է հատկացնում» [146, էջ 90-91]:

Թանգարանային կրթական գործունեությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1. Գեղագիտական – Ձևավորելով անձի գեղարվեստական ընկալումն ու ստեղծագործական էությունը:

Արվեստի ստեղծագործության ընկալման համար ոչ այնքան կարևոր է երկխոսության տեղեկատվական մակարդակը, որտեղ կարող են կիրառվել մի շարք դիդակտիկ մեթոդներ, որքան հոգեբանական ազդեցության դաշտը:

«Հնարավոր է այնպիսի երկխոսություն, երբ մեկը խոսում է, իսկ մյուսը լսում և ստանում է ներքին հարցերի պատասխանները: Հնարավոր է լուռ, ոչ բանավոր երկխոսություն, երբ բոլորը լուռ, կողք-կողքի ուսումնասիրում են նկարը, մտածում և զգում են յուրովի, հայացքներ փոխանակում: Հնարավոր է հեռակա երկխոսություն այլ տարածքում, երբ այցելուն հեռանում է, բայց հաղորդակցությունը շարունակվում է, այցելուները նորից ու նորից մտովի վերադառնում եմ ստեղծագործությանը, խոսում դրա մասին: Սա նույնպես երկխոսություն է» [111, էջ 71]:

Հավաքելով, ցուցադրելով, ինչպես նաև ուսումնասիրելով մանկական ստեղծագործությունները, թանգարանը դառնում է տարիքային հոգեբանության և մանկական ստեղծագործությունների հետազոտման «լաբորատորիա»: Մանկական ստեղծագործական խնդիրների հետազոտությունը թանգարանում առիթ է տալիս այդ աշխատանքի մեջ ընդգրկել թանգարանային մանկավարժներին, հոգեբաններին, դպրոցական ուսուցիչներին:

Հայաստանում, մանկական ստեղծագործության զարգացման և ուսումնասիրման գործում մեծ դեր ունի Հ. Իգիթյանի կողմից ստեղծված Մանկական ստեղծագործության կենտրոնը: Կենտրոնին կից Մանկական ստեղծագործության թանգարանը պրոպագանդում է մանկական արվեստը՝ դիտարկելով այն որպես համաշխարհային արվեստի լիարժեք մաս: Մանկական ստեղծագործության թանգարանը ձևավորվել է գեղագիտական դաստիարակության ակտիվ ձևերի որոնման արդյունքում: Թանգարանը, իհարկե, առաջնահերթ պետք է ցուցադրի, համակարգի և պահպանի երեխաների ստեղծագործությունները, սակայն նրա առավել կարևոր գործառույթն է դարձել երեխաների ստեղծագործական գործընթացի վերահսկումը՝ նրանց ընդհանուր զարգացման և դաստիարակության գործում:

2. Պատմագեղարվեստական - Այդ ուղղությամբ կազմակերպվում է ուսուցչի, սոցիալ-մշակութային ոլորտի մասնագետների, այդ թվում նաև թանգարանային մասնագետի համագործակցությունը, հետագայում թանգարանային կրթական ծրագրերն իրականացնելու նպատակով:

Ժամանակի ընթացքում առաջանում է սոցիալ-մշակութային ոլորտի մասնագետներ պատրաստելու, նաև ապագա թանգարանային մանկավարժներ նախապատրաստելու խնդիրը: «Ուսումնական ծրագրերը պետք է ապահովեն տեսական ուսուցման և պրակտիկայի միջև փոխլրացման և փոխադարձ կապի սկզբունքը, որն էլ պետք է ներառի մասնագիտական կրթության չափանիշներն ու յուրահատկությունները» [25, էջ 3]:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում սոցիալ-մշակութային գործունեության ոլորտի տարբեր մասնագիտացումներով կադրեր պատրաստելուն զուգընթաց, թանգարանագիտության բաժնում 2001 թվականից պատրաստում են նաև թանգարանային մանկավարժներ: Այսօր և՛ դպրոցական ուսուցիչը, և՛ թանգարանի կրթական բաժնի աշխատակիցը պետք է տիրապետեն թանգարանի կրթական հնարավորություններին, երեխաներին մշակույթի հետ ծանոթացնելու մեթոդներին:

3. Հումանիտար-միջառարկայական - Թանգարանագիտության կապը գրականության, երաժշտության, թատրոնի, մաթեմատիկայի և այլ գիտությունների հետ կարևոր տեղ է զբաղեցնում հումանիտար և բնագիտական մասնագիտությունների ներկայացուցիչների հետազոտություններում [51, 79, 80, 142]:

Տ.Յու. Յուրենևան նշում է. «տարբեր գիտաճյուղերի բաղադրիչները միավորվելով թանգարանային յուրահատուկ բաղադրիչներին՝ ստեղծվում է նոր որակ: Այս փոխազդեցության ընթացքում թանգարանն օգտագործում է համապատասխան գիտության լեզվի և մեթոդների բաղադրիչներ» [141, էջ 12]:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ - Այս ուղղության շրջանակներում այսօր շատ են կարևորվում ինչպես դպրոցական և բուհական, այնպես էլ թանգարանային կրթության բնագավառում կիրառվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, համակարգչային միջոցները [15, էջ 161-162]:

Հայաստանյան թանգարաններն այսօր հիմնականում կիրառում են էլեկտրոնային պլազմային էկրաններ, որոնք աշխատում են անհատական համակարգչի կամ DVD նվագարկչի հետ համատեղ և դրանք առավելապես օգտագործվում են տեսաֆիլմերի ցուցադրման նպատակով: Անհատական համակարգիչներ, որոնց օգնությամբ սլայդ-շոուի ձևով ներկայացվում են առանձին ցուցանմուշներ՝ երաժշտության ուղեկցությամբ (այն հիմնականում կիրառվում է ժամանակավոր ցուցահանդեսների ժամանակ):

Վիրտուալ ցուցադրությունը թանգարանային կայքին առանձնահատուկ գրավչություն հաղորդող բաղադրիչ է, որը խթանում է վիրտուալ այցելուների ներգրավումը: Այն այսօր կիրառվում է Հայաստանի գրեթե բոլոր թանգարաններում: Արագընթաց զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգում լայն տարածում գտած 3D տարբերակով պատկերների ներկայացումը կիրառվում է նաև Հովհաննես Թումանյանի թանգարանում (համր տարբերակ) և ՀՊՄՀ-ի թանգարանում (տեսաձայնային տարբերակ): Վիրտուալ տիրույթում այսօր թանգարանների հասանելիությունն ապահովում է նաև IZI. travel ընկերությունը՝ IZI. travel կոչվող բջջային աուդիոգիդ անվճար ծրագրի միջոցով:

Այսօր մեծ հակասություն է առաջացել ավանդական՝ առարկա-գրքային ձևի և հաղորդակցման ժամանակակից համակարգչային՝ վիրտուալ–համացանցային տարբերակի միջև: Այս առումով, հաճախ է հնչում անհանգստություն, թե արդյոք մեզ չի՞ սպառնում անմիջական, անձնական, իրական շփման փոխարինումը վիրտուալ կյանքով, ինչն էլ հսկողությունից դուրս լինելու դեպքում հանգեցնում է հոգեբանական կախվածության՝ դարձնելով մարդուն մեքենայի կցորդ:

Ինչպես նշում էր Դ.Ս.Լիխաչովը. «… եթե տեխնիկայի ընձեռած հնարավորությունները չլինեն բարոյական ձեռքբերում, աշխարհն, իրոք, կկործանվի» [19, էջ 3]:

Թանգարանի և կրթական համակարգի համատեղ ջանքերով ստեղծված համալիր ծրագրերը թույլ կտան համակարգիչը դարձնել թանգարանում մանկավարժական գործընթացին տեխնոլոգիապես աջակցող գործիք:

5. Սոցիալ-կողմնորոշում - Ժամանակակից թանգարանը՝ որպես զարգացման մեջ շեղումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության միջոց, հանդիսանում է հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հասարակության շարքերում ինտեգրելու վայր: Աշխարհի տարբեր երկրներում մեծ ուշադրություն է դարձվում հատուկ կարիքներ ունեցող խմբերի հետ աշխատանքներին: Օրինակ, 1991թ. Պետական ռուսական թանգարանում առաջին անգամ կազմակերպվեց «Այլ աչքերով» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին «խնդիրներ» ունեցող երեխաների աշխատանքները:

Հայաստանում առաջին անգամ 2005 թվականին Ազգային պատկերասրահում կազմակերպվեց Յ.Ա. Բերտրանի «Երկիրը երկնքից» ցուցահանդեսը, որի միջոցով հեղինակը կամենում էր կիսել իր լուսանկարչական հայացքները ոչ միայն սովորական այցելուների, այլ նաև թույլ տեսնողների և կույրերի հետ: Առաջին անգամ, թույլ տեսնող կամ կույր մարդիկ հնարավորություն ունեցան հաղորդակցվելու հուզմունք առաջացնող զարմանահրաշ այս նկարներին: «Երկիրը երկնքից» կույրերի համար ցուցահանդեսը ոչ միայն պատուհան բացեց դեպի աշխարհ կույրերի համար, այլև առանձնահատուկ նշանակություն ունեցավ տեսնող մարդկանց համար: Ակնոց պատրաստող նշանավոր

ֆիրմայի հիմնադիր, ծագումով հայ Ալեն Միկլին, ընդունելով մարտահրավերը, ցելյուլոզի ացետատից պատրաստեց լուսանկարների տակտիլ տարբերակը: Պատկերները փորագրված էին համակարգչային նորագույն ծրագրերի միջոցով:

Վերջին տարիներին թանգարաներն առավել հաճախ են անդրադառնում թիրախային խմբերի հետ կազմակերպվող աշխատանքներին: Այդպիսի ծրագրեր իրականացվել են Հայաստանի ազգային պատկերասրահում, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում, Հովհաննես Թումանյանի թանգարանում, ՀՊՄՀ-ի թանգարանում, Վանաձորի Կերպարվեստի թանգարանում:

6. Թանգարանային հոգեթերապիան այսօր ի վիճակի է որոշակի չափով աջակցել հատուկ դպրոցների առջև դրված կրթադաստիարակչական աշխատանքներին:

Արտթերապևտի խնդիրը ոչ միայն երեխաներին իրենց զգացմունքները նկարչության, քանդակի, գեղանկարի միջոցով արտահայտելու հնարավորություն տալն է՝ պակասեցնելով ներքին լարվածությունը, որը հաճախ առաջանում է հոգեկան և սոցիալական շեղումներ ունեցող երեխաների շրջանում, այլև երեխաների ներքին հսկողության զարգացման և կազմակերպվածության խթանումը:

«Բացի առերևույթ աննկատելի ունակությունների բացահայտումից և զարգացումից, պարապմունքների արդյունքնում երխաների մոտ առաջանում է ստեղծագործական գործընթացին մասնակցելու հաճույքի զգացողություն, իսկ արվեստի գործերի մեկնաբանման հնարավորությունը բարձրացնում է նրանց գեղարվեստական իրազեկման հնարավորությունը և նպաստում սեփական անձի կարևորության զգացողության առաջացմանը» [129, էջ 114]:

1.4. Թանգարանների դասակարգումը և տիպաբանությունը ըստ կրթական գործունեության

Թանգարանների կրթական գործունեության զարգացման 19-րդ և 20-րդ դարերի փորձը թույլ է տալիս պայմանականորեն առանձնացնել թանգարանների երկու խումբ՝

1. մասնագիտացված,
2. կրթական:

Առաջին խմբի մեջ ընդգրկվում են պատմության, ազգագրության, երկրագիտության, գրականության, արվեստի, տեխնիկայի և այլ ոլորտների թանգարանները: Երկրորդ խմբի մեջ ընդգրկվում են ոչ մասնագիտական թանգարանները՝

- մանկավարժական,
- ուսումնական հաստատությունների,
- մանկական:

Կրթական համակարգում կատարված փոփոխությունները պայմանավորեցին նոր տիպի թանգարանների ստեղծումը, որոնք մասնագիտական գրականության մեջ ստացան տարբեր անվանումներ՝ բուհական, դպրոցական, մանկական: Թանգարանների վերոհիշյալ տեսակները կարելի է ընդգրկել մեկ խմբի մեջ՝ կրթական թանգարաններ [157, 158]:

Այս թանգարանների յուրահատկությունը, նրանց հիմնական կողմնորոշումը, կրթական խնդիրների լուծումն է: Առարկաներն, այս թանգարաններում համալրվում և պահպանվում, ուսումնասիրվում և ցուցադրվում են հիմնականում ուսումնական նպատակներով: Ի տարբերություն մյուս թանգարանների, որտեղ թանգարանային առարկաների արժեքը որոշվում է եզակիությամբ և բնօրինակությամբ, կրթական թանգարաններում ցուցանմուշները մեծամասամբ կրկնօրինակներ, վերարտադրություններ, օժանդակ նյութեր են, որոնք ուսումնական առումով նույն նշանակությունն ունեն, ինչ բնօրինակները:

Կրթական թանգարանների մյուս տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ նրանք ուղղված են կոնկրետ լսարանի, որն էլ վերոհիշյալ թանգարանների (բուհական, դպրոցական, մանկական) դասակարգման հիմքն է [169, 172]:

Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալ-մշակութային իրավիճակը բնութագրվում է պատմամշակութային հարցերի վերաբերյալ բնակչության ակտիվ հետաքրքրությամբ, տուրիզմի զարգացումով, և մարդկանց տեղեկացվածության աճով, որը նոր, ավելի բարձր պահանջներ է ներկայացնում սոցիալ-մշակութային համակարգին, այդ թվում նաև թանգարաններին:

Ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ սարքեր, քարտեզներ, մոդելներ, նկարներ և այլ զննողական պարագաներ պատրաստել, այդ նյութերը համակարգել և դրանք տրամադրել մանկավարժին՝ դասընթացի ժամանակ օգտագործելու նպատակով, իհարկե կարող են բոլոր թանգարանները:

Հետազոտության շրջանակներում, մեր կողմից այցելած շատ ամերիկյան թանգարանների կողմից այս առաքելությունը իրականացվում է, նախապատրաստելով այսպես կոչված «դպրոցական արկղեր», որոնցում հավաքում են համապատասխան ուսումնական պարագաներ և տրամադրվում ուսումնական հաստատություններին:

Համալսարանական թանգարանի հայեցակարգը ենթադրում է ուսումնական գործընթացներին սատարելը, առանձին ուսումնական դասընթացների ապահովումը փաստացի նյութերով, ինչպես նաև տվյալ բուհի պատմությունն ու գործունեությունը ներկայացնելը:

Բուհական թանգարանները, ըստ ուղղվածության, բազմոլորտ են: Գործելով բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դրանք նպաստում են նաև արտալսարանային դասընթացների արդյունավետ կազմակերպմանը՝ որպես գիտահետազոտական ինքնատիպ կենտրոններ:

Խորհրդային Հայաստանում առաջին բուհական թանգարանը բացվել է Երևանի ժողովրդական համալսարանում 1922 թվականի նոյեմբերի 8-ին հանդիսավոր պայմաններում: Այն ուներ բնապատմական և հնագիտական ուղղվածություն [29, էջ 54], [21, էջ 18]:

Հարկ է նշել, որ բուհական թանգարանները կազմավորման սկզբնական շրջանում մեծապես բնապատմական և հումանիտար ուղղվածության էին, ինչպես Եվրոպայում և Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում: Հետագայում, համալսարանների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ջանքերի շնորհիվ ընդլայնվեց թանգարանների գիտական գործունեությունն ու հետաքրքրությունների շրջանակը, որն էլ նպաստեց տարբեր բնույթի բուհական թանգարանների առաջացմանը՝ գիտության, տեխնիկայի, կերպարվեստի և այլն:

Այդ ժամանակներից ի վեր, թանգարանների ֆոնդերը պարբերաբար համալրվում են դասախոսների և ուսանողների գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև բազմաթիվ նվիրատվությունների շնորհիվ: Ֆոնդային հավաքածուների համակարգումն ընթանում էր ժամանակաշրջանին բնորոշ գիտական պատկերացումներին համապատասխան:

Հետագայում սկսեցին ուշադրության արժանացնել ու հավաքել նաև համալսարանի գիտական և կրթական կյանքում մեծ ավանդ ունեցող դասախոսների անձնական իրերը: Դրա հիման վրա համալսարաններում ստեղծվեցին նաև համալսարանի պատմության և հուշային թանգարաններ: Համալսարանի պատմության թանգարանների առաջացումը առավել բնորոշ էր Խորհրդային Միության երկրներին:

Մանկական թանգարաններ: Աշխարհի շատ թանգարանների համար երեխաները ոչ միայն ուղղակի այցելուներ են, այլ նաև շատ կարևոր անհատներ, որոնց հասցեագրված են հատուկ կրթական ծրագրեր, ցուցահանդեսներ, հրատարակություններ:

Աճող սերնդի հոգևոր ներաշխարհի ձևավորումը և դաստիարակությունը ստեղծագործական միջոցներով, դարեր շարունակ հետաքրքրել է մանկավարժներին, նկարիչներին, հոգեբաններին, արվեստաբաններին [42, 7]: Պատահական չէ, որ 20-րդ դարը անվանում են «երեխաների հարյուրամյակ», որի հիմնական առանձնահատկությունը ուրույն մանկական մշակույթի ի հայտ գալն է, երեխաների համար թանգարանների և թատրոնների ստեղծումը, մանկական գրականությունը, մանկապարտեզները, մանկական հագուստը:

Յուրաքանչյուր մանկական թանգարան ունի իր պատմությունը, իր դեմքը՝ ավանդական թանգարանից տարբերվելով ճարտարապետական տարածության, հավաքածուների ձևավորման պատմության, ֆինանսավորման և այլ առանձնահատկություններով [164, 175]:

Խաղի, ստեղծագործության, երեխաների ինքնագործունեության միջոցով պատմամշակութային աշխարհի ճանաչումը, մանկական հասակի հոգեբանական առանձնահատկությունների կողմնորոշումը և ճանաչման գործընթացում բոլոր զգայարանների «ներառումը» համարվում են մանկական թանգարանների գործունեության հիմնական սկզբունքները, որոնք մնացել են անփոփոխ իրենց հիմնադրման օրվանից առ այսօր:

Թանգարանային մանկավարժության խնդիրներից ելնելով անհրաժեշտ է որպեսզի մանկավարժները, արվեստագետները, մշակութային տարբեր ոլորտների մասնագետները միահամուռ աշխատեն, մանկական և պատանեկան թանգարանները մշակութային մանկավարժության նոր կազմակերպություններ դարձնելու հայեցակարգի և նախագծերի վրա [162, էջ 46-74]:

Այսօր մանկական թանգարանի հայեցակարգը ենթադրում է հրաժարվել «թանգարանը թանգարանում» մոդելից:

Մանկական թանգարանը ինքնուրույն կրթական օջախ է, որը պետք է փորձի մի կողմից արտացոլել կոնկրետ գիտական թեմատիկա, մյուս կողմից՝ ներկայացնի առարկաներ, որոնք գաղափար են տալիս շրջապատող աշխարհի մասին: Մանկական թանգարանը չպետք է ունենա քարացած թանգարանային հայեցակարգ:

Մանկական թանգարանների հետաքրքրությունների կենտրոնում դեռահասների հետ աշխատանքն է, առարկայական կրթության հնարավորությունների ի հայտ բերելն ու լսարանի հուզականությունը:

Մանկական թանգարանը կենդանի հաղորդակցության վայր է, ընդ որում տարբեր սերունդների ներկայացուցիչների համար: Այստեղ բացահայտվում է սերտ կապը գեղարվեստական մանկավարժության հետ: Այն մի կողմից թանգարանային մանկավարժությանն է ներկայացնում իր մեթոդիկան, մյուս կողմից նրա առջև խնդիր է

առաջադրում, թե որքանով է մանկական թանգարանը համարվում թանգարան՝ հիմնված կոնկրետ գիտական հավաքածուի վրա: Այս հարցի շուրջ բանավեճերը շարունակվում են: Սակայն, հստակ կարող ենք ասել, որ ավանդական գործառույթները (հավաքել, ուսումնասիրել, համակարգել և այլն) և ոչ ավանդականի օգտագործումը որոշում են մանկական թանգարանի հեռանկարները [167, 170]:

Մանկական և պատանեկան թանգարանների ստեղծման գործում իրենց մասնակցությունն են ունեցել տարբեր կազմակերպություններ: Դրանց թվին են պատկանում այն կազմակերպությունները, որոնք մեծ փորձ ունեն դինամիկ նախագծեր մշակելիս, օրինակ՝ «Spiemobile»-ը՝ խաղային տարածքներ, որոնք օգտագործվում են բեմադրությունների և նման այլ գործողությունների համար:

Առավել հայտնի է «Museomobil»-ը: Նյուրենբերգի «Թանգարանը ճամպրուկում» ևս մեծ փորձ ունի այս ոլորտում: Թանգարանը կազմակերպում է շրջիկ ցուցահանդեսներ խաղային ծրագրերով, որոնք լուսաբանում են պատմամշակութային և տեխնիկական խնդիրներ: Միայն այսպես կարող է զարգանալ մանկական թանգարանի սոցիալական գործառույթը:

Գերմանիայում ակնհայտ է այն մեծ աշխատանքը, որը կատարվում է մանկական թանգարանների առարկայական և գաղափարական հիմքերի վրա: Այդ շարժումը գլխավորում է Ուննայում գտնվող Մանկական գեղարվեստական դպրոցների և մշակութամանկավարժական կազմակերպությունների Դաշնային միությունը (BJKE):

Ռուսաստանը մանկական թանգարանների ստեղծման գործում բացառություն չէ, քանի որ Ռուսաստանում գոյություն ունեն նմանատիպ թանգարանների ստեղծման վաղեմի, բայց և բավականաչափ չյուրացված ավանդույթներ [56, էջ 66-68]:

Կրթական այլ թանգարանների նման, մանկականը ծնվեց մանկավարժական համակարգում բարենորոգումների հզոր ալիքի վրա: Ընդ որում, սկզբնական շրջանում, մանկական թանգարանները շատ դժվար էր զանազանել դպրոցականներից, որոնք ստեղծվում էին երեխաների համար և երեխաների ձեռքերով: Եվ այս իմաստով, վերջիններիս կարելի է համարել մանկական: Սակայն շուտով ի հայտ են գալիս այդ թանգարանների նոր արտադպրոցական ձևերը, որոնց էլ ժամանակակիցները

անվանեցին մանկական: Մանկական թանգարանի գաղափարը ավելի արդիական դարձավ 1990-ական թվականներին: Դրանք ունեն հետևյալ դասակարգումը՝

- Մանկական թանգարաններ, որոնք ստեղծվում են ավանդական պրոֆիլային թանգարանների կառուցվածքում:
- Թանգարաններ, որոնք մանկական կրթամշակութային կենտրոնների մաս են կազմում:
- Ինքնուրույն մանկական թանգարաններ:
- Թանգարաններ, որոնք չունեն մշտական տարածքներ, իրենց գործունեությունը ծավալում են կարճաժամկետ նախագծերի հիման վրա:

Վերոհիշյալ թանգարաններից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, դեմքը, որը եզակի ներդրում է մանկական թանգարանների զարգացման գործում:

Ամենայն համոզմամբ կարելի է հաստատել, որ մանկական թանգարանների ստեղծման միտումը գնալով զարգանում է: Սա մեծ քայլ է մանկական թանգարանային գործունեության զարգացման գործում:

Առաջինի հիմքում ընկած է այսպես կոչված ինտերակտիվ թանգարանի հայեցակարգը, որտեղ երեխաները յուրացնում են առարկայական միջավայրը և սոցիալական իրականությունը՝ առարկաների հետ անմիջական շփման և փոխազդեցության ճանապարհով:

Նմանատիպ թանգարանների ստեղծման հիմնաքարը դարձավ 1950-1960-ական թվականներին հոգեբան Ժ. Պիաժեի ինտելեկտի տեսությունը՝ համաձայն որի առարկայի մանիպուլյացիան համարվում է երեխայի ինտելեկտի ձևավորման հիմքը [178]:

ԱՄՆ-ում առաջինը այս տեսության հիման վրա թանգարան ստեղծեց Մ. Սպոկը՝ 1961թ. դառնալով Բոստոնի Մանկական թանգարանի տնօրեն: Հատկապես մեծ ազդեցություն ունեցան ինտերակտիվ մանկական թանգարանի ձևավորման վրա ևս երկու թանգարաններ: Դա «Էքսպլորատորիումն» էր՝ հիմնված Սան-Ֆրանցիսկոյում 1969թ. ֆիզիկոս և մանկավարժ Գ. Օպենհեյմերի կողմից, որտեղ այցելուները

ֆիզիկայի օրենքները յուրացնում էին փորձի միջոցով: Երկրորդը Ֆիլադելֆիայում 1975թ. հիմնադրված «Խնդրե՛մ, ձեռք տվե՛ք» թանգարանն է:

Վերջին թանգարանում ակնհայտորեն զգացվում էր իտալացի մանկավարժ Մարիա Մոնտեսորիի նախադպրոցական կրթության մեթոդիկան՝ համաձայն որի նախադպրոցական և դպրոցական տարրական դասարաններում շատ կարևոր է սենսորային դաստիարակությունը՝ երեխայի ակտիվությունը բացահայտող պայմանների ստեղծմամբ [95, էջ 26-28]:

Այսպիսով, «ամերիկյան մոդելը» հիմնված է զգայական զարգացման և երեխաների գործունեության փորձի հարստացման գաղափարների վրա: Նմանատիպ թանգարաններում, թանգարանային առարկայի արժեքի որոշիչ չափանիշ է համարվում երեխայի մոտ աշխարհի մասին պատկերացումների ընդլայնումը, շփվելու հնարավորությունների հարստացումը, դյուրացնելու սոցիալական իրականության մեջ ներգրավվելու գործընթացը:

Իսկ «եվրոպական մոդելի» թանգարանը, բացի ինտերակտիվությունից, կարևորում է նաև կոնկրետ պատմական իրականությունը և հատկապես նրա մշակութային ենթատեքստն ընկալելը:

Այդ պատճառով այստեղ մեծ կարևորություն է տրվում ոչ միայն կրթական, այլև թանգարանային հավաքածուների արժեքին: Շատ թանգարաններում այս նպատակին են ծառայում ծրագրերը և ցուցահանդեսները, որոնցից յուրաքանչյուրը դառնում է այն նյութերի շնորհանդեսը, որոնք ունեն պատմական և մշակութային արժեք: Վերջիններիս կողքին ներկայացվում են երեխաների կողմից ստեղծված ցուցանմուշներ՝ իրենց ներաշխարհը, հետեքրքրությունները բացահայտող առարկաներ: Այսպես հաստատվում է մշակույթների հավասար արժևորման և փոխազդեցության գաղափարը:

«Թանգարանը ժամանակակից պայմաններում գնալով ավելի ակնհայտորեն է ձեռք բերում հատուկ կրթական տարածքի հատկանիշներ: Սա հիմնականում ցուցադրությունն է, ստեղծված լինելով թանգարանում տեղի ունեցող ուսումնական գործընթացի խնդիրներին համապատասխան՝ իր վրա կրում է կրթական

գործառույթների ազդեցություն: Ցուցադրությունից բացի կրթական ներուժ ունեն թանգարանային լսարանները, ստուդիաները, հատկապես դիդակտիկ ցուցահանդեսները: Թանգարանի ցուցադրությունը ավելի հաճախ է հանդես գալիս որպես իմաստալից միջավայր և կրթական գործունեության գործիք» [50, էջ 7]:

Մանկական թանգարանների բաժանումը «ամերիկյան» և «եվրոպական» մոդելների, իհարկե մեծամասամբ պայմանական է: Ավելի շուտ, խոսքը թանգարանային-կրթական ինստիտուտի այն հնարավորությունների շրջանակի մասին է, որոնք մեծապես ազդում են երեխայի զարգացման վրա:

Մանկական ինտերակտիվ թանգարանը, որը հասցեագրված է մանկական և ընտանեկան լսարանին, անպայմանորեն պետք է համատեղի առարկայական նյութը այն ծրագրի հետ, որը միտված է այցելուի ակտիվության և ստեղծարարության բացահայտմանը: Այնտեղ, որտեղ բացակայում է այս ամենը, խոսք անգամ չի կարող լինել մանկական թանգարանի մասին (հավելված 2):

Մանկական թանգարանների զարգացումը մեծապես կապված է Թանգարանների Միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) գործունեության հետ: ԻԿՕՄ-ը ստեղծվել է 1946թ., որպես միջազգային ոչ կառավարական կազմակերպություն, որը միավորում է թանգարանների աշխատողներին: Այսօր ԻԿՕՄ-ի ազգային կոմիտեներ կան աշխարհի 135 երկրներում: ԻԿՕՄ-ի կազմում են 27 միջազգային կոմիտեներ և 7 ռեգիոնալ կազմակերպություններ, որոնք զբաղվում են թանգարանային գործի խնդիրներով:

Մանկական թանգարանների ստեղծման գործում՝ որպես կրթության այլընտրանքային կենտրոնների, անմասն չմնաց նաև Հայաստանը: Հայաստանում մանկական թանգարանների ստեղծման գաղափարը, ծնվեց և կյանքի կոչվեց դեռևս խորհրդային տարիներին: Գիտակցելով երեխաների գեղագիտական դաստիարակության նշանակությունը Երևանում ստեղծվեց կենտրոն, որը զբաղվեց և շարունակում է զբաղվել մանկական ստեղծագործությունների մշտական պահպանմամբ և ցուցադրմամբ:

1968թ. Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում բացվեց «Աշխարհը երեխաների աչքերով» մանկական ցուցահանդեսը, որի կազմակերպիչներն էին

արվեստաբան Հ. Իգիթյանը և մանկավարժ Ժ. Աղամիրյանը: Ցուցահանդեսում ներկայացված էին Երևան քաղաքի 65 դպրոցների և գեղարվեստական խմբակների ավելի քան 800 աշխատանքներ: Երկու շաբաթում շուրջ 120 հազար մարդ այցելեց ցուցահանդես, ուստի անհրաժեշտ էր մշտական վայր՝ մանկական ստեղծագործությունների ցուցադրությունների համար:

1970թ. մարտի 13-ին Աբովյան, 13 հասցեում բացվեց մանկական պատկերասրահը, որը ոչ միայն առաջինն էր Հայաստանում, նախկին ԽՍՀՄ-ում, այլև ողջ աշխարհում: 1978 թվականին մանկական պատկերասրահը վերածվեց Հայաստանի մանկական ստեղծագործության թանգարանի, որի հիմքի վրա ստեղծվեց Գեղագիտության ազգային կենտրոնը: Նրա կազմում թանգարանից բացի գործում են գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ստուդիաները, մանկական ֆիլհարմոնիան, մանկական «Փոքր» թատրոնը և ազգային նվագարանների յոթամյա երաժշտական դպրոցը (հավելված 3):

Մեր կողմից անցկացված հետազոտական աշխատանքների շրջանակներում, ուսումնասիրելով երեխաների հետ աշխատանքի եվրոպական (Գերմանիա- Բեռլին, Դրեզդեն, Լայպցիք, Էրֆուրտ – 1986թ., Բոնն, Քյոլն – 2010թ.), ռուսական (Ս.-Պետերբուրգ - 1986թ, Մոսկվա - 1986թ.) և ամերիկյան (Բոստոն – 2007թ.) փորձը, պետք է փաստենք, որ պրոֆիլային թանգարանների տարածքում գործող մանկական թանգարանի գործունեությունը պայմանավորված է որոշակի առանձնահատկություններով, որոնք էլ ապահովում են առաջադրված մանկավարժական խնդիրների, գործունեության սկզբունքների և աշխատաձևերի արդյունավետությունը:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ սոցիալ-մշակութային գործունեության տեսությունն ու մեթոդաբանությունը՝ որպես մանկավարժական առարկա ձևավորվել ու զարգացել է ընդհանուր մանկավարժության մեջ: Թանգարանային մանկավարժությունը՝ որպես մանկավարժական գիտության բաղկացուցիչ, իր մեթոդաբանությունը կառուցել է հասարակական, բնական և մանկավարժական գիտությունների նվաճումների հիման վրա՝ խնդիր ունենալով ձևավորելու

համակողմանի զարգացած անձ՝ գեղագիտական, բարոյական արժեհամակարգով, իրավագիտական գիտելիքներով, տնտեսական և աշխատանքային գործունեություն ծավալելու ունակություններով: Թանգարանային մանկավարժության օբյեկտային բնագավառն է՝ բոլոր տարիքային, կրթական, սեռային, կրոնական, սոցիալական խմբերի կրթամշակութային գործընթացի մանկավարժական ղեկավարումը՝ տարբեր կրթական ծրագրերի ու միջոցառումների պարտադիր բաղադրիչով:

ԳԼՈՒԽ 2.
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

2.1. Թանգարանային կրթական ծրագրերի նախագծում և մոդելավորում

Թանգարանի կրթամշակութային գործունեությունը ուսումնական և դաստիարակչական գործունեության յուրահատուկ տեսակ է, որտեղ նյութի ընկալումը իրականացվում է թանգարանային միջավայրում՝ պատմական և մշակութային առարկաների միջոցով [67, էջ 151]:

Ըստ թանգարանային մանկավարժության ոլորտի հայտնի մասնագետ Բ. Ստոլյարովի. ժամանակակից գլոբալ հասարակության համար թանգարանի արժեքը կայանում է նրանում, որ թանգարանը նպաստում է՝

- աշխարհի մասին ավելի լիարժեք պատկերացում ունենալուն
- գիտելիքների աճին մասնագիտական և դիսցիպլինար ոլորտում
- մարդու վերադարձին իր բնական էությանը՝ ինչը բացահայտվում է զգայական ընկալման մեջ
- միջանձնային հաղորդակցության զարգացմանը, այդ թվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա
- իրականության ընկալման հնարավորությանը՝ անձնական փորձի միջոցով, քանի որ արվեստի գործերի մեկնաբանությունը անվերջ ստեղծագործական գործընթաց է [130, էջ 28]:

Թանգարանային մանկավարժի վառ և կենդանի խոսքը, զուգակցված թանգարանային առարկայի տեսողական ընկալման հետ, հուզական մեծ նշանակություն է ձեռքբերում: Սակայն, թանգարանային կրթական ծրագրեր կազմելիս մասնագետները հաճախ հայտնվում են դժվարությունների առջև, քանի որ հստակ չեն պատկերացնում ինչպե՞ս, ու՞մ համար, ի՞նչ աշխատաձև ընտրել ակնկալվող արդյունքին հասնելու համար [13, էջ 218-225]:

Թանգարանային կրթության նորացումը, ըստ այսօրվա մասնագետների, տեղի է ունենում երկու ուղղություններով: Առաջինը՝ ստիպելուց դեպի ազատություն, իսկ երկրորդը՝ սովորեցնելուց դեպի զվարճանք: Թանգարանում « ... մարդ ամենից քիչ ուզում է լինել կրթության առարկա, սակայն, որպես կանոն, ցանկանում է գտնել մտորումների ու վերապրումների խթան, որը դառնում է ավելի շոշափելի և արդյունավետ այն դեպքում, երբ գիտելիքների և հուզական հարստացման բազմապատկմանը չի խանգարում տառապալից պայքարը թանգարանային ձանձրույթի հետ» [114, էջ 356]:

Աշխատանքները ճիշտ կազմակերպելու և աշխատակիցներին կողմնորոշելու նպատակով պետք է մշակել թանգարանային կրթական ծրագրի մոդել: Ցանկացած կրթամշակութային ծրագիր, լինի էքսկուրսիա թե դասախոսություն, թանգարանային դաս թե պարապմունք, իրականացնելուց առաջ անպայման պետք է կազմել նախագիծ-ծրագիր [65, էջ 71-94]:

Մեթոդական մշակումը թանգարանում կրթամշակութային գործընթացի նախապատրաստման եզրափակիչ փուլն է, իսկ այցելուների հետ շփումը պետք է կառուցել հաշվի առնելով այդ գործընթացի մի շարք տեսական և գործնական հարցեր: Ելնելով վերոնշյալից՝ մշակել ենք նախագծի մոդել, որը ներկայացնում ենք ստորև:

Առաջին հերթին անհրաժեշտ է կազմել գործունեության մեթոդական կառուցվածքը, որը նախատեսում է՝

- թեմայի
- լսարանի
- նպատակի
- խնդիրների
- սկզբունքների
- աշխատաձևերի
- աշխատավայրի
- մեթոդների
- հնարքների

- միջոցների
- աշխատանքի տևողության ընտրությունն ու հիմնավորումը, ինչպես նաև սպասվելիք արդյունքներն ու դրանց գնահատումը:

Հետազոտության շրջանակներում, մեր կողմից, տվյալ ալգորիթմով կազմված մոդելը փորձարկվել է Հայաստանի Հանրապետության տարբեր թանգարաններում:

Թեմայի ընտրություն: Թանգարանում միշտ էլ կարևորվել է տարբեր թեմաներով կրթադաստիարակչական աշխատաձևեր ունենալը: Խորհրդային տարիներին թանգարանները պարտավոր էին «… զգայուն կերպով և օպերատիվորեն արձագանքել երկրում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններին, մշակելով հրատապ թեմաների վերաբերյալ էքսկուրսիաներ» [39, էջ 423]:

Սակայն, թանգարանները չեն կարող ունենալ մեկ՝ ընդմիշտ ընտրված թեմայով էքսկուրսիա, անտեսելով այն հսկայական գիտական, կրթական և դաստիարակչական ներուժը, որ կրում են տվյալ թանգարանում պահվող և ներկայացվող արժեքները: Թեմաները կարող են լինել և՛ ընդարձակ, և՛ մասնագիտացված՝ ելնելով թանգարանի բաժիններից, լսարանից, ինչպես նաև այն իմացական և դաստիարակչական նպատակներից, որի համար նախատեսված է այս կամ այն աշխատաձևը:

Թեմայի ընտրությունը, անշուշտ, պայմանավորված է թանգարանի բազային ուղղվածությամբ, սակայն, օրինակ՝ պատմական և գրական թեմաներով էքսկուրսիաներ կարելի է կազմակերպել տարբեր թանգարաններում: Այսպես, պատմական էքսկուրսիաներ հնարավոր է անցկացնել երկրագիտական, հուշային թանգարաններում կամ նույնիսկ պատկերասրահում, երբ բացահայտվում է նկարում պատկերված պատմական իրադարձության պատմությունը (օր. ՀԱՊ-ի Վ.Սուրենյանցի սրահում մի շարք կտավների հիման վրա կարելի է անցկացնել պատմության դասեր): Գրական էքսկուրսիաներ էլ կարելի է կազմակերպել ոչ միայն գրական, հուշային և երկրագիտական թանգարաններում, այլև պատմական թանգարաններում, քանի որ այստեղ նույնպես բացի պատմական դարաշրջանից ներկայացված է այդ ժամանակաշրջանի մշակույթը և գրականությունը: Առանձնապես բազմազան թեմաներ կարելի է ընտրել երկրագիտական թանգարաններում, կազմակերպելով տարբեր

կրթամշակութային աշխատաձևեր՝ պատմական, աշխարհագրական, բնագիտական, գրական, քաղաքական և այլն [149, էջ 5]:

Թեմայի ընտրությունը պետք է ապահովի մի քանի փուլեր, ուստի թանգարանային մասնագետը պետք է հիմնավորի.

1. առաջարկված թեմայի նպատակահարմարությունը,
2. թեմայի բովանդակային բաղկացուցիչները (հակիրճ թեմատիկ կառուցվածքը),
3. իրականացնելու համար առկա հնարավորությունների կարճ բնութագիրը (ֆոնդային ապահովում, թանգարանային տարածքի, տեխնիկական և այլ միջոցների առկայությունը),
4. տվյալ թեմայի հիմնական յուրահատկությունների և ենթադրյալ լսարանի կողմից ընկալման հնարավորությունների կարճ վերլուծությունը:

Նույնիսկ այն դեպքում, երբ թեման առաջարկվել է պատվիրատուի կողմից, նպատակահարմար է ձևակերպել թեմայի յուրահատկությունները, բովանդակային բաղկացուցիչները, իրականացնելու հնարավորությունները և այլն:

Հայտնի է, որ թանգարանային յուրաքանչյուր առարկա իրենից ներկայացնում է տեքստ, տեղեկություն: Ժամանակակից մշակութաբանությունը «տեքստ» ասելով հասկանում է սոցիալ-մշակութային տեղեկություն, տեղեկության կոդավորման բանավոր և ոչ բանավոր (նշանային, պատկերային, առարկայական և այլ) միջոցներ [37, էջ 51-65]: Յուրացնելով մշակույթի տեքստը, թանգարանում մարդն ընդունակ է մեկնաբանել այն սեփական կյանքի համատեքստում: Այս նպատակով թանգարանային աշխատողներն այսօր ձգտում են աճող սերնդի մոտ զարգացնել շփման պահանջ բնության, պատմական ժառանգության, ստեղծագործական ինքնաարտահայտման համար: Սրանով իրականացվում է նաև կրթության արդիականացման խնդիրը [114, էջ 71], [166, 168, 174]:

Լսարանի ընտրություն: Թանգարանում կրթական ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այցելուների կազմը, քանի որ նրանք տարբերվում են տարիքային, կրթական, հոգեբանական և այլ առանձնահատկություններով:

Լսարանի յուրահատկությունների իմացությունը և կոնկրետ խմբի հետ աշխատելու համար պատրաստ լինելը, կօգնի թանգարանային աշխատողին առավել արդյունավետ շփվել այցելուների հետ: Սա է պատճառը, որ մեթոդական մշակման հաջորդ քայլը ենթադրում է հնարավոր լսարանի վերաբերյալ տեղեկությունը: Ինչը նախատեսում է լսարանի կարճ բնութագիրը.

- նախադպրոցական տարիք
- կրտսեր դպրոցական տարիք
- միջին դպրոցական տարիք
- ավագ դպրոցական տարիք
- ուսանողական լսարան
- մեծահասակներ
- ընտանեկան խմբեր
- արտասահմանյան խմբեր:
- Այցելուների յուրահատկությունները՝
- տարիքային
- կրթական
- հոգեբանական
- մասնագիտական
- և այլն:

Լսարանի հետ աշխատանքի հաջողությունը մեծապես պայմանավորված է, թե ինչ չափով են թանգարանային մանկավարժի կողմից կիրառված գիտելիքներն ու հմտությունները համապատասխանում տվյալ լսարանի առանձնահատկություններին [66, էջ 106-195]:

Պետք է նաև նշել, որ եթե արևմտյան հետազոտողները գլխավոր դերը հատկացնում են այցելուին, իսկ թանգարանի աշխատողը սովորաբար հանգեցվում է միջնորդի, թարգմանչի, հաղորդավարի, ապա Ռուսաստանում թանգարանի աշխատակիցը հանդես է գալիս որպես հիմնական գործիչ, գերիշխող՝ հաղորդակցության համակարգում:

Այնուամենայնիվ, մի շարք հեղինակներ, մասնավորապես, Մ. Գնեդովսկին, Ե. Դմիտրիևան հաղորդակցական պատկերացումներն ուղղակի հակադրում են ավանդական թանգարանային մանկավարժությանը և առաջին հերթին թանգարանի՝ որպես գիտահետազոտական հաստատության մասին պատկերացումներին: Մ. Գնեդովսկին և Մ. Նովակը նշում են. «մշակութային ժառանգության պահպանության խնդիրը հաճախ հանգեցվում է այն փաստին, որ ջանալով պահպանել ժառանգությունը մեր ապագա սերունդների համար, մենք պաշտպանում ենք այն ... հենց մեզանից: Ժառանգության պաշտպանությունը շարունակական անդրադարձ է, անընդհատ երկխոսություն ներկայի և անցյալի, մարդու և բնության, տարբեր մշակույթների միջև: Այդ երկխոսությանն աջակցելն ու պահպանելը թանգարանի հիմնական խնդիրն է, այն չի կարող լինել միայն առարկաների շտեմարան» [61, էջ 20]:

Թանգարանի լսարանը լավ ճանաչելն ու նրա պահանջները հաշվի առնելը դժվար, սակայն անհրաժեշտ պայման է, քանզի այն վկայում է թանգարանային աշխատողի արհեստավարժության և իր կոչումին համապատասխան լինելու մասին:

Թեման և լսարանը որոշելուց հետո պետք է ձևակերպել այցելուների թանգարանային տարածքում գտնվելու նպատակն ու խնդիրները [165, 173]:

Նպատակի ընտրություն: Աշխատանքի նպատակը, խորապես մտածված, գլխավոր գաղափարական հիմքն է, որը նպաստում է մանկավարժական հետևյալ խնդիրների լուծմանը.

- ուսումնական
- դաստիարակչական
- ճանաչողական
- զվարճանքի
- վերարտադրողական:

Այս առումով, թանգարանային կրթության ժամանակակից հայեցակարգերում ներկայացված կարևորագույն միտումների շարքում Օ. Բեզզուբովան նշում է. անհրաժեշտ է՝

- ձևավորել շարունակական կրթության մասին պատկերացումներ (long - life education)
- հրաժարվել կրթության մասին՝ որպես մասնագիտական ուսուցման պատկերացումներից
- գիտելիքներ ձևավորելու ընթացքում գերակա առաջնություն տալ միջդիսցիպլինար մոտեցմանը
- ուսումնական գործընթացը մեկնաբանել առաջին հերթին որպես սոցիալականացման գործընթաց [49, էջ 418-419]:

Ուսումնական էքսկուրսիաները կարող են սերտորեն կապված լինել ուսումնական ծրագրերի հետ և նախատեսված են այցելուների առավել բազմամարդ կատեգորիայի՝ դպրոցականների և ուսանողների համար [77, էջ 73-84]: Հաշվի առնելով ցուցադրության հնարավորությունները, թանգարանները պետք է ապահովված լինեն կրթական ծրագրերով, հաշվի առնելով դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, ինչպես նաև համագործակցությունը ուսուցիչների հետ: Ինչպես օրինակ՝ Երևան քաղաքի պատմության թանգարանը, որտեղ ստեղծվել է դպրոցականների համար նախատեսված էքսկուրսիաների շարք, հետևյալ թեմաներով՝

- Հնագույն Երևանը
- Միջնադարյան Երևանի մշակույթը
- Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին
- Դեկաբրիստների մասնակցությունը երևանյան արշավանքներին
- Երևանը՝ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն
- Երևանի արհեստները (XIX-XXդդ.)
- Երևանի կրթական համակարգը (XIXդ. II կես)
- Ճանաչի՛ր Երևանը (քաղաքի փողոցների և թաղերի պատմությունից)
- Հայ գրերի գյուտը
- Երևան քաղաքի պատմության թանգարանի և քաղաքապետարանի շենքը իբրև ճարտարապետական կոթող:

Նմանատիպ նախաձեռնություններով աչքի են ընկնում ՀԱՊ-ը, ԳԱԹ-ը, Երևան քաղաքի պատմության, Հովի. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի, Եր. Քոչարի, Մ. Սարյանի, Հայաստանի բնության, երկրագիտության, փայտարվեստի, «Էրեբունի» թանգարանները, Հայաստանի մարզերի որոշ թանգարաններ իրականացնում են զանազան միջոցառումներ, դաս-էքսկուրսիաներ, խաղ-էքսկուրսիաներ, գրական-երաժշտական հանդիսություններ, թանգարանային վիկտորինաներ, տարբեր մրցույթներ, տիկնիկային ներկայացումներ [16, էջ 3-6]:

Խնդիրների ընտրություն: Թանգարանային կրթական աշխատանքի խնդիրները բխում են դրված նպատակից: Լուծելով տվյալ խնդիրը՝ հասնում ենք նախատեսված նպատակին: Թանգարանային մանկավարժը կարող է այցելուների հետ աշխատանքի ընթացքում լուծել հետևյալ խնդիրները՝

- պատմական գիտակցության ձևավորում
- հայրենիքի պատմության հանդեպ հետաքրքրության առաջացում
- պատմամշակութային ժառանգության հանդեպ հոգատար վերաբերմունքի դաստիարակում:

Չնայած գիտությունը դեռ չի մշակել, թանգարանի օգնությամբ պատմական գիտակցության զարգացման կարևոր և հետաքրքիր հարցը, շատ պատմաբաններ առանձնացնում են «պատմական գիտակցության» հասկացությունն ու նշում նրա առնվազն երեք աստիճան [46, էջ 103-161]:

Առաջին աստիճանն առկա է յուրաքանչյուր մարդու մոտ, անկախ նրա կրթությունից ու դաստիարակությունից և արտահայտվում է «անցյալի մասին աղոտ, զգացմունքային հուշեր, որոնք առաջացել են պատմական հուշարձանների, գեղարվեստական գրականության, ռադիոյի, հեռուստահաղորդումների, երաժշտության, գեղարվեստի հետ շփման և անձնական փորձի հիման վրա» [100, էջ 127]:

Երկրորդ աստիճանը ենթադրում է, պատմության ընթացքի վերաբերյալ պատկերացումների առկայություն, որոնք ձևավորվում են դպրոցում:

Երրորդ, բարձրագույն աստիճանն ապահովվում է պատմության տեսական իմաստավորումն ու պատմական օրինաչափությունների իմացությունը:

Այս առումով Ե. Վանսլովան կարծում է, որ դպրոցականը կարող է տիրապետել պատմությանը զգացողությամբ, չունենալով բավականաչափ գիտելիքներ պատմության բնագավառում և զարգացած պատմական գիտակցություն [55, էջ 45-117]:

Այս ամենով հանդերձ, թանգարանի յուրահատուկ խնդիրներից է.

- այցելուների մոտ թանգարանային մշակույթի դաստիարակումը,
- հարգանք պատմության և մշակույթի հուշարձանների, ինչպես նաև դրանք ստեղծող մարդկանց աշխատանքի հանդեպ,
- դրանց հասարակական նշանակության և գեղագիտական արժևորման,
- դրանք ապագա սերունդների համար պահպանելու անհրաժեշտության գիտակցման ձևավորումը:

Թանգարանային մշակույթին մերձենալը նշանակում է.

- «թանգարանային լեզվի» ըմբռնում,
- թանգարանում հաղորդակցվելու, կողմնորոշվելու կարողություն,
- հոգեպես հարստանալու, պրակտիկ գործունեության և ժամանցի կազմակերպման գործում աջակցելու հնարավորություն:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ այս ամենի համար թանգարանները հսկայական ներուժ ունեն [103, էջ 271]:

Սկզբունքների ընտրություն: Մանկավարժական գործունեության առավել արդյունավետ և ժամանակակից մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել թանգարանային հաղորդակցության սկզբունքները: Թանգարանային այցելուի հետ հանդիպման սցենարը կամ ծրագիրը կազմելիս, թանգարանային մանկավարժը ելնելով առաջադրված խնդրից պետք է նախատեսի հաղորդակցության այն սկզբունքների պահանջները, որոնք առավելագույնս կնպաստեն տվյալ խմբի հետ աշխատելիս: Ըստ Ե.Գ. Արտյոմովի. թանգարանային հաղորդակցության աշխատանքի սկզբունքներից են՝

1. **երկխոսությունը՝** որպես աշխատանքային սկզբունք, որը հանդիսանում է թանգարանային հաղորդակցության և մասնավորապես թանգարանային մանկավարժության գլխավոր գործիքը:

Այս սկզբունքի ճիշտ և տեղին օգտագործումը ապահովում է թանգարանային մանկավարժի և այցելուի իրավահավասար և արդյունավետ համագործակցությունը՝ նպաստելով այցելուի կողմից պատմամշակութային իրադարձությունները վերապրելուն: Թանգարանային տարածքում իրականացվող երկխոսության մասնակցից և թանգարանային մանկավարժից բացի, այդպիսիք են նաև թանգարանային առարկան, թանգարանային տարածքը և նույնիսկ անցյալն ու ներկան [44, էջ 9], [176]:

Թեև Ս.Ս. Կոնստանտինովան «Թանգարանային հաղորդակցություն» եզրույթով բնորոշում է թանգարանի բոլոր կապերը, ինչպես ներքին՝ ուղղահայաց (թանգարան-թանգարան, թանգարան-ղեկավարող պետական կազմակերպություններ, թանգարան-թանգարանային բաժիններ), այնպես էլ՝ արտաքին, կամ՝ հորիզոնական (թանգարան-այցելու, թանգարան-հասարակական կարծիք, թանգարան-ԶԼՄ-ներ): Հաղորդակցությունը բնութագրվում է հետևյալ սկզբունքներով՝

- մարդակենտրոն - երբ գլխավորն այցելուն է, ոչ թե առարկան:
- մշակութաբանական - թանգարանային հաղորդակցության սուբյեկտները դիտարկվում են որպես մշակութային դիրքորոշման ներկայացուցիչներ, իսկ թանգարանային առարկաները հանդես են գալիս որպես մշակութային տեքստեր, որոնք պետք է կարողանալ «ընթերցել» [71, էջ 184]:
- երկխոսության - երբ պետք է ապահովվի առնվազն երկու տարբեր սուբյեկտ և նրանց միջև հետադարձ կապ ստեղծվի [85, էջ 21]:

2. Նպատակային դիրքորոշումը թանգարանային հաղորդակցության ընթացքում կոնկրետ նպատակին հասնելու համար անհրաժեշտ համալիր միջոցների և համապատասխան մեթոդների ու հնարքների ընտրության և իրականացման հնարավորություն է ընձեռում:

3. Հասցեականությունը թանգարանային մանկավարժից պահանջում է աշխատանքի բոլոր փուլերն իրականացնելիս հաշվի առնել այցելուի անհատական, տարիքային, հոգեբանական, մտավոր, կրթական, ֆիզիկական և այլ առանձնահատկությունները:

4. Հաջորդայնությունը ենթադրում է այնպես կազմակերպել աշխատանքն այցելուի հետ, որպեսզի թանգարանային նյութի, տարածքի աստիճանական յուրացում ապահովվի՝ հիմնվելով այցելուի փորձի, գիտելիքների վրա, այլ խոսքով՝ նրան հետզհետե «բարձրացնել» պատմական, մշակութային և այլ գիտելիքների «աստիճաններով»:

5. Համալիր մոտեցումն այցելուների հետ աշխատելիս նախատեսում է մի կողմից մարդկային գործունեության տարբեր բնագավառներին վերաբերվող գիտելիքների, մյուս կողմից՝ լսարանի հետ աշխատելու տարբեր մեթոդների, հնարքների, ձևերի կիրառում ապահովել [134, էջ 15]:

6. Արդյունավետության հաշվառումը թույլ է տալիս կիրառել թանգարանային մանկավարժության նորագույն տեխնոլոգիաները և իրականացնել դրանց արդյունավետության ստուգումը:

7. Ինտերակտիվությունն թանգարանի տարածքում ապահովում է այցելուի փոխազդեցությունը միջավայրի, խմբի մյուս անդամների, թանգարանային աշխատողի հետ:

8. Եզակիությունն այն է, երբ յուրաքանչյուր այցելու թանգարանում ակնկալում է հանդիպել ինչ-որ հազվագյուտ, խորհրդավոր, նոր ու անսովոր տեղեկության՝ և՛ իմաստով, և՛ ձևով: Այս սկզբունքը պահանջում է, որ թանգարանային աշխատողը հաղորդակցման ընթացքում արդարացնի այդ սպասելիքները:

9. Փոխադարձ կապի սկզբունքն է՝ աշխատանքը պլանավորելիս նախատեսել ներկայացված թեմայի յուրացումը ստուգելու հնարքներ ու ձևեր:

Կրթական ծրագրեր կառուցելու նպատակով կիրառվող սկզբունքները չեն սահմանափակվում ներկայացվածով: Թանգարանային մանկավարժը լսարանի հետ

աշխատանքը պլանավորելիս՝ պետք է առաջին հերթին ընտրի այն սկզբունքները, որոնք առավել կնպաստեն տվյալ խմբի համար նախատեսված խնդիրների լուծմանը:

Աշխատաձևերի ընտրություն: Մանկավարժական խնդրի լուծման հաջողությունը կախված է նաև լսարանի հետ աշխատելու ձևերից, այսինքն՝ թանգարանային աշխատակցի և այցելուի կրթադաստիարակչական, ստեղծագործական հաղորդակցության եղանակների ընտրությունից: Թանգարանային ծրագրերի և միջոցառումների տեսակներն ու ձևերը բազմաթիվ են: Դրանց քանակը կարող է սահմանափակվել միայն թանգարանի աշխատակիցների երևակայությամբ և թանգարանի առաքելությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ [104, էջ 195-214]:

Դեռևս 1970-80-ական թթ. մասնագիտական գրականության մեջ կրթական-մշակութային ծրագրի 100-ից ավելի ձև էր շրջանառվում: Սակայն, թանգարանային մանկավարժության հայտնի մասնագետ Մ. Յուխնեվիչի համոզմամբ, հիմնական ձևերը տասն են [143, էջ 32], իսկ մնացյալը դրանց տարատեսակներն են՝

- էքսկուրսիա
- դասախոսություն
- խորհրդատվություն
- գիտական ընթերցումներ
- ակումբներ
- մրցույթներ
- հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ
- համերգներ
- տոնակատարություններ
- պատմական խաղեր:

Ըստ Տ. Յուրենևայի՝ երեխաների հետ աշխատանքը [141, էջ 330], կարող է ունենալ հետևյալ ուղղությունները:

- պարապմունք նախադպրոցական տարիքի երեխաների հետ
- պարապմունք դպրոցականների հետ

- էքսկուրսիա՝ երեխաների համար
- հատուկ մանկական ցուցադրության ստեղծում
- ժողովրդական ստեղծագործության խմբակների ստեղծում (փայտի գեղարվեստական մշակման, ասեղնագործության, կավագործության և այլն)
- հանդիպումներ նկարիչների, վարպետների, շնորհալի մարդկանց հետ:

Ելնելով թանգարանի բնույթից՝ կարելի է կազմակերպել զանազան այլ աշխատաձևեր ևս: Այցելուների հետ աշխատանքի ձևերն ունեն իրենց առանձնահատկությունները, այդ իսկ պատճառավ մեթոդական մշակման ժամանակ ցանկալի է դրանք հիմնավորել: Աշխատաձևերից առավել տարածված են՝

- էքսկուրսիան (ակնարկային, թեմատիկ, ուսումնական, մասնագիտական և այլն) [7, էջ 247-256]
- թանգարանային դասը
- թանգարանային պարապմունքը
- թանգարանային խաղը
- ժամանցային միջոցառումը
- հրապարակային միջոցառումը:

Թանգարանային աշխատանքի ձևերն անընդհատ զարգանում և կատարելագործվում են: Ելնելով թանգարանի բնույթից և որոշված նպատակից, թանգարանային մանկավարժը կարող է ընտրել այս կամ այն ձևը, իսկ երբեմն էլ մի աշխատանքում ընդգրկել մի քանի աշխատաձև:

Տարածքի ընտրություն: Ընտրված աշխատաձևն առավել արդյունավետ և այցելուի համար հարմարավետ պայմաններում կազմակերպելու համար կարևոր է թանգարանային տարածքի ճիշտ ընտրությունը [36, էջ 17-25]: Դրանցից են՝

- ցուցադրությունը
- ցուցահանդեսը
- հատուկ տարածքը (ֆոնդեր, գրադարան, դահլիճ և այլն)
- թանգարանային մանկավարժական միջոցառումների տարածքը
- համալիր տարածքը:

Թանգարանային միջավայրում կրթադաստիարակչական գործունեության յուրահատկությունները պահանջում են կիրառել տվյալ տարածքին համապատասխան մեթոդաբանություն, որը պետք է հաշվի առնել մեթոդական մշակման ժամանակ:

Մեթոդների ընտրություն: Առաջադրված նպատակին հասնելու համար թանգարանային մանկավարժն օգտագործում է տարբեր մեթոդներ: Մեթոդը կրթադաստիարակչական խնդիրների լուծման համար կիրառվող մանկավարժական հնարքների համալիր է, նպատակին հասնելու միջոց [28, էջ 260-267]: Դրանցից են՝

1. Պատմական միջավայրի մեջ «խորասուզվելը» թույլ է տալիս ապահովել այցելուի խորհրդանշական ձևով հայտնվելն այլ մշակութային տարածքում: Այս մեթոդն ազդում է այցելուի գրեթե բոլոր զգայարանների վրա:
2. Պատմական իրադարձությունների դերային «վերապրումը» - այցելուներից յուրաքանչյուրը կամ նրանց մի մասը ստանում են որևէ պատմական կամ այլ գործող անձի դեր: Թանգարանի աշխատակցի օգնությամբ, միմյանց հետ շփվելիս՝ այցելուները համապատասխան սոցիալական դեր են կատարում: Այս մեթոդն ակտիվացնում է այցելուի և՛ բանականությունը, և՛ զգացմունքները, և՛ երևակայությունը:
3. Տեղեկատվական – պատրաստի տեղեկության հաղորդում:
4. Արդյունավետության – խնդրի առաջարկում և լուծում:
5. Վերարտադրման – այցելուի հետ աշխատելիս կիրառել հանձնարարությունների համակարգ:
6. Հետազոտական - դրդում է այցելուին դիմել սկզբնաղբյուրին, թանգարանային առարկային, որպեսզի իր ուժերով փորձի տեղեկություններ հայթայթել՝ հիմնվելով անձնական փորձի վրա՝ ակտիվացնել մտավոր գործունեությունը:
7. Վերակառուցման – ինչպես մտովի, այնպես էլ առարկայական՝ ցուցանմուշների, մանրակերտերի, օժանդակ նյութերի, համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ՝ պատմական փաստի, իրավիճակի, իրադարձության վերականգնում:
8. Համեմատական անալոգիաներ (միանմանության) – հնարավորություն է ստեղծում անցյալի և ներկա փաստերի, իրավիճակների, հասկացությունների

նմանությունների շնորհիվ՝ նոր եզրակացություններ, մտահանգումներ անել պատմական երևույթների վերաբերյալ:

9. Մոդելավորման – երբ խմբին առաջարկվում է հիշողության և երևակայության միջոցով մտովի կառուցել իրավիճակների, դեպքերի, երևույթների պատմական ընթացքը:

10. Համեմատական վերլուծության – թանգարանային մասնագետից պահանջվում է այցելուների ճանաչողական, մտավոր ջանքերն ուղղել առարկայի տարբեր կողմերին, հատկություններին՝ համեմատելու և համադրելու համար:

11. Խրախուսման:

Այցելուների հետ աշխատելու **հնարքներն** են՝

- զրույցը
- կոլեկտիվ բանավեճը
- մեկնաբանությունը
- խաղը և այլն:

Կրթական ծրագրեր կազմակերպելու **միջոցներից** են՝

- հիմնական և օժանդակ թանգարանային առարկաները
- տեսալսողական սարքավորումները
- տեխնիկական միջոցները
- աշխատանքային տետրերը:

Աշխատանքի տևողության հիմնավորում. աշխատաժամանակի բաժանումն ըստ՝

- աշխատաձևերի,
- երթուղու,
- խնդիրների:

Սպասվելիք արդյունքներն ու դրանց գնահատականը: Թանգարանի խորհրդի կողմից հավանության արժանացած մեթոդական մշակումը դառնում է պաշտոնական փաստաթուղթ, որով առաջնորդվում են թանգարանային կրթադաստիարակչական աշխատաձևն իրականացնող աշխատակիցները: Մեթոդական մշակման մեջ նշվում են հեղինակն ու հաստատման ժամանակը: Գոյություն ունեցող մեթոդական մշակման մեջ

կարելի է ավելացնել նոր գիտական հետազոտությունների արդյունքներ, կատարել էքսկուրսիոն պրակտիկայից բխող որոշակի ուղղումներ:

2.2. Արդի թանգարանը որպես կրթամշակութային համալիր

Թանգարանում կազմակերպվող կրթամշակութային գործընթացը գործունեության առանձնահատուկ տեսակ է, երբ նյութի ընկալումն իրականանում է թանգարանային առարկաներ հանդիսացող պատմական և մշակութային հուշարձանների միջոցով: Թանգարանային կրթական ծրագրի առավելությունն այն է, որ գիտելիքի մատուցումը հիմնվում է բնօրինակ նմուշների վրա և ուսուցման գործընթացը ցուցասրահներում է իրականացվում, որի շնորհիվ առավել բնական միջավայր է ստեղծվում թանգարանային առարկան ամբողջովին ընկալելու համար [82, էջ 50-74]: Ինչպես նշում է Բ.Ա. Ստոլյարովը. «մարդու փոխազդեցությունը թանգարանային միջավայրի, գեղարվեստի հուշարձանների հետ հնարավորություն է տալիս նրան տիեզերքի անծայր տարածքներից շարժվել դեպի սեփական անձը՝ նպաստելով անհատի հաստատմանը» [130, էջ 4]:

Էքսկուրսավարի՝ որպես գիտելիքներ փոխանցող միջնորդի առկայությունն ապահովում է ընկալումն ու նպաստում այցելուի ինքնուրույն դատելու ունակության զարգացմանը: Ըստ կրթական նպատակների՝ առանձնացվում են թանգարանային էքսկուրսիայի հետևյալ տիպերը.

- ճանաչողական
- կրթական կամ թեմատիկ
- զարգացնող
- դաստիարակչական:

Մեր կատարած ուսումնասիրություններից կարող ենք եզրահանգել, որ առավել տարածված են ճանաչողական կամ ակնարկային, ամփոփիչ էքսկուրսիաները, որոնք հնարավորություն են տալիս այցելուներին կարճ ժամանակում ծանոթացնելու թանգարանի ցուցադրության հիմնական ու կարևորագույն հատվածներին:

Ճանաչողական էքսկուրսիաները ձևավորվել են թանգարանների ստեղծմանը զուգընթաց և առաջին անգամ թանգարան եկած այցելուների համար էքսկուրսիայի ամենանպատակահարմար տարբերակն են: Այս տիպի էքսկուրսիայի ժամանակ տրվում են տեղեկատվական բնույթի գիտելիքներ, ցուցադրությունը ներկայացվում է ամբողջովին: Այցելուն տեսողական տեղեկատվությունը ստանում է անմիջապես ցուցանմուշների միջոցով, ինչպես նաև հնարավորություն է ստանում բանավոր խոսքի միջոցով տեղեկություններ փոխանակել թանգարանի աշխատողի հետ [148, էջ 33-40]:

Թանգարանային ճանաչողական էքսկուրսիաների բովանդակությունն ու հիմնահարցերից են ծանոթությունը

1. թանգարանային շենքի, նրա շրջակայքի (արգելոց-թանգարանների դեպքում), ճարտարապետության և պատմության հետ,
2. թանգարանային հավաքածուի ստեղծման պատմությանն ու բովանդակությանը,
3. թանգարանային ցուցադրության բաժիններին,
4. ցուցադրության մեջ ընգրկված առաջնային համարվող ցուցանմուշներին:

Վերը նշված թեմաները կարող են հավասարաչափ բաշխված լինել կամ փոփոխվել՝ ելնելով խմբի ցանկությունից, էքսկուրսիայի համար տրամադրվող ժամանակից և այլ հանգամանքներից [56, էջ 32-49]:

Թանգարանային էքսկուրսիայի տարածված տեսակներից են թեմատիկ և կրթական էքսկուրսիաները, որտեղ թեման ներկայացվում է մանրամասն և առավել խորությամբ: Կրթական (թեմատիկ) էքսկուրսիայի հիմնական նպատակը կոնկրետ թեմայի (ցուցանմուշի, հավաքածուի) վերաբերյալ գիտելիքներ հաղորդելն է: Այս էքսկուրսիաները նախատեսված են բոլոր տարիքային խմբերի համար, սակայն հիմնականում կազմակերպվում են դպրոցականների և ուսանողների համար: Եթե ճանաչողական էքսկուրսիայի ժամանակ այցելուներին հիմնականում տեղեկատվական բնույթի գիտելիքներ են մատուցվում, ապա թեմատիկ էքսկուրսիայի ընթացքում առավել մանրամասն և խորը գիտելիքներեն հաղորդվում: Կրթական (թեմատիկ) էքսկուրսիաների խնդիրները և բովանդակությունը պայմանավորված են խմբի պատրաստվածության աստիճանից և հատկացված ժամանակից: Նման էքսկուրսիա

նախապատրաստելիս, մեթոդական ուղղություն ընտրելիս և տևողությունը որոշելիս պետք է հաշվի առնել խմբի տարիքային և սոցիալական առանձնահատկությունները [62, էջ 10], [63, էջ 87]: Այսպիսով, կրթական էքսկուրսիաները թանգարանային կրթամշակութային աշխատանքներում դասական և տարածված ձևերից են, որոնց շնորհիվ թանգարանային ցուցադրությունը ներկայացվում է խորացված և կատարվում է համակարգված, նպատակաուղղված աշխատանք: Դրանք կարող են պարբերական բնույթ կրել: Կրթական էքսկուրսիաների առանձնահատկությունն այն է, որ դրանք նախապատրաստվում և իրականացվում են դպրոցական, բուհական ծրագրերին համապատասխան: Կրթական էքսկուրսիաների նպատակն է դպրոցական, բուհական ծրագրերի լրացումն ու ընդլայնումը: Թանգարանային էքսկուրսիաները, որոնք հիմնված են պատմության և բնության երևույթները պարզաբանող բնօրինակների վրա, տեսական գիտելիքները դարձնում են առավել հիմնավոր, տեսանելի, համոզիչ: Կրթական էքսկուրսիաների նախապատրաստման և անցկացման ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված մոտեցում, հաշվի առնելով այցելուի տարիքը և պատրաստվածությունը [23, էջ 18-28]:

Կրթական էքսկուրսիաներում համեմատաբար ավելի հաճախ է օգտագործվում հարց ու պատասխանի մեթոդը՝ կրկնվում և ամրապնդվում է անցած նյութը, կենտրոնացվում է ուշադրությունը, վերլուծվում է թանգարանային նյութը, որի հիման վրա կատարվում են ընդհանրացումներ և եզրակացություններ: Կրթական էքսկուրսիաները բնույթով թեմատիկ են: Լայն տարածում են ստացել էքսկուրսիա-դասը, էքսկուրսիա-սեմինարը, էքսկուրսիա-դասախոսությունը:

Էքսկուրսիա-դասն իրականացվում է թանգարանի սրահում էքսկուրսավարի և ուսուցչի համագործակցությամբ և ներառում է ինչպես էքսկուրսիայի տարրեր (ցուցադրել, պատմել), այնպես էլ դասի (հարցում, կրկնություն): Էքսկուրսիա-դասը, լրացվելով կինո-ֆոտո նյութերով՝ վերածվում է դաս-դասախոսության: Կրթական էքսկուրսիայի այս ձևն օգտագործվում է թանգարանային նյութի փաստացի սակավության դեպքում (օրինակ, եթե էքսկուրսիան նվիրված է որևէ հեղինակի, որի աշխատանքները ցուցադրության մեջ քիչ են ներկայացված):

Մասնագիտացված կրթական և կրթամեթոդական էքսկուրսիաները բազմազան են իրենց նպատակներով, բովանդակությամբ, լսարանի կազմով [31, էջ 105-109]: Վերջիններիս առնձնահատկությունն այն է, որ դրանք կազմակերպվում են նեղ մանագետների համար և անց են կացվում հատուկ ծրագրով: Յուրաքանչյուր մասնագիտական էքսկուրսիայի համար ընտրվում է թեման, նպատակը, ցուցադրության նյութը: Մասնագիտական էքսկուրսիան կարող է կազմակերպվել ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցադրություններում և թանգարանի ֆոնդերում: Մանագիտական կրթամեթոդական էքսկուրսիաները անց են կացվում թանգարանների սկսնակ աշխատողների և էքսկուրսավարների համար: Նմանատիպ էքսկուրսիայի նպատակն է ծանոթացնել ցուցադրության կազմակերպման, էքսկուրսիայի պատրաստման և անցկացման մեթոդներին, թանգարանային գործունեության այլ ուղղությունների:

Զարգացնող տիպի էքսկուրսիաներ կազմակերպելիս թանգարանների մանկավարժները պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն էքսկուրսիայի բովանդակությանն ու մեթոդական սկզբունքներին [147, էջ 9-16], [152, էջ 4-11]:

Զարգացնող էքսկուրսիայի հիմնական նպատակն է թանգարանային օբյեկտը ընկալելու համար այցելուների մոտ զարգացնել և ձևավորել այնպիսի հատկություններ և ընդունակություններ, ինչպիսիք են դիտողականությունը, հուզականությունը, զգայական ընկալումը, ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև հույզերը, մտքերը բառերով արտահայտելու ունակությունը: Այս տիպի էքսկուրսիան ունի խիստ մանկավարժական ուղղվածություն: Զարգացնող տիպի էքսկուրսիայի խնդիրներն են.

1. Բովանդակության հանդեպ զգացմունքների առաջացման ձևավորում,
2. Տեսածի վերաբերյալ մտածելու ունակության, վերլուծելու-ընդհանրացնելու ունակության զարգացում,
3. Ստեղծագործական երևակայության զարգացում,
4. Զգայական (սենսորային) ունակությունների զարգացում:

Թանգարանային էքսկուրսիայի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան վերանայվում է էքսկուրսիայի յուրաքանչյուր տիպին համապատասխան: Զարգացնող էքսկուրսիայի նախապատրաստման ժամանակ պետք է կիրառել.

- երկխոսություն
- դիդակտիկ (կրթական) խաղեր և զարգացնող բնույթի վարժություններ
- հանձնարարությունների հնարքներ:

Զարգացնող էքսկուրսիաների լավագույն օրինակ են վերջին տարիներին Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպված մի շարք թեմատիկ էքսկուրսիաներ, որոնք կոչված են ձևավորելու և զարգացնելու զգայական և զգացմունքային ընկալումը, ստեղծագործական մտածողությունը: Զարգացնող տիպի էքսկուրսիաների տևողությունը չպետք է գերազանցի 45-50 րոպեն: Խմբի անդամների քանակը չպետք է գերազանցի 15-ը, ինչը հնարավորություն կնձեռի անհատական աշխատանքի համար՝ խմբի յուրաքանչյուր մասնակցի հետ:

Դաստիարակչական էքսկուրսիայի կարևորագույն նպատակներից է անձի բարոյական հատկանիշների ձևավորումը: Բնականաբար, այս տիպի էքսկուրսիաների թեմաներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այցելուների տարիքային առանձնահատկությունները [177, 179]:

Դաստիարակչական էքսկուրսիայի խնդիրներն են՝

- ճանաչողական ակտիվության ձևավորում
- հաղորդակցական հմտությունների ձևավորում
- ուշադրության դաստիարակում
- թանգարանային մշակույթի դաստիարակում՝ թանգարանում վարվելակերպի կանոնների պահպանում, հոգատար վերաբերմունք թանգարանային հուշարձանների հանդեպ, հարգանք թանգարանների աշխատակիցների հանդեպ:

Թանգարանային կրթական ծրագրեր իրականացնելիս անհրաժեշտ է տիրապետել նաև թանգարանային առարկայի վերլուծության մեթոդաբանությանը [30, էջ 215-219], [2, էջ 224-227]: Թանգարանային առարկայի ընկալման գործընթացը

անցնում է տարբեր փուլեր՝ լուռ, խորասուզված դիտումից մինչև ստեղծագործական մակարդակ: Թանգարանային առարկայի հետ շփման առաջին քայլերը կարող են լինել ճանաչողական էքսկուրսիայի, ծնողների կողմից ներկայացնելու, դասի ժամանակ լսելու ընթացքում: Նախնական հաղորդակցումը կարող է լինել սլայդի, վերարտադրության կամ համակարգչային տարբերակի միջոցով: Արդեն այդ փուլում, կարևոր է ունկնդրի մոտ պատկերացում առաջացնել առարկայի ձևի և բովանդակության ընդհանրության մասին: Թանգարանային սրահում կազմակերպելով հանդիպում առարկայի հետ, ապահովում ենք առարկան ընկալելու ու հասկանալու, գեղագիտական հաճույք ստանալու, ստեղծագործության կամ առարկայի կառուցվածքի գրագետ վերլուծության հետ: Այս ամենը հիմք է հանդիսանում հետագայում համապատասխան թեմայով երկխոսություն կառուցելու համար:

Թանգարանի և կրթության փոխազդեցությունը պայմանավորված է թանգարանային առարկայի յուրահատկությամբ: Այստեղ թանգարանը հիմնվում է հաղորդակցության կամ շփման սկզբունքի վրա: Շփումն ի տարբերություն հաղորդակցության, որն «իր էությամբ սուբյեկտի կողմից որոշ տեղեկության փոխանցումն է մեկ այլ անձի կամ մեխանիզմի, որոնք պետք է ընդունեն այդ ուղերձի բովանդակությունը…» [80, էջ 85]:

Թանգարանային մանկավարժի դերը ոչ այնքան որոշակի գիտելիքների կրող լինելն է, այլ այցելուի և թանգարանային առարկայի միջև երկխոսություն կազմակերպելը: Հենց այդ երկխոսությունն է, որ «բազմակողմանիորեն զարգացնում է մարդու մտքերը, զգացմունքները, կամքը, երևակայության, ճաշակի միասնությունը, աշխարհի հանդեպ նրա գեղագիտական, բարոյական, քաղաքացիական վերաբերմունքը, գիտակցության և ինքնագիտակցության միասնությունը» [80, էջ 306]:

Ի տարբերություն դպրոցում իրականացվող մեթոդաբանությանը, որը հիմնվում է առարկայի մասին ընդհանուր գիտելիքի վրա (ըստ դասագրքերի, ձեռնարկների, տեղեկատվական գրականության)՝ թանգարանային կրթական գործունեության մեթոդաբանության հիմքում այցելուի շփումն է թանգարանային առարկայի և թանգարանային մանկավարժի հետ: Այստեղ շեշտը դրվում է տեսողական և

գեղարվեստական ընկալման վրա, թեև թանգարանային առարկան ևս դիտարկվում է իբրև տեղեկատվության աղբյուր: Այս հանգամանքը թույլ է տալիս ևս մեկ անգամ հիշել գիտության և արվեստի տարբերության մասին, խոսելով մի դեպքում՝ օբյեկտիվ, ճշմարիտ գիտելիքի, մյուսում՝ հեղինակի կողմից արժևորված և սուբյեկտիվացված:

Սակայն, թանգարանային ծրագրեր իրականացնելիս, աշխարհճանաչման գիտական և գեղարվեստական ձևերը չեն հակասում միմյանց: Օրինակ, գեղարվեստական թանգարանում արվեստի վերաբերյալ պարապմունքները կարելի է լրացնել պատմության, աշխարհագրության տվյալներով կամ բնագիտական նյութը հարստացնել տարազի, կահույքի և այլ առարկաների օգտագործմամբ:

Այցելուների հետ աշխատելիս կարելի է կիրառել թանգարանային առարկայի վերլուծության մի քանի ձև՝

Ընդհանուր կամ ծավալուն վերլուծություն, որը ենթադրում է ցուցանմուշի գաղափարի, բովանդակության և օգտագործված արտահայտչամիջոցի բազմակողմանի կիրառում: Օրինակ, Հայաստանի ազգային պատկերասրահում Վարդգես Սուրենյանցի սրահում «Սալոմե» կամ «Ոտնահարված սրբություններ” աշխատանքները մեկնաբանլիս՝ նպատակահարմար է սկսել արվեստի գործը ստեղծելու պատմական հիմքից, գաղափարի ձևավորման պատմությունից, հետո միայն անցնել դրա բովանդակային և կառուցվածքային մանրամասների բացատրմանը:

Համեմատական վերլուծությունը թույլ է տալիս միաժամանակ ուսումնասիրել մի քանի թանգարանային առարկա: Այս վերլուծության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ընտրված առարկաների տարրերը դիտարկում են զուգահեռ և արդյունքում բացահայտվում են դրանց յուրահատկությունները, գեղարվեստական ոճերը, որոնք բնորոշ են այս կամ այն ժամանակաշրջանին: Այս մեթոդի շնորհիվ կարելի է ներկայացնել միևնույն հեղինակի ստեղծագործական զարգացման ընթացքը՝ աշխատանքների համեմատության միջոցով:

Համալիր վերլուծությունը թույլ է տալիս ընդգրկել թանգարանի ամբողջ ցուցադրությունը՝ այցելուի մոտ թանգարանի հավաքածուների մասին համակողմանի

պատկերացում ձևավորելով: Այս վերլուծության առանձնահատկությունն այն է, որ մի կողմից կարելի է օգտագործել դեդուկցիայի մեթոդը՝ մանրամասն ներկայացնելով որևէ թանգարանային առարկա և այդ դիտարկումներն ընդհանրացնել սրահի այլ աշխատանքների վրա, մյուս կողմից՝ կարելի է ինդուկտիվ մեթոդով ժամանակաշրջանին բնորոշ հատկությունները ներկայացնելուց անցնել այս կամ այն կոնկրետ հուշարձանի վերլուծությանը:

Հատվածական վերլուծությունը թանգարանային հուշարձանի վերլուծության առավել բարդ ձև է և ենթադրում է առարկայի որևէ տարրի առանձնացումը (օրինակ՝ գույնը, կոմպոզիցիան), ինչն էլ դառնում է վերլուծության առարկա: Հատվածական վերլուծությունը հաճախ համատեղում են համեմատական վերլուծության հետ, որը թույլ է տալիս համեմատել առարկաներն՝ ըստ որևէ հատկանիշի:

Թանգարանային առարկայի վերլուծության այս կամ այն ձևի ընտրությունը պայմանավորված է թանգարանային մանկավարժի աշխատանքային փորձով, ստեղծագործական ունակություններով, գրագետ և պատկերավոր խոսքով, որոնք այցելուի և թանգարանային մանկավարժի միջև որոշակի զգացմունքային վիճակ են ստեղծում, որը նպաստում է թանգարանային առարկայի ընկալմանը: Թանգարանային առարկաները և դրանց վերլուծության ձևերը յուրացնելուց բացի՝ թանգարանային մանկավարժի մասնագիտական կարևորագույն հատկություններից է հանպատրաստից ստեղծագործելու (իմպրովիզացիա) ունակությունը: Վերջինս լայնորեն կիրառվում է նաև թանգարանային էքսկուրսիայի ընթացքում:

Թանգարանային էքսկուրսիաների դասակարգման ընթացքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները՝

I. Ըստ վարման տեղի և ցուցադրման օբյեկտների (ցուցանմուշների) դասակարգելիս.
   1. թանգարանի ցուցադրության տարածքում իրականացվող էքսկուրսիա,
   2. էքսկուրսիա թանգարանային ֆոնդերում և «բաց ֆոնդեր» տիպի ցուցադրությունում,

3. համալիր էքսկուրսիա՝ թանգարանային ցուցադրություն, քաղաքի և մերձքաղաքային հուշարձաններ, արգելոց-թանգարաններ, բաց երկնքի տակ գտնվող թանգարաններ:

II. Ըստ թեմատիկայի դասակարգելիս.

1. Պատմագիտական էքսկուրսիա՝ ժամանակագրական, ռազմապատմական, հնագիտական, ազգագրական, պատմամշակութային:
2. Բնագիտական՝ երկրաբանական, հանքաբանական, կենսաբանական, կենդանաբանական, հնէաբանական:
3. Արվեստագիտական՝ գեղարվեստական, երաժշտական, թատերական,
4. Ճարտարապետական՝ պատմաճարտարապետական, արգելոց-թանգարանի, թանգարան բաց երկնքի տակ:
5. Գրական էքսկուրսիաներ:
6. Տեխնիկական՝ տեխնիկայի պատմության, գիտատեխնիկական, արտադրական:

III. Ըստ թեմատիկայի ծավալի դասակարգելիս.

1. Թեմատիկ՝ մեկ թեմայի ծավալով
2. Ճանաչողական՝ մի քանի թեմայի ծավալով
3. Էքսկուրսիաների շարք

IV. Ըստ նպատակաուղղվածության դասակարգելիս.

1. Գիտալուսավորական,
2. Կրթական (դպրոցականների, ուսանողների, ուսումնամեթոդական, մասնագիտական),

V. Ըստ այցելուների կազմի դասակարգելիս.

1. Ըստ տարիքի (մեծահասակներ, երիտասարդներ, դեռահասներ, նախադպրոցականներ),
2. Ըստ սոցիալական կազմի,
3. Ըստ բնակավայրի (տեղացիներ, քաղաքի, գյուղի բնակիչներ, զբոսաշրջիկներ),
4. Ըստ խմբի կազմի (միատարր, բազմատարր՝ տարբեր տարիքի, սոց. կազմի և այլն):

Պատմական էքսկուրսիայի ընթացքում ներկայացվում են նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները, որոնք արտացոլում են հասարակության զարգացումը: Դրանք իրականացվում են պատմական բնույթի թանգարանների ցուցադրություններում և հավաքածուներում: Պատմական էքսկուրսիան կարող է նվիրված լինել պետության, մարզի, քաղաքի պատմությանը (հնագույն ժամանակներից մինչև այսօր) կամ միայն պատմական մի շրջափուլի:

Հնագիտական էքսկուրսիաներն անց են կացվում հնագիտական բնույթի թանգարաններում և երկրագիտական թանգարանների համապատասխան բաժիններում: Նման էքսկուրսիաները կազմակերպվում են, ներառելով նյութական մշակույթի հուշարձանները, որոնք բնութագրում են մարդկության զարգացման հնագույն պատմությունը:

Ազգագրական էքսկուրսիաները կազմակերպվում են ազգագրության թանգարաններում, պատմության, երկրագիտական թանգարանների համապատասխան բաժիններում, ազգագրական բնույթի բացօթյա թանգարաններում, որտեղ ներկայացվում են ժողովուրդների կենցաղն ու մշակույթը, սոցիալական հարաբերությունները:

Բնագիտական էքսկուրսիաներն անց են կացվում բնագիտական, մարդաբանական, կենսաբանական, երկրաբանական, բուսաբանական թանգարաններում, ինչպես նաև երկրագիտական թանգարանների, արգելոց-թանգարանների համապատասխան բաժիններում:

Արվեստագիտական էքսկուրսիաներն անց են կացվում գեղարվեսական, թատերական, երաժշտական թանգարանների ցուցադրություններում, ինչպես նաև երկրագիտական թանգարանների գեղավեստի բաժիններում: Արվեստագիտական էքսկուրսիաներում լուսաբանվում են գեղանկարի, գրաֆիկայի, դեկորատիվ-կիրառական արվեստի գործերը, ուղղությունները, դպրոցները, առանձին նկարիչների աշխատանքները, թատերական, երաժշտական արվեստի պատմությունը, առանձին թատրոնների, ներկայացումների պատմությունը, արվեստի գործիչների կյանքն ու գործունեությունը:

Ճարտարագիտական էքսկուրսիաներն իրականացվում են ճարտարապետությանը նվիրված մասնագիտացված թանգարաններում, ինչպես նաև պատմության, երկրագիտական, արգելոց-թանգարանների, բացօթյա թանգարանների ցուցադրությունների համապատասխան բաժիններում: Ցուցադրության օբյեկտներ են համարվում ճարտարապետական շինությունները (պատմական և ժամանակակից), ինչպես նաև հուշարձանին առնչվող վավերագրական նյութերը (փաստաթղթեր, լուսանկարներ, նախագծեր, մանրակերտեր): Ճարտարագիտական էքսկուրսիաներն ունեն համալիր բնույթ, անց են կացվում և թանգարանային ցուցադրությունում և ճարտարապետական կոթողներում (արգելոց-թանգարան, թանգարան բաց երկնքի տակ): Ճարտարագիտական էքսկուրսիաների թվին կարող են դասվել նաև անվանի ճարտարապետների կյանքին և գործունեությանը նվիրված մենագրային էքսկուրսիաները:

Տեխնիկական էքսկուրսիաները կազմակերպվում են տեխնիկայի պատմությանն ու զարգացմանը նվիրված և տեխնիկական ուղղվածություն ունեցող տարբեր թանգարաններում: Լուսաբանում են տեխնիկայի զարգացման ընթացքը, ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումները:

Բոլոր էքսկուրսիաները կրթամշակութային ուղղվածություն ունեն, դրանք ոչ միայն գիտելիքների ստացման և գեղեցիկի ընկալման աղբյուր են, այլև ակտիվ հանգստի և ժամանցի ձևեր:

Թանգարանային էքսկուրսիայի բովանդակությունը և անցկացման մեթոդաբանությունը պայմանավորված է այցելուների խմբերի առանձնահատկություններով:

Թանգարանային շփման հիմքը ցուցանմուշն է, որի շուրջն էլ կառուցվում է երկխոսությունը: Այդ պատճառով էքսկուրսավարից պահանջվում է տիրապետել առարկան ցուցադրելու հմտություններին՝ տարբերակելով առաջնային ցուցանմուշը երկրորդականից: Կարևոր է դիտման այնպիսի կետի ընտրությունը, որ ցուցադրությունն այցելուների համար առավել տեսանելի և ընկալելի լինի: Որոշակի առարկայի վրա խմբի ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով՝ էքսկուրսավարը

կիրառում է թանգարանային այնպիսի հնարք, ինչպիսին է ճանաչման հրահանգի ստեղծումը:

Երբեմն էքսկուրսիայի ընթացքում այցելուին նախ որոշակի տեղեկություն է հաղորդվում, հետո միայն նա տեսնում է դրա փաստացի ապացույցը: Օրինակ, էքսկուրսավարը կարող է ասել. «Նայեք այս առարկային և հիշեք, թե որտեղ ենք մենք տեսել այն»: Առավել արդյունավետ է այս հնարքի կիրառումը, երբ էքսկուրսավարը նախապատրաստում է այցելուներին, ցուցադրության ամենակարևոր նմուշը ներկայացնելուց առաջ, նախօրոք այն մի քանի անգամ հիշատակելով, նկարագրելով, նշելով նրա կարևոր և նշանակալի լինելը, որպեսզի «հանդիպման» պահին խումբն առավելագույնս պատրաստ լինի ընկալել այն:

Անդրադառնալով էքսկուրսավարի խոսքին՝ անհրաժեշտ է հիշել, որ թեմայի ընկալումը ձևավորվում է ձայնային և պատկերային շարքի վրա: Ձայնային շարքի աղբյուրն էքսկուրսավարի խոսքն է: Այցելուի համար էքսկուրսավարը կարող է հանդես գալ տեղեկացնողի, մեկնաբանողի, զրուցակցի, խորհրդատուի, հուզականությունն առաջնորդողի դիրքերից:

Էքսկուրսիոն բոլոր տեքստերը, մեթոդական ձեռնարկները նախապես հաստատվում են թանգարանի գիտամեթոդական խորհրդում, դառնում պաշտոնական փաստաթուղթ, որով առաջնորդվում են գիտաշխատողները և էքսկուրսավարները: Խորհրդի կողմից կազմակերպվում են բոլոր տիպերի էքսկուրսիաների լսումներ և միայն հաստատելուց հետո, էքսկուրսավարին թույլատրվում է աշխատել խմբերի հետ: Թանգարանում պարտադիր են էքսկուրսիաների նախնական լսումները:

2.3. Թանգարանային էքսկուրսավարի գործունեության մանկավարժական էությունը

Կրթական և մշակութային քաղաքականություն չի կարող իրականացվել, անտեսելով զանգվածային հաղորդակցության միջոցները, մշակութային ինդուստրիան, գրադարանները, թանգարանները և այլն: Շարունակական կրթությունը

լիարժեք և արդյունավետ չի կարող լինել, առանց գործընթացում լրացուցիչ կրթական տարածք ներառելու: Ուստի շարունակական կրթության համար պատասխանատվություն չեն կարող կրել միայն կրթական հաստատությունները: Այն ներառում է և՛ մշակույթի, և՛ սոցիալական ապահովության նախարարությունների, և՛ մշակութային գործիչների, և՛ մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը [149, էջ 17]:

20-րդ դարի 70-ական թթ. թանգարաններում ստեղծվեցին էքսկուրսավարի հաստիքներ, որոնք արդեն էքսկուրսիա էին վարում ոչ թե ի լրումն հիմնական աշխատանքի, այլ՝ ի կատարումն հիմնական աշխատանքային պարտականությունների, որի ընթացքում կարևորվում են՝

- էքսկուրսիայի բովանդակության գերազանց իմացությունը,
- էքսկուրսիայի անցկացման մեթոդաբանությանը տիրապետելը,
- էքսկուրսիայի թեմայի և երթուղու, անցկացման կարգի և այցելուների սպասարկման կանոնների իմացությունը:

Էքսկուրսավարը պետք է կարողանա.

- մշակել թեմային համապատասխան փաստացի նյութը և կազմել տեքստեր,
- էքսկուրսիայի անցկացման ընթացքում կիրառել մեթոդական հնարքներ,
- օգտագործել «էքսկուրսավարի պայուսակ»-ում ընդգրկված նյութերը,
- թեմայից չշեղվել, տեղեկատվություն հաղորդել էքսկուրսիայի ընթացքում վարքի կանոնների մասին,
- ձևակերպել էքսկուրսիայի սպասարկմանը վերաբերվող բոլոր փաստաթղթերը:

Էքսկուրսավարն իրավունք ունի հեռացնել այն այցելուներին, որոնք խանգարարում են էքսկուրսիայի իրականացմանը:

Էքսկուրսավարից ակնկալվող մասնագիտական պահանջները.

- սոցիալ-մշակութային աշխատանքի ունակություն,
- մանկավարժի ունակություններ,
- գեղեցիկ առոգանություն,
- էքսկուրսիոն թեմաների իմացություն,

- ստեղծագործականություն և նախաձեռնողականություն,
- այցելուների հետաքրքրությունների և պահանջների ուսումնասիրում,
- այցելուների հանդեպ տարբերակված մոտեցում,
- մասնագիտական աշխատանքի մշակույթ՝ այցելուների հետ քաղաքավարի վարվելակարգ:

Էքսկուրսավարը պարտավոր է.

- վարել էքսկուրսիան՝ հաշվի առնելով այցելուների խմբի առանձնահատկությունները,
- այցելուների անվտանգությանը միտված միջոցներ ձեռնարկել,
- հատուկ վերաբերմունք դրսևորել մեծահասակների և հաշմանդամների սպասարկման ընթացքում:

Թեման ներկայացնելիս՝ կարևորվում են էքսկուրսավարի այնպիսի հատկություններն, ինչպիսիք են համոզվածությունը և անկողմնակալությունը: Էքսկուրսավարին ներկայացվող պահանջներից են նաև մանկավարժական ունակությունները՝ կառուցողական, կազմակերպչական, հաղորդակցական, ճանաչողական-վերլուծական:

Էքսկուրսիայի հաջողությունն իրապես պայմանավորված է էքսկուրսավարի անձով՝ խառնվածքից, որն արտահայտվում է վարքում, զգացողությունների, հույզերի, ապրումների արտահայտման ձևերում, համբերատարության, իր հույզերի, տրամադրության վերահսկման մեջ: Վերը շարադրվածը էքսկուրսավարի վարպետության կարևորագույն բաղկացուցիչներն են: Էքսկուրսավարը պետք է ծանոթ լինի հոգեբանության հիմունքներին, համակողմանի պատկերացում ունենա անձի խառնվածքի առանձնահատկությունների մասին և կարողանա ճիշտ օգտագործել գիտելիքն ու հմտությունները: Օրինակ՝ սանգվինիկ էքսկուրսավարին բնորոշ են խոսքի արագ տեմպը, տրամադրության հաճախակի փոփոխությունը: Էքսկուրսավար-խոլերիկն ինքնատիրապետման բացակայության դեպքում դառնում է անկայուն, դյուրագրգիռ, շտապողական վարք է դրսևորում: Ֆլեգմատիկը դանդաղաշարժ է, չշփվող, նրա շարժումները և դիմախաղը հանգիստ և հավասարակշռված են:

Մելանխոլիկն ինքնամփոփ է, վստահ չէ սեփական ուժերին, շուտ է հոգնում, մանավանդ՝ միօրինակ աշխատանքից:

Էքսկուրսավարի խոսքն այցելուների ընկալման բարձրագույն աստիճանին է հասնում, երբ թեմայի բովանդակությունից բխող հույզերը, ապրումներն ընդհանուր են դառնում: Այն հնարավոր է միայն հոգեբանության կանոնների, մարդու խառնվածքի իմացության և ճիշտ օգտագործման, տրամադրության, հետաքրքրությունների համընկման պարագայում:

Ժամանակակից թանգարանը չի կարող վերածվել տեղեկատվության պասիվ միջոցի: Ընդհակառակը՝ այցելուն թանգարանում

- իրեն զգում է իբրև մշակույթի բաղկացուցիչ,
- ունենում է երկխոսության հնարավորություն,
- հազվագյուտ հնարավորություն է ստանում բնօրինակից բխող գիտելիք քաղել՝ «չհավատալով խոսքին»,
- զգում է, որ կարող է երկարաձգել զգայական, զգացմունքային, արժեքավորող փորձը, գեղագիտական ռեակցիան, ըմբռնել առարկաների լեզուն ազատվում է առօրյա հոգսերից, պատրաստակամորեն ենթարկվելով «թանգարանային» վարքականոններին [114, էջ 355]:

Ամերիկյան թանգարաններում այցելուների հետ կատարված աշխատանքի փորձը թույլ տվեց ձևակերպել թանգարանի կարևորագույն խնդիրներից մեկը՝ «Թանգարանը պետք է ստեղծի երեխաների համար կրթության և մեծերի համար առողջ հանգստի և գիտելիքների կուտակման պայմաններ: Նա պետք է լինի այն պահոցը, որից գիտելիքներ քաղեն ուսանողները և ոգեշնչման աղբյուր լինի նկարիչների համար: Թանգարանի ազդեցությունը պետք է շոշափվի տանը և արտացոլվի հասարակության բոլոր անդամների վրա» [153, էջ 43]:

Ուստի, էքսկուրսավարի վարպետությունն անմիջականորեն կապված է մանկավարժության տեսության իմացությանն ու կիրառմանը: Էքսկուրսավարը պարտավոր է ոչ միայն գիտելիք հաղորդել, այլև հասնել թեմայի ընկալմանն ու

ամրապնդմանը: Էքսկուրսավարի՝ որպես մանկավարժի, վարպետության մակարդակը կախված է երկու խումբ գործոններից.

1. մեթոդական փաստաթղթերի մակարդակ, ցուցադրման օբյեկտների ընտրություն, երթուղու ընտրություն, «էքսկուրսավարի պայուսակի» բաղադրություն,
2. ընդհանուր պատրաստվածություն, թեմային տիրապետելը, խոսքի մշակույթը, խմբի հետ կապ հաստատելու կարողությունը, մասնագիտական հնարքների իմացությունը և գիտելիքների մակարդակը:

Գլխավոր գործոնը թեմային տիրապետելն է: Ամեն մի անճշտության, սխալի հետևանքով էքսկուրսավարը կորցնում է լսարանի վստահությունը: Այդ պատճառով, էքսկուրսիան նախապատրաստելիս, մասնագետներն առավել ուշադրություն են դարձնում բովանդակությանը, թեմայի ամբողջական բացահայտմանը, կառուցվածքի հստակեցմանը, կարևորում են էքսկուրսիայի փուլերի տրամաբանական անցումները:

Էքսկուրսավարի հաջողության գրավականներից է առաջին իսկ րոպեներից խմբի հետ կապ հաստատելն ու էքսկուրսիայի ողջ ընթացքում պահպանելը: Հմուտ էքսկուրսավարը, սկզբից ևեթ կիրառելով մանկավարժական հմտություններն, արագ պետք է կողմնորոշվի, թե ինչ խմբի հետ է աշխատելու՝ հաշվի առնի նրա հետաքրքրությունները, տրամադրությունը և տրամադրվածությունը: Շփումն ապահովելու տեսանկյունից կարևոր է ներածական զրույցը, երբ էքսկուրսավարը ծանոթանում է լսարանի հետ: 2-3 րոպեի ընթացքում, ներկայանալով խմբին, շարադրելով էքսկուրսիայի համառոտ ծրագիրը, նա ցուցադրում է խմբի հետ աշխատելու, նրանց պահանջները հաշվի առնելու պատրաստակամություն: Ներածական մասը տեղեկատվական բնույթ չունի, նախատեսված է խմբի հետ կապ հաստատելու համար: Խմբի հետ շփումը կարևոր է էքսկուրսիայի ողջ ընթացքում: Իհարկե, պետք է ժամանակ նախատեսել այցելուներին հանգստանալու, տեղեկատվությունից լիցքաթափվելու և ինքնուրույն դիտման համար: Այդպիսի պահերին շփումը պետք է դառնա առավել անմիջական:

Էքսկուրսավարի և խմբի հաղորդակցման արդյունքն ի հայտ է գալիս նաև էքսկուրսիայի ավարտական փուլում, երբ ավանդական «հարցեր ունե՞ք»

արտահայտությանը հետևում են այցելուների հարցերը, շնորհակալական խոսքերն ու կարծիքները: Ամփոփիչ զրույցն ավելի բովանդակալից կդառնա, եթե էքսկուրսավարը ևս մեկ անգամ հակիրճ անդրադառնա ներկայացված թեմայի կարևոր փուլերին, ընդհանրացումներ և եզրահանգումներ անի, որը այցելուի մտապատկերում կամրապնդի ցուցադրությունից բխող հույզերն ու կրկին վերադառնալու ցանկություն կառաջացնի:

Ինչպես նշվում է 2005 թվականին Սանկտ-Պետերբուրգում կազմակերպված «Թանգարանը որպես ժամանակակից մշակույթի ֆենոմեն» գիտաժողովի նյութերում. «թանգարանում է ամփոփվում մշակույթի էությունը, որի պատճառով էլ թանգարանից սպասվող ակնկալիքի գիտակցումն է պատասխանում այն հարցին, թե ի վերջո ի՞նչ է մշակույթը, ինչպիսի՞ն են այդ հորիզոնները և ի՞նչ է թաքնված դրանց ետևում» [131, էջ 4]: Այցելուն պետք է զգա, որ բաժանվում է լավ բարեկամներից, որոնց հետ հնարավորություն է ունեցել հետաքրքիր ժամանակ անցկացնելու:

Առաջնային է նաև խմբի հանդեպ տարբերակված մոտեցումը: Եթե նույն էքսկուրսիան անցկացվում է և՛ դպրոցականի, և՛ զբոսաշրջիկների, և՛ մասնագետների համար, այսինքն՝ «ընդհանրական այցելուին» է ուղղված, այն դառնում է միապաղաղ, «ոչ քեզ ուղղված», մինչդեռ էքսկուրսավարի և խմբի շփումն անմիջական բնույթ ունի: Էքսկուրսիան վարելիս պետք է ճկուն մոտեցում ցուցաբերել, անհրաժեշտության դեպքում՝ հընթացս փոփոխություններ անել: Խմբի ուշադրությունը կենտրոնացած պահելու և չհոգնեցնելու համար՝ ժամանակ առ ժամանակ պետք է փոխել խոսքի տեմպը, որոշ ենթաթեմաներ կրճատել կամ ավելացնել, փոխել տրամաբանական անցումները, հետաքրքրական փաստեր օգտագործել ու բարձր տրամադրություն ապահովել: Այսպիսով՝ թանգարանում, ինչպես թատրոնում, կարևորվում է ոչ միայն ի՞նչ ես ասում, այլև՝ ինչպե՞ս ես ասում, մոտեցումը:

Խմբի հետ անմիջական շփումն ակտիվացնելու համար օգտագործվում է երկխոսության՝ հարց-պատասխանի մեթոդը: Ուղղակի հարցերն ավելի շատ կիրառվում են նախադպրոցականների և դպրոցականների հետ աշխատելիս, քանի որ էքսկուրսիան նրանց հետ շարունակական զրույց է ներկայացնում, որի ընթացքում

կարևոր է զարգացնել երեխաների ակտիվությունը, այդ թվում, նաև խոսքի՝ սովորեցնելով նրանց լսել հարցը, պատասխանների տարբերակներ մշակել, ընտրել դրանցից ճիշտը և կարողանալ ձևակերպել հարցերը:

Մեծահասակների հետ աշխատելիս, հարցը տեղին է միայն այն դեպքում, երբ էքսկուրսավարը ձևակերպում է հարց – հանձնարարություն: Օրինակ, առաջարկվում է համեմատել երկու ցուցանմուշները և թվարկել միանման հատկանիշները, կամ գտնել բնօրինակը և վերականգնված հատվածները: Սակայն, լսարանի հետ աշխատելիս, էքսկուրսավարը հիմնականում չի ակնկալում հարցերի պատասխաններն ստանալ, քանզի դրանք հիմնականում հռետորական բնույթ ունեն: Հարցը ձևակերպվում է այնպես, որ այցելուների գիտելիքների վերաբերյալ կասկած չառաջացնի. «Դուք, իհարկե, հիշում եք, որ…», «Ըստ երևույթին, Դուք արդեն կռահեցիք…» և այլն:

Լսարանին ներկայացվող հարցերը տարբեր գործառույթներ են իրականացնում: Մի դեպքում հարցի միջոցով հնարավոր է պարզել խմբի տեղեկացվածության աստիճանը, ինչն անհրաժեշտ է զրույցը շարունակելու համար: Օր. «Գիտե՞ք արդյոք, ինչ է նշանակում այս խորհրդանիշը»: Կամ՝ ստուգել այցելուների ուշադրությունը. «Նկատեցի՞ք, որ շենքը պատուհաններ չունի», - այս հարցը խմբի ուշադրությունը կենտրոնացնում է առարկայի վրա, ստիպում նկատել այն և վերջում էքսկուրսավարի եզրահանգումները հիմնվում են կոնկրետ տպավորությունների վրա: Երրորդ դեպքում՝ էքսկուրսավարի հարցն այցելուներին մտորելու է տրամադրում, միասին գտնելու հարցի պատասխանը: Օրինակ՝ «Ձեր կարծիքով, ի՞նչի համար է օգտագործվել այս սարքը»: Այսպիսի հարցերի գլխավոր նպատակն է այցելուի առջև խնդիր դնել՝ «ստիպել» մտորելու և պատասխանը գտնելու:

Թանգարանային երկխոսությունը հիմնականում կառուցվում է ցուցադրվող օբյեկտի շուրջը: Էյլին Հուպեր-Գրինհիլը «բնական» հաղորդակցություն է համարում թանգարանային միջավայրը, որն ըստ էության, այցելուի հետ դեմ առ դեմ զրույց է [151, էջ 35]: Ի տարբերություն զանգվածային լրատվամիջոցների հաղորդակցական «անբնական» համակարգերի, որոնք հաճախ կողմերից մեկի բացակայության կամ հեռավորության պայմաններում են իրականացվում (չէ՞ որ շփման համար կողմերի

առկայությունն անհրաժեշտ է)՝ դժվար է վստահ լինել, որ տեղեկությունը հասել է ունկնդրին: Ուստի, էքսկուրսավարից պահանջվում է տիրապետել նյութը ներկայացնելու հմտություններին՝ ամեն կերպ շեշտելով օբյեկտի առավելությունները: Այդ հմտություններից է դիտման կետի ընտրությունը, խմբի այնպիսի «տեղակայումը», որ ամեն ինչ տեսանելի և ընկալելի լինի: Ցուցադրումը և խոսքը կարելի է սկսել միայն այն ժամանակ, երբ էքսկուրսավարը համոզված է, որ ամբողջ խումբը մոտեցել է օբյեկտին և ճիշտ է «տեղակայված»: Էյլին Հուպեր-Գրինհիլը, թանգարանային հաղորդակցության նոր մոդել առաջարկելով, գտնում է, որ ոչ միայն թանգարանի աշխատակիցն է ներկայացնում առարկաների իմաստը, երբ դրանք ներառում է ցուցադրության մեջ, այլև յուրաքանչյուր այցելու իր մեկնաբանությունն է կատարում՝ ելնելով անձնական փորձից [151, էջ 59-60]:

Ցուցանմուշի հանդեպ այցելուի ուշադրությունը պայմանավորված է էքսկուրսավարի վերաբերմունքով: Տեսողական տպավորությունների կարևորությունն ընդգծելու համար՝ էքսկուրսավարն առարկային մեջքով չի կանգնում, այլ կիսով չափ շրջվում է և անպայման նայում ցուցանմուշին, քանի որ նույն շարժումը կրկնում են այցելուները: Առարկայի վրա խմբի ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով՝ էքսկուրսավարը կիրառում է տվյալ օբյեկտը ճանաչելուն, վերհիշելուն միտված թանգարանային հնարքներ: Դրանք հնարավոր է կիրառել միայն թանգարանում, քանի որ դիտումն այստեղ կապված է ճանաչողության երևույթի հետ: Այցելուն ցուցադրության մեջ կարող է հանդիպել մի առարկայի՝ բնօրինակի, հուշարձանի, ձեռագրի, որն առնչվում է մանկության հուշերի հետ, կամ որի մասին կարդացել է, իրեն պատմել են, տեսել է դրա պատկերը և այլն: Այցելուի վրա մեծ ազդեցություն է թողնում այլ աղբյուրներից ստացված տեղեկության փաստացի ապացույցը:

Երբեմն էքսկուրսիայի ընթացքում նախ ընտրվում է տեղեկությունը և հետո միայն այցելուին հնարավորություն է ընձեռնվում գտնել դրա փաստացի ապացույցը, կամ նման մեկ ուրիշ օրինակ. «Նայեք այս առարկային և հիշեք, թե որտե՞ղ ենք այն տեսել» կամ «Հիշեք այս եկեղեցու հատակագիծը, որը կօգնի հասկանալ այս և նմանատիպ հուշարձանների առանձնահատկությունները»: Արդյունավետ է այս հնարքի կիրառումը

թանգարանային ցուցադրության առաջնային՝ գլխավոր ցուցանմուշները ներկայացնելու ժամանակ՝ մի քանի անգամ այն հիշատակելով, նկարագրելով, նշելով նրա կարևորությունը, տեղը թանգարանային հավաքածուում և ցուցադրության մեջ, որպեսզի խումբը սպասի և պատրաստ լինի «հանդիպմանը»:

Էքսկուրսավարի խոսքի մշակույթը: Էքսկուրսիայի թեմայի ընկալումը կառուցված է ձայնային և պատկերային շարքի վրա: Ձայնային շարքի աղբյուրը հիմնականում էքսկուրսավարի խոսքն է: Այցելուների համար նա տեղեկացնող է, մեկնաբանող, զրուցակից, խորհրդատու և առաջնորդող:

Ինչպես վերը նկատեցինք՝ էքսկուրսիայի ընթացքում կիրառվում են նաև հռետորական արվեստի մի շարք ձևեր՝

- խոսք – որևէ թեմայով կարճ բանավոր ելույթ,
- զեկուցում – որոշակի թեմայով հրապարակային ելույթ, որը կարելի է քննարկել և վերլուծել,
- ռեֆերատ - խնդրի բովանդակային շարադրանք՝ հիմնված գիտական տվյալների, գրականության, արխիվային և այլ աղբյուրների վերլուծության վրա,
- դասախոսություն - բանավոր հրապարակային ելույթ, որի ընթացքում որևէ թեմա է մանրամասն շարադրվում,
- բանավոր խոսքի փոքր ձևեր – ռեպլիկ (համաձայնություն, առարկություն, դիտողություն), տեղեկություն, հռետորական հարց, հարցին ուղղակի պատասխան:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր լավ նախապատրաստված էքսկուրսիա հռետորական արվեստի ձևերի սինթեզ է: Էքսկուրսավարը պետք է պահպանի խոսքի մշակույթի բոլոր դրսևորումները. դրանք են՝

1. Լեզվական - քերականական ձևեր, բառապաշար, ոճ, արտասանություն
2. Հոգեբանական - մատչելիություն-արտահայտչականություն:
3. Հաղորդակցական - կապը լսարանի հետ:

Պետք է պահպանել նաև խոսքի ստույգ, տրամաբանված, հստակ, մաքուր, արտահայտչականությունը, ինչպես նաև խոսքի ռիթմը և տեմպը:

Թեմայի բովանդակությունը, հագեցվածությունը թելադրում են խոսքի տեմպը և ռիթմը: Դրանք ընտրվում են յուրաքանչյուր էքսկուրսիայի տիպի, այցելուների խմբի, էքսկուրսիայի տարբեր ենթաթեմաների համար առանձին- առանձին: Խոսքի տեմպը և ռիթմը կարող է հարմարեցվել խմբի պահանջներին, հետաքրքրություններին: Խոսքի արագ տեմպի դեպքում 1 րոպեում արտասանվում է 75, միջինը՝ 60 բառ, դանդաղ խոսքի դեպքում՝ 45 բառ:

Նախընտրելի է բանավոր խոսքում օգտագործել կարճ, պարզ նախադասություններ, որոնք ավելի հեշտ են ընկալվում: Պետք է խուսափել գործնական, պաշտոնական ոճից, բարդ եզրույթներից, թվերի և անունների գերհագեցվածությունից: Էքսկուրսավարը պետք է մտքերն արտահայտի կարճ, բովանդակալից, հուզական: Զգացմունքների արտահայտման համար օգտագործվում է ձայնի ուժի, տոնայնության փոփոխությունը:

Բացի շփման խոսքային ձևերից՝ կիրառվում են նաև ոչ խոսքայինները. ժեստերը և դիմախաղը: Եթե խոսքի միջոցով տեղեկությունն է մատուցվում, ապա ոչ խոսքային միջոցների օգնությամբ, այցելուին հասանելի են դառնում ենթատեքստը, վերաբերմունքը, հույզերը, ապրումները:

Ժեստերը լինում են.

- Մատնանշող,
- տարածածավալային - ցույց է տրվում օբյեկտի չափերը կամ ծավալը,
- կառուցողական - ներկայացվում են օբյեկտի կառուցվածքային առանձնահատկությունները,
- վերակառուցողական - ցույց է տրվում օբյեկտի բացակայող մասերի ենթադրելի վերակառուցումը,
- խթանիչ - առաջարկվում է գործողություն կատարել՝ մոտենալ ցուցափեղկին,
- հուզական - փոխանցվում են դիմախաղի միջոցով: Դիմախաղը մարդու հոգեվիճակը, տրամադրությունն արտահայտող դեմքի մկանների շարժումն է:

Որոշ դեպքերում դիմախաղով, աչքերով կարելի է ավելին արտահայտել, քան՝ խոսքով: Շատ շարժումների և ժեստերի իմաստը պայմանավորված է ազգային

մշակույթի առանձնահատկություններով, ինչը պետք է հաշվի առնել շփման ժամանակ: Սակայն, աշխարհում գոյություն ունեն նաև ընդունված միանման ժեստեր, ինչպես նաև կոնկրետ ազգի համար առանձնահատուկ իմաստ պարունակող ժեստեր: Օրինակ՝ V նշանը ունի 2 թվի իմաստը, Ուինսթոն Չերչիլն օգտագործել է այն որպես հաղթանակի նշան (victory), ափը թեքելով իր կողմը, քանի որ նույն շարժումը ափով դեպի զրուցակիցը վիրավորանք է նշանակում: Տարբեր երկրներում, տարբեր իմաստ ունեն միջամատով իրականացվող ժեստերը:

Ցուցամատի և միջամատի միացման միջոցով ստեղծված ժեստը ԱՄՆ-ում նշանակում է «օ' քեյ, ամեն ինչ լավ է», Ֆրանսիայում - «զրո, ոչինչ», Ճապոնիայում - «փող, գումար», Միջերկրական ծովի որոշ երկրներում՝ վիրավորանք (տղամարդու ուղղությամբ այդ ժեստը ցույց տալով ակնարկվում է, որ նա համասեռամոլ է):

Այս օրինակները ցույց են տալիս, որ ժեստերի տարբեր մեկնաբանումը կարող է չնախատեսված հետևանքների հանգեցնել: Այս կամ այն ժեստը կիրառելուց առաջ պետք է պատկերացում ունենալ այդ մշակույթում գործող ավանդույթների մասին: Էքսկուրսավարի համար կարևոր է նաև զրուցակիցների միջև համապատասխան «ճիշտ» տարածության պահպանումը: Յուրաքանչյուր մարդ իր մարմնի շուրջ գտնվող տարածությունն ընկալում է որպես սեփական, անհատական տարածք, և չի սիրում, երբ որևէ մեկը ներխուժում է այդտեղ: Անհատական տարածքի չափը որոշվում է մարդու ծննդավայրի բնակչության խտությամբ, մշակութային միջավայրով:

Մարդու շուրջ գտնվող տարածքն ընդունված է բաժանել 4 գոտիների՝

1. ինտիմ գոտի (15-ից 45սմ): Այս տարածքը մարդն ընկալում է որպես սեփական, միայն ամենամոտ մարդկանց է թույլատրվում ներթափանցել այնտեղ,
2. անհատական գոտի (46-ից 122սմ): Այսպիսի տարածության վրա մենք կանգնում ենք երեկույթների, պաշտոնական ընդունելությունների, ընկերական հանդիպումների կամ աշխատանքի ժամանակ,
3. սոցիալական գոտի (122-ից 360սմ): Գերադասելի տարածություն օտարների, ոչ անմիջական շփան ժամանակ,

4. հանրային գոտի (360 սմ–ից ավել): Գերադասելի է մարդկանց մեծ խմբի հետ ոչ անմիջական շփման ժամանակ:

Պահպանելով անձնական տարածքը՝ էքսկուրսավարը պետք է հաշվի առնի ցուցադրվող օբյեկտի հնարավորությունները: Որոշ դեպքերում անհրաժեշտ է այցելուներին բաժանել փոքր խմբերի:

Էքսկուրսավարի մարմնի դիրքն - աշխատանքի ժամանակ մարմնի բնական, հարմար, անկաշկանդ դիրքը վարքի կարևոր տարրերից է: Կարևորը մարմնի հաստատուն հավասարակշռությունն ու շարժունությունն է: Էքսկուրսավարի դիրքը, հագուստի և արտաքինի արտասովոր տեսքը, չպետք է շեղեն այցելուների ուշադրությունը: Բնականաբար, անթույլատրելի է դասական, թանգարանային էքսկուրսիա վարել սպորտային հագուստով կամ մերձքաղաքային, բնագիտական էքսկուրսիա վարել երեկոյան կամ գրասենյակային զգեստով:

Էքսկուրսավարի վարքագիծը - տվյալ հասարակության կողմից ընդունված շփման կարգն է: Այցելուի վրա մեծ ազդեցություն ունեն էքսկուրսավարի վարքագիծն ու շարժուձևերը: էքսկուրսավարի վարքագիծը պետք է լինի բնական, հանգիստ, վստահ: Անթույլատրելի են կոպիտ տոնը և այցելուներին ուղղված դիտողությունները:

Մանկավարժական տակտի, քաղաքավարության, զսպվածության, դժվար իրավիճակներում ելք գտնելու հմտությունների դրսևորումները նպաստում են էքսկուրսիայի ընթացքում հանդարտ, աշխատանքային պայմանների ստեղծմանը: Էքսկուրսավարի աշխատանքում կարևոր դեր է խաղում վարվելակարգի մշակումը: Այս կարգը ենթադրում է այցելուների հանդեպ հարգալից վերաբերմունք, շփման ոչխոսքային ձևերի կիրառում, մեծերի, կանանց հանդեպ հարգանքի դրսևորում, ողջունելու ձև և այլն: Ցանկալի է մշակել էքսկուրսավարի վարքագծի կանոններ և հետևել դրանց: Անշուշտ մեծ աշխատանք պետք է կատարել խմբի ճիշտ ղեկավար և գիտակ մասնագետ դառնալու ուղղությամբ, ինչն էլ հնարավորություն կտա խնբի մոտ հեղինակություն ձեռք բերել:

Մենք գտնում ենք, որ յուրաքանչյուր թանգարանի կողմից անհրաժեշտ է աշխատանք տանել էքսկուրսավաների որակավորման բարձրացման ուղղությամբ՝

սեմինար-պարապմունքներ, էքսկուրսիաների լսումներ, մեթոդական էքսկուրսիաների անցկացում, հատուկ հմտությունների վարժանաքներ: Այդպես, օրինակ, վարժություն հիշողության զարգացման համար. ցուցադրվում են առարկաներ 20-30սմ հեռավորության վրա, հարցեր են ուղղվում գույնի, չափի և ձևի վերաբերյալ: Այնուհետ՝ ցույցադրվում են նույն առարկանները 10-15սմ հեռավորությոան վրա, տրվում հարցեր: Վարժություն դիտարկման ունակության զարգացման համար՝ ցուցադրել նմանատիպ առարկաներ 1-2 րոպեի ընթացքում, գտնել նմանությունները և տարբերությունները:

2.4. Տարիքային տարբեր խմբերի հետ կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները

Լսարանի հետ աշխատանքի հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե ինչ չափով են թանգարանային մանկավարժի կողմից կիրառված գիտելիքներն ու հմտությունները համապատասխանում տվյալ լսարանի տարիքային առանձնահատկություններին: Թանգարանի կրթամշակութային կամ գիտալուսավորական գործունեության ձևերը Դ. Պողոսյանը դիտարկում է իբրև տեղեկատվական ենթահամակարգեր, որոնց նպատակն է թանգարանի փոխակերպումն ակտիվ սոցիալ-մշակութային հաստատության [33, էջ 14]:

Մեր Ժամանակներում թանգարանն ընկալում է որպես կրթության զարգացմանն աջակցող հզոր միջոց: Թանգարանի կարևորագույն սոցիալական գործառույթներից է կրթությունն ու դաստիարակությունը, որի շարունակական իրականացումը թանգարանը վերածում է կրթամշակութային արժեքավոր հաստատության:

Թանգարանը կարող է մեծապես նպաստել հարատև ուսումնառությանը, կրթության խնդիրների լուծմանը, քանի որ դարեր շարունակ թանգարաններում կուտակված հսկայական կրթական ներուժը հնարավորություն է ստեղծում այցելուին սովորեցնելու, զարգացնելու, ավելի բարձր կրթական և դաստիարակչական մակարդակի հասցնելու: Թանգարանը մշակույթի հավերժական արժեքների, այցելուի և իդեալների միջև

այնպիսի երկխոսության հնարավորություն է ստեղծում, որի ընթացքում մարդը կարող է ինքնազարգացման և կատարելագործման հենարան գտնել: Ցանկացած հասարակություն շահագրգռված է կուտակված փորձի պահպանմամբ և փոխանցմամբ, հակառակ դեպքում անհնար կլիներ հասարակության զարգացումը: Այս փորձի պահպանումը մեծապես կախված է դաստիարակության և կրթության համակարգից: Թանգարանային աշխատակիցներն իրենց փորձի հիման վրա ապացուցել են, որ թանգարանը հնարավորություն է տալիս անխզելի կապ ստեղծել կրթություն և դաստիարակության միջև [53, էջ 23]:

Շարունակական կրթությունը եվրոպական կրթական տարածքի ստեղծման կարևոր բաղկացուցիչ է: Շարունակական կրթության մեջ ներգրավված ենք ողջ կյանքում, այն տեղի է ունենում ամենուր, ոչ միայն դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: Ըստ UK Campaign for Learning-ի՝ ուսումնառությունն ակտիվ ներգրավվածության գործընթաց է՝ փորձառության հետ համատեղ: Դա այն է, ինչ մարդիկ անում են, երբ ուզում են աշխարհն ընկալել: Այն կարող է ներառել հմտությունների, գիտելիքների, ընկալումների, արժեքների, հույզերի, վերաբերմունքի և կշռադատելու կարողությունների զարգացում: Արդյունավետ ուսումնառությունը հանգեցնում է փոփոխության, զարգացման և ավելի շատ սովորելու ցանկության:

Եվրոպական հանձնաժողովը տարանջատում է կրթության 3 տեսակ՝

1. Ֆորմալ (formal), կամ պաշտոնական ուսումնառություն, որը տեղի է ունենում կրթական կամ վերապատրաստումների պաշտոնական համակարգում (դպրոց, բուհ), հանգեցնում է որակավորման և որպես կանոն ավարտվում դիպլոմների հանձնումով:
2. Ոչ ֆորմալ (non formal) կամ ոչ պաշտոնական ուսումնառությունը կազմակերպված և հատուկ կառուցված գործընթաց է, որը պաշտոնական որակավորման չի հանգեցնում և որի արդյունքում վկայականներ չեն տրվում:
3. Ինֆորմալ (informal), «բնական ուսումնառությունը» տեղի է ունենում ընտանիքում, սոցիալական, քաղաքացիական կյանքում (թանգարան, գրադարան և այլն) և ոչ միշտ՝ կանխամտածված կերպով: Այն կարող է իրականացվել ցանկացած բնագավառում և զարգացվել անհատների կողմից [5, էջ 8]:

Ու թեև թանգարանը ֆորմալ կրթության օջախ չէ, բայց կարող է կազմակերպել և՛ ոչ ֆորմալ, և՛ ինֆորմալ կրթություն: Թանգարանը ոչ պաշտոնական ուսումնառությունը խթանող իդեալական միջավայր կարող է լինել, քանի որ այստեղ կարող են կրթվել ոչ միայն երեխաներն, այլև չափահաս կամ մեծահասակ այցելուները, որոնք թանգարանից հեռանալիս ավելի շատ գիտելիք կունենան, քան՝ գալու պահին: Նրանք ներկայացվող նյութի իմաստավորման, ներըմբռնման հմտություններ ու ոգեշնչման նոր լիցքեր ձեռք կբերեն, որոնք կօգնեն կյանքում դրական փոփոխություններ կատարելուն:

1970-80-ական թվականներին սոցիալական հոգեբանության և սոցիալական մանկավարժության նկատմամբ հետաքրքրությունը հանգեցրեց բազմաթիվ տեսությունների ի հայտ գալուն: Տարբեր տարիքային խմբերի անձանց դասավանդման սկզբունքներին առնչվող այդ տեսությունները կիրառելի են նաև թանգարանային կրթության բնագավառում: Դրանցից մեկը, թանգարաններում հայտնի է, որպես Ժան Պիաժեի՝ զարգացման չորս փուլերի տեսություն [178]: Թանգարան կարելի է գնալ անկանոն, դեպքից դեպք, ինչպես անում է այցելուների մեծ մասը, սակայն վաղուց ժամանակն է ստեղծել համակարգ և, ինչպես ասում է թանգարանային մանկավարժ Ե. Վանսլովան, «…թանգարանային պարտադիր ուսուցումը պետք է սկսել ոչ թե 10-12 տարեկանից, ինչպես ընդունված էր նախկինում, այլ 4-5 տարեկանից, երբ երեխան սկսում է ճանաչել առարկայական աշխարհը, երբ նրա համար ամեն ինչ նոր և հետաքրքիր է» [54, էջ 32]: Երեխաների հետ աշխատելիս պետք է ձգտել, որ նրանց յուրաքանչյուր այցելությունն օգնի մանկան մեջ թանգարանային առարկաների հետ հաղորդակցվելու որոշակի մշակույթ և ունակություն դաստիարակելուն:

Ըստ հայտնի թանգարանագետ Ա.Կ. Լոմունովայի, դպրոցականների թանգարան այցելելու գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ՝

1. երեխաներին թանգարանի հետ հանդիպման նախապատրաստում
2. էքսկուրսիայի անցկացում
3. թանգարանային նյութի ամրապնդում [92, էջ 15-17]:

Էքսկուրսիոն պարապմունքի ընթացքում կարելի է պատմել, թե ինչ է թանգարանը, ինչու է ստեղծվել: Կազմակերպվող պարբերական այցերից կարելի է

ակնկալել, որ 10-12 տարեկան երեխաներն, ըստ իրենց նախասիրությունների, հաճույքով և ինքնուրույն կայցելեն թանգարան:

Դեռահասների համար նախատեսված էքսկուրսիոն ծրագրերի մեջ պետք է ներառել թեմատիկ և պատմական նյութեր, որոնք կընդլայնեն սովորողների գիտելիքները:

Պատանեկության տարիքում անհատականության ձևավորման յուրահատկություններից է բարոյականի գիտակցումը, ինքնագիտակցությունը, մեծ լինելու զգացողությունը, ինքնուրույնության ձգտումը: Դեռահասին բնորոշ է «իր հերոսի» փնտրտուքը, որը, սովորաբար, արտահայտվում է ընդօրինակմամբ: Հայաստանի թանգարաններում դպրոցականների խմբերի հետ աշխատանքի հարուստ փորձ է կուտակվել, բավականին մշակված են մեթոդները, և այդ փորձի մեծ մասը կարելի է կիրառել նաև մեծահասակների հետ աշխատելիս:

Այցելուները թանգարան են գալիս նաև ընտանիքներով՝ երեխաների, զարմիկների, ազգականների հետ, ինչը պետք է հաշվի առնել կրթական ծրագրեր կազմելիս: Եթե թանգարանում էքսկուրսիաները, կրթական ծրագրերը նախատեսված լինեն միայն երեխաների համար, ապա ինչո՞վ այդ ընթացքում պիտի զբաղվեն չափահասներն ու մեծահասակները և արդյոք թանգարանային աշխատակիցները գիտե՞ն, թե որոնք են ընտանեկան խմբերի առանձնահատուկ պահանջները, կամ ինչ կարող է անել թանգարանն ընտանեկան խմբերով այցելուների ուշադրությունը գրավելու և հետաքրքրությունը վառ պահելու համար:

Թանգարանում, տարեց, կենսաթոշակի անցած այցելուների հետ տարվող աշխատանքը ևս յուրահատկություններ ունի: Նրանք կարող են լինել ինչպես թանգարան հաճախ այցելող, լավ կրթված սոցիալական խմբերի ներկայացուցիչներ, որոնք ծանոթ են թանգարանային տարածքին և այնտեղ իրենց հարմարավետ են զգում, այնպես էլ բավարար կրթություն չստացած, թանգարանում իրենց այնքան էլ հարմարավետ չզգացող մարդիկ: Նրանցից ոմանք կարող են շարժունակության խնդիրներ ունենալ և խուսափել ամբոխից ու հասարակական տրանսպորտից:

Այն թանգարանները, որոնք ուզում են ներգրավել տարեց, մշակութային առումով անփորձ այցելուների, պետք է մշակեն այնպիսի ծրագրեր, որոնք հաշվի կառնեն նրանց կարիքները: Ինչը նշանակում է ունենալ հեշտ հասանելիություն, ժամանակ առ ժամանակ՝ հանգստի կանգառներ, տեքստի, տառաչափի և բացատրագրերի դիրքի հարմարավետություն:

Ծրագրերը պետք է սոցիալական շփումներ ապահովեն: Տարեց այցելուներին ուղղված ծրագրերը կարող են ներառել անցյալի վերաբերյալ հուշեր, ցուցադրություններ, կյանքի պատմություններ, անեկդոտներ, տարազ, ձեռքի աշխատանքներ և այլն: Սակայն պետք չէ կարծել, թե մեծահասակները չեն հետաքրքրվի ժամանակակից թեմաներին վերաբերվող ծրագրերով: Այսպիսով, մեծահասակների կրթությունը թանգարանում կարող է ընդգրկել համարյա ամբողջ թանգարանային լսարանը: Այդ պատճառով թանգարանները պետք է բաց լինեն փոփոխությունների համար, պատրաստ լինեն նորանոր ծրագրեր կազմակերպել, չխուսափեն նորարարական ծրագրերից ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների համար [32, էջ 290-296]:

Յուրաքանչյուր կրթական գործընթաց պետք է հնարավորություն ընձեռի գնահատել տրված նյութի թողած ազդեցությունը: Քանի որ սովորելը, ներքին գործընթաց է, ապա այն գնահատելու համար մեզ անհրաժեշտ է սովորողի արձագանքը: Միացյալ Թագավորության Թանգարանների գրադարանները և Արխիվների խորհուրդը մշակել են արդյունքների մի շարք, որոնք հնարավոր է ձեռք բերել թանգարան այցելելու ընթացքում: Ըստ այդ հետազոտության, այն, ինչը սովորում են թանգարանում, կարելի է դասակարգել հետևյալ հինգ խմբերում.

1. Գիտելիք և ընկալում,
2. Հմտություններ,
3. Վերաբերմունք և արժեքներ,
4. Հաճույք, ոգեշնչում և ստեղծագործական մոտեցում,
5. Գործունեություն, վարքագիծ և առաջընթաց:

Սրանք կոչվում են ուսումնառության ընդհանուր արդյունքներ (generic learning outcomes - GLOs): Թանգարաններում ուսումնառության ազդեցությունը գնահատելիս պետք է հաշվի առնել հետևյալ ցուցիչները.

- որոշակի առարկաների մասին գիտելիքների ընդլայնում,
- որոշակի գաղափարների և հասկացությունների ընկալման խորացում,
- տեխնիկական և այլ հմտությունների բարելավում,
- փոփոխություն վերաբերմունքի կամ արժեքների մեջ,
- հաճույքի, ոգեշնչման կամ ստեղծագործական ունակության վկայություն,
- գործունեության, վարվելակերպի, առաջընթացի վկայություն,
- սոցիալական շփումներ և հաղորդակցություն,
- ինքնավստահության աճ,
- անհատական զարգացում,
- համայնքային իրավասություններ,
- ինքնության զարգացում,
- բարելավված առողջություն և ինքնազգացողություն:

Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում այցելուների ինտելեկտուալ հետաքրքրությունները խթանելու, նրանց յուրօրինակ մշակութային և հուզական արժեքներով հարուստ փորձի մեջ ներգրավելու ուղղությամբ: Այցելուներն ավելի շատ հաճույք կստանան և արդյունքում՝ ավելի շատ կսովորեն, եթե թանգարանում լավ ընդունելության արժանանան, գտնվեն ֆիզիկապես հարմարավետ և հյուրընկալ միջավայրում:

Թանգարանում կրթական բազմաշերտ ծրագրեր իրականացնելու շնորհիվ՝ լայն հնարավորություններ են բացվում թանգարանի և կրթության համակարգի համագործակցության համար, ինչն էլ կնպաստի ներկա փուլում հայրենական կրթության արդիականացմանն ու զարգացմանը: Ըստ թանգարանային մանկավարժության կրթական ծրագրերի ժամանակակից հայեցակարգի, կարևորագույն նպատակ է համարվում անձի ստեղծագործական ունակության զարգացումը, մասնագիտական ոլորտում տարամետ իրավիճակների ըմբռնումը: Այս

պարագայում առավել կարևոր է դառնում ուսուցչի մասնակցությունը թանգարանային կրթական գործունեությանը:

Ուսուցիչը և թանգարանը: Թանգարանի կրթական ծրագրերի նկատմամբ այս մոտեցումը, ռացիոնալ և զգայական ճանաչողության համատեղ փորձով, պետք է գրավի նախ և առաջ ուսուցչին, քանի որ՝

- թանգարանի նշանակությունը սովորողի կյանքում գլխավորապես որոշվում է ուսուցիչի կողմից այն դպրոցի ուսումնական գործընթացում ներառելով և դպրոցում ստացած գիտելիքների շարունակականության և զարգացման օբյեկտ դարձնելով,
- Ուսուցիչների միջոցով՝ թանգարանը դպրոցական լսարանի մեծ մասի վրա ազդելու լայն հնարավորություն է ձեռք բերում:
- Թանգարանում վերապատրաստված ուսուցիչներն ավելի արդյունավետորեն կիրականացնեն երեխաների ծանոթությունը հավաքածուների հետ, քան՝ թանգարանի աշխատակիցները, քանի որ մանկավարժական պատրաստվածություն ունեն և ավելի լավ գիտեն իրենց աշակերտների գիտելիքների մակարդակն ու հետաքրքրությունների շրջանակը:
- Ուսուցիչների վերապատրաստումն ավելի շահավետ է նաև ֆինանսական առումով, քանի որ այն թանգարաններից լրացուցիչ ծախսեր չի պահանջում:

Այսպիսով, թանգարանային մանկավարժների վերապատրաստման շնորհիվ՝ առավել նպատակային է դառնում թանգարանի և դպրոցական լսարանի համագործակցությունը, կանոնակարգվում է սովորողների շփումը թանգարանային արժեքների հետ:

Թանգարանում ուսուցիչների վերապատրաստումը որակավորման բարձրացման և ինքնակրթության ձևերից է, որի համար թանգարանն առաջարկում է.

- տեղեկատու-մեթոդական ծառայություն, որի շրջանակներում թանգարանի աշխատակիցներն ուսուցիչների համար հատուկ տեղեկատվական նյութեր են մշակում,
- դասընթացներ թանգարանային հավաքածուների ուսումնասիրության վերաբերյալ: Դրանք հիմնականում անց են կացվում արձակուրդների ժամանակ և, որպես կանոն, նվիրված են լինում արվեստի առանձին ճյուղերի ուսումնասիրմանը:

Պարապմունքներն անց են կացվում դասախոսությունների և սեմինարների ձևով՝ հիմնականում երկխոսության միջոցով,

- թանգարաններում և որակավորման կենտրոններում կազմակերպվում են ուսուցիչների և թանգարանի աշխատակիցների համատեղ կոնֆերանսներ: ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և Ռուսաստանի թանգարաններում նման կոնֆերանսների կազմակերպման փորձը ցույց է տվել, որ դրանք շատ արդյունավետ են դպրոցի և թանգարանի համագործակցության ընթացիկ և հեռանկարային հարցերի քննարկման, գեղարվեստական դաստիարակության կարևոր խնդիրների լուծման համար:

Համաշխարհային կրթական պրակտիկայում հատուկ ուշադրություն է դարձվում գեղարվեստական թանգարանի և դպրոցի մանկավարժի համագործակցության բարդ և բազմակողմանի խնդիրների լուծման հարցերին: Միաժամանակ այսպիսի համագործակցության իրականացումը որոշվում է մի շարք պայմաններով, որոնցից կարևորագույնը ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն է: Բացի այդ, թանգարանի և դպրոցի համագործակցությունը պետք է հենվի ուսուցչի մշակույթի, անձնական շահագրգռվածության և գեղարվեստական ինքնակրթության զարգացման վրա: Միայն այս պայմաններին հետևելով՝ դպրոցի և թանգարանի համագործակցության գործընթացը, որն ուղղված է թանգարանային միջավայրում գեղարվեստական ընկալման ձևավորմանը, արդյունավետ կլինի:

Թանգարանի կրթական գործունեության պատմական փորձը ցույց է տալիս, որ արդեն XIX դարի վերջին, ուսուցչի հետ տարվող աշխատանքն առաջնային է համարվել Գերմանիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի թանգարանների համար:

Թանգարանի և դպրոցի համագործակցությունը Գերմանիայում կառուցվում է ուսուցչի կողմից որոշակի ուսումնական խնդիրներ լուծելու նպատակով: Թանգարաններում, ուսուցիչը հանդես է գալիս որպես «փորձագետ»՝ այսինքն, իր մասնագիտական գործառույթների հիման վրա ընտրում է թանգարանային մանկավարժական գործընթացի միջոցներն ու բովանդակությունը, միաժամանակ վերահսկելով աշակերտի վարքն ու գիտելիքները: Այս գործընթացում մեծ տեղ է գրավում դպրոցականների ինքնուրույն աշխատանքի մեթոդական ղեկավարումը,

տարբեր տարիքի երեխաների համար ստեղծվում են ցուցադրության տարածքում աշխատելու նպատակով ստեղծված պատկերազարդ, հատուկ «աշխատանքային տետրեր»:

Աշակերտների առաջադրանքները պետք է համահունչ լինեն դպրոցական ծրագրերին, որը թույլ կտա ինչպես ուսուցչին, այնպես էլ թանգարանային մանկավարժին խորացնել և ընդլայնել երեխաների գիտելիքներն ու հմտությունները որոշակի թեմաների վերաբերյալ: Որպես կանոն, «աշխատանքային տետրը» ստեղծվում է թանգարանի աշխատակցի կողմից ուսուցիչների հետ խորհրդակցելու հիման վրա և բաղկացած է երեք մասից: Դրանցից մեկը պարապմունքների ժամանակ օգտագործվող ցուցանմուշի մասին կարճ տեղեկություններ է հաղորդում, իսկ մյուս երկուսն ուղղված են ուսուցչի և աշակերտի համատեղ աշխատանքին:

Ընդհանուր առմամբ, «աշխատանքային տետրերի» նշանակությունը կրթադաստիարակչական գործընթացում.

- օգնում է կենտրոնացնել ուշադրությունը թանգարանային մանկավարժի կողմից ընտրված հուշարձանների վրա և աշակերտին ստիպել ուղղորդող հարցերի միջոցով ուսումնասիրել դրանք,
- նպաստում է թանգարանում ներկայացվող մշակութային ժառանգության (հուշարձանների) արժևորմանը,
- աշակերտին դրդում է ստեղծագործական գործունեության՝ օգտագործելով այն ակտիվացնելու տարբեր միջոցներ,
- ձևավորում են տարածաժամանակային պատկերացումներ՝ օգտագործելով հուշարձանների համեմատության վերլուծական մեթոդները,

Այսպիսով, Գերմանիայում թանգարանի և դպրոցի փոխգործակցությունն իրականացվում է թանգարանային նյութն ուսուցչի յուրացման և թանգարանային կրթական ծրագրերը դպրոցական ուսումնական գործընթացին համապատասխանեցնելու միջոցով: Սակայն, հիմնված լինելով արվեստանոցային և անհատական աշխատանքի ձևերի և աշխատակիցների հեղինակային մեթոդների վրա՝ Գերմանիայի գեղարվեստական թանգարանները չունեն այնպիսի համալիր

ծրագրեր, որոնց միջոցով հնարավոր կլինի հետևողականորեն զարգացնել գեղարվեստական ընկալումը: Ի տարբերություն գերմանականի՝ ռուսական գեղարվեստական թանգարանները դպրոցականների հետ թեմատիկ էքսկուրսիաներ ու դասախոսություններ և ուսուցիչների հետ նախապատրաստական պարապմունքներ անցկացնելու նպատակով՝ հաճախ հետևում էին գիտակցության արվեստագիտական տեսակին՝ այն չհարաբերելով տեսողական գրագիտության ձևավորման խնդիրների և գեղարվեստական ընկալման ամբողջականության հետ: Իրադրությունն սկսվեց փոխվել այն ժամանակ, երբ լսարանի հետ աշխատանքի նոր մոտեցումներ փնտրելով՝ թանգարաններն սկսեցին վերակառուցել իրենց կրթական ծառայությունները, որը թույլ տվեց առավել համակարգված համագործակցել կրթական հաստատությունների և ուսուցիչների որակավորման բարձրացման ինստիտուտների հետ: Այսպիսի փորձ այսօր կա ոչ միայն այնպիսի խոշոր թանգարաններում, ինչպես Պետական Էրմիտաժում, Պետական Տրետյակովյան պատկերասրահում, այլև Ռյազանի, Տվերի, Պերմի, Սարատովի, Պետրոզավոդսկի և Ռուսաստանի այլ քաղաքների գեղարվեստական թանգարաններում: Այս գործընթացի ձևավորումը զգալիորեն կապված էր Պետական Ռուսական թանգարանի գործունեության հետ, որտեղ 1975թ.-ից գոյություն ունի հասարակա-հոգեբանական հետազոտությունների բաժին: Այն երկրում առաջիններից էր, որ սկսեց թանգարանային լսարանի դիագնոստիկա իրականացնել, որի շնորհիվ՝ թանգարանի կրթական գործունեությունն առավել նպատակամետ դարձավ: Արդեն քառորդ դար է, ինչ գեղարվեստական թանգարանների գիտամեթոդական կենտրոնի կարգավիճակ ստանձնած Պետական Ռուսական թանգարանն է պատասխանատվություն կրում ռուսական գեղարվեստական թանգարանների կրթական ծառայությունների ռազմավարության մշակման և գործելակերպի համար: Թանգարանի սեփական կրթական գործունեության վերակառուցումը երկու կարևոր իրադարձությամբ է նշվել՝ 1989թ. ստեղծվել է ՊՌԹ-ին կից գիմնազիա, իսկ մեկ տարի անց՝ Թանգարանային մանկավարժության և մանկական ստեղծագործության ռուսական կենտրոն, որը ռուսական առաջին թանգարանային-մանկավարժական ծառայությունն է:

Թանգարանի նախաձեռնությամբ, ոլորտում առաջին անգամ, աշխարհի ամենախոշոր թանգարաններից մեկը փոխակերպվեց թանգարանային կրթական համալիրի, որը հնարավորություն տվեց մշակույթի և կրթության բնագավառում փոխգործունեության գիտականորեն հիմնավորված համակարգ մշակել: Ունենալով դասախոսական և էքսկուրսիոն ծրագրերի և խմբակային արվեստանոցային աշխատանքի ձևերի մեծ ցանկ՝ Կենտրոնն իր առջև խնդիր դրեց իրականացնել տեղական գեղարվեստական դաստիարակության համար ավանդական նպատակ՝ կերպարվեստի միջոցներով ազատ ստեղծագործող անհատներ ձևավորել, որը հիմնվում էր դպրոցի և ուսուցչի հետ արդյունավետ համագործակցության վրա: Գլխավոր ուղղություններից մեկը դարձավ մանկապարտեզների դաստիարակների, տարրական և միջնակարգ դպրոցի ուսուցիչների հետ տարվող աշխատանքը, որի առանցքը «Բարև թանգարան» թանգարանային մանկավարժական ծրագիրն էր: Կենտրոնի աշխատակիցները սկսեցին կրթական հաստատությունների հետ համագործակցության համակարգ մշակել: Ընդ որում, կարևոր էր համախոհներ գտնել ոչ միայն ուսուցիչների և նախադպրոցական կրթական հաստատությունների դաստիարակների, այլև դպրոցների տնօրենների և կրթության վարչությունների ներկայացուցիչների շրջանում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ԱՄՆ-ի կրթական գործունեության տեսության և պրակտիկայի զարգացումը, որն ավելի հետևողականորեն է ընթացել: Թանգարանների և դպրոցի փոխհարաբերությունների-փոխգործակցության վերակառուցումն ընթանում է պետական քաղաքականության մակարդակով: Կրթական համակարգի ապակենտրոնացման պայմաններում, իհարկե, այն դժվար խնդիր չէ, (դպրոցներում միասնական ուսումնական ծրագիր և ուսումնադաստիարակչական գործընթացը կարգավորող կենտրոնական մարմին չկա): Թեև ԱՄՆ-ի թանգարանները պաշտոնական ուսումնական հաստատությունների կարգավիճակ ունեին, գեղարվեստական թանգարանների կապերի հաստատումը դպրոցների հետ՝ հեշտ գործ չէր: Խնդիրը դպրոցների ուղղվածությունն էր դեպի տեխնոլոգիական առաջխաղացումը: Այս հանգամանքը հումանիտար առարկաների ուսուցման մեջ լուրջ թերություններ բացահայտեց և ստիպեց ուշադրություն դարձնել

թանգարանային մանկավարժության զարգացման պատմական փորձին: Դա զգալիորեն աշխուժացրեց դպրոցի և թանգարանի հետաքրքրությունների մերձեցման գործընթացը և հարստացրեց թանգարանի կողմից առաջարկվող կրթական ձևերի զինանոցը՝ զանազան էքսկուրսիաներին, արվեստանոցներին, համերգներին, դիդակտիկ ցուցահանդեսներին ուսուցիչների համար նոր կրթական ծրագրեր հավելելով, որոնք սկսեցին ակտիվորեն ներգրավվել թանգարանային աշխատանքում: Գործունեության հիմքում հետևյալ թեզն է՝ ԱՄՆ-ում թանգարանի այցելությունը միայն աշակերտի կյանքի մի դրվագ է, ուստի արդյունավետությունը մեծապես կախված է ուսումնասիրվող առարկաների հետ այն համաձայնեցնելու ուսուցչի ունակությունից՝ քան թանգարանի աշխատակցի վարպետությունից:

ԱՄՆ-ի թանգարաններում ուսուցչին ինքնուրույն աշխատանքի պատրաստելը պատճառաբանվում է հետևյալով.

- ուսուցչի միջոցով թանգարանը հնարավորություն է ստանում ազդելու մանկական լայն լսարանի վրա, որի շնորհիվ՝ որոշակի միջոցներ է խնայում,
- ուսուցիչը դպրոցականին ավելի լավ կարող է նախապատրաստել թանգարանում արվեստն ընկալելուն, որը մանկավարժորեն առավել նպատակահարմար է,
- իմանալով իր աշակերտների հումանիտար պատրաստվածության մակարդակը՝ ուսուցիչն ավելի արդյունավետ կարող է ազդել նրանց գեղարվեստական մշակույթի ձևավորման վրա,
- թանգարանային մանկավարժները հնարավորություն են ստանում կենտրոնանալ հատուկ ծրագրերի մշակման վրա, որոնք նախատեսված են ինչպես թանգարանում, այնպես էլ դպրոցում իրականացնելու համար:

Այսպիսի պրակտիկան լայնորեն աջակցվում է պետական և հասարակական կազմակերպությունների կողմից, քանի որ նպաստում է կրթության համակարգում դրական փոփոխությունների կայացմանը: Ըստ այդմ՝ ժամանակն է, որ թանգարաններում պահվող հսկայական մշակութային ժառանգությունը ծառայի ոչ միայն որպես հպարտության աղբյուր, այլև՝ իր իրական նպատակին, ուսումնասիրելով

անցյալի հարուստ փորձը, ապահովի հասարակության զարգացումը և բարեկեցիկ ապագան:

ԳԼՈՒԽ 3.
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3.1. Թանգարանային մարքեթինգը՝ արդյունավետ գործունեության նախապայման

Թանգարանային շուկայագիտությունը (մարքեթինգը) սերտորեն կապված է լսարանն ուսումնասիրելու, ընդլայնելու, այցելուների հետ կապերն ամրապնդելու, ինչպես նաև գործընթացի բազմաբնույթ ծրագրերի հետ [34, 35]:

Սոցիալ-մշակութային, մասնավորապես թանգարանի գործունեության արդյունավետությունը որոշելիս, կարևորվում է աշխատանքների օգտակարությունը և ներդրումները հանրության կյանքում: Թանգարանի գործունեության արդյունավետության բաղկացուցիչներից է այցելուների քանակը: Այն ապահովելու համար անհրաժեշտ է պարզորոշ պատկերացում կազմել, թե երբ և ինչու է այցելուն հաճախում թանգարան [60, էջ 36-103], [83, էջ 26-42], [97, էջ 18-91]:

Շուկայի հետազոտման գերխնդիրն այցելուի հոգեբանության ուսումնասիրումն է՝ այցելություններին նպաստող և խոչընդոտող հանգամանքները պարզաբանելու նպատակով: Արդյունքը լիարժեք կլինի, երբ պարզվի, թե ինչ է ակնկալում այցելուն թանգարանից և բոլոր հնարավոր միջոցները ներդրվեն նրա պահանջները բավարարելու համար [106, էջ 27-60]:

Այցելուի պահանջները հետազոտելն ու հետևություններ անելն անչափ կարևոր է յուրաքանչյուր թանգարանի համար, սակայն այցելուներին արդյունավետ սպասարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել որոշ ընդհանուր կանոններ ևս: Այցելուների ամերիկյան ասոցիացիան մշակել է «Այցելուների իրավունքների ցանկ», որն ընդգրկում է թանգարան հաճախողների հետևյալ ակնկալիքները՝

- հարմարավետություն. «Երբ իմ հիմնական պահանջները բավարարված են»,
- կողմնորոշում. «Երբ ես հեշտությամբ կողմնորոշվում եմ թանգարանում»,
- աշխատակցի ողջունում. «Երբ տպավորություն է ստեղծվում, որ հենց ես եմ ցանկալի այցելուն»,

- հաճույքի զգացում. «Ես ուզում եմ հաճույք և ուրախություն ստանալ թանգարան այցելելուց»,
- սոցիալականացում. «Ես եկել եմ թանգարան ընկերներիս կամ ընտանիքիս հետ հաճելի ժամանակ անցկացնելու»,
- հարգանք. «Ընդունեք ինձ այնպիսին, ինչպիսին ես կամ՝ իմ ունեցած գիտելիքներով հանդերձ»,
- հաղորդակցություն. «Օգնեք հասկանալ թանգարանային առարկաները և ինձ արտահայտվելու հնարավորություն տվեք»,
- կրթություն. «Ես ուզում եմ նոր գիտելիք ստանալ»,
- ընտրություն և հսկողություն. «Ինձ ընտրելու հնարավորություն տվեք»,
- դժվարություններ և վստահություն. «Առաջարկեք այնպիսի խնդիր, որը ես կկարողանամ լուծել»,
- գոհունակություն. «Հնարավորություն տվեք թանգարանից քաջալերված հեռանալ» [75, էջ 23]:

Այցելուի սպասարկումը յուրաքանչյուր թանգարանային աշխատողի պարտականությունն է՝ անկախ նրա զբաղեցրած դիրքից ու պաշտոնից: Այցելուների շրջանում աշխատանքն առավել արդյունավետ է, երբ թանգարանագետներին և մանկավարժներին ընդգրկում են լսարանի ուսումնասիրման ու համապատասխան միջոցառումների ծրագրավորման գործընթացին: Թանգարանային ծրագրեր նախապատրաստելիս անհրաժեշտ է հաշվի առնել հասարակության պահանջներն ու ստեղծագործական մոտեցում ցուցաբերել [78, էջ 64], [119, էջ 156, 161]:

Ի տարբերություն պարտադիր կրթության՝ թանգարանային ծրագրերը կոչված են բավարարելու մարդկանց ինքնակրթության պահանջը, ինչը հնարավոր է կյանքի ողջ ընթացքում (շարունակական կրթություն) [59, էջ 25]:

Թանգարանում իրականացվող տարաբնույթ ծրագրերը կարող են հանրության հետաքրքրությունները բավարարել թե՛ ցուցասրահներում, թե՛ գիտաժողովների ընթացքում, թե՛ տանը՝ թանգարանի համակարգչային կայքից օգտվելու միջոցով: Իրականացվող ծրագրերի արդյունավետությունը և պահանջվածությունը անհրաժեշտ

է պարբերաբար ճշտել սոցիոլոգիական հարցախույզների, տպավորությունների գրանցման գրքում տեղ գտած գրառումների ուսումնասիրության և այլ մեթոդներով:

Յուրաքանչյուր թանգարանի տնօրինություն պետք է մարքեթինգային ուսումնասիրությունները դարձնի իր աշխատանքի վճռորոշ տարրերից մեկը և առաջնորդվի դրանցով:

Հասարակայնությանը պետք է իրազեկել նաև ամենամսյա և տոն օրերին մատուցվող անվճար ծառայությունների և բաց դռների օրերի մասին: Թանգարանի վարկանիշն առավել բարձր կլինի, եթե բաց դռների օրերին այցելուներին առաջարկվող ծառայությունները առավելագույնս բարեհամբույր մատուցվեն:

Խիստ օգտակար կլինի, եթե թանգարանի տնօրինությունն, աշխատակիցների հետ միասին, պարբերական քննարկումներ իրականացնի՝ միտված այցելուների համար կազմակերպվող աշխատանքների բարելավմանն ու նոր գաղափարների և առաջարկությունների խթանմանը:

Շուկայի ուսումնասիրման համար (այցելուների պահանջմունքների, ծառայությունների բազմազանություն, այլ թանգարանների գործունեության հետ համեմատական վերլուծություն [88, էջ 49-58], նորագույն տեխնոլոգիաների ներդրում, ֆինանսատնտեսական և նյութատեխնիկական բազայի հնարավորությունների բարելավմանն ուղղված վերլուծություն) առաջարկվում է մարքեթինգային ծրագրի հետևյալ հարցաշարը՝

1. Շուկայի ուսումնասիրություն. [34, էջ 80-82]

- Սպառողների ո՞ր խմբին է հետաքրքրում առաջարկվող ծառայությունը:
- Ի՞նչ է նախընտրում և ակնկալում սպառողը:
- Մշակույթի ոլորտի այլ կազմակերպությունների կողմից կա՞ն նմանատիպ ծառայությունների առաջարկներ:
- Սպառողների պահանջն առավել որակով և լիարժեք բավարարելու համար ի՞նչ ներուժ ունեք:
- Արդյոք հավանական այցելուների խմբերը տեղյա՞կ են Ձեր առաջարկին:

2. Ծառայության ուսումնասիրում. [58, էջ 14-19]

- Ներկայացրեք ծառայության հիմնական բնութագիրը՝ ինչո՞վ են դրանք տարբերվում այլ առաջարկներից:
- Ի՞նչ առանձնահատկություն ու գրավչություն ունի այն:
- Որքանո՞վ են հաշվի առնված նպատակային խմբի յուրահատկությունները:
- Սույն ծառայությունը համադրության եզրեր ունի՞ նպատակային խմբին առաջարկվող այլ ծառայությունների հետ:

3. Գնային քաղաքականություն. [73, էջ 79-92]

- Ինչպիսի՞ն են առաջարկվող ծառայության հիմնական ծախսերն ու ինքնարժեքը:
- Ի՞նչ արժեն այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող նմանատիպ ծառայությունները:
- Որքա՞ն է առաջարկվող ծառայության ենթադրյալ սակագինը:

4. Ծառայության առաջխաղացումը. [40 , էջ 19-42], [96, էջ 43-54], [112, էջ 4-21]

- Առաջարկվող ծառայության մասին նպատակային խմբին տեղեկացնելու հիմնական ուղիները:
- Առաջարկվող ծառայության առաջխաղացման նպատակով PR-տեխնոլոգիաներ օգտագործելու հնարավորությունները:
- Ծառայության առաջխաղացմանն անհրաժեշտ առևտրային գովազդի հնարավորությունները:

5. Առաջարկվող ծառայության տրամադրում. [108, էջ 6-11]

- Վայրն ու ձևը:
- Հաճախականությունը, կանոնավորությունն ու տևողությունը:
- Ոչ նպատակային խմբերի համար ծառայության տրամադրման հնարավորությունը:
- Առաջարկվող ծառայության հնարավորությունները (փաթեթի տեսքով)՝ այլ ծառայությունների համեմատությամբ:

6. Արդյունավետության գնահատումը. [109, էջ 43-59]

- Ինչպե՞ս գնահատել սպառողին առաջարկվող ծառայության անհրաժեշտությունը:

- Ի՞նչ ցուցանիշ պետք է օգտագործել ծառայության առաջխաղացման արդյունավետությունը գնահատելու համար:
- Ի՞նչ ձևեր ու եղանակներ կարելի է կիրառել առաջարկվող ծառայության արդյունավետության մասին տեղեկատվություն տարածելու համար:

Ավարտական փուլը մարքեթինգային ծրագրի իրականացումն է: Այս փուլում ծրագրի ղեկավարը պետք է վերահսկի աշխատանքների ընթացքը, համակարգի գործունեության ոլորտները, խստորեն հետևի սահմանված ժամանակացույցին և բյուջեի պահպանմանը, աշխատանքի որակին:

Վերջին փուլն արդյունքների գնահատումն է, որի ընթացքում որոշվում են անհրաժեշտ փոփոխությունները և առաջիկա մարքեթինգային գործունեության համար նոր հանձնարարականներ են մշակվում:

Թանգարանային կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է թանգարանը դիտել այցելուի աչքերով: Դրա համար անհրաժեշտ է հստակեցնել այցելուների մասին ունեցած պատկերացումները [113, էջ 21-67]:

Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ թանգարան է այցելում չափահաս բնակչության շուրջ 27-35% [47, էջ 140]:

Մասնագետներն այցելուներին բաժանում են երկու խմբի.

1. մարդիկ, որոնք սովորություն ունեն թանգարան այցելելու (իրական լսարան),
2. մարդիկ, որոնց թանգարան այցելելու հավանականությունը չի բացառվում (հնարավոր լսարան):

Իրական և հավանական լսարանները բաժանվում են թանգարանային շուկայի յուրօրինակ հատվածների կամ նպատակային խմբերի: Դրանք բնակչության այն միատարր խմբերն են, որոնք ունեն ընդհանուր ժողովրդագրական, աշխարհագրական, վարքային բնութագիր և նմանատիպ ապրելաոճ: Այդպիսիք կարող են լինել դպրոցականները, ընտանիքները, զբոսաշրջիկներն ու տարբեր մասնագիտությունների, դավանանքի, ազգերի և մշակույթների ներկայացուցիչները:

Թանգարանի արդյունավետ գործունեության շնորհիվ՝ հնարավոր է վերափոխել այդ խմբերի շրջանում ձևավորված նախնական վերաբերմունքը թանգարանի հանդեպ:

Նպատակային խմբերի ճիշտ համակարգմանը նպաստում է PEST վերլուծությունը:

PEST (հայերեն հապավումը ՔSUS), այն է՝

Political - քաղաքական

Economic - տնտեսական

Social - սոցիալական

Technologial - տեխնոլոգիական:

Վերլուծության ընթացքում հնարավոր լսարանն ուսումնասիրվում է՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական գործոնները: [122, էջ 67-68, 142]:

Քաղաքական գործոն - երկրի մատչելիությունն արտասահմանյան զբոսաշրջիկների այցելությունների համար:

Տնտեսական գործոն – ֆինանսական ռեսուրսների առկայությունը, որը տեղի բնակչությունն ի վիճակի է ծախսել թանգարան այցելելու համար:

Սոցիալական գործոն - ժողովրդագրական փոփոխությունները: Եթե ըստ մարդահամարի տվյալների երկրում կրճատվել է միջին տարիքի բնակչության քանակը և ավելացել են պատանիները՝ մարքեթինգային ծրագրեր նախագծելիս՝ այդ փաստն անհրաժեշտ է հաշվի առնել:

Տեխնոլոգիական փոփոխությունների գործոն - Դրանք թանգարանային ցուցադրության կազմակերպման գործընթացում նոր չափանիշներ և պահանջներ են ներկայացնում՝ առաջադրելով առավել արդիական ձևեր:

Այսպիսով՝ պետք է վստահ լինել, որ նոր ծրագրեր իրականացնելու համար համապատասխան լսարան է ընտրված, որի շնորհիվ թանգարանը կարող է ընդլայնել իր այցելուների քանակը: Սրան նպաստում է նաև վերլուծության երկրորդ եղանակը՝ SWOT վերլուծությունը (հայերեն հապավումը ՈՒԹՀՎ), որտեղ՝

Strengths – ուժեղ կողմեր,

Weaknesses - թույլ կողմեր,

Opportunities – հնարավորություններ,

Threats – վտանգներ:

Թանգարանային լսարանի ուսումնասիրության համար անհրաժեշտ է՝

- ճշտել, թե որ խմբերն են ընդգրկված թանգարանի այցելուների շարքում,
- ի՞նչ հաճախականությամբ են տարբեր խմբերի ներկայացուցիչներն այցելում թանգարան,
- որո՞նք են այցելության հիմնական դրդապատճառները:
- Լսարանի ուսումնասիրության հարցում էական դեր կարող են խաղալ այցելուների հաճախելիության հաշվառումը և այցելուների շրջանում անցկացվող հարցախույզները:

Այդպիսի հետազոտություն է արվել, օրինակ, Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի «Բաց ֆոնդեր» ծրագրի համար: Հարցաթերթիկը՝ ելնելով թանգարանի ուղղվածությունից և նպատակներից, ընդգրկում է հետևյալ հարցերը:

1. Որտե՞ղ եք սովորում (ԲՈՒՀ, ֆակուլտետ)
2. Առաջի՞ն անգամ եք Գրականության և արվեստի թանգարանում
3. Ձեր այցի նպատակը
4. Ի՞նչն առավել տպավորվեց տվյալ ցուցահանդեսից
5. Ձեր կարծիքը էքսկուրսավարի /բանախոսի/ մասին
6. Արդարացա՞ն Ձեր ակնկալիքները այցելությունից
7. Խորհուրդ կտայի՞ք Ձեր ընկերներին այցելել մեր ցուցահանդեսները
8. Ինչ՞ը Ձեզ ամենից շատ դուր եկավ մեր թանգարանում
9. Ինչ՞ը դուր չեկավ
10. Եթե թանգարանն ունենար խանութ, ինչ՞ կցանկանայիք ձեռք բերել
11. Ձեր հաջորդ այցելության ժամանակ ինչ՞ը կուզենայիք փոխված տեսնել մեր թանգարանում
12. Եթե այս ցուցադրությունը լիներ վճարովի, հնարավորություն կունենայի՞ք այցելելու:

Լսարանի ուսումնասիրության ամենաուղղակի ձևն այցելուի վարքի դիտարկումն է.

- ի՞նչն է հատկապես հետաքրքրում նրան,
- ինչպե՞ս է իրեն զգում թանգարանում:

Թանգարանային լսարանն ուսումնասիրելիս ավանդաբար օգտագործում են հետազոտության երկու եղանակ՝ գրասենյակային և դաշտային [122, էջ 144]:

Գրասենյակային հետազոտությունը վիճակագրական տվյալների վերլուծություններ է կատարում.

- բնակչության կառուցվածքի և կատարվող փոփոխությունների վերաբերյալ,
- զբոսաշրջության զարգացման ընթացքի և միտումների հիման վրա:

Դաշտային հետազոտությունը ենթադրում է նաև թանգարանից դուրս նոր տվյալների հավաքում՝ հասարակության տարբեր խմբերի հետ նպատակային հանդիպումների, զրույցների, հարցումների և դիտարկումների միջոցով:

Հետազոտությունը ներառում է այցելուների վերաբերյալ հետևյալ տվյալների քննությունը՝

- սեռը,
- տարիքը,
- սոցիալական պատկանելիությունը,
- այցելուի բնակավայրից մինչև թանգարանն ընկած հեռավորությունը,
- զբաղմունքը,
- կրթությունը,
- նախորդ այցելությունների քանակը,
- թանգարան գալու շարժառիթը:

Երկրորդ քայլը վերը նշված հետազոտությունների արդյունքների համեմատությունն է այլ թանգարանների այցելուների հարցման արդյունքների և մշակութային կազմակերպությունների տվյալների հետ: Այն վերլուծաբաններին հնարավորություն է ընձեռում ճշտել այցելուների այն խմբերին, որոնք տարբեր պատճառներով հնարավորություն չեն ստացել ընդգրկվելու տվյալ թանգարանի այցելուների շարքում:

Առավել կարևոր է երրորդ փուլը, որի ընթացքում գնահատվում և մեկնաբանվում են ստացված բոլոր տվյալները: Այս քայլը միտված է որոշելու թանգարանի համար նախընտրելի նպատակային խմբերն ու մշակելու հետագա ռազմավարությունը: Երրորդ փուլի ընթացքում կազմվում է ծրագիր, որում նախանշվում է գովազդին, հասարակության հետ կապերին և թանգարանային գործունեության այլ ուղղություններին առնչվող հարցերի համախումբը՝ ընդհուպ մասնագիտացված նպատակային ծրագրերի մշակումը: Հիշյալ խնդիրներն իրականացվելու է թանգարանի անձնակազմի ուժերով (կրթական ծրագրերի, ցուցադրության կազմակերպման և ձևավորման բաժիններ, ինչպես նաև հասարակության հետ կապեր և գովազդային գործակալություններ):

Ցանկալի է, որ թանգարանն ունենա առանձին ծրագրերի համար կազմված պլաններ՝ թիրախային խմբերի հետ աշխատանք, թանգարանային կրթական և ժամանցային ծրագրեր, որոնք պետք է փոխկապակցված լինեն և ընդգրկվեն ընդհանուր ծրագրի մեջ:

3.2. Միջազգային համագործակցությունը թանգարանային կրթական ծրագրերի իրականացման գործընթացում

Հայաստանի Հանրապետությունում ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման, հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի հարաբերական բարելավման և տնտեսության կայունացմանը զուգընթաց՝ հետզհետե վերականգնվեց նաև ցուցահանդեսային գործունեությունը, որի շնորհիվ թանգարանների մեծ մասում այցելուների քանակի աճ գրանցվեց, առաջնային դարձավ նաև թանգարանի գիտակրթական գործունեությունը [22, էջ 3-16]:

Հետագա տարիներին թանգարանային ոլորտի ակտիվացման և թանգարանների դերի բարձրացմանը նպաստեցին մի շարք իրադարձություններ.

- 2001թ. Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետում բացվեց «Թանգարանային գործ և

հուշարձանների պահպանություն» բաժինը (որտեղ դասավանդում է նաև ատենախոսը) և 2005թ. թանգարանագետի մասնագիտացում ստացած առաջին շրջանավարտներն աշխատանքի անցան Հայաստանի Հանրապետության տարբեր թանգարաններում [11, էջ 110-113], [68, էջ 170-176], [69, էջ 190-196]:

- 2003թ. մի խումբ թանգարանային մասնագետների (նաև ատենախոսի) նախաձեռնությամբ հիմնադրվեց «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը,
- 2008թ. նույն խմբի նախաձեռնությամբ, Հայաստանն անդամագրվեց Թանգարանների համաշխարհային կոմիտեին՝ ստեղծվեց ԻԿՕՄ-ի Հայասատանի ազգային կոմիտե հասարակական կազմակերպությունը [18]:

Գծապատկեր 2.



Հիշյալ կազմակերպությունների կարևոր առաքելություններից է տարբեր թանգարանների աշխատողների մասնագիտական վերապատրաստմանն ուղղված նախագծերի իրականացումը: Այս նպատակով, հայ և աշխարհի լավագույն թանգարանների առաջատար մասնագետների ներգրավմամբ կազմակերպվեցին թանգարանային գործի տարբեր խնդիրներին նվիրված սեմինարներ, քննարկումներ, գործնական պարապմունքներ ու դասընթացներ [41, 123]:

2009 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի ազգային կոմիտեն կազմակերպեց դասընթաց–վարժանք, Երևանի և ՀՀ մարզերի թանգարանների 25 աշխատակիցների համար:

2010թ. իրականացվեց «Hands-on կրթական ծրագրերը թանգարանում» թեմայով դասընթաց-վարժանք, որին մասնակցեցին 25 թանգարանների աշխատակիցներ Երևանից, ՀՀ մարզերից և Արցախից: Դասընթաց-վարժանքի ավարտին թանգարանների աշխատակիցների շրջանում անցկացրեցինք սոցիոլոգիական հարցում, որի նպատակն էր ուսումնասիրել՝

- թանգարանների գիտակրթական գործունեության կարևորումը,
- կրթական ծրագրերի առկայությունը,
- գործունեության խոչընդոտները,
- զարգացման միտումները,
- թիրախային խմբերը:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են՝ Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանը, ԳԱԹ-ի մասնաճյուղ Դ. Դեմիրճյանի տուն-թանգարանը, ԵՊՀ պատմության թանգարանը, Երևան քաղաքի պատմության թանգարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, «Կալենց» թանգարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը, Հայաստանի բնության պետական թանգարանը, Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը, Հ. Կարապետյանի անվ. երկրաբանական թանգարանը (ՀՀ ԳԱԱ, Երկրաբանական գիտությունների ինստիտուտ), Հովհ. Թումանյանի թանգարանը, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի

պահպանության ծառայությունը, Մ. Սարյանի տուն-թանգարանը, Ս. Փարաջանովի թանգարանը, Գյումրու Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանը, Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանը:

Ըստ այդմ՝ հարցման մասնակցած թանգարանների 86% (18 մասնակից) իրականացնում են կրթական ծրագրեր, որոնց կարևորությունը բարձր են գնահատում թանգարանի գործունեության մեջ:

76% (16 մասնակից) նաև համարում են, որ թանգարանի կրթական դերը չափազանց կարևոր է հասարակության առաջընթացի համար:

Գծապատկեր 3.

Թանգարանում իրականացվող ծրագրերի տեսակները.



- մշակութային միջոցառումներ - 79% (19 մասնակից)
- դասախոսություններ - 75% (18 մասնակից)
- թեմատիկ էքսկուրսիաներ - 75% (18 մասնակից)
- կրթաճանաչողական այցեր - 71% (17 մասնակից)
- ինտերակտիվ կրթական ծրագրեր - 42% (10 մասնակից)
- խաղ-էքսկուրսիաներ - 25% (6 մասնակից)

այլ միջոցառումներ՝ ստեղծագործական խմբակներ, ժամանակավոր ցուցահանդեսներ, համերգներ, թատերական ներկայացումներ, ինտելեկտուալ խաղեր, արևմտահայերենի ուսուցում:

Գծապատկեր 4.

Կրթական ծրագրերը հիմնականում վարում են.



- գիտաշխատողները - 75% (18 մասնակից)
- էքսկուրսավարները - 63% (15 մասնակից)
- կամավորները - 29% (7 մասնակից)

Կան թանգարաններ, որտեղ այդ ծրագրերն իրականացնում են հոգեբանի, թանգարանային մանկավարժի, թանգարանագետի, ֆոնդապահի, արվեստաբանի կամ տնօրենի և փոխտնօրենի ուժերով՝ պետական մասնավոր կամ հասարակական կազմակերպությունների աջակցությամբ

Գծապատկեր 5.

Թանգարանային կրթական ծրագրերի թիրախային լսարաններից են.



- դպրոցականները - 90% (19 մասնակից)
- ուսանողները - 81% (17 մասնակից)
- հատուկ մասնագիտական խմբերը - 57% (12 մասնակից)
- մեծահասակները - 33% (7 մասնակից)
- զբոսաշրջիկները - 19% (4 մասնակից)
- հատուկ կարիքներով մարդիկ - 10% (2 մասնակից)
- սոցիալապես անապահով խմբերը - 5% (1 մասնակից)
- նախադպրոցականները - 10% (2 մասնակից)

Գծապատկեր 6.

Կրթական ծրագրերի զարգացման հիմնական խոչընդոտներից են.



- ֆինանսների բացակայությունը - 95% (20 մասնակից, որոնցից 13-ը՝ 62% այն նշել են որպես ամենադժվարը)

- տեղեկատվության բացակայությունը - 95% (20 մասնակից)

- հասարակության վերաբերմունքը - 90% (19 մասնակից, թեև մեծ մասն այս գործոնը համարում է ամենաքիչ կամ միջին չափի խոչընդոտ),

- մասնագետների պակասը - 86% (18 մասնակից, որոնցից 6-ը՝ 29% այն համարել են իբրև ամենացածր աստիճան):

- թանգարանի աշխատակազմի վերաբերմունքը - 81% (17 մասնակից, որոնցից 10-ը՝ 47% համարել են նվազագույն խոչընդոտ):

- հասարակության իրազեկման պակասը - 5% (1 մասնակից)

- տարածքի հետ կապված խնդիրները - 5% (1 մասնակից)

Գծապատկեր 7.

Կրթական գործունեությունը զարգացնելու համար անհրաժեշտ է.



- մասնագիտական փորձի փոխանակում - 92% (22 մասնակից)
- ֆինանսական միջոցներ - 88% (21 մասնակից)
- կադրերի վերապատրաստում - 88% (21 մասնակից)
- գիտակրթական բաժնի ստեղծում - 46% (11 մասնակից)
- թանգարանային մանկավարժի առկայություն - 38% (9 մասնակից):

Ցանկալի լրացուցիչ փոփոխություններն են՝ տարածքային, շենքային խնդիրների լուծումը, հանրային տեղեկատվական կենտրոնի ստեղծումը, էլեկտրոնային, վիրտուալ էքսկուրսիաների կազմակերպման հմտությունների ձեռքբերումը, գիտակրթական դասախոսությունները:

Ըստ հարցման արդյունքների կարելի է փաստել, որ դեռևս կան թանգարաններ, որոնց աշխատակիցները չեն կարևորում գիտակրթական աշխատանքը (հարցվածների միայն 76% է խիստ կարևորում):

Հարցվածների մեծ մասը, կրթական ծրագրերի իրականացման կարևորագույն խոչընդոտ են համարել ֆինանսների պակասը: [23, էջ 18-28]:

2009-2011թթ. Եվրոպական միության «Ներդրումներ մարդկանց մեջ տեղական մշակույթի մատչելիություն, մշակութային բազմազանություն և զարգացում» ծրագրի շրջանակներում, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության

միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv-international) համագործակցությամբ՝ իրականացվեց «Ակտիվացնենք թանգարանները՝ որպես հարատև կրթության տարածքներ» նախագիծը: Ծրագրի կարևոր ձեռքբերումը Լոռու և Շիրակի թանգարանների մասնագետների վերապատրաստումն էր:

Հարկ է նշել, որ 2012թ. հոկտեմբերի 20-25-ը ԻԿՕՄ-ի Կրթության և մշակութային գործունեության (ՍԵԿԱ) տարեկան գիտաժողովի անցկացումը Երևանում ևս նպաստեց հանրության մեջ թանգարանի կրթական դերի վերաիմաստավորմանը և վարկանիշի բարձրացմանը [8, էջ 18-27]: Գիտաժողովին մասնակցում էին Երևան քաղաքի պատմության թանգարանը (ԵՔՊԹ), Հովի. Թումանյանի թանգարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը (ՀԱՊ), Ե.Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը (ԳԱԹ), «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանը, Ա. Խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանները, Գաֆեսճեան արվեստի կենտրոնը: Մարզային թանգարաններից՝ Վանաձորի կերպարվեստի թանգարանը, Գյումրու Ասլամազյան քույրերի թանգարանը, Աշտարակի Պ. Պռոշյանի տուն-թանգարանը և այլն:

«Հայաստանի թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ի (որտեղ ատենախոսը խորհրդի անդամ և կրթական ծրագրերի համակարգող է) գործունեության ընթացքում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

Մենք՝ որպես փորձագետ, ինչպես նաև դասընթացավար, ղեկավարել ենք Հայաստանի տարբեր թանգարաններում իրականացված կրթական հետևյալ ծրագրերը՝

1. Կրթական ծրագրերը թանգարաններում (2007թ.)
2. Թանգարանները և կրթությունը (2009թ.)
3. Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ (2009թ.)
4. Թանգարանների հսկիչների վերապատրաստման դասընթաց Լոռու և Շիրակի մարզերի թանգարանների աշխատողների համար (DVV International-ի հայաստանյան մասնաճյուղ, ԻՏՕՄ Հայաստան, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա, 2014թ. հուլիսի 21, հոկտեմբերի 29, դեկտեմբերի 22 (հավելված 4):

Լոռու և Շիրակի մարզերի թանգարանների աշխատողների համար 2009թ. «Թանգարանները և կրթությունը» դասընթացի արդյունքում մարզերի մի շարք թանգարաններում իրականացվեցին կրթական ծրագրեր [6, էջ 107-110], [10, էջ 148-156], Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղում, Ս. Զորյանի տուն-թանգարանում, Հայոց Ազգագրության և Ազատագրական Պայքարի Պատմության Ազգային թանգարանում (հավելված 5):

2008թ.-ին Հայաստանն անդամագրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից Թանգարանների համաշխարհային կոմիտեին (ԻԿՕՄ)՝ ստեղծվեց ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեն, որն ավելի լայն հնարավորություններ ընձեռեց փորձի փոխանակման, նոր գիտելիքների ձեռքբերման և զանազան թանգարաններում կրթական ծրագրերի իրականացման համար:

2009թ. հունիսին Գերմանիայում մասնակցելով «Թանգարանները որպես շարունակական կրթության և միջմշակութային երկխոսության տարածք» թեմայով դասընթացին, որպես ուսուցանող իրականացրեցինք «Թանգարանի կառավարում» ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի ազգային թրեյնինգ (2009թ.), «Թանգարանների էքսկուրսավարի դասընթաց» (2013թ. ապրիլ 4-7), «Hands-on Կրթական ծրագրերը թանգարանում» դասընթացները [72]:

Որպես փորձագետ և թարգմանիչ 2010թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ թանգարանների 16 աշխատակիցների համար իրականացրել ենք «Hands-on Կրթական ծրագրերը թանգարանում» խորագրով ազգային դասընթաց-վարժանքը և նույն թեմայով բաց դասախոսություն՝ առավել լայն լսարանի համար: Դասընթացը վարեցին միջազգային փորձագետներ՝ Հռոմ 3 Համալսարանի Փորձարարական մանկավարժության պրոֆեսոր, ԻԿՕՄ/ՍԵԿԱ միջազգային կոմիտեի նախագահ Էմմա Նարդին և Լուվրի Բարձրագույն դպրոցի պրոֆեսոր, Ֆրանսիայի Ազգային ժառանգության ինստիտուտի փորձագետ Մարի Կլարտե Օ' Նեյլը:

Դասընթացի նպատակն էր Հայաստանի թանգարանային մասնագետներին գիտելիքներ և հմտություններ հաղորդել կրթական նոր ինտերակտիվ տեխնոլոգիաների՝ մասնավորապես Hands-on և Minds-on մեթոդների վերաբերյալ,

որոնց կիրառմամբ՝ Հայաստանի թանգարանները բոլոր տարիքի այցելուների համար ավելի նախընտրելի մշակութային օջախների կվերածվեն: Դասընթացն իրականացվեց ՀՀ Մշակույթի նախարարության, ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեի, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) և Գերմանիայի Ժողովրդական բարձրագույն դպրոցների միության (dvv international) համաֆինանսավորմամբ [71, էջ 72]:

Հետազոտության արդյունքում ընտրվեցին 8 երևանյան և 7 մարզային ու համայնքային թանգարանների աշխատակիցներ, ինչպես նաև մեկ ներկայացուցիչ Արցախից (Արթուր Մկրտչյանի անվան Հադրութի հայրենագիտական թանգարան):

Դասընթացի հայեցակարգը և նախնական ծրագիրը քննարկվել էր փորձագետների հետ՝ հաշվի առնելով նշյալ ոլորտում հայկական թանգարաններում առկա կարիքները: Քառօրյա դասընընթացի տեսական և գործնական պարապմունքներն անցկացվեցին Հայաստանի ազգային պատկերասրահում, չորրորդ օրը՝ Աշտարակում գործող Պ. Պռոշյանի տուն-թանգարանում՝ հաշվի առնելով հարմարավետ պայմանները, ավանդական կենցաղի ու մշակույթի տարբեր տարրեր ամփոփող հնարավորությունը և իրականացրած ինքնատիպ ծրագրերը:

Կարևոր է նաև այն փաստը, որ ծրագրերն իրականացվել են ոչ միայն Երևանի, այլև Հայաստանի մարզային թանգարաններում, որի լավագույն օրինակներից է A-MUSE-ALL ծրագիրը (հավելված 6), որի շրջանակներում, որպես դասընթացավար մեր կողմից իրականցվել է.

1. «Թանգարանները և կրթությունը» (2010թ.)
2. «Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ» Լոռու և Շիրակի մարզերի թանգարանների աշխատողների համար (2010թ.)
3. «Դրամահավաքը թանգարանում»
4. «Թանգարանների ընկերների ակումբ», Լոռու և Շիրակի մարզերի թանգարանների աշխատողների համար (2010թ.)
5. «Թանգարանները որպես միջմշակութային երկխոսության տարածքներ»

6. «Ներդրումներ մարդկանց մեջ՝ տեղական մշակույթի մատչելիություն» (2010թ. նոյեմբերի 3-5)

7. «Թանգարանը որպես ոչ ֆորմալ կրթության տարածք» (2013 մայիս 17-18):

Մեր կողմից A-MUSE-ALL ծրագրի շրջանակներում իրականացրած կրթական ծրագրերը ներկայացվել են նաև տարածաշրջանային գործնական պարապմունքների ժամանակ (Ստամբուլ, Թուրքիա 2009թ.):

2009թ. հունվարի 22-ին dvv international գերմանական կազմակերպության աջակցությամբ մեկնարկեց A-MUSE-ALL (Activate - Musems – As Lifelong Learning spaces - Ակտիվացնենք թանգարանները որպես ցկյանս ուսումնառության տարածքներ) ծրագիրը [4, էջ 247-248]: Այն տարածաշրջանային նախագիծ էր, որ իրականացվեց Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում 30 ամիս ժամկետով: Հայաստանում գործընկեր կազմակերպություններն էին «Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա» և «Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն» հասարակական կազմակերպությունները:

Քանի որ ծրագիրը շատ արդյունավետ էր, ապա դրա առանցքային մոդուլները կարող են տեղայնացվել և կիրառվել նաև տարբեր երկրների այլ թանգարանների ծառայությունների շարքում:

Ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել թանգարաններին՝ որպեսզի կատարելագործվի աշխատակիցների արհեստավարժությունը և ինտելեկտուալ կարողությունները [118, էջ 68-99]:

Տարածաշրջանում անցկացվող վերապատրաստման ծրագրերում ներգրավված էին նաև եվրոպական երկրների թանգարաններից խորհրդատուներ, ինչը լավագույն հնարավորություն էր ընձեռում գործնական կապերի հաստատման համար:

2009-2010թթ. իրականացվեց կարիքների գնահատում Լոռու և Շիրակի մարզի թանգարաններում: Հայաստանի թանգարաններից ծրագրում ներգրավված էին Վանաձորի պատկերասրահը, Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանը, Ստեփան Զորյանի տուն - թանգարանը Վանաձորում, Գյումրու Քաղաքային ճարտարապետության և կենցաղի թանգարանը, Հովհաննես Շիրազի, Մեր

Մկրտչյանի, Երանուհի և Մարիամ Ասլամազյան քույրերի թանգարանները, Ավետիք Իսահակյանի, Սերգեյ Մերկուրովի տուն - թանգարանները Գյումրիում, Հովհաննես Թումանյանի տուն - թանգարանը Դսեղում [17, էջ 142-145], [1, էջ 220-223]:

Ծրագրի կարևոր խնդիրներից մեկը աշխարհի տարբեր թանգարանների փորձի փոխանակումն ու գիտաճանաչողական այցելությունների կազմակերպումն էր, որոնք կազմում էին ծրագրի զգալի մասը: Գիտաճանաչողական այցելությունները թույլ տվեցին աշխատակիցներին սովորել Գերմանիայի և այլ Եվրոպական երկրների օրինակի վրա՝ ինչպես կարող են թանգարանները վերածվել հարատև կրթության տարածքների: Ինչը թույլ տվեց թանգարանային մասնագետներին մասնակցել այս հարցին նվիրված եվրոպական կարևոր գիտաժողովներին և ներկայացնել այնտեղ իրենց գաղափարները՝ կապված տարածաշրջանի երկրների իրադրության հետ [81]:

2009թ. հունիսի 14-ից 20-ը Բոննում կազմակերպվեց տարածաշրջանային «Ուսուցանողի ուսուցանում» (TOT) դասընթացը, որի մասնակից էր նաև ատենախոսը (Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան): Արդյունքում սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը կազմակերպեցինք «Թանգարանները որպես կրթական տարածություն» եռօրյա սեմինար Գյումրիի, Վանաձորի և Դսեղի թանգարանների աշխատողների համար՝ գերմանացի միջազգային փորձագետ Կարմեն Բեքենբախի մասնակցությամբ, իսկ 2010թ. մայիսի 3-ից 5-ը՝ թանգարանային կրթական ծրագրերին նվիրված սեմինար Վանաձորում [10, էջ 148-156]:

«Պատանի արվեստաբան» կրթական դրամաշնորհային ծրագիր: Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի՝ DVV International կազմակերպության ֆինանսավորմամբ 2011թ. սեպտեմբեր ամսից մինչև նոյեմբեր ամիսը Վանաձորի կերպարվեստի թանգարանում իրականացվեց «Պատանի արվեստաբան» կրթական դրամաշնորհային ծրագիրը: Ծրագիրը կոչված էր նպաստելու արվեստի պրոպագանդմանը, երեխաների մեջ սերմանելու հետաքրքրություն ու սեր արվեստի, մասնավորապես՝ կերպարվեստի նկատմամբ: Ծրագիրը նախատեսված էր միջին տարիքի դպրոցականների համար և

նպատակ ուներ իրականացնելու արվեստի պատմության ու տեսության դաս-պարապմունքներ [76]:

«Իմ քաղաքը» կրթական դրամաշնորհային ծրագիր: Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի՝ DVV International կազմակերպության ֆինանսավորմամբ 2012թ. օգոստոս ամսից մինչև նոյեմբեր ամիսը Վանաձորի կերպարվեստի թանգարանում իրականացվեց «Իմ քաղաքը» կրթական դրամաշնորհային ծրագիրը:

Էլեկտրոնային ցուցադրություն սահմանափակ հնարավորություններով այցելուների համար Վանաձորի կերպարվեստի թանգարանում: Ծրագիրը իրականացվել է Վանաձորի կերպարվեստի թանգարանում ԴՎՎ Ինթերնեյշնալ կազմակերպության Հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ և համագործակցությամբ [9]:

Ամառային դպրոց: «Ժամանակների երկխոսություն Ստ. Զորյանի ժառանգության միջոցով»: Ամառային դպրոց ծրագիրը տևեց 20 օր: Դասընթացները տեղի ունեցան 2 փուլով: Յուրաքանչյուր փուլ ունեցավ իր խորագիրը և ժամանակահատվածը: Դասընթացները կազմակերպվեցին ինտերակտիվ մեթոդներով՝ գեղարվեստական ֆիլմերի և թատերական ներկայացումների դիտումներ, դասական երաժշտության ունկնդրում, յուրաքանչյուր դաս ավարտվում էր քննարկումներով:

Վարժանքների ժամանակ երեխաները սովորեցին նաև Power point ծրագիրը, վերջում հանձնարարված թեմաներով իրականացվեց շնորհանդես:

Ամառային դպրոցն ավարտվեց երեխաների նկարների ցուցահանդեսի բացումով և լավագույն ստեղծագործությունների փոքրիկ գրքույկի տպագրությամբ:

2012թ. «Գրական ծիլեր» պատանի գրողների ակումբ Զորյանի – տուն թանգարանում: Ծրագրում ընդգրկվեցին 10-16 տարեկան այն երեխաները, որոնք ստեղծագործում են: Հրավիրված գրողներն ու արվեստագետներն իրենց խորհուրդներով օգնեցին պատանի ստեղծագործողներին: Ծրագրի ավարտին ընտրվեցին և տպագրվեցին այն ստեղծագործությունները, որոնք իրոք արժանի են ուշադրության: Արդյունքում ծնվեց «Գրական ծիլեր» գրքույկը:

2013թ. «Վանաձորի Ստեփան Զորյանի տուն–թանգարան» ՀՈԱԿ: Ծրագիրը՝ «Ապրեցեք գեղեցիկ. Հարստացրու ժառանգությունը մշակույթի միջոցով»: Առաջարկվող ծրագրով նախատեսվում էր կիրառել նորարարական կրթական մեթոդներ 45-62 տարեկան գործազուրկ, կենսաթոշակ չստացող անձանց մշակութային զարգացվածության մակարդակը բարձրացնելու համար: Այս թիրախային խումբը ամենախոցելին է մշակութային կրթության առումով: Վերջիններս մրցունակ չեն ժամանակակից աշխատանքային շուկայում թե տարիքի, թե իրենց ունեցած մասնագիտությունների առումով: Նրանց հասանելի չէ նաև համացանցից օգտվելու և տեղեկատվություն ստանալու հնարավորությունները: Առաջարկվող ծրագրի իրականացումը ենթադրում է բարձրացնել այս թիրախային խմբի ակտիվությունը, ինչը նրանց վստահություն կտա հետագայում ինքնուրույն մասնակցելու մշակութային կյանքին: Առաջարկվող ծրագիրը իրականացվել է 2013թ. սեպտեմբերի 3-ից հոկտեմբերի 31-ը:

Բուհական և ակադեմիական թանգարանների համագործակցություն: 2014թ. հոկտեմբերի 28-ից 30-ը Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Հայաստանի ազգային կոմիտեի և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց «Հանրահռչակման գործընթացը բուհական և ակադեմիական թանգարաններում» խորագրով քառօրյա դասընթաց՝ համալսարանական, ակադեմիական և ինստիտուտ թանգարանների աշխատակիցների համար (հավելված 7):

Դասընթացի նպատակն էր տեղի մասնագետներին ծանոթացնել համալասարանական թանգարանների միջազգային փորձին, զարգացնել նրանց մասնագիտական հմտությունները՝ համալսարանական և ակադեմիական թանգարանները այլընտրանքային կրթության տարածքներ դարձնելու համար:

Դասընթացը վարում էին միջազգային փորձագետներ՝ Ստրասբուրգի համալսարանի փոխնախագահ, ԻԿՕՄ-ի Բուհական թանգարաների և հավաքածուների միջազգային կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) նախագահ՝ Հյուգ Դրեսսեն և Ֆինլանդիայի Տամպերե քաղաքի թանգարանների տնօրեն, ԻԿՕՄ-ի Մարքեթինգի և

հանրահռչակման միջազգային կոմիտեի (ՄՓՌ) նախագահ՝ Մարյո Ռիտա Սալոնիեմին: Դասընթացը տեղի ունեցավ Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի Վ. Բրյուսովի թանգարանում: Դասընթացին մասնակցում էր նաև Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը:

2014թ. հոկտեմբերի 31-ին Մանկավարժական համալսարանը հյուրընկալեց Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի նախագահ, Ֆրանսիայի Ստրասբուրգի համալսարանի մարդկային ռեսուրսների գծով պրոռեկտոր և նույն համալսարանի Գիտությունների այգի թանգարանի տնօրեն Հյուգ Դրեսեին: Հյուրի այցելության հիմնական նպատակն էր ծանոթանալ ՀՊՄՀ–ի թանգարանին, հանդիպել բուհի ավագ և կրտսեր գործընկերներին: Թանգարան կատարած շրջայցից հետո Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի նախագահը հանդիպեց ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի համապատասխան մասնագետների հետ: Հյուգ Դրեսեն հանդիպեց նաև Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն բաժնի մագիստրոսներին, անցկացրեց վարպետության դաս:

Համագործակցություն թանգարանների և dasaran.am կայքի միջև: 2015թ. փետրվարի 6-ին կազմակերպվեց քննարկում թանգարանների ներկայացուցիչների և dasaran.am կայքի միջև: Հանդիպման նպատակն էր կայքում տեղադրել թանգարանների մասին տեղեկատվություն, ինչպես նաև ակտիվացնել ու ընդլայնել թանգարան-դպրոց համագործակցության շրջանակները: Հանդիպմանը մասնակից էր նաև Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանը:

Ատենախոսի կողմից առաջարկվեց բուհի թանգարանի մասին տեղեկատվությունը dasaran.am կայքի «Թանգարան» բաժնից զատ, տեղադրել նաև «Դիմորդի անկյուն» բաժնում՝ նկատելով, որ ՀՊՄՀ թանգարանում իրականացվում են նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված էքսկուրսիաներ: Թանգարանը

յուրաքանչյուր ամիս պատրաստ է ընդունել մոտ 300 աշակերտ, որոնց համար կանցկացվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված էքսկուրսիաներ:

Հանդիպման արդյունքում dasaran.am կայքի պատասխանատուների հետ ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն՝ հետագա համագործակցությունը շարունակելու համար:

2015թ. ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի և «Dasaran» կրթական ծրագրի միջև կնքվեց եռակողմ համագործակցության հուշագիր: Այն նպատակաուղղված է դպրոց-թանգարան կապի ամրապնդմանը, աշակերտների շրջանում թանգարան հաճախելու մշակույթի ձևավորմանը, մշակութային արժեքների սերմանմանը, համակողմանիորեն զարգացած սերնդի կրթմանն ու դաստիարակությանը: Ըստ ստորագրված հուշագրի՝ «Dasaran» կրթական ծրագրի կայքում ստեղծվելու է թանգարաններին նվիրված պաշտոնական էջ, որի շնորհիվ աշակերտները կհամալրեն իրենց գիտելիքներն ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մշակութային արժեքների մասին տեղեկատվությամբ, հաղորդակից կլինեն ընթացիկ մշակութային կյանքին, կծանոթանան հայաստանյան թանգարանների դերին, նշանակությանը և գործունեությանը:

Միևնույն ժամանակ կրթական ծրագրի կայքում այդօրինակ էջի ստեղծումը կնպաստի տեղեկատվական տեխնոլոգիաների գրագետ և նպատակային կիրառմանը, ինչպես նաև մտավոր ներուժի ու ստեղծագործական մտածողության զարգացմանը: Համաձայն հուշագրի՝ խրախուսվելու են թանգարաններին նվիրված պաշտոնական էջի առավել ակտիվ մասնակից աշակերտները՝ հնարավորություն տալով նրանց անվճար հիմունքով այցելելու Հայաստանում գործող ու այս ծրագրին միացած թանգարաններ և մասնակցելու ինտերակտիվ-ճանաչողական շրջայցերի:

Առայժմ, հայաստանյան ավելի քան 20 թանգարան, արդեն իսկ հայտ է ներկայացրել միանալու այս նախաձեռնությանը:

3.3. ՀՊՄՀ պատմության թանգարանը որպես կրթամեթոդական կենտրոն և լրացուցիչ կրթական տարածք

Բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմությունը [29, էջ 56] ներկայացնող թանգարաններ գոյություն ունեին բազմաթիվ պետությունների ուսումնական կենտրոններում՝ Լենինգրադի համալսարանի պատմության (1945թ.), Տարտուի համալսարանի պատմության (1976թ.), Ռուսաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության (1974թ.), Սանկտ-Պետերբուրգի պետական տեխնոլոգիական ինստիտուտի պատմության (1950թ.), Երևանի պետական համալսարանի պատմության (1980թ.), Ֆիզիկական դաստիարակության ինստիտուտի պատմության (1985թ.), Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության (2012թ.) թանգարանները և այլն [26, էջ 35], [27, էջ 25] (Հայաստանի բուհական թանգարանների ցանկը):

ՀՊՄՀ պատմության թանգարանի նպատակն է՝ ներկայացնել համալսարանի պատմությունը և գործունեությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը՝ շեշտելով նրա տեղը և նշանակությունը Հայաստանի բուհական համակարգում և երկրի պետականության կայացման գործում:

Հաշվի առնելով, որ համալսարանական թանգարանների դասական սկզբունքը ենթադրում է՝ բուհական դասավանդման գործընթացը արդյունավետ և բազմակողմանի իրականացնելու համար օգտագործել բնօրինակ հավաքածուներն ու արխիվային փաստաթղթերը, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանի նպատակներից է նաև ստեղծել ակտիվ գործող կաբինետային համակարգ [48, 52]: Այն հնարավորություն կընձեռի, բուհի բոլոր ֆակուլտետների ուսանողների ու դասախոսների համար, ուսուցումը կազմակերպել այդ հավաքածուների հիման վրա, ինչպես նաև համապատասխան գիտական հետաքրքրություններ ունեցող մասնագետներին օգտվել թանգարանի ծառայություններից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանը հանրապետության և սփյուռքի համար մանկավարժական կադրեր պատրաստող առաջատար բուհն է, ուստի կարևորվում է թանգարանում ստեղծել հայկական մանկավարժության պատմության հարուստ ավանդույթները ներկայացնող ցուցադրություն:

Թանգարանային մանկավարժի պատրաստումը կարող է իրականանալ թանգարանագիտական կրթության շրջանակներում: Իհարկե, լավագույն տարբերակ է, երբ այն իրականանում է մանկավարժական կրթության շրջանակներում, որտեղ ուսուցման հնարավորություններն ավելի լայն են: Թերևս, թանգարանային մանկավարժական կրթությունը կարող է լինել լրացուցիչ, կարելի է ձեռք բերել նաև մանկավարժական համալսարանի մագիստրատուրայում [146, էջ 82]: Հիմնվելով իրադրության վերլուծության և քննարկումների վրա պարզ դարձավ, որ անհրաժեշտ է մասնագետների պատրաստում և վերապատրաստում իրականացնել: «Արդի պայմաններում արագընթաց են բոլոր կենսական երևույթների ու գործընթացների տեմպերը, և մասնագիտական կրթության առջև ծառացել է երիտասարդությանը մասնագիտական գործունեության նախապատրաստելու բարդ խնդիր՝ նոր սոցիալ-մշակութային իրավիճակում գործելու կարողությունների ձևավորում» [25, էջ 64]: ՀՊՄՀ պատմության թանգարանն, օգտվելով ընձեռված հնարավորություններից, իրականացնում է նաև բուհի թանգարանագետ կադրերի պատրաստման մասնագիտական բազային կենտրոնի գործառույթներ, սերտ համագործակցելով համապատասխան ամբիոնի հետ:

Ելնելով թանգարանի գիտական զարգացման հայեցակարգից՝ 2011-2013թթ. ընթացքում կազմակերպվել են մի շարք կրթական ծրագրեր՝ ճանաչողական դաս-էքսկուրսիաներ, թեմատիկ ցուցահանդեսներ համալսարանի պատմության և գործունեության վերաբերյալ:

Թանգարանն ակտիվ գործող կրթամեթոդական կենտրոն է, որն իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ, տարբեր տարիքի այցելուների համար թեմատիկ էքսկուրսիաներ՝ «Հայ գրերի գյուտը» խաղ-էքսկուրսիա, «Ճանաչենք

Աբովյանին» թեմատիկ էքսկուրսիա, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված էքսկուրսիա [105, 116, 124]:

Կարևորելով ուսանողների տեղեկացվածությանը համալսարանի պատմությանն ու ավանդույթներին, թանգարանն առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպում է ճանաչողական էքսկուրսիա: Այն իրականացվում է ոչ միայն թանգարանի աշխատակիցների, այլև բուհի բարձր կուրսերի ուսանողներից ձևավորված թանգարանի կամավորների միջոցով, որոնք նորեկներին ծանոթացնում են բուհի պատմությանն ու ուսանողական կյանքի առանձնահատկություններին: Այս գործընթացը բարձր գնահատվեց նաև արտասահմանյան գործընկերների կողմից, 2013թ. Ռիո դե Ժանեյրոյում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) տարեկան վեհաժողովում, որտեղ ատենախոսի կողմից ներկայացվեց ՀՊՄՀ պատմության թանգարանի գործունեությունը:

Որպես կրթամեթոդական կենտրոն՝ թանգարանը համագործակցում է բուհի տարբեր ֆակուլտետների և հանրապետությունում գործող տարբեր կրթամշակութային կառույցների հետ: Այս շրջանակներում՝ 2011թ. թանգարանում կազմակերպվել է «Բուհ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը Հայրենական պատերազմին և Արցախի ազատագրմանը» խորագրով թեմատիկ ցուցադրություն, որի թե՛ ճանաչողական, և թե՛ դասատիարակչական նշանակությունը դժվար է գերագնահատել: Նույն համատեքստում՝ Համալսարանի պատմության ֆակուլտետի հետ ցուցահանդես և տարաբնույթ միջոցառումներ են իրականացվել՝ նվիրված Մեծ եղեռնի 90-ամյակին: Երևանի պետական համալսարանի Մշակութաբանության ամբիոնի հետ կազմակերպվել է Շուշիի ազատագրմանը նվիրված «Մենք Տիգրանակերտում» խորագրով ցուցահանդեսը:

2012թ. Թանգարանի վերակառուցված նոր, մշտական ցուցադրությունը հնարավորություն տվեց բուհի պատմությունն առավել լիարժեք ու համակողմանի ներկայացնելու այցելուներին, որի շնորհիվ, թանգարանը վերածեց կրթական լրացուցիչ տարածքի:

Հավատարիմ մնալով համալսարանական թանգարանների ավանդույթներին՝ 2013թ. կազմակերպվեցին նաև ժամանակավոր ցուցահանդեսներ՝ նվիրված բուհի երախտավորներ Արսեն Մինասյանին, Սուրեն Խուդոյանին, Սարգիս Ավագյանին, Ասքանազ Նահապետյանին:

Տեղայնացնելով նորագույն տեխնոլոգիաները կրթական ծրագրերի մասսայականացման գործընթացում կիրառելու արտերկրի առաջավոր փորձը՝ Համալսարանի պատմության թանգարանում իրականացվել է *աուդիոգիդ* միջազգային ծրագիրը, որի շնորհիվ՝ թանգարանի ցուցադրությունն ու էքսկուրսիոն ծրագրերն արդեն հասանելի են նաև վիրտուալ տիրույթում:

Հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող ծրագրեր:

Մանկավարժական համալսարանի թանգարանն իր գործունեության շրջանակներում մեծ տեղ է հատկացնում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքներին [102, 120, 125]: Այդ համատեքստում՝ թանգարանը Հատուկ կրթության ֆակուլտետի հետ համատեղ, 2013 թվականի հոկտեմբերի 30-ին լեհական «Արի-Արի» կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում, համագործակցում է կույր և թույլ տեսնող անձանց հիմնախնդիրներով զբաղվող հիմնադրամի հետ, որի նպատակն է՝ Լեհաստանում, այս ոլորտում ձևավորված հարուստ փորձը փոխանցել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան հիմնախնդիրներով զբաղվող կառույցների մասնագետներին [9]: Լեհական «Արի-Արի» հիմնադրամի ներկայացուցիչ, տիֆլոմանկավարժ Մարեկ Յակուբովսկին 2013թ. հոկտեմբերին մանկավարժական համալսարան կատարած այցի շրջանակներում եղավ նաև ՀՊՄՀ թանգարանում, որն էլ հիմք դրեց թանգարան-հիմնադրամ հետագա համագործակցությանը: Մ. Յակուբովսկին հանդես եկավ «Կույրերի և թույլ տեսնողների տարածական կողմնորոշումը թանգարանում» թեմայով դասախոսությամբ, որի արդյունքներից է թանգարանի համագործակցությունը Երևանի թիվ 14 հատուկ դպրոցի հետ: Ըստ այդմ՝ թանգարանում տեղադրվեցին բրայլյան տարբերակով տպագրված անոտացիոն տեքստեր, վահանակներ: Թանգարանում գործող աուդիոգիդը տեսողության

խնդիրներ ունեցող այցելուին հնարավորություն է տալիս ինքնուրույն շրջել սրահներում՝ ունկնդրելով էքսկուրսիոն տեքստը: Անվտանգության առումով՝ համալսարանի մուտքի աստիճանահարթակի առաջին և վերջին աստիճանների եզրերը գծանշվել են դեղին գույնով, որը նպաստում է թույլ տեսնողների ինքնուրույն տեղաշարժման դյուրացմանը: 2015թ. հունվարի 15-ին Հատուկ կրթության ֆակուլտետի մասնագետները և նույն ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողները փորձարկեցին ու գնահատեցին թույլ տեսնողների և կույրերի համար տեղադրված նյութերի կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը [94, 136]:

Թանգարանի աջակցությունն Արցախին և Ջավախքի հայկական համայնքներին:

Քանի որ Խորհրդային տարիներին Արցախն Ադրբեջանի հանրապետության կազմում էր ներառված՝ պետականորեն «ուշադրությունից դուրս էր մնացել» բնակչությանը հայոց պատմությունը ներկայացնելու և իրազեկելու գործընթացը:

Անկախության տարիներին իրականացված ուսումնասիրություններից պարզվեց, որ Արցախի թանգարանների աշխատակիցները կրթական ծրագրեր կազմակերպելու գործում մեթոդական օգնության կարիք ունեն: 2009թ. հունիսին Արցախի պատմաերկրագիտական թանգարանի և Արթուր Մկրտչյանի անվան Հադրութի հայրենագիտական թանգարանի տնօրենները հրավիրվեցին մասնակցելու ՅՈՒՆԵՍԿՕ/ԻԿՕՄ-ի կողմից ՀՀ թանգարանների մասնագետների համար կազմակերպված «Թանգարանի կառավարում» դասընթաց-վարժանքին, որի ընթացքում ատենախոսի վարած դասախոսությունների շրջանակում ներկայացվեց «Թանգարանային գործունեության կազմակերպման որոշ հարցեր» թեման[74, 107, 110]: Իսկ 2011թ., Արցախի թանգարանների մասնագետների համար խորհրդատվություն կազմակերպելու և տեղում թանգարանային կրթական գործունեությանն աջակցելու նպատակով, «Միջբուհական կոնսորցիում» հիմնադրամի միջոցով, Ստեփանակերտում կազմակերպվեց «Թանգարանային կրթական ծրագրեր» վերապատրաստման մեկշաբաթյա դասընթաց: Դրա շրջանակներում՝ Արցախի պատմաերկրագիտական թանգարանի տարածքում, կազմակերպվեցին մի շարք վարպետաց դասեր, մասնագիտական քննարկումներ ու հանդիպումներ: Արդյունավետ

համագործակցության օրինակներից է Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ, Զոհված ազատամարտիկների հուշ-թանգարանի տնօրենի հետ քննարկումը, որը թանգարանային կրթական ոլորտում հետագա համագործակցության հիմք դարձավ:

Թանգարանի երիտասարդ աշխատակիցների նախաձեռնությամբ՝ 2011թ. օգոստոսին ՀՊՄՀ պատմության թանգարանը ևս մասնակցեց Վրաստանի Ախալքալաք քաղաքում հայ երեխաների համար կազմակերպված բակային ճամբարի աշխատանքներին, որը պարբերաբար կազմակերպվում էր Հայ առաքելական եկեղեցու Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցու և «Աբուլ» հասարակական կազմակերպության ուժերով: Ծրագրի շրջանակներում՝ ՀՊՄՀ պատմության թանգարանի աշխատակիցները թանգարանային մշակույթի առաջնային գիտելիքների ուսուցում կազմակերպեցին, որի ընթացքում երեխաները սովորեցին թե ի՞նչ է թանգարանը, ի՞նչ տեսակի թանգարաններ կան, ինչպե՞ս պետք է այցելուն իրեն դրսևորի թանգարանում և վարվելակարգի կանոնների վերաբերյալ այլ հարցեր [64, 90, 115]: Այնուհետև, կազմակերպվեցին էքսկուրսիաներ Ախալքալաքի երկրագիտական թանգարան՝ ստացած գիտելիքները կիրառելու և ստուգելու նպատակով, ինչպես նաև երեխաներին ծանոթացնելու Ախալքալաքի հայ համայնքի հարուստ և բովանդակալից պատմամշակութային ժառանգությանը: Ծրագրի գնահատման արդյունքում պարզվեց, որ երեխաները լավ են ընկալել ներկայացված տեղեկատվությունը և կարողանում են ճիշտ կիրառել ստացած գիտելիքները:

Նույն տրամաբանությամբ՝ 2013թ. օգոստոսին ՀՊՄՀ թանգարանի նախաձեռնեց Հայ առաքելական եկեղեցու Ջրվեժի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու և Ջրվեժ գյուղի գյուղապետարանի հետ համատեղ բակային ճամբար կազմակերպել, որի ընթացքում իրականացվող թանգարանային դասերը նվիրված էին հուշարձանների պահպանությանը: Հիմնական նպատակը մասնակիցներին շրջակա միջավայրի հուշարձաններին և դրանց պահպանության խնդիրներին ծանոթացնելն էր: Դասընթացն ընդգրկում էր նաև դպրոցականների այցելություններ Հայաստանի

բնության պետական թանգարան, Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարան և Ջրվեժի Սբ. Ամենափրկիչ եկեղեցի:

Համագործակցելով հանրապետության և արտերկրի համալսարանական թանգարանների հետ՝ ատենախոսը համատեղ ծրագրեր է իրականացվել ԻԿՕՄ-ի համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) հետ, ինչպես նաև հրավիրյալ փորձագետի կարգավիճակով՝ ակտիվ մասնակցել է ՀՀ բուհական և ակադեմիական թանգարանների աշխատակիցների համար կազմակերպվող փորձի փոխանակման և խորհրդատվական պարապմունքների կազմակերպմանը [132, 137]:

Մասնակցություն «Թանգարանային գիշեր» միջոցառմանը: Այս միջազգային նախաձեռնությունը գեղեցիկ ավանդույթի է վերածվել աշխարհի մի շարք երկրների թանգարանների համար: Հայաստանը ևս 2005 թվականից միացել է թանգարանային այս տոնին: «Թանգարանային գիշեր» միջոցառումն ամեն տարի նախորդում է Թանգարանների միջազգային օրվան, որոնք անց են կացվում Եվրոխորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-Ի և ԻԿՕՄ-ի հովանավորությամբ [89]:

Մանկավարժական համալսարանի թանգարանում 2013թ. մայիսի 18-ի տոնական միջոցառումները մեկնարկեցին «Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական աշխատությունների մատենագիտություն (1940-1990թթ.)» գրքի շնորհանդեսով, որին հաջորդեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Նվագարանների ամբիոնի 2-րդ կուրսի քանոնահարների համույթի համերգը՝ կազմված կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի ստեղծագործություններից: Ազգային մշակույթի՝ երգ ու պարի հանրահռչակման և տարածման նկատառումներով՝ միջոցառումների շարքն ամբողջացրեց «Մասունք» ազգագրական երգի-պարի համույթի ելույթը, որից հետո, խմբի անդամների անմիջական մասնակցությամբ, կազմակերպվեց ազգագրական պարերի ուսուցում: Միջոցառման շրջանակում հյուրընկալվել էր նաև Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոս Ա. Գրիգորյանը, որը ժամանակավոր ցուցահանդես կազմակերպելու նպատակով՝ թանգարանին սիրով տրամադրել էր աշխարհի տարբեր երկրների տիկնիկների ազգային տարազներով իրենց ընտանեկան հավաքածուն: 30-

ից ավելի տիկնիկների 51-ամյա այս ինքնատիպ հավաքածուն առաջին անգամ էր ներկայացվում հանրությանը: Ուսանողները ցուցադրեցին Եվրոպայի ու Արևելքի տարբեր երկրներից բերված տիկնիկներն ու յուրաքանչյուրին բնորոշող հետաքրքիր տեղեկություններ հաղորդեցին ներկաներին: Դրան զուգահեռ, ներկաները հնարավորություն ունեցան նաև դիտել Ձորաղբյուրի միջնակարգ դպրոցի երեխաների և Զովքի դպրոցի աշակերտներից մեկի պատրաստած տիկնիկները. ծիսական չորս տիկնիկները ներկայացված էին ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մոտեցումներով: Այնուհետև, Արարատի մարզի Խաչփար գյուղի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանցիները հայկական ծիսական տիկնիկներին առնչվող երգեր կատարեցին: Իսկ համալսարանական մասնաշենքերի ետնաբակում կազմակերպվել էր հայկական ավանդական խաղերի ուսուցում, որի նպատակն էր երիտասարդների մեջ արմատավորել մոռացված ազգային խաղերն ու կրկին կարևորել դրանց տեղն ու դերը մարմնակրթության մշակույթում:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում ՀՊՄՀ թանգարանում: Այս առիթով՝ համալսարանի թանգարանը, «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթամշակութային կենտրոնի հետ միասին միջոցառում էր կազմակերպել, որի ընթացքում ներկաները՝ կենտրոնի մասնագետների և սաների աջակցությամբ, ծանոթացան օրիգամիի պատրաստման հմտություններին: Միջոցառումը հագեցած էր բազմաթիվ նախաձեռնություններով՝ համալսարանի Հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների օժանդակությամբ՝ միջոցառմանն ակտիվ մասնակցեցին նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաները, որոնք կավից տարբեր առարկաներ էին պատրաստում: Սկզբնական կրթության ֆակուլտետի աջակցությամբ և իրենց դաստիարակների ուղեկցությամբ՝ թանգարան էին այցելել Երևանի թիվ 5 մանկապարտեզի սաները: Միջոցառման մասնակից երեխաները սիրով միմյանց հետ փոխանակեցին իրենց պատրաստած աշխատանքները: Տոնական մթնոլորտը երգ ու պարով ողողեցին մանկապարտեզի սաները:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ:

ՀՊՄՀ թանգարանը և հայոց պատմության ամբիոնը Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ, կազմակերպել էին միջոցառում, որը կրում էր «100-ամյա ասեղնագործ հիշողություն» խորագիրը, որի շրջանակներում ցուցադրվեցին Արևմտյան Հայաստանից գաղթած և Սիրիայում բնակություն հաստատած հայ կանանց ասեղնագործ աշխատանքները: Միջոցառումը եզրափակվեց «Հանդիպում ցուցահանդեսում» (ռեժիսոր՝ Ներսես Հովհաննիսյան), ֆիլմի ցուցադրությամբ, որը Հայոց ցեղասպանությունը վերապրած և կորցրած հարազատին գտնելու հույսը վերագտած ընտանիքի մասին է:

Մշակութաբանության բաժնի ուսանողների մասնագիտական պրակտիկա:

ՀՊՄՀ թանգարանը ելնելով կրթամեթոդական կենտրոնի իր գործառույթից, կազմակերպեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մշակութաբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանողների մասնագիտական պրակտիկան, որի ընթացքում ընտրվեցին որոշակի թեմաներ՝ դաս-էքսկուրսիա անցկացնելու նպատակով [110, 111]: Պրակտիկայի ավարտին նրանք մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի 11-րդ դասարանի աշակերտների և Գեղարվեստական կրթության ֆակուլտետի տարբեր բաժինների 1-ին կուրսի ուսանողների համար դաս-էքսկուրսիաներ վարեցին՝ կիրառելով կուտակած գիտելիքներն ու փորձը: Փորձագետ-խորհրդատուի կարգավիճակ ստանձնած ատենախոսը պրակտիկայի կազմակերպման և իրականացման նախաձեռնողներից էր:

Դաս-էքսկուրսիաներն ընթանում էին հետևյալ թեմաների շրջանակներում՝

1. «Միջնադարյան հայ կրթօջախները»
2. «Հայոց Ցեղասպանություն»
3. «Հայաստանից դուրս գործող հայկական կրթօջախները»
4. «Հայ արվեստի նշանավոր գործիչներ, որոնք դասավանդել են ՀՊՄՀ-ում»:

IZI.travel - միջազգային ծրագրի ընձեռած կրթական հնարավորությունները և կիրառումը ՀՊՄՀ պատմության թանգարանում: IZI.travel-ը բջջային հեռախոսների համար մշակել է ծրագիր, թանգարաններում աուդիո ուղեցույցներ ստեղծելու նպատակով: Ծառայությունը հնարավորություն է տալիս ներկայացնել ոչ միայն տվյալ

վայրի կամ թանգարանի մասին պատմության աուդիո տարբերակն, այլև տեղադրել տեսաֆիլմեր, լուսանկարներ, թեմայի շրջանակներում կազմակերպել վիկտորինաներ, որից կարող են անվճար օգտվել թանգարանի այցելուները կամ քաղաք այցելած զբոսաշրջիկները [180]: Այն կարելի է համարել նաև լրացուցիչ կրթական ծրագիր, քանզի հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին՝ աշակերտից մինչև մանկավարժ, ուսանողից դասախոս՝ առանց իր գտնվելու վայրից հեռանալու, բեռնել այս կամ այն թանգարանի կամ հուշարձանի մասին պատմությունը, տեղում մանրամասն ծանոթանալ հետաքրքիր փաստերին ու իրադարձություններին և այդ նյութը հետագայում կրթական աշխատանքների հիմք դարձնել: Աուդիո ուղեցույցներն աշխատում են iOS, Android և WINDOWS ծրագրերով ապահովված սարքավորումներով, փակ և բացօթյա տարածքներում, օնլայն և օֆլայն ռեժիմով, QR կոդերի օգնությամբ կամ առանց դրանց: Շրջագայության ընթացքում GPS կողմնորոշիչը, քարտեզի միջոցով, կօգնի այցելուներին հեշտությամբ գտնել դեպի թանգարան բերող ճանապարհը: ՀՊՄՀ թանգարանում նույնպես գործում է IZI.travel ծառայության աուդիոգիդ անվճար ծրագիրը, որը հասանելի է 3 լեզուներով:

Հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքների կարևորությունն ու առաջնահերթությունը, ինչպես նաև օգտվելով ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից, թանգարանի էքսկուրսիոն տեքստը հասանելի է նաև լսողության և խոսքի խանգարման խնդիրներ ունեցող մարդկանց՝ սուրդո տեքստերի միջոցով, որոնք համապատասխանաբար տեղադրված են ցուցանմուշի *վիդեո* բաժնում: Ծրագիրը կարևորվում է նաև տիֆլոմանկավարժության տեսանկյունից, քանի որ էքսկուրսիոն տեքստը՝ աուդիո տարբերակով, թանգարանում առանց հատուկ միջոցների ու հարմարությունների ներդրման, հասանելի է նաև այս խմբի այցելուների համար:

Թանգարանը չի սահմանափակվում միայն ներթանգարանային աուդիոգիդի ստեղծմամբ՝ աշխատանքներ են տարվում նաև զբոսաշրջային շրջայցի կազմակերպման ուղղությամբ: Այն զբոսաշրջիկներին և առհասարակ, վերը նշված ծրագրերով աշխատող սարքավորումներ ունեցող անձանց, հնարավորություն կտա

առանց հավելյալ ջանք գործադրելու, ծանոթանալ մեր քաղաքում գտնվող պատմաճարտարապետական, մշակութային կոթողներին և օջախներին՝ դրանց պատմությանը, գործունեությանը և զարգացման հեռանկարներին, տեղեկանալ ժամանցի վայրերի գտնվելու, դրանց կողմից մատուցվող ծառայությունների ցանկին:

Յուրաքանչյուր հաստատություն կարող է առավելագույնս արդյունավետ օգտագործել այս ծրագիրը՝ ելնելով իր ուղղվածությունից և կարիքներից: Ըստ էության ծրագրի ընձեռած հնարավորություններն անսահմանափակ են և կարող են սահմանափակվել միայն մեր երևակայությամբ:

Թանգարան-դպրոց համագործակցությունը: Գաղտնիք չէ, որ հաճախ դպրոցն «անառարկելի հեղինակություն ունեցող մանկավարժության» կնիք է կրում, մինչդեռ «համագործակցային մանկավարժությունը» ոչ միայն ուսուցչի և աշակերտի միջև նոր հարաբերությունների ձևավորում է պահանջում, այլև՝ ուսումնական այլ միջավայրի առկայություն [12, էջ 10-12], (հավելված 9): Ինչպես դպրոցի, այնպես էլ թանգարանի գլխավոր, միասնական խնդիրը բոլոր հնարավոր միջոցներով իրականացվող անձի դաստիարակությունն է: Խոսելով թանգարանի եզակիության մասին, պետք է նշել, որ պատմության և մշակույթի իրականության հետ շփվելու անձնական փորձն այն կարևոր գործոնն է, որը քաղաքակրթության մյուս ինստիտուտները չեն կարող ապահովել:

Թանգարանային կրթական ծրագիրը երկու հիմնական բաժին է ընդգրկում՝ «Դպրոցը՝ թանգարանի կրթական համակարգում» և «Թանգարանային մանկավարժությունը՝ դպրոցում»: Այսպիսի մոդելը հնարավորություն է ընձեռում դպրոցի և թանգարանի միջև ավելի արդյունավետ կապ հաստատել, քանի որ դպրոցի կրթական գործունեության բնագավառում թանգարանային մանկավարժության ոլորտ ձևավորելու նախադրյալներ են ստեղծվում [101, էջ 53]: Հենց այս խնդիրներին են նվիրվել թանգարանային մանկավարժությանն առնչվող՝ ատենախոսի առաջին հետազոտությունները:

«Հայ գրերի գյուտը» խաղ-էքսկուրսիա: Այն նախատեսված է առաջինից չորրորդ դասարանի աշակերտների համար: Ծրագրի հիմքում ընկած է հայոց գրերի ստեղծման պատմությունը: Նպատակն է՝ էքսկուրսիայի անմիջական մասնակիցներին

հոգեհարազատ, խաղային տարբերակով՝ ներկայացնել հայոց այբուբենի ստեղծման պատմական ժամանակաշրջանը, երբ մեր երկրի հոգևոր և աշխարհիկ ղեկավարները հայրենիքի հզորացման ու ազգապահպանման գործում առաջնային էին համարում գիտելիքներով զինված ու կրթված սերնդի ձևավորումը: Խաղ-էքսկուրսիայի ընթացքում էքսկուրսավարը հարցերի միջոցով «բացահայտում» և ամրապնդում է դպրոցում ստացված գիտելիքները (ո՞վ Մեսրոպ Մաշտոցը, ե՞րբ է ստեղծվել հայոց այբուբենը, ո՞վ էր այդ տարիներին հայոց արքան, կաթողիկոսը և թեման բացահայտող նման հարցեր): Հարցերին ճիշտ պատասխանողներն ընտրվում են Մեսրոպ Մաշտոցի, Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթևի դերակատարներ և կերպարանափոխվում՝ յուրաքանչյուր կերպարի համար նախատեսված հանդերձանքով՝ թիկնոց, թագ, վեղար և այլն:

«Ճանաչենք Խաչատուր Աբովյանին» թեմատիկ էքսկուրսիա: Այն նախատեսված է 3-7-րդ դասարանի աշակերտների համար: Ծրագիրն իրականացվում է 2 փուլով՝ մասնակցում են ոչ միայն թանգարանի աշխատողներն, այլև բուհի ֆակուլտետների պրակտիկանտ-ուսանողներն ու ուսուցիչները: Բեմադրելու նպատակով, ընտրվում է Խ. Աբովյանի ստեղծագործություններից մեկը: Ուսուցիչը կամ թանգարանի աշխատակիցն այն ներկայացնում է երեխաներին և նրանց հետ միասին բեմադրում: Նախապատրաստական գործընթացի ավարտից հետո երեխաները բեմականացումը ներկայացնում են թանգարանում: Մինչ այդ, Խ. Աբովյանի դիմանկարի մոտ երեխաները ծանոթանում են մեծ լուսավորչի կյանքին ու գործունեությանը, շրջում թանգարանում, ծանոթանում Մանկավարժական համալսարանի համառոտ պատմությանը, հաղորդակցվում նոր տեխնոլոգիաներով վերականգնված, Խ. Աբովյանի կենդանացած կերպարին և լսում սերունդներին ուղղված նրա պատգամը:

Ծրագիրը եզրափակվում է թեմայի շրջանակներում տրվող հարց ու պատասխանով, որի նպատակն է ստուգել և ամրապնդել երեխաների ստացած գիտելիքները:

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված էքսկուրսիաները նախատեսված են 9-12-րդ դասարանի աշակերտների համար: Էքսկուրսիայի նպատակն է բարձր և ավարտական դասարանների աշակերտներին ներկայացնել մանկավարժական համալսարանի պատմությունը, ֆակուլտետների գործունեությունը,

մասնագիտությունների ցանկը, բուհի միջազգային համագործակցության և աշխարհի տարբեր բուհերի ուսանողների փոխանակման ծրագրերը: Այս ամենը կնպաստի նրանց մասնագիտական կողմնորոշմանը և հնարավորություն կտա տեղում ծանոթանալ բուհի ընձեռած կրթական հնարավորություններին:

2015 թվականին Երևանում գործող Թանգարանային կրթության կենտրոնը Հայաստանի 70 թանգարանում իրականացրեց «ՀՀ թանգարանների կարիքների գնահատում» ուսումնասիրությունը, որի նպատակը ՀՀ թանգարանային կրթության ոլորտում առկա կարիքների գնահատումն էր: Ուսումնասիրվեցին կրթական ծրագրերի իրականացման տարածքային, տեխնիկական, ֆինանսական հնարավորությունները, ընդհանուր բնութագիրը, խոչընդոտները, մասնագիտական-կադրային կարիքները:

Ելնելով ատենախոսության մեջ քննարկվող խնդիրների կարևորությունից և թանգարանային կրթական ծրագրերի զարգացման անհրաժեշտությունից, որն անկասկած, շարունակական գործընթաց է՝ նպատակահարմար և արդյունավետ ենք համարում ներկայացնել հիշյալ ուսումնասիրության արդյունքները (հավելված 10):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ արտացոլված թանգարանային կրթական ծրագրերի իրականացման խնդիրների ուսումնասիրությանը միտված մեր բազմամյա գիտահետազոտական և մեթոդական աշխատանքների արդյունքում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Սոցիալ-մշակութային գործունեության տեսությունն ու մեթոդաբանությունը, որպես մանկավարժական առարկա, ձևավորվել ու զարգացել են ընդհանուր մանկավարժության համատեքստում: Թանգարանային մանկավարժությունը՝ որպես մանկավարժական գիտության բաղկացուցիչ, իր մեթոդաբանությունը կառուցել է հասարակական, բնական և մանկավարժական գիտությունների նվաճումների հիման վրա՝ խնդիր ունենալով ձևավորել համակողմանի զարգացած անձ՝ գեղագիտական, բարոյական արժեհամակարգով, իրավագիտական գիտելիքներով, տնտեսական և աշխատանքային գործունեություն ծավալելու ունակություններով:

2. Թանգարանային մանկավարժության օբյեկտային բնագավառը բոլոր տարիքային, կրթական, սեռային, կրոնական, սոցիալական խմբերի կրթամշակութային գործընթացների ղեկավարումն է՝ մանկավարժական գիտության կողմից ընդունված և կիրառվող տարբեր կրթական ծրագրերի ու միջոցառումների պարտադիր բաղադրիչներով:

3. Հայաստանի Հանրապետությունում գործող թանգարաններից շատերը հիմնականում անտեսում են լսարանի ուսումնասիրում-առաջարկ, ստեղծում-գնահատում, սկզբունքը, բարելավում՝ առանց ֆինանսների ներդրման կարևոր շղթան:

4. Թանգարանների հանդեպ հանրության հետաքրքրությունը դեռ ցանկալի մակարդակի չի հասել՝ ինտերակտիվ կրթամշակութային ծրագրերի սակավության կամ բացակայության պատճառով:

5. Թանգարանների մեծ մասը հիմնական թիրախային խումբ է համարում դպրոցականներին ու ուսանողներին, որոնք հաճախ պարտադրաբար են այցելում

թանգարան, իսկ հասարակության խոցելի շերտերը մեծ մասամբ ուշադրությունից դուրս են մնում:

6. Դեռևս ձևավորված չէ կրթական գործունեության ոլորտում թանգարանագետների և հարակից նեղ մասնագիտացում ունեցողների ակտիվ համագործակցությունը:

7. Գրեթե բոլոր թանգարաններում բացակայում է գիտակրթական բաժինը, որտեղ համատեղ նախագծեր կմշակեն և կիրականացնեն թանգարանագետը, թանգարանային մանկավարժը, հոգեբանը, սոցիոլոգը և այլք, իսկ այն եզակի թանգարաններում, որտեղ այնուամենայնիվ նման մասնագետներ են գործում, հստակեցված չեն հաստիքներն ու գործունեության ոլորտը:

8. Թանգարանի աշխատանքները գնահատելիս՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացվում է այցելուների քանակի վրա, իսկ մատուցվող ծառայությունների բազմազանությունն ու որակը հիմնականում տեսադաշտից դուրս են մնում:

9. Թանգարանի կրթական գործունեությունը հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական և տնտեսական գործընթացների արտացոլումն է, իսկ զարգացումը պայմանավորված է նաև կրթության բնագավառում բարեփոխումների իրականացմամբ:

10. Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները որոշվում են տվյալ թանգարանի՝

- հավաքածուների պրոֆիլային ուղղվածությամբ,
- միջավայրի առանձնահատկություններով և սոցիալ-մշակութային կյանքին ներգրավված լինելու աստիճանով,
- կրթական ծրագրերի իրականացման գործում հիմնական ծառայությունների և կրթական հաստատությունների համագործակցության մակարդակով,
- մասնագիտական կադրերի ապահովվածությամբ:
- Կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է՝

  ա) երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված առկա պայմաններով և հնարավորություններով,

բ) մանկական ստեղծագործության և «մեծերի» ստեղծած արվեստի համագործակցությամբ:

11. Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման արդի խնդիրներն են՝

- այցելուի վիզուալ գրագիտության և մտածողության ձևավորումն ու զարգացումը,
- այցելուի կողմից թանգարանային հուշարձանի լեզվի յուրացումը,
- դպրոցականների ընդգրկումը թանգարանի խմբակներում, ակումբներում:

12. Թանգարանային կրթական ծրագրի իրականացման պարտադիր սկզբունքներն են՝

- դիտողականությունը,
- ինտերակտիվությունը և թանգարանային տարածքի բազմագործառնական կիրառությունը,
- միջավայրի հոգեբանական հարմարավետությունը և այդ տարածքում գործունեություն ծավալելու անվտանգությունը,
- երեխաների ստեղծարար գործունեության անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- գործունեության արդյունքների վերլուծությունն ու շնորհանդեսը:

13. Թանգարանային կրթական ծրագրերի իրականացման բազա են հանդիսանում՝

- ակումբները և խմբակները,
- ցուցահանդեսները,
- փառատոները, մրցույթները և տոնակատարությունները,
- գիտատեղեկատվական և մեթոդական նյութերի հրատարակումը,
- մանկական ստեղծագործության ֆոնդը:

Ըստ այդմ, կարելի է փաստել, որ Հայաստանի թանգարաններում իրականացված կրթական ծրագրերի արդի մոդելը գործնականում փոխեց թանգարանի կրթական գործունեության մասին նախկին պատկերացումները, ինչպես թանգարանային աշխատողների, այնպես էլ հանրության շրջանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ավագյան Հ.** - Կրթական ծրագրեր Վանաձորի կերպարվեստի թանգարանում: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 220-223:
2. **Ավագյան Կ.** - Հովի. Թումանյանի թանգարան. «Բզեզի դպրոց» ամառային պարտեզ: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 224-227:
3. **Բարսեղյան Լ.Ա.** - Թանգարանն այցելուով է թանգարան. //Գիտալուսավորական աշխատանքները թանգարաններում: Կուլտուր-լուսավորական աշխատանք: Ե., 1984, թիվ 2, էջ 7:
4. **Բեկենբախ Կ.** - Թանգարանը հարատև կրթության տարածք: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N1, Ե., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 247-248:
5. **Գիբս Ք., Սանի Մ., Թոմսոն Ջ.** - Շարունակական կրթությունը թանգարաններում: Եվրոպական ձեռնարկ: Ե., «Անտարես» հրատ., Ե., 2009, 112 էջ:
6. **Գրիգորյան Ա.Ֆ.** - Գրքի դերը ժամանակակից կրթության և դաստիարակության գործում: Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցության համակարգում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., «Լուսաբաց» հրատ., 2010, էջ 107-110:

7. **Գրիգորյան Ա.Ֆ.** – Թանգարանային էքսկուրսիա: «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 247-256:

8. **Գրիգորյան Ա.Ֆ, Հարոյան Մ.Հ., Ավագյան Ա.Է.** – Հայաստանի թանգարանների կրթական գործունեության պատմությունը: ԻԿՕՄ-ՍԵԿԱ-ի տարեկան միջազգային գիտաժողով, Ե., 2012, էջ 18-27:

9. **Գրիգորյան Ա.Ֆ.** – Թանգարանների հարմարեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այցելուների համար: //Հատուկ կրթության հիմնախնդիրներ: Գիտամեթոդական հանդես: Ե., 2015, էջ 30 -35:

10. **Գրիգորյան Ա.Ֆ.** - Թանգարանը որպես կրթական տարածք: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N1, Ե., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 148-156:

11. **Գրիգորյան Ա.Ֆ.** - Թանգարանային մասնագետների վերապատրաստման հարցի շուրջ: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N2, Ե., «Էդիթ Պրինտ», 2010, էջ 110-115:

12. **Գրիգորյան Ա.Ֆ.** - Թանգարանի և դպրոցի համագործակցության դերը դպրոցականների պատմական գիտակցության ձևավորման հարցում, //Խ.Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբեր 19-21, 2009թ. Ե., Մանկավարժ, 2010, էջ 10-12, 286 էջ:

13. **Դյուֆրեն-Տասե Կ., Բարուք Է., Տրիոն Է**. - Չափահաս այցելուի հուզական վարքի բաղադրիչները: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, էջ 218-225:
14. **Էդիլեան Գ.** - Մանկավարժական մուզեյ, Արարատ, 1911, էջ 147-154:
15. **Թեոդորուս Մ.** - Շատ, թե՞ քիչ: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Ե., «Անտարես» հրատ, Ե., 2012, էջ 161-162:
16. Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և ԻԿՈՄ-ի ազգային Կոմիտեի 2011թ. Գործունեությունը: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 3-8:
17. **Թովմասյան Հ.** - Թանգարանային նոր ծրագրեր մանուկների համար: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N2, Ե., «Էդիթ Պրինտ», 2010, էջ 142-145:
18. ԻԿՕՄ-ի մասնագիտական վարքագծի կանոնագիրք, Ե., Ժառանգություն ՀԿ, 2003, էջ 6-11:
19. **Լիխաչով Դ.** - Ողջույնի խոսք Մշակույթ հանդեսի հրատարակման առիթով, Մշակույթ, 1989, թիվ 1, էջ 3:
20. **Կոմենսկին Յան Ամոս** - Մեծ դիդակտիկա, Ե., «Հայպետմանկ» հրատ., 1962, 360 էջ:
21. Հայաստանի ԽՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Ե., 1927, էջ 18:
22. Հայաստանի Մշակութային քաղաքականություն, Ազգային զեկույց, Ե., 2004, էջ 3-16:

23. **Հարոյան Մ., Ավագյան Ա., Գրիգորյան Ա.** - Գիտակրթական գործունեության ընթացքը Հայաստանի թանգարաններում «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, էջ 18-28:

24. **Հարությունյան Վ.Խ.** - Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան»: Ե., «Լույս» հրատ., 1970, 371 էջ:

25. **Հովակիմյան Գ.Պ.** - Սոցիալ-մշակութային գործունեության մասնագիտական կրթության հիմնախնդիրներ /ուսումնական ձեռնարկ/, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, 188 էջ:

26. **Ղաֆադարյան Կ.Գ.** – Հայաստանի թանգարանների պատմությունից: //Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, թիվ 10, էջ 35:

27. **Մալումյան Խ., Խրիմյան** - Կենսագրական ակնարկ, Թիֆլիս, 1898, 58 էջ:

28. **Մինասյան Լ.** - Պատմությունը թանգարանի միջավայրում իբրև խաղ-ներկայացում: «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, էջ 260-267:

29. **Մկրտչյան Մ.** - Համալսարանական թանգարանների առաջացման հարցի շուրջ: «Թանգարան» գիտատեսական և մեթոդական հանդես, 2009, # 1, էջ 53-58:

30. **Մկրտչյան Մ.** - Կրթական ծրագրեր Գաֆէսճեան արվեստի կենտրոնում: «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N3, Ե., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 215-219:

31. **Յի Էյունմի** - Մշակույթի բացահայտման տուփ. Թանգարանային կրթությունը որպես բազմամշակութային

հասարակության հաղորդակցության միջոց, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, էջ 105-109:

32. **Պետրոսյան Հ.** - Դասավանդողների վերապատրաստման անդրագոգիկ ձևաչափը կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման համատեքստում: //Հետբուհական և շարունակական կրթության հիմնախնդիրները: Ե., «Զանգակ- 97» հրատ., 2010, 358 էջ:

33. **Պողոսյան Դ.** - Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր, Ե., հեղինակային հրատարակություն, 2008, 216 էջ:

34. **Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա.** – Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ /ուսումնական ձեռնարկ/ Ե., «Էդիթ Պրինտ», 2007, 196 էջ:

35. **Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա.** – Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ: Դասընթացի ծրագիր Ե., «Էդիթ Պրինտ», 2007, 36 էջ:

36. **Պիկիչյան Հ.** - Թանգարանն իբրև պատմական հեռանկարի պայմանական միջավայր: «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N1, Ե., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 17-25:

37. **Ռիիվ Ջ.** - Տեքստային թանգարանից դեպի փորձառության թանգարան, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, N4, Ե., «Էդիթ Պրինտ», 2012, էջ 51-65:

38.**Սիմոնյան Ա.Շ.** - Թանգարանաշինությունը խորհրդային Հայաստանում (1920-1965թթ.), մասնագիտությունը, 07.00.02 ԽՍՀՄ պատմություն, ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, գիտ. ղեկավար Խուրշուդյան Լ.Ա., Ե., 1991, էջ 35-36:

39.Սովետական թանգարանագիտության հիմունքները: Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրություն, Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի վարչություն, Ե., 1960, 423 էջ:

40.**Ստեփանյան Ք.** - Չափման միավորը՝ գովազդ: Գովազդի հոգեբանություն, Ե., «Զանգակ», 2002, 80 էջ:

41. **Սուքիասյան Գ.Ա.** - Թանգարանագիտության և հուշարձանագիտության համատեքստում //Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Ե., 2006, 263 էջ:

42.**Սուխոմլինսկի Վ.Ա** – Սիրտս նվիրում եմ երեխաներին: Ե., 1977, «Լույս» հրատ., թարգ. հայերեն, 320 էջ:

43.**Арзамасцев В.П.** - О семантической структуре музейной экспозиции. //Музееведение. На пути к музею 21 века. М., 1989, с. 48.

44.**Артемов Е.Г.** – Музейно-педагогическая технология. СПб, ГМПИР, 1999, 23 с.

45.**Бакушинскй А.В.** – Исследования и статьи. М., 1981, 352 с.

46.**Барг М.А.** - Историческое сознание как проблема историографии.- Вопросы истории, 1982, #12, с. 103-161.

47.**Барри Лорд, Гейл Д. Лорд.**- Менеджмент в музейном деле, Учебное пособие, пер. с англ., М.: Логос 2002, 256 с.

48.**Бейсенова Г.** – Проблемы образовательного знания в диспозитиве культуры, Алматы: Искандер, 2005, 714 с.

49.**Беззубова О.В.** - Теория музейной коммуникации как модель современного образовательного процесса. //Коммуникация и образование. Сборник статей. Под ред. С.И. Дудника. - СПб.: Санкт-Петербургское философское общество, 2004, 424 с.

50.**Бойко А.Г.** – Музей как образовательная среда. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная литература», 1998, 96 с.

51. **Борев Ю.Б.** – Эстетика, М., Высшая школа, 2002, 560 с.

52.**Бутенко М.Э.** – Зарубежный опыт социально-культурного развития. Учебное пособие. СПБ.: 2003, 370 с.

53.**Ванесян Л.Г.** – Работа художественного музея с дошкольниками и младшими школьниками: этнопедагогический аспект. //Образовательное пространство музея. Сб. ст. – СПб., 2005, 148 с.

54.**Ванслова Е. Г.** – Аудитория 2000 года. //Советский музей, 1986 #1 с. 32.

55.**Ванслова Е.Г.** – Роль музея в формировании исторического сознания у школьника. //Теоретические вопросы научно-просветительной работы музеев. М., 1984. с. 45-117.

56.**Верпланке Ф.** – Пути музейной педагогики. О стремлении детских и юношеских музеев стать новыми объектами культурной педагогики: //Музейная педагогика за рубежом. Работа музеев с детской аудиторией. Лаборатория музейного проектирования, Российский институт культурологии, 1997, 73 с.

57. **Волина В.** – Сталинская забота о матери и ребенке. //Советский музей. 1939, # 3. с. 25.

58. **Воронцов Б.** – Друзья музея и другие группы поддержки, материалы семинара «Горизонты 21-ого века» Тбилиси, 2005, с. 14-19.

59. **Востряков Л.** – Культурная политика: понятия, модели //Культура на границах: Институт культурной политики, 2004, с. 25.

60. **Гладков И.С.** – Менеджмент: Учебное пособие, М.:Изд.-торг. корпорация «Дашков и К», 2003, - 312 с.

61. **Гнедовский М., Коник М.** – Нужны новые подходы. //Советский музей. 1988, 5 (105), с. 20.

62. Государственный Русский музей, экскурсионно – лекционный отдел: лекторий, календарный план на 2008-2009гг., Санкт-Петербург, 2008, с. 10.

63. Государственный Эрмитаж, Особые дети в музее, материалы научно-практической конференции 25-26 ноября 2003 года, научные редакторы Куреева И.А., Шостак Л.Я., Санкт–Петербург, изд. Государственного Эрмитажа, 2004, с. 87.

64. **Губман Б.Л.** – Современная философия культуры. – М., Российская политическая энциклопедия (РОССПЭН). 2005, 750 с.

65. **Гузеев В.В.** – Педагогическая техника в контексте образовательных технологий. М.: Народное образование. 2001, 128 с.

66. **Гутникова А.Б., Пронькин В.Н., Элиасберг Н.И.** – Живое право. Занимательная энциклопедия практического права: Книга для преподавателя: Учебно-метод. пособие. – СПБ.: Изд. С.- Петерб. ин –та права им. Принца П.Г. Ольденбургского, 2000, 450 с.

67. **Григорян А.Ф.** - Музей как образовательная среда. //«Музей», Е., Эдит Принт, 2009, #1, с. 148-156.

68. **Григорян А.Ф.** – Роль русско-армянских взаимоотношений в формировании музейно-образовательных традиций в Армении, «Диалог культур», Армения и мировая культура: сборник научных статей, Гюмри, изд-во «Импроритм», 2008, с. 170-176.

69. **Григорян А.Ф.** – Международные тренинги как эффективное средство подготовки музейных работников, «Диалог культур», Армения и мировая культура: сборник научных статей, Гюмри, изд-во «Импроритм», 2011, с. 190-196.

70. **Григорян А.Ф.** - Проблемы подготовки музейных кадров, «Музей», N11, М., изд. «Фактограф», 2014, с. 72.

71. **Геворкян М.Г.** – Сущность и различия понятий «межнациональный поликультурный диалог» и «межкультурная коммуникация». //Проблемы педагогики и психологии. Научное периодическое издание межвузовского консорциума. Ереван, «Зангак - 97», 2010, 192 с.

72. **Джастин О' Коннер** – Культурное разнообразие, развитие и глобализация. //Новые форматы партнерства. – М.: Институт Культурной политики, 2004, 390 с.

73. **Джилиан П.** - Когда менеджмент приносит деньги. Руководство для учреждений культуры разных стран. – М.,2003, 124 с.

74. **Друкер П.Ф.** - Задачи менеджмента в 21 веке. – М.: Издательский дом «Вильямс», 2003, 272 с.

75. **Жвитиашвили Н.Ю.** – Музей и аудитория: презентация анализа практики в рамках семинара, 2005, «Меняющийся музей в меняющемся мире», с. 23.

76. **Золотова Л.** – Спонсорство и фандрейзинг в российской культуре: новейшие тенденции и обзор опыта. //Культура и бизнес: формулы сотрудничества: материалы исследования. М., 2005, с. 96-111.

77. **Ивашина Н.Н.** – Методика подготовки выездной экскурсии. //Белгородский краеведческий вестник. – Белгород, 2001, с . 73-84.

78. **Каган М.С.** – Диалог как основной метод образовательного процесса в музейной среде. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная Литература», 1998, 96 с.

79. **Каган М.С.** – Социальные функции искусства. Л., 1978, 226 с.

80. **Каган М.С.** - Эстетика как философская наука: Университетский курс лекций. СПб., 1997, 306 с.

81. **Кастельс М.** – Информационная эпоха: экономика, общество и культура. – М., ВШЭ, 2001, с. 34-38.

82. Ключевые понятия музеологии /Сост. Andre Desvallees u Francqis Mairesse/ Перевод Урядниковой А.В. - ИКОМ России, 2012, 104 с.

83. **Колбер Ф.** – Маркетинг культуры и искусства. – СПБ: Арт Пресс, 2004, 255 с.

84. **Колесникова И.А.** – Музей как образовательная среда. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная литература», 1998, 96 с.

85. **Константинова С.С.** – Экзамен по музееведению. Учебное пособие для вузов, М., «Приор-издат», 2005, 80 с.

86. **Копцик В.А., Рыжов В.П., Петров В.М.** – Этюды по теории искусства. Диалог естественных и гуманитарных наук. - М.: Искусство, 2004, 368 с.

87. **Кребс Х.** – Роль наук в культуре в XXI веке. – М.: РГГУ, 2003, 210 с.

88. **Кузьмина Е.Е., Шаляпина Н.М.** – Теория и практика маркетинга. – М., 2005, 350 с.

89. Культурное и языковое разнообразие в информационном обществе. Российский комитет Программы ЮНЕСКО «Информация для всех».- СПБ: Российская национальная библиотека, 2004, 600 с.

90. **Кутырев В.А.** – Культура и технология: борьба миров. – М.: Прогресс– Традиция. 2001, 106 с.

91. **Ленский Л.** - Киевский педагогический музей //Школа и жизнь, Киев, 1913, N16, с. 14.

92. **Ломунова А.** - Учитель обращается в музей. //Советский музей. #2, 1983, с. 15-17.

93. **Лысикова В.** - Музеи мира. Учебное пособие, Москва: Флинта: Наука, 2004, 460 с.

94. **Луман Н.** – Медия коммуникации. – М.: Логос, 2005, 240 с.

95. **Макарова Н.Г.** – Детские музеи Америки: история и современность. //Музейная педагогика за рубежом. Работа музеев с детской аудиторией. Лаборатория музейного проектирования, Российский институт культурологии, М., 1997, 73 с.

96. **Малявина С.** – Коммуникация в проекте, или коммуникационное сопровождение проектной деятельности. Кентавр. 2005, 58 с.

97. Маркетинг: Учебник, практикум и учебно-методический комплекс по маркетингу /Ноздрева Р.Б., Крылова Г.Д., Соколова М.И., Гречков В.Ю., - М., 2003, 752 с.

98. **Медведева Е.Б.** - Музейная педагогика Германии в прошлом и настоящем. //Музейная педагогика за рубежом: работа музеев с детской аудиторией. Лаборатория музейного проектирования, Российский институт культурологии, Сост. и редактор М.Ю. Юхневич. М., 1997, 73 с.

99. **Меликсет-бек Л.М.** – Из истории археологических изысканий в Армении, «Вестник» (общ. наук), 1947, #6, с. 45-47.

100. **Могильницкий Б.Г.** – О природе исторического познания. Томск, 1978, 226с.

101. Молодежь и музеи. Ред. статья. //Muzeum. Юнеско, #4, 1989, с. 53.

102. **Мосионжник Л.А.** – Синергетика для гуманитариев. Учебное пособие для вузов. – СПБ.: Нестор-история, 2003, 420 с.

103. Музееведение. Музеи исторического профиля: Учеб. Пособие для вузов по спец. «История» /Под ред. К.Г. Левыкина, В. Хербста. – М.: Высш. Шк., 1988, 431 с.

104. Музейное проектирование /Отв. ред. Щербакова А.А., сост. Лебедев А.В. – М., 2009., 256 с.

105. Музей и зритель XXI век. Материалы международной научно–практической конференции к 80 -летию научно-просветительного отдела, СПБ.: Государственный Эрмитаж, 2006, 510 с.

106. Музеи. Маркртинг. Менеджмент: Практическое пособие /Сост. Дукельский В.Ю., Прогресс – Традиция. – М., 2001, с. 27-60.

107. Музейная педагогика в школе. Выпуск 2. – СПБ., 2001, с. 22-31.

108. Музеи в период перемен. Материалы российско-британского семинара.- СПБ, 1997, с. 6-11.

109. Музей будущего: информационный менеджмент. /сост. Лебедев А.В., М., 2001, с. 43-59.

110. Музейная педагогика в школе. Выпуск 3. – СПБ., 2002, с. 14-26.

111. **Некрасова-Каратеева О.Л.** – Диалог как основной метод образовательного процесса в музейной среде. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная Литература», 1998, 96 с.

112. **Никишин Н.А.** – Музей в глобальных сетях электронных телекоммуникаций //Музей и новые технологии. М., 1999, с. 9-21.

113. Образовательный потенциал музеев – перспективы музейного образования: По материалам отчета Министерства культуры, медиа, спорта России. – М., 2000, 68 с.

114. Основы музееведения: Учебное пособие /Отв. Ред. Э.А. Шулепова. – М.: Едиториал УРСС, 2005, 504 с.

115. **Петров В.М.** – Количественные методы в искусствознании. Пространство и время художественного мира. Учебное пособие для высшей Школы. – М.: Академический Проект: Фонд «Мир», 2004, 670 с.

116. **Поляков Т.П.** – Мифология музейного проектирования. – М.: РИК, 2003, 456 с.

117. **Разгон А.М.** – Некоторые направления научных исследований деятельности школьных музеев. //Коммунистическое воспитание учащихся музейными средствами: Сб. науч тр. N 122, НИИК, М., 1983, с. 42.

118. **Рац М., Ойзерман М., Слепцов Б.** – Ресурсы и ресурсная политика. – М., 2002, 138 с.

119. **Раньярд Сью, Роджер Майлз** - Как музей должен заботиться о посетителе. //Музеи. Маркетинг. Менеджмент. М., 2001, 161 с.

120. Ребенок в музее: новые векторы детского музейного движения. – М.: Академический Проект. РИК, 2006, 56 с.

121. Роль художественных музеев в эстетическом воспитании школьников. (Научный семинар). Ч. 2, М., 1973, 580 с.

122. **Роджер Майлз** - Планирование-основной инструмент менеджмента. //Музеи, маркетинг, менеджмент, М., 2001, 210 с. 123.

123. Сборник действующих нормативных актов по проблемам сохранения культурных ценностей (по состоянию на 1 июня 2000г) / Авт. – сост. Даян Н. – 2000, 255 с.

124. Слово и мысль в междисциплинарном пространстве образования и культуры. Сборник статей памяти профессора Шаронова В.В. - СПБ.: Изд. С.-Петербургского университета, 2005, 490 с.

125. **Соколов А.В.** – Феномен социально-культурной деятельности. – СПБ., 2003, 347 с.

126. **Сотникова С.И.** – Музеология: Пособие для вузов. – М.: Дрофа, 2004, 192 с.

127. **Столяров Б.А.** - Музей как образовательная среда. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная литература», 1998, 96 с.

128. **Столяров Б.А.** – Педагогические аспекты образовательной деятельности музея: Учебное пособие для музейных педагогов и студентов гуманитарно-художественных вузов / Мин-во культуры РФ; ФГБУК «Государственный Русский музей» РЦМПиДТ, РАО. – СПб.: ГРМ, 2013, 316 с.

129. **Столяров Б.А.** - Музейная педагогика. История, теория, практика: Учебное пособие: - М., Высш. шк., 2004, 216 с.

130. **Столяров Б.А.** – Музей в пространстве художественной культуры и образования. Учебное пособие. – СПб., 2007, 340 с.

131. Триумф Музея? Учебное пособие – СПб., «Осипов", 2005, - 458 с.

132. Труды Государственного музея истории Санкт-Петербурга. Выпуск 11. Музей, школа, семья. – СПб., 2005, 420 с.

133. **Уильямс Р.** - Музеи: просвещение или коммерция, //Muzeum, (Юнеско), N170, 1991, с. 57.

134. **Федоров Н.Ф.** – Из философского наследия (Музей и культура). М., Мысль, 1982, 709 с.

135. **Федоров Н.Ф.** - Музей. Его смысл и назначение /Музейное дело: Экспресс-информация. Вып. 3-4. М., 1992, с. 89.

136. Через формы к смыслам. О новой университетской образовательной модели. – М.: РГГУ, 2006, 530 с.

137. **Шляхтина Л.М.** – Основы музейного дела. – М., Высшая школа, 2004, 690 с.

138. **Шляхтина Л.М.** - Музей как образовательная среда. Музейная педагогика. Междисциплинарные диалоги. - СПб: «Специальная литература», 1998, 96 с.

139. **Шляхтина Л.М.** – Современная музеология: горизонты теоретизирования. //Вопросы музеологии, СПб., гос. ун-т. Выпуск 1 (7), 2013, с. 12-18.

140. **Шмит Ф.И.** - Искусство как предмет обучения - Х., 1923, 63 с.

141. **Юренева Т.Ю.** - Музееведение: Учебник для высшей школы. Академический проект. М., 2003, 560 с.

142. **Юсов Б.П.** – Взаимосвязь культурогенных факторов в формировании современного художественного

мышления учителя образовательной области «Искусство»: Избранные труды по истории, теории и психологии художественного образования и полихудожественного воспитания детей. М., Спутник, 2004, 430 с.

143. **Юхневич М.Ю.** - Образовательный музей (педагогический, школьный, детский). М.: НП «СТОиК», 2007, 168 с.

144. **Юхневич М.Ю.** - Я поведу тебя в музей. Учебное пособие по музейной педагогике. М.: Гос. Ин-т культурологии, 2001, 223 с.

145. **Юхневич М.Ю.** – Музейная педагогика – профессия //Советский музей. М., изд. «Искусство», 1989, N1 (105), с. 29.

146. **Яковлева Н.А.** – Междисциплинарные подходы в музейной педагогике. //Музейная педагогика. Междисциплинарные диалоги.- СПб: «Специальная литература», 1998, 96 с.

147. British Muzeum, Information and events for Secondary schools and teachers., 2008,- 16 p.

148. **Cameron D.A** - Viewpoint: The Muzeum as a Communications System and Implications for Muzeum Education //Curator, Vol. 11, #1, 1968, pp. 33-40.

149. Education as a Tool for Museums. Ed. By Jutta Thinesse-Demel–Budapest, 2001, 153 p.

150. **Hooper-Greenhill E.** – Museums and their Visitors. London and New York, Routledge, 1999, 206 p.

151. **Hooper-Greenhill E.** - A New Communication Model for Museums //Museum Languages: Objects Texts. Ed. G. Kavanagh. Leicester Univ. Press, 1991, pp. 59-60.

152. Lifelong Learning in Museums. A. European Handbook. Edited by Kirsten Gibbs, Margerita Sani, Jane Thompson. Turin, 2006, 116 p.
153. Muzeum Education: History, Theory and Practice /Ed. N. Berry and Mayer. Reston, 1989, 204 p.
154. **Bedford Leslie** - The Art of Museum Exhibitions, How Story and Imagination Create Aesthetic Experience, Left Coast Press, 2014, 168 p.
155. **Bergeron Anne and Beth Tuttle** – MAGNETIC the Art and Science of Engagement, The AAM Press, 2013, 224 p.
156. **Duclos-Orsello Elizabeth** - Shared Authority the Key to Museum Education as Social Change, 2014, 128 p.
157. Excellence and Equity, Education and the Public Dimension of Museums, A Report from the American Association of Musuems, 1992, 34 p.
158. Excellence in Practice: Museum Education, practice and Standards, developed by Committee of Education, AAM, 2013, 27 p.
159. **Dolak Jan** - Life-long Education in museology and World Heritage. Collected Articles of International Scientific Conference on Objectives of Post-Graduate and Lifelong Education,Yerevan, 2010, pp. 94-95.
160. **Hein Geroge E.** - Learning in the Museum, Routledge, 1998, 120 p.
161. **Roberts, Liza C.** – From Knowledge to Narrative: Educators and the Changing World, Smithsonian Press; 1 edition, 1997, 331 p.
162. **Talboys Graeme K.** – Museum Educator's Handbook, Ashgate Publishing Company, second edition, 2005, 174 p.
163. Writing a Museum Education Policy, edited by Hooper-Greenhill E. 2012, p. 16.
164. http://www.museumsontario.ca/sites/default/files/members/EileanHooperGreenhillEducationPolicy_0.pdf, 06.06.2014.

165. http://www.george-hein.com/, 06.06.2014.
166. http://www.bostoncentral.com/activities/boston_childrens_museum/p133.php, 05.10.2015.
167. http://www.exploratorium.edu/ifi/resources/constructivistlearning.html, 11.08.2014.
168. http://mama.ru/articles/muzei-dlya-detei-v-moskve, 05.10.2015.
169. https://www.teachingchannel.org/videos?q=museum, 11.08.2014.
170. http://www.moma.org/learn/moma_learning/tools_tips , 08.08.2014.
171. http://www.getty.edu/education/teachers/classroom_resources/, 08.08.2014.
172. http://museology.askdefine.com/, 05.07.2014.
173. http://www.future.museum.ru/lmp/books/archive/Musped.pdf, 02.10.2015.
174. http://knowledge.allbest.ru/history/c2c0a65635b2ad79b4d53b88521306d37. html, 02.10.2015.
175. http://www.bvahan.cqm/museologypro/muzeevedenie.asp?c_text=48&li2=3, 02.10.2015.
176. www.rusmuseum.ru/, 06.06.2014.
177. http://elibrary.udsu.ru/xmlui/bitstream/handle/123456789/9940/2012566.pdf?Sequence=1, 02.10.2015.
178. https://royallib.com/read/piage_gan/psihologia_intellekta.html1#0, Психология интеллекта., 06.07.2014.
179. http://cyberleninka.ru/article/n/adaptatsiya-i-aprobatsiya-psihologicheskih-metodov-issledovaniya-muzeynoy-auditorii-v-gosudarstvennom-istoriko-arhitekturnom-i, 06.07.2015.
180. http://www.lemproject.eu/in-focus/news/izi.travel-educational-opportunities-for-museums-visitors), 19.06.2014.

Հավելված 1

1989 թվականին Հոկտեմբերյանի և Բաղրամյանի շրջան էին տեղափոխվել անապաստան հայեր, Ադրբեջանի շրջաններից և երկրաշարժի գոտուց, Հայաստանի ազգագրության պետական թանգարանը արհավիրքից փրկված, սակայն ծանր հոգեբանական վիճակում գտնվող երեխաների համար կրթադաստիարակչական ծրագրեր կազմակերպեց:

Ի սկզբանե պարզ էր, որ այս երեխաների հետ պետք էր աշխատել առանձին ծրագրով, կիրառելով արտթերապիայի տարրեր: Հոգեբանները երեխաներին առաջարկեցին նկարել իրենց տպավորությունները և ականատես եղանք, թե ինչպես են երեխաները թղթին փոխանցում իրենց սարսափելի տպավորությունները, հետզհետե ազատվելով այդ «բեռից»:

Շուտով պարզվեց նաև, որ Ադրբեջանից գաղթած երեխաները համարյա պատկերացում չունեն հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ, քանի որ դպրոցում այդ առարկան չէին անցել, կազմված ծրագրին համապատասխան սկսեցինք նրանց հետ պարապմունքներ անցկացնել, որոնք զուգորդվում էին նկարչությամբ: Արդյունքում՝ երեխաների պատկերած նկարների գունային գամման ու բովանդակությունը փոխվեց, իսկ երեխաները դարձան ակտիվ, հետաքրքրվող, աշխույժ, նրանք անհամբեր սպասում էին հաջորդ պարապմունքին:

Նախնիների պատմությանը և տոհմածառը կազմելու պարապմունքին երեխաներից բացի ակտիվորեն մասնակցում էին նաև նրանց ծնողները, տատիկներն ու պապիկները:

Կապեր հաստատվեցին թանգարանի և նրանց դպրոցի միջև, մեզ հրավիրում էին դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին, միաժամանակ երեխաներն էլ մասնակցում էին թանգարանային միջոցառումներին: Դպրոցի տնօրինության խնդրանքով՝ ուսուցողական ծրագրեր կազմվեցին նաև հաջորդ տարվա համար:

Նշված շարունակական աշխատանքի արդյունքում հաստատվեց, որ նախապես մտածված, ճիշտ հասցեատիրոջն ուղղված, մասնագիտորեն պատրաստված

թանգարանային կրթական ծրագրերը կարող են ոչ միայն զարգացնել, բացահայտել այցելուների ստեղծագործական հնարավորությունները, այլև հանել նրանց ծանր հոգեբանական վիճակներից, օգնել ձերբազատվել սթրեսներից:

Հավելված 2

Մանկական թանգարանների «ամերիկյան» և «եվրոպական» մոդելների համեմատական վերլուծություն

Ամերիկայի մանկական թանգարանների ասոցիացիայի տվյալներով 1990-ական թվականներին աշխարհում հաշվվում էր ավելի քան 400 մանկական թանգարան, որոնց մեծ մասը (մոտավորապես 300-ը) գտնվում էր ԱՄՆ-ում: Դրանց անվանում են «ժամանակակից կրթության առաջնեկներ», «փորձարարական տարածքներ, որտեղ ուսուցումը կարող է լինել հետաքրքիր և ուրախ», «երեխաների և ծնողների հաղորդակցման և համատեղ հաճույքի կենտրոններ»:

Հետազոտողները նշում են, որ, երեխաների և ծնողների պահանջներին համապատասխան «բարձրորակ արտադրանք առաջարկելով», նրանք առավել շատ այցելուներ են գրավում, քան այլ թանգարանները: Եվ վերջապես, այս թանգարանները հարմարվել են տնտեսական և սոցիական իրականությանը՝ բազմաբնույթ հարաբերություններ ունենալով պետական, հասարակական և առևտրային կառույցների հետ: Այդ պատճառով՝ ամբողջ աշխարհում մանկական թանգարանների հանդեպ հետաքրքրությունն աճում է:

Մանկական թանգարաններ են գործում նաև Կանադայում և Նոր Զելանդիայում, Ավստրալիայում և Ճապոնիայում, Կենտրոնական Եվրոպայի երկրներում: Եվրոպական մայրցամաքում այս թանգարանները սկսեցին ստեղծվել 1970-ական թթ., իսկ 1990-ական թթ. հաշվվում էր ավելի քան երեսուն մանկական թանգարան: Մանկական թանգարանների գաղափարը տարանջատվում է «ամերիկյան» և «եվրոպական» մոդելների:

ԱՄՆ-ը մանկական թանգարանների հայրենիքն է և այստեղ երեխաների համար մասնագիտացված թանգարանային տարածք ստեղծելու գաղափարն ամբողջովին

իրականացվեց: Անկասկած, դրան նպաստեցին պետության և հովանավորների կողմից առանձնահատուկ ուշադրությունն ու ֆինանսավորումը: Այսօր Բոստոնի Մանկական թանգարանը, բացի իր տարածքում տարբեր տարիքի երեխաների համար կազմակերպվող ծրագրեր իրականացնելուց, շատ է կարևորում նաև դպրոցների հետ կապեր հաստատելը և դպրոցական դասերի ժամանակ օգտագործելու նյութեր ու ցուցանմուշներ է տրամադրում: Ի դեպ, այսպես կոչված «դպրոցական արկղերի» մասին՝ դրանք այս կամ այն ուսումնական առարկային վերաբերվող նյութեր են պարունակում (թանգարանային առարկաներ, փաստաթղթերի կրկնօրինակներ, հետաքրքիր փաստեր, տվյալներ և այլն), պատրաստվում և տրամադրվում են դպրոցներին Բոստոնի համարյա բոլոր թանգարանների կողմից:

Շատ մեծ ուշադրություն է դարձվում թանգարան-դպրոց համագործակցությանը, ուսուցիչների հետ աշխատանքին: Կան թանգարաններ, որտեղ ուսուցիչների մուտքն անվճար է: Ավելին, նրանք հաճախ հրավիրվում են հատուկ վերապատրաստման դասընթացների, որպեսզի հետագայում ճիշտ կազմակերպեն թանգարանային դասերը: Ավելի փոքր թանգարաններում, ինչպես, օրինակ, նկարիչ, քանդակագործ Սայրոս Դալինի տուն-թանգարանում, հաճախ հատուկ կրթական բաժին չկա և աշխատանքը հիմնականում կամավորներն են կատարում, սակայն այստեղ էլ կազմակերպվում են թանգարանի պրոֆիլին համապատասխան հետաքրքիր կրթական ծրագրեր:

Ոչ շատ մեծ թանգարաններից, որտեղ կազմակերպվում են բազմազան կրթական ծրագրեր, աչքի է ընկնում Աֆրոամերիկյան թանգարանը, որը մշտական լսարան ունենալով, անընդհատ միջոցներ է ձեռնարկում այն ընդլայնելու համար:

Բոստոնի Գիտության թանգարանը կարելի է համարել մի առանձին ուսումնական կենտրոն, ուր տարբեր տարիքի այցելուներ կարող են մասնակցել գիտության զանազան բնագավառներին վերաբերվող հետաքրքիր ծրագրերի:

Այս բոլոր կրթադաստիարակչական աշխատանքների գլուխգործոց կարելի է համարել տարին մեկ անգամ Բոստոնի թանգարանների կողմից կազմակերպվող Գիտության փառատոնը, որի ընթացքում նախապես ներկայացված խորագրին

համապատասխան՝ քաղաքի տարբեր վայրերում թանգարաններն իրենց ծրագրերն են ներկայացնում: Փառատոնին մասնակցում են հազարավոր մարդիկ, որոնք, ծանոթանալով այդ ծրագրերին, հետագայում այցելում են թանգարաններ՝ մասնակից դառնալու այդ թանգարանների միջոցառումներին:

Գերմանիայի թանգարաններում սոցիալական ու կրթական առաքելությունը կարևորվելով դեռևս 19-րդ դարի վերջերին, գնալով ամրապնդվեց և դարձավ թանգարանային գործունեության անբաժանելի մասը, որի վկաները հերթական անգամ դարձանք՝ այցելելով 2009թ. հունիսին Բոննի և Քյոլնի մի շարք թանգարաններ: Շուրջ 10 թանգարանների գործունեությանը ծանոթանալով համոզվեցինք, բոլորը հատուկ ուշադրություն են դարձնում թանգարանի պրոֆիլից բխող լսարանի տարբեր խավերի համար կրթամշակութային ծրագրեր կազմելուն և իրականացնելուն:

Հավելված 3

Շուրջ չորս տասնամյակ Երևանում գործող Հ. Իգիթյանի անվ. Մանկական ստեղծագործության թանգարանը հանրահռչակում է մանկական արվեստը՝ դիտարկելով այն որպես համաշխարհային արվեստի լիարժեք մաս: Մանկական արվեստի գունեղ ու անկեղծ լեզվով ջնջվում են բոլոր սահմանները, երկրների, ազգերի ու ռասսաների միջև, ավելին՝ այդ արվեստը միավորում է աշխարհը:

Գեղարվեստական, և այլ պրոֆիլի թանգարանների նման Մանկական ստեղծագործության թանգարանն իրականացնում է ֆոնդերի համալրում, պահպանություն, կազմակերպում է մշտական և ժամանակավոր ցուցահանդեսներ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Բայց եթե ավանդական գեղարվեստական թանգարանն իր պատմությունը սկսում է հավաքման և պահպանման գործընթացներով, իսկ ակտիվ ձևերը՝ էքսկուրսիաները, շրջիկ ցուցահանդեսները, դասախոսությունները, գրական-երաժշտական երեկոները

իրականացվում, կատարելագործվում են հետագայում՝ ապա մանկական թանգարանի պատմությունը սկսվում է հակառակ կողմից:

Մանկական ստեղծագործության թանգարանը ձևավորվել է գեղագիտական դաստիարակության ակտիվ ձևերի որոնման արդյունքում: Հենց այդ ակտիվ ձևերին են ենթարկվում ֆոնդերի համալրման, մշտական ցուցադրության և ժամանակավոր ցուցահանդեսների իմաստը: Քանի որ մանկական պատկերասրահի ստեղծումը նախապես ծրագրավորված չէր, և երեխաների հետ գեղագիտական աշխատանքի փորձ Մանկական պատկերասրահը չուներ, ուստի ընտրվեցին երեխաների հետ աշխատանքի այն ձևերը, որոնք գործնականում արդյունավետ էին: Աստիճանաբար աշխատաձևերը համալրվելով ձևավորեցին Մանկական ստեղծագործության թանգարանի կառուցվածքը:

Թանգարանի ցուցադրությունը բաղկացած է երեք բաժնից՝ հայկական, միջազգային և ցուցահանդեսային: Այս բաժնում պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրվում են Գեղագիտութան ազգային կենտրոնի գեղարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ստուդիաների, ինչպես նաև կենտրոնի մասնաճյուղերի՝ Գյումրիի, Վանաձորի, Գորիսի, Մեղրիի, Սևանի ստուդիաների սաները: Թանգարանի մշտական ցուցադրությունն, իր հայկական և միջազգային բաժիններով, ներկայացնում է հայ և աշխարհի 110 երկրներից մանկական ստեղծագործություններ:

Սրահներից մեկում Հովհ. Թումանյանի հեքիաթների թեմաներով գեղանկարների շարքն է, որին հաջորդում է «Սասնա ծռեր» էպոսի նկարազարդումները: Դեկորատիվ-կիրառական արվեստը թանգարանում ներկայացված է բարձրարժեք խեցեգործական շարքերով՝ «Նոյյան Տապան», «Սասնա ծռեր», «Բաբելոնյան աշտարակաշինություն»: Ցուցադրությունում ներկայացված են նաև բատիկայի տեխնիկայով աշխատանքներ աստվածաշնչյան և էպոսի թեմաներով, փայտարվեստի նմուշներ, քարի փորագրություն, գոբելեն, ասեղնագործություն, կարպետ, գորգ, մետաղ և այլն:

Թանգարանի գործունեության բուռն զարգացումը կապված է 1970-1980-ական թվականների հետ: Այս շրջանում Մանկական պատկերասրահը լայն ճանաչում

ունեցավ Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ շնորհիվ երեխաների, դպրոցների, ուսուցիչների հետ ակտիվ աշխատանքի և համագործակցության:

Թանգարանը, իհարկե, առաջնահերթ պետք է ցուցադրի, համակարգի և պահպանի երեխաների ստեղծագործությունները հենց երեխաների համար, բայց առավել կարևոր գործառույթ է երեխաների ստեղծագործական գործընթացի վերահսկումը՝ նրանց ընդհանուր զարգացման և դաստիարակության համար: Գեղարվեստական թանգարանի հետ նմանություններով հանդերձ՝ մանկական թանգարանի հավաքածուների պահպանման և կոորդինացման գործընթացները ունեն իրենց առանձնահատկությունները: Մանկական գեղագիտական կենտրոնը պետք է մշտապես կապ պահպանի հանրակրթական դպրոցների և այլ կրթօջախների հետ, քանի որ դպրոցները, մանկապարտեզները, գեղագիտական, գեղարվեստական խմբակները թանգարանի ֆոնդերի համալրման աղբյուրն են, ինչն էլ ապահովում է ցուցահանդեսային գործունեությունը:

Շատ կարևոր է, որ երեխաները արվեստի և հատկապես իրենց հասակակիցների ստեղծած արվեստի միջոցով կարողանան տեսնել շրջապատող աշխարհը, կարողանան ուրախանալ իրենց ընկերների հաջողություններով, օրինակ վերցնեն՝ հաղթահարելով ստեղծագործական դժվարությունները:

Ցուցադրությունը՝ որպես գեղագիտական միջավայր, մերձեցնում է տարբեր տարիքի, տարբեր ազգության երեխաներին՝ մանկավարժին հնարավորություն տալով լուծել գեղարվեստական դաստիարակության ամենաբարդ խնդիրները:

Մանկական թանգարանի կարևոր խնդիրներից է համագործակցությունը ծնողների և մանկավարժների հետ: Պատկերասրահը կարող է և պարտավոր է օգտագործել ծնողների օգնությունը իրենց իսկ երեխաների հետ գեղագիտական աշխատանքում: Յուրաքանչյուր ծնող բնության թելադրանքով հանդես է գալիս որպես դաստիարակ, ուստի պետք է օգտագործել ծնողների ազդեցությունը երեխաների դաստիարակության և հակառակը՝ երեխաների ստեղծագործություններով «վերադաստիարակել» ծնողներին: Ընտանիքի և դպրոցի ակտիվ օգնությունը թանգարանի գործունեության կարևորագույն խթաններից է:

Այցելությունները թանգարաններ, արվեստանոցներ, հետաքրքիր թեմաներով ընթերցումները կազմում են Մանկական ստեղծագործության թանգարանի բաղկացուցիչ տարրերը, որոնք միտված են մանկավարժական, գեղարվեստական, գեղագիտական խնդիրների լուծմանը: Թանգարանը լայն ճանաչում և համբավ ուներ հատկապես խորհրդային տարիներին՝ սերտ կապեր ունենալով արտասահմանյան և նախկին ԽՍՀՄ ճանաչված թանգարանների և կրթամշակութային այլ օջախների հետ:

Գեղագիտության ազգային կենտրոնի և հատկապես Մանկական ստեղծագործության թանգարանի գործունեությունը նվազում, արգելակվում է խորհրդային կարգերի փլուզումից հետո:

Ինչպես տնտեսության ոլորտում, այնպես էլ մշակույթի ասպարեզում խորհրդային կարգերի փլուզումից հետո ծառացավ ֆինանսական միջոցների անբավարարության խնդիրը: Թանգարանները ևս հայտնվեցին բարդ կացության առջև, քանզի ֆոնդային հավաքածուների և ցուցադրության պահպանությունն ու խնամքը, ինչպես և նոր արժեքներ ձեռք բերելը, որ այս օջախների գործունեության առաջնային առաքելությունն է, դժվար էր իրականացնել նվազագույն ֆինանսավորման պայմաններում: Գեղագիտության ազգային կենտրոնը ևս կանգնեց այս բարդ կացության առջև: Այս անելանելի վիճակը մեծ անդունդ առաջացրեց մինչ այդ սերտ կապեր ունեցող թանգարան-դպրոց, թանգարան-այցելու, թանգարան-երեխա համակարգում: Երկիրը գտնվում էր տնտեսական շրջափակման մեջ և մշակույթի զարգացման մասին խոսք անգամ չէր կարող լինել:

Տարիների ընթացքում, աստիճանաբար դուրս գալով այս վիճակից, արդեն 1990-ական թվականների վերջերին սկսեց աշխուժանալ մշակութային կյանքը՝ իր հետ բերելով նաև նորամուծություններ: Վերակենդանացավ նաև Մանկական ստեղծագործության թանգարանը: Վերահաստատվեց համագործակցությունը Մանկական ստեղծագործության թանգարանի և արտասահմանյան նմանատիպ օջախների միջև:

Հավելված 4

Թանգարանային հսկիչների ուսուցում-վարժանք

2014թ. հուլիսի 21-ին Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտը (Դի-վի-վի ինթերնեյշնալ կազմակերպության մասնաճյուղը Հայաստանում), ԻԿՕՄ Հայաստանի ազգային կոմիտեն և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի թանգարանների 18 հսկիչների համար Գյումրիում կազմակերպեցին վերապատրաստման ծրագիր: Դասընթացը վարեց ԻԿՕՄ Հայաստանի ազգային կոմիտեի խորհրդի անդամ, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի կրթական ծրագրերի համակարգող, Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկաժարժական համալսարանի թանգարանի տնօրեն, Թանգարանագիտության ամբիոնի դասախոս Ա. Գրիգորյանը:

Մասնակիցներին ներկայացնելու համար ընտրված էր հետաքրքիր ձև. նրանցից յուրաքանչյուրը ներկայանալով պատասխանում էր նախապես ընտրված հարցերին, որի ընթացքում բացի անձնական տվյալներից բացահայտվում էին մասնագիտական պարտականությունների, հետաքրքրությունների և անձնական փորձի վերաբերյալ մասնակիցների աշխատանքային առանձնահատկություններն ու պատկերացումները:

Ուսուցում-վարժանքի ընթացքում ներկայացվեցին թանգարանային հսկիչի պարտականությունները, այցելուների և թանգարանի աշխատակիցների վարքագծի կանոնների պահպանումը, այցելուների սպասարկման հետ կապված հարցեր, մասնագիտական տեսանկյունից կարևոր որակների շարքին դասվող առանձնահատկությունները: Դասընթացն ավարտվեց խմբային աշխատանքով:

Ծրագիրը կրեց շարունակական բնույթ և 2014թ. հոկտեմբերի 29-ին և դեկտեմբերի 22-ին այն իրականացվեց նաև Երևանի թանգարանների աշխատողների համար:

Հավելված 5

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի «Մի իրի պատմություն» կրթական ծրագիր

2011թ. հունիսի 1-ին Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի և Արմավիրի մարզպետարանի մշակույթի և կրթության վարչության հետ համատեղ կազմակերպվեց «Մի իրի պատմություն» կրթական ծրագիրը: Արմավիր քաղաքի 6-րդ, Նորավանի, Սարդարապատի, Լենուղու, Այգևանի դպրոցների աշակերտները գրել են «Մի իրի կամ լուսանկարի պատմություն» խորագրով շարադրություն: Դպրոցականների կողմից հավաքված և թանգարանին ժամանակավորապես ի պահ տրված 50 պատմամշակութային առարկաներով իրականացվել է ցուցադրություն, որի բացմանը որպես փորձագետ մասնակցել է ատենախոսը և գնահատել կատարված կրթական միջոցառումը:

Հավելված 6

2009թ. հունվարի 22-ին մեկնարկեց Եվրոպական Հանձնաժողովի «Ներդրումներ մարդկանց մեջ՝ Տեղական մշակույթի մատչելիություն, մշակութային բազմազանության պաշտպանություն և առաջքաշում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Տաղտկությունից, փոշուց և քայքայումից այն կողմ – Թանգարանները՝ որպես հարատև կրթության ուսումնական տարածքներ, ինտելեկտուալ երկխոսության համար» նախագիծը: Այն տարածաշրջանային է և իրականացվել է Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում՝ 30 ամսում: Այն իրականացվում է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (dvv-international) կողմից հետևյալ 8 կազմակերպությունների հետ համատեղ՝ Հայաստանի թանգարանների և բարեկամների ասոցիացիա, Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն (SECND), Ադրբեջանի թանգարանների միջազգային խորհրդի պետական կոմիտե

(ICOM), Ադրբեջանի գորգերի և կիրառական արվեստի պետական թանգարան, Վրաստանի թանգարանների ընկերների միություն (GNMFA), Վրաստանի մեծահասակների կրթության ասոցիացիա (AEAG), Ավանդական արվեստների կենտրոն (Ռուսաստան, Տոսնո), Կարելական մշակույթի կենտրոն (Պետրոզավոդսկ, Ռուսաստան):

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) կողմից: Ծրագրի բյուջեն կազմում է 550.000 եվրո:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. հզորացնել միջմշակութային երկխսությունը և առաջ տանել մշակութային և էթնիկ բազմազանության գաղափարները Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Ռուսաստանում մեծահասակների կրթության միջոցով՝ տեղական տարածաշրջանային և միջազգային մակարդակներով:
2. Խթանել արվեստների հանգուցային դերը, որպեսզի իրենց ավանդը ներդնեն սոցիալական ներգրավվածության և երկխոսության գործընթացում՝ ծրագրի անդամ երկրներում թանգարանների և այլ մշակութային հիմնարկների և հասարակությանը ծառայություններ մատուցող այլ հաստատությունների ակտիվ համագործակցության միջոցով:

Հատուկ նպատակն է՝ հասնել Կովկասյան տարածաշրջանի և Ռուսաստանի մշակութային և կրթական հաստատությունների կարողությունների հզորացմանը: Սա իրագործվելու է մեծահասակների կրթության առանցքային հայեցակարգերի օգտագործման միջոցով, թանգարանները վերածելով հարատև կրթության ակտիվ տարածքների: Ծրագիրը ավելի կնպաստի թանգարանների արհեստավարժությունը և ինտելեկտուալ կարողությունը, կակտիվացնի թանգարանների մասնակցությունը սոցիալական կրթական գործընթացներին: ԵՄ-ի և թիրախային տարածաշրջանների թանգարանների միջև կապեր կհաստատվեն և կամրապնդվեն: Ծրագրի շրջանակներում պլանավորվում են մի շարք հատուկ միջոցառումներ, իֆչպիսիք են՝ ընտրված թեմաների շուրջ խորհրդատվությունը, ընդգրկված են խորհրդատուներ

ինչպես հարևան, այնպես էլ Եվրամիության երկրներից, “Ուսուցանողի ուսուցանում” (TOT), դասընթացների, կրթական միջոցառումների կազմակերպում, թանգարանների ընկերների ցանցի ընդլայնում, ուսուցողական այցեր ԵՄ երկրներ, ցուցահանդեսներ և դասախոսություններ ԵՄ-ում, վիրտուալ ցուցահանդեսների և ինտերնետ կայքերի զարգացում:

Հավելված 7

Հայաստանի Հանրապետությունում գործող համալսարանական թանգարանների ցանկ

1. Երևանի պետական համալսարանում՝ ԵՊՀ պատմության թանգարանը, որին 1998-ին միացավ նաև ԵՊՀ հնագիտության և ազգագրության թանգարանը՝ որպես առանձին բաժին
2. Մ. Հերացու անվան բժշկական համալսարանում՝ Հայ բժշկության պատմության թանգարանը, Անատոմիական թանգարանը
3. Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում՝ ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի պատմության թանգարանը
4. Ագրարային համալսարանում՝ Ակադեմիայի պատմության թանգարանը, Մորֆոլոգիայի և ծննդագիտության ամբիոնին կից՝ Անատոմիական գիտաուսումնական թանգարանը, Շախմատի թանգարանը (հիմնադրվել է 2001 թվականին)
5. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պատմության թանգարանը (հիմնադրվել է 1997 թվականին)
6. Զինվորական ակադեմիայի պատմության թանգարանը (հիմնադրվել է 2004 թվականին)
7. Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի թանգարանը (հիմնադրվել է 2012 թվականին)

Հավելված 8

ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեն և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան նախաձեռնել են սույն սոցիոլոգիական հետազոտությունը պարզելու համար թանգարանային կրթական ծրագրերի վիճակն ու զարգացման միտումները Հայաստանի թանգարաններում: Պարզել, թե ինչ բնույթի կրթական ծրագրեր են իրանացվում մեր թանգարաններում և ինչ լսարանի համար, կամ եթե չեն իրականացվում ապա ինչ պատճառով: Լրացնելով այս հարցաթերթիկը դուք աջակցում եք ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեին և Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիային առավել նպատակաողղված և արդյունավետ աշխատանքներ ծավալելու թանգարանային կրությունը խթանելու ուղղությամբ:

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Կազմակերպության անվանումը - Հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարան

հասցե - Երևան, Տիգրան Մեծ, 17.

հեռ. +374 10 51 61 57 , +374 91 94 18 74

էլ-փոստ aspumuseum@gmail.cqm

Կազմակերպության ղեկավարի անուն, ազգանուն - Ալվարդ Գրիգորյան

Գիտական աշխատակազմի քանակը - 3

1. Որքանո՞վ եք կարևորում կրթական ծրագրերի դերը թանգարանի գործունեության մեջ:

+բարձր □ մասամբ □ չեմ կարևորում.

2. Որքանո՞վ եք կարևորում թանգարանի կրթական դերը հասարակության առաջընթացի գործում:

+չափազանց □ մասամբ □ կարևոր չի

3. Ձեր թանգարանում իրականացվում ե՞ն կրթական ծրագրեր:

+այո □ ոչ

Եթե այո՝ ինչպիսի՞:

□ թեմատիկ էքսկուրսիաներ

+դասախոսություններ

□ խաղ-էքսկուրսիաներ

+կրթաճանաչողական այցեր

□ ինտերակտիվ կրթական ծրագրեր

+մշակութային միջոցառումներ

□ այլ_____

4. Ովքե՞ր են իրականացնում թանգարանային կրթական ծրագրեր Ձեր թանգարանում:

□ թանգարանային մանկավարժ

□ էքսկուրսավար

□ հոգեբան

+ գիտաշխատող

□ կամավոր

□ այլ_____-

5. Քանի՞ աշխատակից է ներգրավված կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման աշխատանքում Ձեր թանգարանում:

6. Ո՞ր թիրախային խմբերի համար ունեք կրթական ծրագրեր:

□ դպրոցականներ

+ ուսանողներ

□ մեծահասակներ

□ զբոսաշրջիկներ

□ մասնագիտական խմբեր……

Խնդրում ենք նշեք՝ հատկապես ո՞ր մասնագիտության, եթե այդպիսիք կան:

" Հատուկ կարիքներ ունեցողներ /հաշմանդամներ/

□ այլ……

Գնահատեք թանգարանային կրթական ծրագրերի զարգացման հիմնական խոչընդոտները.

Մասնագետների պակասը +

Տեղեկատվության պակասը (այդ թվում մասնագիտական գրականության) +

Հասարակության վերաբերմունքը +

Ֆինանսների բացակայությունը +

Թանգարանի աշխատակազմի վերբերմունքը +

այլ.

ըստ ներկայացված սանդղակի. ամենաքիչը՝ 1-ը ամենաշատը՝ 5-ը

7. Ի՞նչ է անհրաժեշտ կրթական գործունեությունը Ձեր թանգարանում զարգացնելու համար:

Կարող եք նշել մի քանի տարբերակ

□ Թանգարանային մանկավարժի առկայությունը

+առկա կադրերի վերապատրաստում

+Ֆինսական միջոցներ

□ Փորձի փոխանակում

□ Գիտակրթական բաժնի ստեղծում

□ այլ……

8. Խնդրում ենք առկայության դեպքում ներկայացնել 2009-2010թթ. ընթացքում Ձեր թանգարանում իրականացված կրթական ծրագրերի ցանկը:

- Բուհի Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողներին պարբերաբար ծանոթացրել ենք թանգարանային բնագավառում աշխարհի առաջատար փորձին:

- Տարբեր ֆակուլտետների ուսանողներին ծանոթացրել ենք բուհի պատմությանը:

- Կազմակերպել ցուցահանդես-դասախոսություն, նվիրված Մեծ եղեռնի 90-ամյակին:

Հարցաթերթիկը լրացնողի անուն, ազգանուն, պաշտոն

ՀՊՄՀ թանգարանի տնօրեն՝ Ալվարդ Գրիգորյան

Հավելված 9

Ե. Չարենցի անվ. արվեստի և գրականության թանգարանում իրականացված «Թանգարան-դաստիարակություն» և «Առաջադրանքներ թանգարանում» կրթական ծրագրերի բնութագիրը

Կրթական ծրագիրն իրականացվել է 2006թ. ապրիլի 8-ին: Դաս-էքսկուրսիային մասնակցում էին Երևանի թիվ 50 դպրոցի 5-րդ դասարանի 15 աշակերտներ: Ծրագրի նպատակն էր երեխաներին թանգարանի ցուցադրությունը ներկայացնել հարց ու պատասխանի, հանձնարարությունների և առաջադրանքների միջոցով: Բացի այդ երեխաներին ծանոթացրեցին նաև թանգարանի վարվելակարգի կանոններին: Ստացած գիտելիքները ստուգելու և այցն ամփոփելու նպատակով, սեղանին նախօրոք դրված կարմիր (բացասական պատասխան) և կանաչ (դրական պատասխան) տուփերի մեջ երեխաները պիտի դնեին հարցերի պատասխանները: Հարցերը կազմված էին թանգարանի վարվելակարգի թեմայի շրջանակներում՝ ի՞նչ կարելի է անել և ի՞նչ չի կարելի: Երեխաների հետ խաղն այսքանով չավարտվեց: Երեխաներին առաջարկեցին առանձնացնել հայտնի 5 մարդկանց անուններ և գտնել, թե նրանց վերաբերյալ նյութերը ցուցադրության որ հատվածում են ներկայացված: Նրանք առաջինը գտան Հովի. Թումանյանին հատկացված հատվածը: Երեխաներին առաջարկեցին արտասանել Թումանյանի ստեղծագործություններից հատվածներ, իսկ աշակերտուհիներից մեկը արտասանեց իր գրած բանաստեղծությունը և պատմեց «Նախանձիկը» հեքիաթը: Հանդիպման ավարտին պարզ դարձավ, որ մասնակիցները լավ են յուրացրել նյութը, քանի որ նրանք ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում դաս-էքսկուրսիայի ընթացքում:

Դասընթացի վերջում իրականացվեց աշխատանքի գնահատում մասնակիցների հարցման միջոցով:

Հավելված 10

Աղյուսակ 1

Հարցախույզին մասնակցել է ՀՀ 70 թանգարան, որոնցից ըստ մարզերի.

Երևան	37
Շիրակ	7
Լոռի	5
Արմավիր	3
Վայոց Ձոր	2
Արագածոտն	1
Սյունիք	6
Գեղարքունիք	1
Տավուշ	5
Կոտայք	2
ՊՄԱԹ և ՊՄՊ / Գառնի, Զվարթնոց, Գլաձոր	1

Աղյուսակ 2

Ըստ գերատեսչական ենթակայության

Մշակույթի նախարարություն	29
ՀՀ կրթ. և գիտ. նախարարություն	3, որից 2-ը՝ բուհական
ՀՀ բնապահպանության նախարարություն	2
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	1
ՀՀ պաշտպանության նախարարություն	2
ՀՀ ԳԱԱ	2
Երևանի քաղաքապետարան	5
Գյումրու քաղաքապետարան	3
Էջմիածնի քաղաքապետարան	2
Պետական հովանավորությամբ	1 (մշ. նախ.)
Մարզային	5
Համայնքային	9
Կենտրոնական բանկ	1
Արմենտել	1
Հին Դիլիջան հյուրանոցային համալիր	1

Աղյուսակ 3

Ի՞նչ տարածքային հնարավորություններ ունի թանգարանը

	Հայաստանի Հանրապետության 70 թանգարաններ	Որից 37-ը Երևանի թանգարաններն են
Հատուկ տարածք կրթական ծրագրեր իրականացնելու համար	20	12
Մշտական ցուցադրություն	59	31
Ժամանակավոր ցուցասրահ	35	16
Միջոցառումների դահլիճ	32	18
Մոտակա այգի	24	9
Ներքին բակ	29	13
Պուրակ	17	7
Հուշարձան	19	8

Կրթական ծրագրերի իրականացնելու համար հատկացված հատուկ տարածք ունեն միայն 20 թանգարան (12-ը Երևանում): Թանգարանների մեծ մասը՝ 59 թանգարան, այդ նպատակով օգտագործում է մշտական ցուցադրությունը, 35 թանգարան՝ ժամանակավոր ցուցասրահները, միջոցառումների դահլիճը՝ 32 թանգարան, կրթական ծրագրերը անցկացվում են նաև բացօթյա տարածքներում՝ 29 թանգարանի ներքին բակում, 24 թանգարան՝ մոտակա այգում, 17 թանգարան՝ մոտակա պուրակում, 19 թանգարան՝ մոտակա հուշարձանի մոտ: Որպես լրացուցիչ տարածք, որը հնարավորություն է տալիս կրթական գործունեություն իրականացնել, թանգարանները նշում են խաղասրահ, կինոսրահ, բացօթյա տարածք դասախոսությունների համար՝ վերանորոգման դեպքում (Երկրաբանական թանգարան), թանգարանի գրադարան, հանդիպումների սրահ (Կարեն Դեմիրճյանի թանգարան), Ինտերակտիվ ուսումնական կենտրոն՝ գրադարան-ընթերցասրահ («Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամ), «Վիրտուալ Մատենադարան» ցուցասրահ (Մատենադարան), շրջիկ ցուցահանդեսներ մարզերում (Ալ. Թամանյանի թանգարան-

ինստիտուտ), նկուղ (Դ. Դեմիճյանի տուն-թանգարան), դպրոցներ, շրջանների մշակույթի պալատներ, բուհեր (Ե. Չարենցի տուն-թանգարան), դպրոցներ, գեղ. կենտրոններ (Ավ. Իսահակյանի տուն-թանգարան), դպրոց, մշակույթի պալատ, գյուղական դպրոց (Կապանի երկրագիտական թանգարան), նկուղ (Հովի. Շիրազի հուշատուն-թանգարան), արտաքին բակ (Վանաձորի կերպարվեստի թանգարան), բեմահարթակ՝ բեմականացումների և տիկնիկային ներկայացումների համար, պարային կատարումների համար, դահլիճ՝ կինոդիտումների, շնորհանդեսների համար, այգին՝ պլեներների համար (Վանաձորի Ստ. Զորյանի թանգարան), Ստեղծագործողի տուն (Զվարթնոց պատմամշակութային արգելոց-թանգարան):

Աղյուսակ 4

Ի՞նչ տեխնիկական հնարավորություններ ունի թանգարանը

Համակարգչային տեխնիկա	60	35
պրոյեկտոր	35	26
հեռուստացույց	38	20
CD/DVDնվագարկիչ	38	26
թվային ֆոտո/տեսախցիկ	33	18
Բարձրախոս	24	20
Ինտերնետ կապ	53	32

Թանգարաններից 53-ը՝ ինտերնետ կապով (32-ը Երևանում): Հեռուստացույց և CD/DVD նվագարկիչ ունեն 38 թանգարաններ, պրոյեկտոր 35, թվային ֆոտո/տեսախցիկ՝ 33, բարձրախոս՝ 24 թանգարանները: Թանգարանների տեխնիկական հագեցվածության վերաբերյալ բաժնում լրացուցիչ նշվում է՝ էլեկտրոնային կրպակներ (Մշակույթի նախարարության թանգարաններ), էկրան (Կապի թանգարան), հպազգայուն էկրան (ՀՀ ԿԲ այցելուների կենտրոն, ՀՊՄՀ թանգարան), լսողական ուղեցույց, տեսաձայնային համակարգ (Կոմիտասի թանգարան ինստիտուտ), աուդիոգիդ (Ե. Քոչարի թանգարան):

Աղյուսակ 5

Որքանո՞վ եք կարևորում կրթական ծրագրի դերը թանգարանային գործունեության մեջ

Խիստ կարևորում եմ	47	29
Կարևորում եմ	22	8

Թանգարանների մեծ մասը՝ 48 թանգարան, խիստ կարևորում է կրթական ծրագրի դերը թանգարանային գործունեության մեջ, 22 թանգարան՝ կարևորում է:

Աղյուսակ 6

Ձեր թանգարանում իրականացվու՞մ են կրթական ծրագրեր

Այո	65	36
Ոչ	5	1

Կրթական ծրագրեր իրականացվում են 65 թանգարաններում, իսկ 5 թանգարաններում (Ս. Փարաջանովի թանգարան, Մարտունու պատկերասրահ. ՀԱՊ մասնաճյուղ, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Գորիսի երկրագիտական թանգարան, Թուֆենկյան «Եսայան» թանգարան) չեն իրականացվում:

Աղյուսակ 7

Եթե այո, ինչպիսի՞

թեմատիկ էքսկուրսիա	61	36
Դասախոսություն	52	31
Խաղ-էքսկուրսիա	33	21
Կրթաճանաչողական այց	47	27
Տոներ	31	15
Թեմատիկ ակումբ	6	3
Համերգ	39	21

Կինոդիտում	35	19
Գրական երեկո	25	13
Փառատոն	15	7

Թեմատիկ էքսկուրսիա իրականացվում է 61 թանգարաններում, դասախոսություն՝ 52, կրթաճանաչողական այց՝ 47, համերգ՝ 39, կինոդիտում՝ 35, տոներ՝ 31, գրական երեկո՝ 25, փառատոն՝ 15, թեմատիկ ակումբ՝ 6 թանգարաններում: Ի լրումն այս ցանկին նշվում են՝ 'թանգարանային գիշեր' միջազգային ակցիա, մրցույթ ցուցահանդեսներ, վարպետաց դասեր, մրցույթ-վիկտորինաներ, հոբելյաններ, շնորհանդեսներ, ինտերակտիվ ինտելեկտուալ խաղեր, վարպետության ցուցադրություն (փայտ, խեցեգործություն, կարպետագործություն, ավանդական տիկնիկագործություն) ուսուցողական գործնական պարապմունք, փայտ-փորագրություն, համերգ-դասախոսություն, զրույց-հանդիպում, բաց դասեր, գրական-երաժշտական ցերեկույթներ, ցուցահանդեսներ, շրջիկ ցուցահանդեսներ, ուսանողների պրակտիկա, մշակութային պատանեկան ճամբարներ, թատերական ներկայացում, տիկնիկային բեմադրություն:

Աղյուսակ 8

Ի՞նչ միջոցներով /ճանապարհով/ եք տարածում տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ

Կայք էջ	36	27
Սոցիալական ցանց	48	28
ԶԼՄ-ներ	43	25
Տեղեկատվական թերթիկներ	34	16
Ծանոթներ	50	29
Էլեկտրոնային նամակագրություն	40	27

Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը թանգարանները տարածում են ամենաշատը ծանոթների միջոցով՝ 50 թանգարան, ապա նաև՝ սոցիալական ցանցով՝

48, ԶԼՄ-ներով՝ 43, էլեկտրոնային նամակագրությամբ՝ 40, կայքով՝ 36, տեղեկատվական թերթիկներով՝ 34: Տեղեկությունները տարածելու համար նաև օգտագործվում է հեռախոսակապը, ազդագիրը, հրավիրատոմսը, գովազդը, բուկլետը, պաստառը, այցեր՝ դպրոցներ, ԲՈՒՀ-եր, ծերանոց, մանկատուն, տարածվում է մշակույթի բաժնի կոորդինատորի միջոցով, կրթական ծրագրերի մասնակիցների, այցելուների հետ անմիջական հաղորդակցության միջոցով, ինչպես նաև այլ կայքերի (dasaran.am, mincult.am) միջոցով:

Աղյուսակ 9

Ի՞նչ ֆինանսական միջոցներով է թանգարանն իրականացնում կրթական ծրագրեր

Միջոցառումների համար նախատեսված գումարներ	15	12
Արտաբյուջե	20	15
Պետական սուբսիդիա	20	12
Հովանավորներ, աջակիցներ	17	8
Եկամուտներ իրականացրած կրթական ծրագրերից	6	2

Կրթական ծրագրեր իրականացնելու համար թանգարանները ֆինանսական միջոցներ տրամադրում են արտաբյուջեից՝ 20 թանգարան, պետական սուբսիդիայից՝ 20 թանգարան, միջոցառումների համար նախատեսված գումարներից՝ 15 թանգարան: 17 թանգարանի կրթական ծրագրեր իրականացվում են հովանավորների, աջակիցների տրամադրած ֆինանսական միջոցներով և միայն 6 թանգարան է, որ կրթական ծրագրերի համար օգտագործում է իրականացրած կրթական ծրագրերի եկամուտները (Մ. Սարյանի թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան: Վանաձորի կերպարվեստի թանգարան, Վանաձորի Ստ. Զորյանի թանգարան: Թանգարանները՝ որպես ֆինանսական միջոց նշված տարբերակներին ավելացնում են նաև տարբեր

դրամաշնորհները, կամավոր հիմունքներով տրամադրված գումարները, այդ թվում նաև՝ աշխատակիցների, անգամ փորձում են գումար չծախսելով՝ անվճար կազմակերպել (Հ. Շարամբեյանի անվ. ժող. ստեղծ. կենտրոն):

Աղյուսակ 10

Որո՞նք են թանգարանի կրթական գործունեության իրականացման խոչընդոտները

Անբավարար ֆինանսավորում	48	24
Մասնագետ կադրերի պակաս	23	11
Հատուկ հաստիքի բացակայություն	26	16
Մեթոդական գրականության պակաս	19	6
Տարածքային ոչ բավարար պայմաններ	26	15
Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակաս	24	11
Տրանսպորտային խնդիրներ	27	16

Անբավարար ֆինանսավորում 48

Մասնագետ կադրերի պակաս 23

Հատուկ հաստիքի բացակայություն 26

Մեթոդական գրականության պակաս 19

Տարածքային ոչ բավարար պայմաններ 26

Կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակաս 24

Տրանսպորտային խնդիրներ 27

Ներկայացված տվյալների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ թանգարանների կրթական գործունեությանը հիմնականում խոչընդոտում է ֆինանսական միջոցների բացակայությունը կամ անբավարար ֆինանսավորումը, ապա՝ առկա տրանսպորտային խնդիրները, ինչպես նաև՝ հավասարապես՝ հատուկ հաստիքի բացակայությունը և տարածքային ոչ բավարար պայմանները, որոնցից հետո չնչին տարբերությամբ՝ կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության և

մասնագետ կադրերի պակասը: Խոչընդոտների շարքում վերջին տեղում է մեթոդական գրականության պակասը: Սակայն անչափ կարևորվում են նաև թանգարանների տեխնիկական հագեցվածությունը, որի ապահովման ոչ պատշաճ մակարդակը նույնպես արգելակում է թանգարանների կրթական ծավալուն գործունեությունը: Փարաջանովի թանգարանը այս առումով նշում է աշխատակազմի փոքրաթիվ կազմը, իսկ Կ. Դեմիրճյանի թանգարանը օրենսդրական դաշտի անկատարությունը և թանգարանների մասին օրենքի բացակայությունը:

Աղյուսակ 11

Կրթական ծրագրեր ստեղծելիս ո՞ր երկրի կամ թանգարանի փորձով եքառաջնորդվում

Ամերիկյան	13	10
Եվրոպական	30	19
Ռուսական	30	19
Հայկական	36	15

Կրթական ծրագրեր կազմելիս ո՞ր երկրի կամ թանգարանի փորձով եք առաջնորդվում, թանգարանները հիմնականում առանձնացրել են հայկականը (36), ապա՝ եվրոպականը և ռուսականը (30), այնուհետև՝ ամերիկյանը (13): Լրացուցիչ նշվում է, որ ոչ միայն համադրվում է, այլև առաջնորդվում են տարիների ընթացքում ձեռք բերած սեփական փորձով, ուսումնասիրում են այլ երկրներինը, ստեղծում՝ սեփականը, այսինքն՝ կրթական ծրագրերը հարմարեցվում են տեղի լսարանին:

Աղյուսակ 12

Կազմու՞մ եք կրթական ծրագիրը վարելու հայեցակարգ և նկարագրություն

Այո	48	31
Ոչ	21	6

Կարևոր է նշել, որ թանգարաններից 48-ը պարտադիր, նախօրոք կազմում են կրթական ծրագիրը վարելու հայեցակարգ և նկարագրություն:

Աղյուսակ 13

Ի՞նչ մասնագիտություն ունեցող աշխատակիցներ են մասնակցում կրթական ծրագրեր կազմելու գործին

Թանգարանագետ	33	21
Մանկավարժ	46	20
Հոգեբան	16	8
Արվեստաբան	27	17
Մշակութաբան	16	14
Պատմաբան	29	15
Գրականագետ	16	10
Հնագետ	12	11
Բանասեր	30	16
Երաժշտագետ	13	8
Նկարիչ	24	11
Կրթական ծրագրեր իրականացնող հատուկ աշխատակիցների քանակը	107	64

Կրթական ծրագրեր կազմելուն մասնակցած աշխատակիցների մեծ մասը մասնագիտությամբ մանկավարժ են (46 թանգարան), թանգարանագետ (33), բանասեր (30), այնուհետև ըստ նվազման կարգի՝ պատմաբան (29), արվեստաբան (27), նկարիչ (24), առավել փոքր թիվ են կազմում մշակութաբանները, գրականագետները, հոգեբանները (16), երաժշտագետները (13) և հնագետները (12): Կախված թանգարանի բնույթից՝ կրթական ծրագրերի ստեղծմանը մասնակցում են նաև մասնավորապես դրամագետ, տնտեսագետ (ՀՀ ԿԲ այցելուների կենտրոն), գեոէկոլոգ, երկրաբան (Երկրաբանական թանգարան), ճարտարապետ, քաղաքաշինարար (ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ), աշխարհագրագետ, կենսաբան (ՀՀ Հայաստանի բնության պետական թանգարան), տուրիզմի մասնագետ (Ա. Խաչատրյանի տուն-թանգարան), անկախ թանգարանի

բնույթից՝ բնագետ և դիվանագետ աշխատակիցներ ունեն համապատասխանաբար Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը և Պ. Պռոշյանի տուն-թանգարանը, իսկ ՀՊՄՀ թանգարանը կրթական ծրագրերի ստեղծման գործընթացում ներգրավում է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց՝ համագործակցելով համալսարանի բոլոր ֆակուլտետների հետ:

Աղյուսակ 14

Ի՞նչ հաստիքով են աշխատում թանգարանում

Էքսկուրսավար	21	8
Գիտաշխատող	27	15
Ֆոնդապահ	13	6
Հրավիրված մասնագետ Հոգեբան	8	3
Հրավիրված մասնագետ Սոցիոլոգ	4	2
Հրավիրված մասնագետ մանկավարժ	9	2

ՀՀ 70 թանգարաններն ունեն կրթական ծրագրեր իրականացնող ընդհանուր թվով 107 աշխատակիցներ, որոնց մեծ մասը աշխատում են որպես գիտաշխատող (27 թանգարան) և էքսկուրսավար (20 թանգարան), ավելի քիչ՝ որպես ֆոնդապահ: Կրթական ծրագրեր իրականացնելու համար որոշ թանգարաններ հրավիրում են այլ մասնագետների՝ մանկավարժ (9 թանգարան), հոգեբան (8 թանգարան), սոցիոլոգ (4 թանգարան): Շատ թանգարաններ առանձնացնում են նաև հանրահռչակման բաժնի վարիչի, հասարակայնության հետ կապերի մասնագետի, թանգարանային համագործակցության համակարգողի հաստիքներով աշխատակիցներին: Հաճախ ծրագրերին մասնակցում են նաև տնօրենը, փոխտնօրենը, երբեմն՝ թանգարանի այլ աշխատակիցներ: Հրավիրյալ մասնագետների առումով թանգարանները ընդգրկում են

նաև՝ արվեստաբան, նկարիչ (ժամանակակից արվեստի թանգարան), հին ազգագրական խաղերի մասնագետներ, կերպարվեստի համադրողներ, համայնքային արվեստի փորձագետներ (Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան), նկարիչ, քանդակագործ, թանգարանագետ, պատմաբան, արվեստաբան (Վանաձորի կերպարվեստի թանգարան): Որոշ թանգարաններ ընդգրկում են նաև կամավորների, ինչպես օրինակ՝ Միեր Մկրտչյան թանգարանը:

Աղյուսակ 15

Ունե՞ք արդյոք պարբերաբար իրականացվող կրթական ծրագրեր

Այո	49	29
Ոչ	21	8

Թանգարաններից 49-ը ունեն պարբերաբար իրականացվող կրթական ծրագրեր:

Աղյուսակ 16

Ի՞նչ պարբերականությամբ եք իրականացնում կրթական ծրագրերը

Շաբաթական մեկ անգամ	10	6
Ամիսը մեկ -երկու անգամ	15	9
Սեզոնային	33	18
Պատվերով	23	18

Դրանք իրականացվում են հիմնականում սեզոնային (33 թանգարան) և պատվերով (23 թանգարան), 15 թանգարան ունի ամիսը մեկ անգամ իրականացվող և 10 թանգարան՝ շաբաթը մեկ անգամ իրականացվող ծրագրեր: Կան նաև ամենօրյա և տարեկան մեկ-երկու անգամ իրականացվող ծրագրեր (ԿԲ այցելուների կենտրոն), օրական մի քանի ծրագիր՝ «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամ, կախված ծրագրի առանձնահատկությունից՝ եռամսյա, մեկօրյա, Փայտարվեստի թանգարան, տարեկան՝ թանգարանային գիշերվա ծրագրեր Ա. Խաչատրյանի տուն-թանգարան:

Աղյուսակ 17

Նշեք 2013-2014թթ. ընթացքում իրականացված կրթական ծրագրերի

Ընդհանուր քանակը	3787	3416
Մասնակիցների ընդհանուր թիվը	122172	104801

Ո՞ր տարիքային խմբերին են ուղղված կրթական ծրագրերը

3-5 նախադպրոցական	21	13
6-9 կրտսեր	24	16
10-14 միջին	54	30
15-17 ավագ	57	30
18-25	54	33
25-45	35	21
45-65	26	17
65-ից բարձր	27	19

Թանգարաններում իրականացվող կրթական ծրագրերը հիմնականում ուղղված են 15-17 ավագ (57թանգարան), 10-14 միջին (54թանգարան), 18-25 (54թանգարան) խմբերին, 25-45 (35 թանգարան), 65-ից բարձր (27 թանգարան), 45-65 (26 թանգարան), 6-9 կրտսեր (24 թանգարան), 3-5 նախադպրոցական (21 թանգարան):

Աղյուսակ 18

Ովքե՞ր են ձեր պարբերական կրթական ծրագրերի մասնակիցները

նախադպրոցականներ	20	11
դպրոցականներ	62	30
ուսանողներ	62	36
Ընտանիքներ	22	10
սահմանափակ կարողություններով խմբեր	25	13
ազգային փոքրամասնություններ	8	4
մանկատան սաներ	20	10
զինվորականներ	22	11
ծերերի տուն-ինտերնատի բնակիչներ	14	7
Զբոսաշրջիկներ	27	13

62 թանգարան նշել է, որ իր պարբերական կրթական ծրագրերի հիմնական մասնակիցները դպրոցականներն ու ուսանողներն են, ավելի քիչ՝ զբոսաշրջիկները (27 թանգարան), սահմանափակ կարողություններով խմբեր՝ (25 թանգարան), ընտանիքներ (22 թանգարան), 20 թանգարան նշել է նախադպրոցականներ և մանկատան սաներ, 14 թանգարան՝ ծերերի տուն-ինտերնատի բնակիչներ, 8 թանգարան՝ ազգային փոքրամասնություններ:

Որպես այլ տարբերակ թանգարանները նշել են՝

- գիտնականներ, համալսարանի հյուրեր
- գիտաշխատողներ
- ուսուցիչներ, ուսումնական հաստատությունների աշխատակազմի աշխատակիցներ (դասախոսներ, բաժնի ղեկավարներ)
- արվեստագետներ, արվեստաբաններ
- մարզային ծրագրերի ժամանակ տեղացիներ՝ տարբեր տարիքի
- ժողհամալսարանի խումբ
- թոշակառուներ
- գիշերօթիկ դպրոցի սաներ
- օտարերկրյա կամավորներ, ճամբարականներ

Աղյուսակ 19

Ի՞նչ եղանակով եք ուսումնասիրում լսարանի պահանջները

Սոցիոլոգիական հարցում	20	15
Բանավոր հարցազրույց	57	32
Դիտում	25	18
տպավորության գրքի ուսումնասիրություն	37	24
սոցիալական էջերի տվյալների վերլուծություն	27	17
կայքէջի օգտագործման արդյունքների վերլուծություն	17	13

Ինչ եղանակով եք ուսումնասիրում լսարանի պահանջները հարցին թանգարանների մեծ մասը՝ 57-ը, նշել է բանավոր հարցազրույցը, ապա՝ տպավորության գրքի ուսումնասիրությունը՝ 37, փոքր-ինչ տարբերությամբ՝

սոցիալական էջերի տվյալների վերլուծություն (27) և դիտում (25), սոցիոլոգիական հարցման միջոցով իր լսարանի պահանջները ուսումնասիրում է 20 թանգարան, կայքէջի օգտագործման արդյունքների վերլուծության դիմում է 17 թանգարան: Ուսումնասիրվում են նաև աուդոգիդ ծառայության վիճակագրական տվյալները (ՀՊՄՀ թանգարան), եզրակացություններ են արվում տարբեր հանդիպումներից, ինչը նպաստում է հասկանալ, որ տվյալ ծրագիրը պահանջված է (ժամանակակից արվեստի թանգարան):

Աղյուսակ 20

Ի՞նչ եղանակով եք իրականացնում կրթական ծրագրերի գնահատումը

մասնակիցների կարծիքներ, տպավորություններ	56	31
բանավոր զրույցներ	51	24
ուսուցչի կամ ծնողի կարծիք	49	28
մամուլի արձագանք	32	17
սոցիալական ցանցերի արձագանք	36	22
այցելության հաճախականության ավելացում	42	26
հատուկ մասնագետի դիտում և վերլուծություն	18	10

Կրթական ծրագրերի գնահատումը իրականացնելու համար հաշվի են առնվում մասնակիցների կարծիքները, տպավորությունները (56), բանավոր զրույցները (51), ուսուցչի կամ ծնողի կարծիքը (49), այցելության հաճախականության ավելացումը (42), սոցիալական ցանցերի արձագանքը (36), մամուլի արձագանքը (32) և վերջում՝ հատուկ մասնագետի դիտումը և վերլուծությունը (18):

Աղյուսակ 21

Իրականացնու՞մ եք արդյոք յուրաքանչյուր կրթական ծրագրի դիտում բարելավման նպատակով

Այո	42	29
Ոչ	24	7

42 թանգարան բարելավման նպատակով իրականացնում է յուրաքանչյուր կրթական ծրագրի դիտում:

Աղյուսակ 22

Եթե այո, ինչպիսի՞

Մեթոդաբանական	33	24
Բովանդակային	32	23
Տերմինաբանական	21	17

Որից հետո կատարվում են առավելապես մեթոդաբանական (33), բովանդակային (32), ավելի քիչ՝ տերմինաբանական (21) փոփոխություններ:

Աղյուսակ 23

Գիտե՞ք արդյոք, որ Հայաստանում գործում է թանգարանային կրթության կենտրոն

Այո	51	31
Ոչ	17	6

Թանգարանային կենտրոնի գոյության մասին գիտեին 51 թանգարան:

Աղյուսակ 24

Ինչպե՞ս կարող է կենտրոնը աջակցել Ձեր թանգարանի կրթական գործառույթի բարելավման հարցում

խորհրդատվության տրամադրում	45	19
մասնագիտական գրականության տրամադրում	45	18
կադրերի վերապատրաստում	51	27

փորձի փոխանակում	51	28
Ձեր իրականացրած ծրագրերի գնահատում	31	18

Կենտրոնից սպասելիքներ են ակնկալում կադրերի վերապատրաստման և փորձի փոխանակման առումներով (51), ապա՝ մասնագիտական գրականության տրամադրում և խորհրդատվության տրամադրում (45) ավելի քիչ՝ իրականացրած ծրագրերի գնահատում են սպասում (31):

Թանգարանները կենտրոնից այլ սպասելիքներ ևս ունեն, դրանք են՝ կրթական ծրագրերի համար ֆինանսական միջոցների՝ հնարավորության դեպքում՝ դրամաշնորհների տրամադրում, նյութական՝ առավել կոնկրետ՝ տեխնիկական միջոցների ձեռք բերում, իրենց թանգարանի գովազդի տարածում, կենտրոնի կողմից հետաքրքիր ծրագրերի առաջարկի իրականացում:

Կրթական ծրագրերի հիմնական թեմաները

1.Վ. Բրյուսովի թանգարան	Բրյուսովի կյանքն ու գործունեությունը, Բրյուսով և Հայաստանը, Բրյուսովը և Արծաթե դարը, Բրյուսովը համաշխարհային գրակ.թարգմանիչ, Արծաթե դարի գրականություն և մշակույթ
2. Կապի թանգարան	Ծանոթություն Հայաստանում հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման պատմությանը, Արցախյան պատերազմում և աղետի գոտում կապի վերականգնման գործընթացում հայ կապավորների ունեցած ավանդի մասին
3. Ս. Կապուտիկյանի թանգարան	Կապուտիկյանի սիրո պոեզիան, Կապուտիկյանը մեզ հետ է, Կապուտիկյանական օրերի տասնօրյակ, Առաջին համաշխարհային պատերազմը և հայկական հարցը
4. ՀՀ ԿԲ այցելուների կենտրոն	Հայաստանի դրամաշրջանառության և ֆին. Համակարգի պատմությունը, ԿԲ գործառույթները, հիմնական գործիքները (վարկ, ավանդ, պլաստիկ քարտեր)

5. Երկրաբանական թանգարան	Ճանաչենք օգտակար հանածոները, Հայաստանի մարգագետինների ուսումնասիրություն: Մարգագետնից խոհանոց. Տատիկի գաղտնիքները, Կլիմայի փոփոխությունը և անտառը, Ջուրը՝ անփոխարինելի օգտակար հանածո
6. Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ	Ինչպես դասավանդել Հայոց ցեղասպանության թեման, ուսուցիչների համար, Ինչպես լուսաբանել Հայոց ցեղասպանության թեման լրագրողների համար
7. Երևան քաղաքի պատմության թանգարան	գիտունիկը Երևան քաղաքի պատմության թանգարանում,Ճանաչիր երևանը, Երևանի բերդի գրավումը, Տիկնիկային պատմություններ
8. Կարեն Դեմիրճյանի թանգարան	հերոսության դաս՝ Կ. Դեմիրճյանի կյաքի ու գործունեության օրինակով
9. Ժամանակակից արվեստի թանգարան	Ժամանակակից կերպարվեստ, Ժամանակակից երաժշտություն, դասախոսություն ապագա համադրողների համար
10. Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան	Հնագիտություն, Ուրարտուի մշակույթ
11. «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամ	2013թ. Ստեղծիր քո պատմությունը, Քաղաքը և վայրի բնությունը, Ճանապարհորդություն գույների աշխարհով, Բնության գանձերը, Նմանակելով ապակին, 2014թ. Կախարդական լաբիրինթ, Քաղաք «Հունդերթվասեր», Ամառային քանդակների պարտեզ, Ձևավորիր քո ափսեն, Քաղաքի իմ մեջ: Շարունակական ծրագրեր՝ Ամանորի և Սուրբ ծննդյան հրաշք, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Հանդիպում արվեստի հետ:
12. Կալենցի թանգարան	2013թ. Հարություն Կալենց. Երկու կյանք/ ցուցահանդեսի ներքո/- Կենսագրություն և արվեստ: Հիմնական ցուցադրություն- հանդիպում մեկ նկարի շուրջ: Արմինե Կալենց. Ճամփորդություններ կիզիչ արևի տակ.-Անցումային շրջան: 2014թ. Հ. Կալենց. Հիմնական

	ցուցադրություն-Գույնը և ձևը: Արմինե Կալենց. Դիմանկար. Հայցք ներսից: Հետ ուղղահավատ վերացականություն:
13. «Մատենադարան» Մ.Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետա-զոտական ինստիտուտի թանգարանային համալիր	ակնարկային, ճանաչողական էքսկուրսիա
14. ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ	ճարտարապետության, քաղաքաշինության, արտերկրների հայ ճարտարապետների գործունեութուն, տեսություն, պատմություն
15. ՀՀ Հայաստանի բնության պետական թանգարան	բնապահպանական թեմաներով առանց հատուկ խորագրերի
16. ՀՀ ՊՀ «Մայր Հայաստան» զինվորական թանգարան	Ռազմապատմական էքսկուրսիա
17. Գևորգ Գրիգորյանի թանգարան-արվեստանոց ՀԱՊ մասնաճյուղ	Գևորգ Գրիգորյանը և խորհրդային արվեստը, Բաուհաուզ և ռուսական կոնստրուկտիվիզմ
18. Ե. Քոչարի թանգարան	դասախոսություն, կինոդիտում, քոչարյան ստեղծագործությունների ինտերակտիվ քննարկում
19. Փայտարվեստի թանգարան	Կորչող արհեստների վերականգնման և խթանման գործունեությունը կրթական ծրագրերի միջոցով(փայտ, կավ, կարպետ)
20. Ա. Սարգսյան, Հ. Կոջոյան թանգարան (ՀԱՊ մասնաճյուղ)	Ա.Սարգսյան, Հ. Կոջոյան դասախոսություններ, հանդիպում Վիկտոր Սսոլախյանի հետ, Ծանոթացում Սասունցի Դավիթ էպոսին
21. Հ. Թումանյանի թանգարան	Երկնքից երեք խնձեր ընկավ, Հեքիաթի տոնավաճառ, Բզեզի դպրոց, Մնջախաղ Թումանյանի հեքիաթի թեմաներով, Թանգարանային համալսարան, Օժիտ.

	«Ժանյակազարդ հուշեր» Թումանյանի հայրենագիտական հուշերը որպես հայրենաճանաչողական ճանապարհ
22. Հ. Շարամբեյանի անվ. ժող. ստեղծ. կենտրոն	Ազգային պարերի ուսուցում, Դարբնություն, գորգագործության ուսուցում, Ազգային նվագարաններ պատրաստող վարպետ պատրաստելու դասընթաց
23. Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան	հայկական տոնածիսական միջոցառումների շարք, Իմ տոհմածառը, մեկ օր Սպենդիարյանի տուն-թանգարանում, Սպենդիարյան-Լերմոնտով ստեղծագործական կապ
24. Դ. Դեմիճյանի տուն-թանգարան (ԳԱԹ-ի մասնաճյուղ)	Դ.Դեմիրճյանի ստեղծագործական ժառանգության և կյանքի վերաբերյալ
25. Հայաստանի պատմության թանգարան	հայ ժողովրդի պատմության առանձին դրվագներ
26. Եղիշե Չարենցի տուն-թանգարան	Չարենցի «Դանթեական պոեմի» ընթերցում և քննարկում ՀՀ դպրոցներում, Մահվան տեսիլը, նկարչական դպրոցի երեխաների նկարները չարենցյան թեմաներով, դաս-միջոցառումներ՝ նվիրված մայրենիի օրվան, հայ առաքելական եկեղեցու տաղավար տոները;
27. ԳԱԹ	«բացահայտում» խաղ-էքսկուրսիա Ստվերային թատրոն թանգարանում Կարաոկե թանգարանում
28. Հայաստանի ազգային պատկերասրահ	ինտերակտիվ էքսկուրսիաներ՝ Ժամ և ժամանակ Ստեղծելով հեքիաթ, Ամուր, Սբ. ծննդյան խորհուրդը Վարպետի գույների աշխարհում, Պատմ. ժանրի ձևավորումը, Սասունցի Դավիթ և այլն
29. Ա.Խաչատրյանի տուն-թանգարան	Դպրոցին հյուր, ես դիրիժոր եմ, Ճանաչենք երաժշտական ժանրերը, Դասական երաժշտությունը մուլտֆիլմերում, Ինչպես են ստեղծվում երաժշտական գործիքները, Հնչյուններ և գույներ, Տարեդարձ է այսօր և այլն

30. Ավ. Իսահակյանի տուն-թանգարան	Ավ. Իսահակյանի հեքիաթները Ավ. Իսահակյանի առակները դասախասություններ՝ գիտական, մշակութային թեմաներով , Ամառային դպրոց
31. Հայ դաշնակցության թանգարան	Հայաստանի Առաջին հանրապետության պատմություն
32. Պ. Պռոշյանի տուն-թանգարան (ԳԱԹ մասնաճյուղ)	հուշարձաններ, ազգային արհեստներ, տոներ, հեքիաթներ
33. Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան	ադոնցյան օրեր կամ ընթերցումներ, Մշակույթը՝ պատվար, կավագործություն, նկարչություն
34. Հրազդանի երկրագիտական թանգարան	Հրազդանի անցյալն ու ներկան, Ազգակցական և բարեկամական համակարգը Հրազդանի տարածաշրջանի բնակիչների կենցաղում 19-20-րդ դդ, Ծնունդ և կնունք, Եվրոպական երկրների տնտեսությունն ու կենցաղը մինչև Առաջին աշխարամարտը 1914-18 թթ.
35.Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան	1918թ. Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը; Հայոց գլխավոր և օժանդակ տնտեսաձևերը; Հայկական ավանդական արհեստները; Մետաղագործությունը հայող մեջ; Հայկական ավանդական տարազ; Հայոց ուտեստի համակարգը; Հայկական զարդեր; Հայկական ավանդական ծեսեր և սովորույթներ; Հավատալիքները հայոց մեջ; Հայկական խաչքարեր; Գորգագործությունը հայոց մեջ
36. Եղեգնաձորի երկրագիտական թանգարան	Վայոց Ձորի հնավայրերը; Միջնադարյան Եղեգական գյուղաքաղաքը և նրան հարակից տարածքները; Ալ. Թամանյան
37. Օրբելի եղբայրների տուն-թանգարան	Միջնադարյան Հայաստանի առակներ; Սասունցի Դավիթ; Օրբելի ընտանիքի նամակների ընթերցում; Անցյալի պատմությունը; Անի; Էրմիտաժը երեխաների աչքերով

38. Հ. Շարամբեյանի անվ. ժող. ստեղծ. Կենտրոն Դիլիջանի մասնաճյուղ	Ծանոթություն ազգային արժեքներին; Ճանաչել կիրառական արվեստի ճյուղերը՝ գորգագործություն, փայտարվեստ, խեցեգործություն, ասեղնագործություն
39.Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղ	Հայ արվեստը հովնաթանյանից մինչև 21-րդ դար; Հայ արվեստը 20-21-րդ դդ / դասախոսություններ
40. Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահ	կերպարվեստ, ազգագրություն, հնագիտություն, դասընթացներ կիրառական արվեստի վերաբերյալ
41.Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան	Հուշանվերներ շիրազյան թեմաներով; Առակս զինչ կցուցանե; բաց լսումներ՝ Ազգային տարազի նրբությունները
42.Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի քանդակագ. Ազգային պարկ թանգարանի մասնաճյուղ	Կերպարվեստի համայնքային միջոց. Կազմակերպում, ավանդական արվեստների ռեսուրս կենտրոն, ֆլեշ մոբ, մանկապատանեկան վրանային ճամբար
43. ԱՎ. Իսահակյանի հուշատուն-թանգարան ՀՈԱԿ	Մեկ օր Իսահակյանի տանը
44. Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ	խեցեղեն
45.Միեր Մկրտչյան թանգարան	Չապլինը Ֆրունզիկի աչքերով; Հաշմանդամները ստվերային թատրոնի ետևում
46. Հովհ.Թումանյանի տուն-թանգարան (ԳԱԹ-ի մասնաճյուղ)	Ընտենեկան փոխհարաբերությունների դաստիարակումը Թումանյանի ընտանիքի օրինակով

47. Վանաձորի քաղաքային համայնքի Կառլոս Աբովյանի անվ. կերպարվեստի թանգարան/ ՀՈԱԿ	կերպարվեստի ընթերցումներ; Անվանի կերպարվեստագետների կյանքն ու գործունեությունը; Պատանի արվեստաբան, Էլեկտրոնային ցուցադրություն հենաշարժողական խնդիրներ ունեցող այցելուների համար
48.Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան	Թանգարանագիտություն. Թանգարանային հիմունքներ; Թանգարանային նմուշների գրանցման կարգը; Հնագիտական բնակատեղի; Հնագիտական պեղումներ; Ազգագրություն; Գորգագործություն և կարպետագործություն; Մեր քաղաքը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը; Մշակութաբանություն, Հայկական եկեղեցական ճարտարապետություն; Ղարաքիլիսայի հերոսամարտ; Հացի արժեքը; Բրոնզեդարյա գոտիներ; Սևրի պայմանագիրը հայերի համար; Անդրանիկը որպես կամավորական շարժման ղեկավար; Հայ ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում; Դամբարանները հայկական լեռնաշխարհում; Հայոց ցեղասպանություն; Վանաձորի թագավորական դամբարան; Թագավորանիստ; Ամանորն աշխարհում; Դրամագիտություն; Արցախյան գոյամարտ; Հայկական տարազ, Հայաստանի մայրաքաղաքները; Հայկական ծեսեր; Հայկական դիցարան; Հայկական տոներ;Նժդեհ. Զանգեզուրի գոյամարտ
49. ՊՄԱԹ և ՊՄՊ / Գառնի, Զվարթնոց, Գլաձոր	պատմամշակութային հուշարձաններ; թանգարանների պատմություն; ճարտարապետություն; պատմություն; գեղանկարչություն
50. ՀԱՊ Ալավերդու մասնաճյուղ	Ծանոթացում գեղանկարչությանը, քանդակին, երաժշտությանը և գրականությանը